



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

902.7  
L-14

6796



Հ-14

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

# ԳՈՂԹՆ

Օրդուրատի կամ Վերին Ազուլիսի  
ոստիկանական օրգան

Ա. Ր Տ Մ Տ Ա Պ Ա Ճ  
Ա Զ Գ Ա Գ Բ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Դ Ե Ս Ի Ց

2012

Թ Ի Ֆ Լ Ի Ւ

X

8093



Ե. ԼԱՂԱԶԵԱՆ

~~39~~  
~~L-14~~ մբ.

50

902.7  
L-14

## ԳՈՂԹՆ

Օրդուքատի կամ Վերին Ազուլիսի  
ոստիկանական օրցան

1004  
18140 Ձ

Արտապահ  
Աջակարսության ՀԱՆԴԵՍԻՑ



2004

ԹԻՖԼԻՍ

809-155

### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ի Ակատի տոնելով, որ Անրկայ տարում դրանով  
է հայկական տառերի գիւտի հազար հինգ հարիւրա-  
մետակը՝ ես շտապեցի Ակարսպուղ այն գաւառակը, որ  
այդ հանձարեղ միորն է Անրշանց սուրբ Սեսրովիճ,  
Անրկայացնել այն, այժմ շատերից մոռացուած, վայրը՝  
Մարմահամբ՝ ուր անձանձով քարոզնել են ուստոցնել և  
հայ ազգի երախտաշատ Ուստոցիչը, Ակարել այն փոր-  
րիկ Մեհաստանը, ուր ազգի շուսառութեան համար  
աղօթել և շուսառին Քարոզիչը, որպէսի գոնք այս-  
պիսով կարողանամ Խճկարկել հայերին ազգարոյս Երախ-  
տառորի սրբացած յիշառակը:

---

## Ա Ղ Բ Ի Ի Ր Ն Ե Ր

Ճանապարհորդութեանս միջոցին առաջնորդուել եմ յաւերժայիշտատակ Հայր Ալիշանի «Սիսականով», իսկ աշխատութիւնս կազմելիս օգտուել եմ նաև ճետեալ անտիպ և տպուած երկերից։ Անտիպ.

1. Զաքարիա Ազուկցու օրագրութիւնը. Ժէ. դարուա զրուած այս յիշտատակարանը (տիս եր. 34) այժմ տպագրում է պ. Ա. Քալանթար, որ հաճեց սրբագրութեան թերթերը տալ ինձ օգտուելու։

2. Տէր Յակոբ Տէր Անդրէասեան քահանայի տետրը, ուր կան պատմական և ազգագրական նիւթեր։ Արժանապատիւ քահանան Ներքին Ազուլիսումն է ապրել 75 ձիգ տարիների ընթացքում և նոյն տեղումն էլ վախճանուել է ութսունական թուին։ Կատարելով միաժամանակ թէ քահանայի, թէ ուսուցչի և թէ տեղական բժշկի պաշտօն, արժանայիշտատակ Տէր Յակոբը շարունակ շփուել է իւր և միւս մօտիկ գիւղերի բնակիչների հետ և շատ բան ծերունիներից լսելով՝ զանազան ժամանակներում գրի է առել։ Այս աշխատութեան մի օրինակը ինձ տուեց նրա թոռ՝ Պ. Աւոն Սարգսեանը, և մի ուրիշ՝ որդին՝ Պ. Միհթար Տէր Անդրէասեանը։

Այս միևնույն անձնաւորութիւնն է, որ հաղորդել է Ա. Սարգս-սեանին նրա «Զօկերի լեզուն» աշխատութեան երկրորդ մասում դեսեղուած նիւթերի մեծագոյն մասը<sup>1)</sup>։

3. Պ. Սարգիս Հախնազարեանի տետրը, ուր կայ Վ. Ազուլիսի, նամանաւանդ սրա տնտեսական գրութեան մասին բաւականաչափ տեղեկութիւններ։ Պ. Հախնազարեան (որի մասին տիս եր. 45). իւր մոտաւոր կրթութեամբ և կատարած հասարակական գիրով միանգամայն ձեռնհաս է եղել ձիշտ տեղեկութիւններ հաւաքելու։ Պարոնը յօժարութեամբ տուեց ինձ իւր այդ աշխատութիւնն օգտուելու։

4. Յակոբ Անազնանի տետրը։ Այս յարգելի ծերունին ևս մի բարեկամի ուղղած նամակների ձեռով համեմատել է Ներքին Ազուլիսի անցեալ և ներկայ կեանքը։ Այս աշխատութեան մէջ զուտ ազգագրական տեղեկութիւններ, փաստեր քիչ լինելու պատճառով՝ շատ նիւթ չկարողացայ քաղել։

<sup>1)</sup> Սարգսեան. Զօկերի լեզուն, Բ. մաս II.

Խորին շնորհակալութիւնս եմ յայտնում վերոյիշեալ բոլոր անձերին։

Տպագրուած.

Առաքել Դավրիժեցի—Պատմութիւն.

Չամչեան. Պատմութիւն Հայոց.

Ինձինեան, Հնախօսութիւն և Ստորագրութիւն հին Հայաստանեայց։

Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ եջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ.

Ա. Սարգսեան, Ազուկցոց բարբառը, Մուկուշ, 1883 թ.

Статистическое описание Нахичеванской провинции, напечатанное съ Высочайшимъ соизволеніемъ. Спб. 1833.

Взглядъ на Армянскую область. Изъ путевыхъ записокъ Н. Нефельева. Спб. 1839.

Dubois de Montprégeux, Voyage autour du Caucase, Paris 1839—1843. т. IV.

Геологическое описание части Нахичеванского уѣзда Эриванской губ. изслѣдований въ 1868 г. командированными съ разрѣшенія Намѣстника Кавказскаго, Горными Инженерами княземъ Цулукидзе, Халатовымъ и Архиповымъ.

Исторический памятникъ состоянія Армянской области въ эпоху ея присоединенія къ Россійской имперіи Шопена, Спб. 1852.

Ордубадъ въ промышленномъ отношеніи Черноярского (Кавк. Календарь 1868 г).

Изслѣдованіе о діалектахъ Армянского языка, К. Патканова Спб. 1869.

Три магала, Нахичеванский, Ордубадский и Даралагезский Зелинскаго. (Сборникъ свѣдѣній о Кавказѣ т. VII. 1880 г.).

Նախչեան և Նախչևանский уѣздъ Никитина (Сборн. матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа, вып. II 1882 г.).

Экономический бытъ государственныхъ крестьянъ въ Ордубадскомъ участкѣ, Нахичеванского уѣзда, П. Н. Ягодинского, въ I томѣ Матеріалахъ для изученія экономического быта государственныхъ крестьянъ Закавказского края. Тифлисъ 1885 г.

Chantre, A travers de l'Arménie russe. Paris 1893.

Каникулярная поездка по Эриванской губерніи и Кар-

ской области В. Дѣвицкаго (Сборн. Мат. для описанія мѣстностей и племенъ Кавказа). вып. XXI.

Аракская равнина (въ предѣлахъ Эриванской губерніи) Коммерческое обслѣдованіе Р. И. Даниловича. Тифлисъ 1897.

Памятная книжка Эриванской губерніи на 1902 и 1904 гг. изданія Эриванского губернскаго статистического комитета. Эривань 1902 и 1904 г.

### ՆԵՐԱՃՈՒԹԻՒՆ


Նախիջևանի գաւառը կազմում է երեանեան նահանգի արևելահարաւային մասը և տարածում է  $38^{\circ} 48' - 39^{\circ} 45'$  հիսուսային լայնութեան և  $62^{\circ} 44' - 63^{\circ} 55'$  արևելեան երկարութեան միջե. նրա սահմաններն են՝ հիւսիսից՝ Դարալազեաղի լեռները, որ բաժանում են նրան Եարուր-Դարալազեաղի գաւառից, արևելքից՝ Դարաբաղի լեռները, որ բաժանում են նրան Զանգեզուրի գաւառից, հարավից և հարաւարեամուտքից՝ Արաքս գետը, որ կազմում է Պարսկաստանի սահմանադիմը, և հիւսիս-արեամուտքից՝ Եարուրի հարթութեան հարաւային մասը:

Ամբողջ գաւառը բռնում է 4036 քառ. վերստ կամ 423780 գեսիատին տարածութիւն<sup>1)</sup>, այնպէս որ սոյն, Երևանեան նահանգի վեց գաւառների մէջ իւր ընդարձակութեամբ երկորդ տեղն է բռնում. (ա. Նոր-Բայազետի գաւառն է՝ 5145 ք. վ., Երկորդը՝ Աղեքսանդրապոլինը՝ 4120 քառ. վերստ):

Գաւառը բաժանուած է չորս սատիկանական շրջանների՝ ա. Ալիաբասի, բ. Չաղըռու, գ. Արրակունիսի և դ. Օրդուբադի կամ Վերին Աղուլսի մէր այժմեան հետազոտութեան վայրը:

<sup>1)</sup> Памятная книжка Эриванской губ. 1902 г.

բայց զայտ՝ վեց եթէ անգամ չափած չկազմում  
իւրամելիք մէջ նույնական աշխատանք ունենալու  
համար վերաբերեած վրանչու պատճեն չունեաց ուն-  
եած անհաջող կազմում իւրագույն վայր ունենալու  
**ՕՐԴՈՒԲԱԴԻ ՎԵՐԻՆ ԱՂՈՒԼՍԻ ՍԱՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ**  
ՌԵԴԱԿՑՈՒԹԻՒՆ



յս, Օրդուբադի կամ Վերին Աղուլսի սատիկանական շրջանը բռնում է

Նոյնին Գողթն գաւառը և իւր տարածութեամբ՝ 1450 ք. վերստ կամ 152250 գեսիատին՝ շատ աւելի մեծ է քանի նոյն գաւառի միւս սատիկանական շրջանները<sup>1)</sup>:

Երկրիը եռանկիւնաձե. է, որի մի եղբը, հարավից քերում է Արաքս գետը, որ Առուսաստանի և Պարսկաստանի միջե սահմանադիմ է կազմում, երկորդ եղբ՝ արևելուտքից, բռնուած է Դարալազեաղի լեռնաշղթայի Դար-գաղ կոչուած ճիւղով, որ բաժանում է այս շրջանը սոյն գաւառի մեջացած մասից, իսկ երրորդ եղբի վրայ,

<sup>1)</sup> Ալիաբադի շրջանը՝ 967 քառ. վերստ	Չաղըռու	» 969 » »
Աղուլսիսի » 859 » »		

արեւելքից, բարձրանում են նոյն լեռնաշղթայի Դարդաղ և Սոյիւդ-դաղ ճիւղերը, որ բաժանում են Նովիջեանի դաւառը Գանձակի նահանգի Զանդեզուրի դաւառից:

Այս շրջանի մակերեսոյթը բաւական թեքուած է հիւսիսարևելքից դէպի հարաւ՝ Արաքս գետը, սակայն շրջանի արևմտեան մասի թեքութիւնը շատ աւելի քիչ է քան արևելեանը: Թեքութեան շափը կարելի է խմանալ մակերեսոյթի բարձր և ցածր կէտերի ամենամեծ տարածութեան հետ ունեցած յարաբերութեամբ: Այսպէս՝ ըստ Աբիսի, Դարալագեազի լեռնաշղթայի միջին բարձրութիւնը հասնում է 10,000 ֆ. ծովի մակերեսոյթից, Արաքսի հովտի ցածր մասը ունի 2500 ֆուտ բարձրութիւն, իսկ այս երկու բարձրութիւնների միջի ամենամեծ տարածութիւնը ձգւում է 40 վերսու, հետեւապէս և միջին թեքութիւնը հաւասար է 187 ֆուտի իւրաքանչիւր վերսուի վրայ:

Շրջանի ամբողջ մակերեսոյթը կտրառուած է լեռների ճիւղերով, որոնք գրեթէ ձգւում են միմեանց զուգահեռական: Այս ճիւղերի մէջ տարածում են նեղ և երեմն բաւական խոր հովիտներ: Արևելեան կողմում այս հովիտներն այնքան նեղ են և թեք, որ կրծի են նմանւում<sup>1)</sup>:

Երկրագանների կարծիքով այս շրջանը ևս, որպէս Արաքսի հովտի մի մաս, ջրի տակ ծածկուած է եղել, որովհետև «մի ժամանակ» Արաքսի երկարութեամբ տարածուած է եղել լճերի մի ամբողջ շարք: Եւ դէպի գետի ընթացքը ուղղահայեաց ձգւուղ ճիւղերը մի ժամանակ կաղմել են հոկայական ամբարտակներ այս լճերի միջեւ, և սրանց միջով ջուրը մի լճից միւսն է լցուել: Այս ամբարտակները, որոնց գագաթներին գեռ մինչեւ այսօւ ել կան խորշեր, հետղհետէ քանդուելով՝ լճերի մակերեսոյթը ցածրացել է և նրանք կամաց կամաց դարձել են մի երկար գետ, որ յետոյ տափիճանաբար փորել է իւր այժմեան նեղ հունը: Վերջապէս Օրդուբագից ցածր, ուր երբեմն Դարսուայ

<sup>1)</sup> Экономический бытъ государственныхъ крестьянъ въ Ордубадскомъ участкѣ Ягодынского.

և Քեամքիւհ լեռները միացած են եղել, երկրաշարժի ազգեցութեամբ պատառուել են, և ջուրն սկսել է ուժգնակի հոսել դէպի իւր և Կուրի ընդհանուր գետաբերսնը, որ նոյնպէս երբեմն եղել է կասպից ծովի յատակը<sup>1)</sup>: Այս պատառուած անցքը, որ յայտնի է Բարսւագը Արաքսի անունով, և որի միջով ձգւում է Օրդուբագից Մեղրի տանող ճանապարհը, վերին աստիճանի դեղարուեստական տեսք ունի:

Արաքսի հովիտը մի ժամանակ ջրի տակ ծածկուած լինելուն մի ապացոյց ևս կարող են ծառայել այն յիսունի չափ ժժմակները, որ ես գտաց իմ ճանապարհորդութեան միջոցին այս հովտում: Արանց մեծ մասը Stringocephalus Burtini Defr. տեսակից են պալէօվեան խմբի գեւոնեան սիստեմի:

Մեր ուսումնասիրութեան շրջանը հարթաքանական (геогностический) կազմութեամբ բազկացած է կատոտ և աւազոտ մարնայից (мергелій), կրաքարի համախմբումների (коңгломератъ) շերտերից, որոնց վրայ երբեմն կուտակուած են խճաքարեր: Նատ աեղերում այս շերտերը կաւճային կազմութիւն ունենալով հրաբխային զանդուածների ազգեցութեամբ փափսիութեան են ենթարկուում:

Գետերը.—Գետերը մեծ մասամբ իջնում են Ալանգեազի լեռնաշղթայի լանջերից և հոսելով դէպի հարաւթավուում են Արաքսի մէջ: Արանք բոլորն էլ սաստիկ արագընթաց են և աղմկարար: Այս շրջանում ընդհանընը եօթը հեղեղատ կան, որոնցից միայն չորսը կարելի է դետակ կոչել: Արանցից

Դիլան-շայը գտնուում է շրջանի արևմտեան մասում և ամենասերկար գետակն է, սա յառաջանում է Սաղկարսուի և Այրի-շայի միախառնամբ Թիլլաք գեղի մօտ, ընդունում է իւր մէջ Բստաչայը, Տերշայը և Բիլեշայը, անցնում է 19 գիւղերի մօտով, ուոգելով 889 հացահա-

<sup>1)</sup> Материалы для воен. обоз. Эрив. губ. Ив. Озаревского.

տիկի, 43 ըրնձի, 132 բամբակի արտեր, 280 այդի և պարտէզ, 97 արւոյտի և 133 այլ մշակելի տեղեր: Յղնայի, կամ՝ Չանանաթի, կամ՝ Ուրմիս, կամ՝ Ռասովի եւ կամ՝ Դիլզոննչայ.—այս չորս անունն էլ կրում է անցներով այդ գիւղերի մօտով։ Սկիզբն է առնում Եաղլուդարան մէջտեղից, անցնում է վեց գիւղերի մօտով և ոռոգում 382 հացահատիկների, 8 բամբակի, 14 արւոյտի արտերը և 108 այդիներ ու պարտէզներ:

Վանանդ-շայ, սկիզբն է առնում Փաղմարի լեռից, անցնում է 15 գիւղի մօտով և ոռոգում է 660 հացահատիկների, 147 բամբակի, 94 արւոյտի արտեր և 280 այդի ու պարտէզ։

Ազուլիսի-շայ, սկիզբն է առնում Նիդիդէն գիւղի մօտ միախառնուող երեք առուտակներից, որ բղխում են Խոշուդաղից, անցնում է 6 գիւղի մօտով, և ոռոգում 25 հացահատիկների արտ, 231 այդի ու պարտէզ։

Օրդուգաղու-շայ, սկիզբն է առնում Սոխւղ-գտաղից և անցներով Օրդուրագ քաղաքի և 3 գիւղերի միջով, ոռոգում է 294 հացահատիկների, 12 ըրնձի, 254 արւոյտի արտեր և 704 այդիներ ու պարտէզներ։

Միւսները աննշան վտակներ են, որ կը յիշենք գիւղերը նկարագրելիս։

Այս գետակների ու վտակների ջրի քանակութիւնը տարուայ զանազան ժամանակներում սաստիկ տարբերւում է. այս կախուած է ինչպէս լեռների ձիւների հալուելուց, նոյնպէս և անձրեներից։ Անձրեային եղանակը սովորաբար վերջանում է մայիսին և հէնց այս ժամանակից գետակների ջուրը սկսում է արագութեամբ պակասել, մի քանի վտակներ, ինչպէս Կարճուանը, յուլիսին կամ օգոստոսին բոլորովին չորանում են։ Աշնան, երբ սկսում են անձրեները, գետակները կրկին բարձրանում են։ Սակայն երեւմն էլ ամառը, երբ սարերում սաստիկ անձրեներ են տեղում, գետակները բարձրանում են և հեղեղում շրջա-կայքը, փոսեր են բաց անում և տանում մեծ քանակու-

թեամբ ցեխ՝ քարերի, ծառերի և այլ պատահած իրերի հետ, եւ այսպիսով ահազին վնասներ պատճառում ըլ-նակիչներին։ Ամենից աւելի սարսափելի է եղել 1884 թ. մայիսի 21-ի հեղեղը, Ագուլիսի հովտում, որ մօտ 50 հոգի զոհ է տարել և 500,000 բուլու վնաս պատճառել։

Օրդուրագի սստիկանական շրջանի հողը շատ զանազանակերպ է. մի քանի տեղերում աւազում է, խիճ և մեծ քարեր խառնուած, միւսներում կաւային, փոքր ինչ աւազախառն, մի քանի տեղ էլ պատահած են տղմախառն և աղախառն հողեր։ Լեսների հողերն աւելի բազմազան են։ Շատ տեղեր, թէն հողը միանգամայն համապատասխանում է երկրագործութեան պահանջներին, սակայն և այնպէս՝ գրեթէ ամբողջ տարին զուրկ են մնում բուսականութիւնից, որովհետեւ հնարաւորութիւն չկայ ոռոգելու։

Բարձր լեռների վրայ, ուր գիւղացիները քշում են իրենց տաւարներն արածելու, բուսականութիւնը շափազանց միակերպ է։ Այստեղ աճում են միայն կաղանչան (молочай), զուրբակ (душица), վայրի սոխ, և ձիագի (хвощъ), խոտանման (злаковыя) և բակլայի բոյսեր բուլրովին չեն հանդիպում։ Ծառերը շատ քիչ, այն էլ միայն սարերի գագաթներին են պատահած։ Այստեղ աճում են ծառանման ցրտնի (можевельникъ, juniperus), լաստինի (ольха), կենի (тисъ), և կեչի (береза, betulus), և ուրիշներ<sup>1)</sup>:

Բոլորովին ուրիշ տեսք ունին ջրարրի տեղերը։ Սրանք բռնում են հովիտների ցած մասերը, գետակների ափերը, և մոնաւանդ Արաքսի հովիտը։ Սրանք մի մի սքանչելի օաղիտներ են ներկայացնում իրենց հարուստ բուսականութեամբ և միայն սրանց պատճառով է որ Գողթնին տուել են «գեղեցիկ» և «գինեէտ» մակդիրները։

Կլիման։—Օրդուրագի սստիկանական շրջանը բոլոր կողմերից լեռներով շրջապատուած լինելով բաւական մեղմ և միապազաղ կիմայ ունի։ Այստեղ եղանակները կանո-

<sup>1)</sup> Ягодынскій. յ. գ. եր. 608.

նաւոր կերպով յաջորդում են միմեանց և ձմրան այնքան զգալի կերպով չի յաջորդում ամառը, որ հարկաւոր լինի պաշտպանել խաղողի վաղերը՝ ծածկելով հողով, ինչպէս այդ անում են Արարատեան դաշտում։

Այս ոստիկանական ամբողջ շրջանում միայն մի տեղ, Օրդուբադում, կայ օդերեւոյթաբանական կայարան, սակայն այստեղ էլ միայն նստայցքներն են չափուում, իսկ օդի բարեխառնութիւնը՝ ոչ Աւսի եւ ստիպուած ենք բա-

### Մթնոլորտային նստայցքների քանակութիւնը

(Մի ի ի մ ե ս ր)

Թուրքին	Յունուար	Փետրուար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմբ.	Հոկտեմբ.	Նոյեմբ.	Դեկտեմբ.	Տարեկան
1899	15	21	23	20	62	9	0	0	10	16	55	16	247
1900	7	8	34	12	55	25	24	21	1	9	27	10	232
1901	17	—	—	—	59	52	0	0	52	30	50	3	—
1902	17	8	47	71	59	9	7	5	0	43	58	0	325
1903	—	35	15	—	—	—	5	—	10	7	12	31	—
Միջ.	14.	18.	30.	34.	59.	24.	7.	6, <sub>5</sub>	14, <sub>6</sub>	21.	40, <sub>4</sub>	12.	268.

ւականանալ միայն հետեւեալ երկու աղիւսակներով, որոնք ցոյց են տալիս մթնոլորտային նստայցքների քանակութիւնը եւ այն օդերի թիւլ, երբ տեղի են ունեցել այդ նստայցքները։ Տարեկան միջին բարեխառնութիւնը, դատելով կովկասի օդերեւոյթաբանական քարտեզով, հասնում է + 12,<sub>2</sub> 8.)։

Հանքեր. Թէկ այս շրջանում ոչ մի հանք չի մշակուում, սակայն մի բանի տեղեր, ինչպէս Պոնիսի կամ Տրոնիսի մօտ ձալապատ լեռներում նկատուած են հին հորեր և պղնձի ու արծաթի

Յունուար	Փետրուար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Յունիս	Յուլիս	Օգոստոս	Սեպտեմբ.	Հոկտեմբ.	Նոյեմբ.	Դեկտեմբ.	Տարեկան	
1899	10 10	5 1	7 2	0	0	18 0	2 5	0	0	0	0	3	3 0 9 5 74 21 2
1900	7 6	7 5 11	5 0	6	0 0	17 0	0 8 0 2	7 0	0 0 1 0 0	4 0 0	5 2 0 3 0 79 18 2		
1901	7	6	—	—	—	13 0	1 8 0	0 0	0 0 0 4 0	0 0 3 0 8 3 0 2 0	—		
1902	2 2	4 2	6 3 0	12 1 0	6 0	0 2 0 0	2 0 0 3 0	0 0 1 0 0	0 0 7 0 0 9 1 0 0 0 54 9 0	—			
1903	—	11 10	7 7 0	—	0 0	— 0 0	— 0 0 2 0	0 0 0 0 0	0 0 0 0 0 0 0 0 0 0 9 6 —	—			
Միջ.	6, <sub>5</sub>	6, <sub>6</sub> 4, <sub>5</sub> 8.	4, <sub>3</sub> 0, <sub>8</sub> 3	0, <sub>3</sub> 0,13, <sub>5</sub> 0,0, <sub>4</sub> 2, <sub>2</sub>	0,0	0,1, <sub>5</sub> 0,0,3, <sub>2</sub> 0,0	0,4 0,0,6, <sub>2</sub> 0,0	2,0 4, <sub>6</sub> 2, <sub>2</sub>	69, 16 1, <sub>3</sub>	—	—	—	



մում Վասպուրականի և Սիւնիքի մէջ.—մէկ էլ, որպէս եկեղեցական վիճակ, նա ենթարկում էր Սիւնեաց, ծաթեի եպիսկոպոսին<sup>1)</sup>: Մի երրորդ պատճառ էլ Ստեփանոս Օբրելեանն է բերում, ասելով, թէ Գողթնի իշխանները Սիսական կամ Սիւնեաց ցեղից էին և իր ժառանգութիւնն էին ստացել այս գաւառակը:

Գողթնին վերաբերեալ ամենահին տեղեկութիւնը, որ առաջիս են մեր մատենագիրները, այն է, որ Քրիստոսից վեց դար առաջ, Տիգրան Երուանդեան թագաւորը Աժդահակի զարմից տասն հազարից աւելի դերիներ բնակեցրել է «մեծ սարի արեւելեան կողմում մինչև Գողթնի սահմանները, որոնց տուել է նաև Խրամ, Զուղայ և Խոշակունիք քաղաքները»<sup>2)</sup>: Բայց թէ սրանք Գողթնում էլ էին սփռուած, գուշակել է տալիս նոյն պատճի, Խորենացու, այն խօսքերը, թէ Արտաշէսը տալիս է իւր ըսպարապետ Սմբատին «զմասն արքունի, որ ի Գողթն»<sup>3)</sup>:

Այս գաւառի նահապեաններից և իշխաններից շատ քչերն են յիշում պատմութեան մէջ, սրովհետեւ առ առանձնացած էր և շատ քիչ հազորդութիւն ունէր հայոց թագաւորների հետ, սակայն և այնպէս՝ Քրիստոսի Ա. դարու կիսին յիշում են Շաբ կամ Շաբիթ և սրա կին Նշան, որդին՝ Խոսրով և թոռը՝ Վահան: Սրանցից յետոյ Դ. դարի երրորդ քառորդում իրրե Գողթնի առաջին տէր յիշատակում է մի ոմն Ատոմ<sup>4)</sup> իշխանը, որ ուրիշ իշխանների հետ ուղեկցում է Յուսիկին Կեսարիա՝ կաթուզիկոս ձեռնադրուելու: Սրա ժամանակը Գողթնեաց տէրը Ներսիսեան գահնամակի մէջ 46-դ կարդումն է յիշատակում, իսկ Ե. դարի սկզբում Ատակի գահնամակում աւելի բարձրացած՝ 15-րդը: Իսկ արքունի բանակի Գողթնեաց զօրաբաժինը կազմուած է եղել 500 հոդուց: Հինգերսրդ

<sup>1)</sup> Ստեփ. Օբրել.

<sup>2)</sup> Մ. Խորեն. Ա. Գլ. 1.

<sup>3)</sup> Մ. Խոր. Բ. ԾԳ. յիշ. Ալիշան. Սիսական. եր. 310.

<sup>4)</sup> Փաւ. Բիւզ. Դ. գլ. Ժր.

գարի վերջերը յայտնի է Շաբիթ անունով նահապեալ, որի վասակ և նապուհ որդիները հայրական ժաւանդոթեան համար կոռուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ, և ի ճակատելն զօրօք ընդ միմեանս՝ եհար վասակ սրով վեղբայրն և խողսողեաց մերձ ի մահ» և յետոյ զղջալով կոծում էր ու եղբօր բժշկուելուց յետոյ նրան է թողնում բոլոր ժառանգութիւնը և ինքը հեռանում է տանից ու կրօնաւուրուելով հայր կոչւում Այնուհետեւ զրեթէ մի ամբողջ դար Գողթնի մասին ոչ մի յիշատակութիւն չի լինում: Յետոյ է. դարի սկզբում յիշատակում է մի ոմն Վուամ<sup>1)</sup>, խակ դարի կիսին (652 թ.) արաբացիները ասպատակում են նաև Գողթնը, շատերին սրից անցկացնում ե. «զայլ գերի վարեալ կանամք և մանկտեաւ անցուցանէին ընդ գետն Երասխ ընդ հունն Զուղայոյ»:

Սոյն աւերածութիւնները շարունակուել են նաև այս դարի վերջին, երբ Կաշմ սոտիկանը նախիջեանում և Խրամում հայ նախարարներին և իշխաններին այրելուց և Դուինը սրի ճարակ դարձնելուց յետոյ՝ շատերի հետ նաև Գողթնեաց տէր Խոսրովի չորս տարեկան որդի Վահան Գողթնեցուն էլ գերի է տարել Գամասկու: Սա այստեղ մահմեդականութիւն է ընդունել և սովորելով արաբական գիտութիւնները՝ արքունի գիւտանապետ է դարձել: Օմարի ամիրապետութեան ժամանակ Վահան Գողթնեցին թոյլատութիւն է ստացել այցելելու իւր հայրենի երկիրը միայն այն պայմանով, որ նորից յետ գաւոնայ: Վահան տիրել է իւր Գողթան գաւառին, տեսել նրա աւերածութիւնը և զգացել իւր ներքին աւերը, լալով զղջացել իւր ուրացութիւնը և ամուսնացել Սիւնեաց Բաբկեն իշխանի գստեր հետ, բայց յետոյ հրաժարուել է նրանից և մի առ ժամանակ ճգնաւորական կեանք վարելուց յետոյ՝ ինքնակամ գնացել է ամիրապետի մօտ և խօստովանելով քրիստոնէական հաւատը՝ նահատակուել նրանից 737 թուին<sup>5)</sup>:

<sup>1)</sup> Սերէս պատմիչ յիշ. Սիս. եր. 310.

<sup>2)</sup> Զամչեան, Պատմ. Հայոց Բ. եր. 382—385 թվականները 7/ XI 1922



767 թուին, Սիսն կաթուղիկոսի կազմած ժողովում յիշում է իր Գողթնի տէր սմն Սահսր, որից յետոյ այլես ոչ մի իշխանի յիշատակութիւն չի երկում։

Տասերորդ գարում, Յուսուփի հարուածներից յետոյ յիշում է արարացիներից կարդուած Ամիրայ Գողթան, իսկ նոյն գարի վերջում Ալուտլուփ կամ Ապուտէրի առունով մինն է եղել Գողթնի ամիրայ, որ 983 թուին ասպատակել է գէպի ձօւաշ և վասպուրականի սահմանները, բայց միքանի ատարուց յետոյ նրա երկիրն աւերուել է Ատրպատականի մեծ ամիրայ Ռովադայի որդի Ապլճէհից։ Բայց Ապուտէրից գարձեալ զօրանալով 989 թուին առել է նաև Գոււին քաղաքը, և հաշտութեան դաշն կապել Ալմարտ քաղաք, ուր «Եին իբրու տասն հաղար տունք Հայոց», և ուր կային մինչեւ անդամ «զօրագլուխք» և «զօրք Հայոց»<sup>2)</sup>։ Սակայն հաղիւ թէ այս «տասն հաղար տունքը» ճիշտ լինի, թէ և նալեանն էլ ասում է. «Ես գիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր 8000 տուն հայ, այժմ հաղիւ թէ կայ 1000 տուն»<sup>3)</sup>։ Ի վերջոյ այս բաղմամարդ Ագուլիսը, որ առեարական կապերով աւելի կապուած էր Պօլսի, քան թէ Թէհրանի հետ, Գաւիթ բէկի արշաւանքների ժամանակ երկու կուսակցութեան է բաժանուել. մեծագոյն մասը, որ առեարական յարաբերութիւններ է ունեցել Պօլսի հետ՝ հակուած է եղել Օսմանցիների կողմը, իսկ փոքրագոյնը՝ Պարսից։ Ուստի և մեծագոյն մասը իրեն գլուխ ունենալով Մելիք-Մուսին, ընդգիւմագրել է Գաւիթ բէկին և նենդութեամբ սպանել Մելիք Փարսագանին, նրան, որ ազատել էր Մելիք Մուսի կեանքը<sup>4)</sup>։ Ես պատմութեան մէջ ագուլցիները միանգամայն արատաւորում են իրենց անունը, միմիայն իրենց առեարական նպատակ-

Սյունէետե գարձեալ պատմութիւնը միանգամայն լուսում է այս կողմերի մասին մինչեւ Շահ-Աբասի օրերը, երբ շատերի հետ գեղթնեցիներ ևս գաղթել են Պարսկաստան և երբ Շահ-Աբասը Ագուլիս գալիս Անդրէս քահանան, որ նորահաստատ գպրատան ուսուցիչն էր, շարժել է նրա բարկութիւնը, և նահատակուել նրանից, չկամենալով ուրանալ քրիստոնէական հաւատը։ Նրա գաղանների առաջ ձգուած նշխարներն ագուլցիները հաւաքել են և ամփոփել Խցոնորի եկեղեցու աջ խորանում<sup>1)</sup>։

Մի ուրիշ յիշատակագիր ևս թէ. գարու վերջում (1692—6 թուերին) պատմում է, թէ ինչպէս Պարսից մի զօրագունոտ ձեացնելով իբր թէ վրաց վրայ պիտի արշաւէ, եօթն անգամ խարէութեամբ ասպատակել է Սիսնիքը և «ի մասն ինչ Գողթնեաց... և բաղում սուտ քրիստոնէայք զծմարիս հաւատս Քրիստոսի փոխանակեցին ընդ... օրինացն Մահմեդի և միաբանեցան ընդ Պարսից, և այնքան

<sup>1)</sup> Առաքել Պավրիսեցի. գլ. իէ.։ Սրա պատմութիւնը հէսց հիմայ էլ զիտէ ամէն մի ագուլեցի։

վնաս և աւերս գործեցին. և մանաւանդ որդիք անիծելոյն վասակայ Սիսնեցիք, որ բազում սուտ կարգաւորք և օրինազանց աշխարհականք... զնացեալ յարեցան ընդ գօրըս նորա, և առեալ սփուցան ընդ ամենայն երկիրս, զգեօղ, զգաւառս, զգնք և աղդ ստութեամբ պատճառս յօդելով, և ոչ մնաց տեղի որ ոչ կոխեցին սուք նոցա. և այնպէս աւեր գարձուցին զերկիրս ամենայն և կողոպտեցին ի ըստացուածոց, առհասարակ զամենեսեան ահաբեկ և որտակուար արարին<sup>1)</sup>։

ԺԷ. գարու սկզբին, Գաւիթ բէկի արշաւանքների ժամանակ, մասնաւորապէս Ագուլիսը յիշում է իբրև բաղմամարդ քաղաք, ուր «Եին իբրու տասն հաղար տունք Հայոց», և ուր կային մինչեւ անդամ «զօրագլուխք» և «զօրք Հայոց»<sup>2)</sup>։ Սակայն հաղիւ թէ այս «տասն հաղար տունքը» ճիշտ լինի, թէ և նալեանն էլ ասում է. «Ես գիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր 8000 տուն հայ, այժմ հաղիւ թէ կայ 1000 տուն»<sup>3)</sup>։ Ի վերջոյ այս բաղմամարդ Ագուլիսը, որ առեարական կապերով աւելի կապուած էր Պօլսի, քան թէ Թէհրանի հետ, Գաւիթ բէկի արշաւանքների ժամանակ երկու կուսակցութեան է բաժանուել. մեծագոյն մասը, որ առեարական յարաբերութիւններ է ունեցել Պօլսի հետ՝ հակուած է եղել Օսմանցիների կողմը, իսկ փոքրագոյնը՝ Պարսից։ Ուստի և մեծագոյն մասը իրեն գլուխ ունենալով Մելիք-Մուսին, ընդգիւմագրել է Գաւիթ բէկին և նենդութեամբ սպանել Մելիք Փարսագանին, նրան, որ ազատել էր Մելիք Մուսի կեանքը<sup>4)</sup>։ Ես պատմութեան մէջ ագուլցիները միանգամայն արատաւորում են իրենց անունը, միմիայն իրենց առեարական նպատակ-

<sup>1)</sup> Սիսական եր. 311.

<sup>2)</sup> Պատմութիւն Գաւիթ բէկին. հրատ. Ար. Գուլամիրեանցի. եր. 37. 45. 60—66.

<sup>3)</sup> Սիսական. եր. 325.

<sup>4)</sup> Գաւիթ-Բէկի պատմութիւնը ժողովրդական աղբիւրներից շուտով մամուլի կը յանձնեմ։

ներն ի նկատի առնելով դաւաճանելով ընդհանուր հայրենիքի ազատութեան դործին:

Սրանց այս տաճկասիրութիւնը մի քանի տարի յետոյ խստիւ պատժուել է պարսիկների կողմից, ինչպէս երեսում է Դիսարի ձեռագիր Յայսմաւուրքի կողքին դրած հետեւալ յիշատակարանից.

Ի ՌՃՀ թ. (1730), ի Ժամանակս թագաւորութեան Պարսից շահ Թահմազին և թագաւորութեան օսմանցոց սուլթան Ահմատին և կաթողիկոսութեան սրբոյ և մեծի աթոռոյն Էջմիածնի տու. Աբրահամին և մերոյ նահանդիս տանին Գողթնեաց սրբոյ և մեծի աթոռոյն սրբուն Թովմայի առաքելոյն առաջնորդ հզահողի և սրբակրօն վարուք Տէր Բարսեղ ածարան վարդապետին ի սոցա ժամանակիս եղեւ մեծ վրդովումս և խոռվ և ազմուկ և կռիւ և կադայինքն ի մէջ երկուց ինքնակալ թագաւորաց օսմանցոց և Պարսից և եղեւ մեծ հալածումն մերազնեաց քրիստոնէից և եղեւ ի փախչին օսմանցոց ի Թաւրիզու և եկին ազգ Պարսիցն ի գիւղաքաղաքն Օրդովիար ժողովեցան և բանակեցին և անտի ելեալ մախն ի Դաշտ կոչեցեալ գեղն երկու տասան հազար հեծելօք և կոսորեցին ի նոցանէ հոգիս գճ արանց, մանկանց և կանանց և գերեցին ի նոցանէ անձինս ըճ և այլ աւելի և ես՝ ականատես եղայ աշօք իմօք և տեսի զաստուածային սուրբ տառս ի ձեռս նետող ազգին Պարսից գերի. դալարեցաւ ազիք իմ և ցաւեցաւ սիրտ իմ<sup>1)</sup>:

Մի կարճ միջոցից յետոյ էլ (1752 թ.) Ագումն է Ենթարկուել մի այսպիսի խիստ աւերման: Ատրպատականի կողմնակալ Աղաս խանը այս տեղով անցնելիս Ագումից խնդրել է յորենի, դարսու և այլ պաշար ու հարիւր հազար գահեկան դրամ, և երբ ագուլեցիք իրենց Եսայի անունով գլխաւորի յորդորով մերժել են, խանը երկու երեք անգամ կրկնել է իւր պահանջը, սպառնալով, որ եթէ չկատարեն, կաւերէ քաղաքը:

<sup>1)</sup> Տէր Յակոր քահանայի ձեռագրից:

մերժել են, նա յարձակել է ագուլեցիների զինուորուած գնդի վրայ և սարսափելի ջարդ տալով, «ի մէջ երրորդ ժամուն Ա. տաճարին քայքայեալ ջախչախեցին, և Սրբոց մաքուր մատունքն ամենայն գերեցին, ...անթիւ քրիստոնեայք արք և կանաքը, երիտասարդք և մանկունք սրով անցուցին, որ զամենայն հողն արեամբ ներկեալ շաղախեաց, և զաւուրս երիս յայս գիւղս բնակեցան. թէ եկեղեցիք և թէ բնակութիւնը ամենայնի մերկացուցին որ իր մերկ ի մօրէ ծնեցեալք: Եւ յետ այսքան որախողութեան յետ մնացեալ քրիստոնեայքն կողոպտաբար գերեցին որ թէ ողորմելի Ագումեաց և թէ բոլոր շնչակայ գիւղօրէիցն մինչ ի ՌՅՇ (1200) քրիստոնեայ գերեցին, և ո. տաճարքն խանգարեցան և եղին անմարդաբնակ, իբր թէ տասնամեան աւերեալ<sup>1)</sup>:

Այս աւերածութիւնից յետոյ ագուլեցիներից շատերը գաղթել են նաև՝ Պոլս, ուր հիմնել են Բէկողլու թալլը, Ագումիսի թաղամասի անունով, որ մինչեւ այժմ էլ մնացել է միայն գերեզմանատան վրայ՝ «Բէկողլու գերեզմանատուն»:

Ինչպէս ասացինք, Պարսից տիրապետութեան ժամանակ Գողթան գաւառը այժմեան ստորկանական սահմաններով կազմում էր մի առանձին միութիւն Աղատ Ճիրան անունով, և կազմում էր նախիջեանի խանութեան մի մասը, իսկ վերջինս ենթարկում էր Ատրպատականի կուսակալին:

Աղատ Ճիրանը բաժանուում էր հինգ մահաների. — 1) Օրդուբագի, 2) Աղուլիսի, 3) Դաշտի, 4) Բելկի և 5) Չանանաբի: Այս մահաները կառավարուում էին միքրոյիւկներով (միքրոլոյկամի), որոնք ենթարկուում էին Օրդուբագում նստող խանին, իսկ սա՝ նախիջեանի խանին: Հայ գիւղերը կառավարուում էին տանուաէրներով, որոնք մինչեւ այժմ էլ մելիք են կոչւում: Թէ մելիքները և թէ մահանդ Օրդուբագի ու նախիջեանի խաները ստատիկ կեղե-

<sup>1)</sup> Սիսական եր. 331.


քում էին ժողովրդին, շատ մելիքներ էլ գործիք էին դառնում խաներին և նպաստում նրանց՝ կեղեքելու։ Ահա ինչ է պատմում արժ. Տէր Յակոբ քահանան սրանց մասին,

«Մելիքները խաների համար գործիք լինելով լուր էին տանում խանին, թէ այս ինչ վաճառականը գալով մեծ փող է բերել կամ լաւ ձի, կամ լաւ ջորի։ Խանը մարդ էր ուղարկում թէ ձիդ, ջորիդ տուր, կամ 100—50 ոսկի փող տուր. ամէն ով որ ընդիմանար, օրերով պիտի կապէին փայտի, ծեծելով արիւն շաղախ անէին։ Մալխանեանք, որ իմ աներանք էին, ասում էին, թէ պանդըխտութիւնից եկած լինելով պահանջում են նրանցից մեծ գումար, և հսկում են, որ չփախչի. նա ցերեկով իւր կնոշը պատուիրում է իրիկուն հացը փռել քուրսու վրայ, կերակուրները ամաների մէջ կարգով գարսել, ճրագը դնել, այնպէս որ հերթից մելիքի մարդիկ հսկելու ժամանակ համարեն թէ տանն են. և ապա իրանք լուռ. ու մունջ պատի տակերով գուրս են գալիս փախչում գնում վերին Ագուլիս՝ ո. Աստուածածին... ուր երեք օր թորոնների մէջ թաք մնալուց յետոյ, դիշերով գուրս է գալիս փախչում Սիւնեաց կողմերը»։

Ապա արժանայիշտատակ քահանան մի առ մի թւում է թէ ինչպէս այսպիսի հալածանքների պատճառով ինչ տներ ուր գաղթեցին։ Հետաքրքրական է Աբրահամ և Ազգամալ մտերիմների խօսակցութիւնը այս հալածանքների ժամանակ։ Մինը ասում է միւսին. «Ազամալ եղբայր, մի հընար գտիր այս գաղթականութեան տուածն առնելու, այսպէս չի լինիլ, ամենքը փախան գնացին»։

Ազամալը պատասխանում է. Վիաս չունի. բողկը քաշի որ հատ հատ լինի, մեծ մեծ տակ կանի։

Հալածանքի հերթը իրենց էլ է հասնում, լուռ ու մունջ գուրս են գալիս դիշերով փախչում. Երբ հասնում են կարծուանի գաշար, լեզուները բացւում է. սկսում են միմեանց հետ խօսել. «Ազամալ եղբայր, ասում է Աբրահամը,



Եղբայր Քաջազնուածան

Մերում

Церковь построена С. Месропом.

Eglise fondée par S. Mesrob (V.S.)

այժմ բողկը մեծացել է, ամէն մինը մի ձմերուկի չափ,  
մինը իմ գլխիս է դիպում, միւսը քո»:

Սովորական երեսյթ էր նաև, որ խանի մարդիկը  
յարձակում էին շրջակայ խաների երկրների վրայ և դե-  
րիներ բերում, թալանում, աւերում: Այսպէս նոյն արժ.  
Տէր Յակոբ քահանան պատմում է, թէ Մամադիւլի խա-  
նութեան ժամանակ «Անոնց Համզին գնում է Ղարաբաղի  
կանայքը և երեխայրը ձմեռ ժամանակ քշում բերում  
Գաշտ գլուզը. ճանապարհին Ալանդեազ սարի գլխին եր-  
կուհոգիս (յղի) կանայք և երեխայր չկարողանալով ընթա-  
նալ, սարից գլորում է, քցում ձևնի մէջ սպանում: Գաշտ  
համելսւն պէս ածում են մեծ մեծ աներ: Շուտով զա-  
րունը բացում է և սով սկսում. ոչխարի նման տանում  
են եղել ցերեկով խոտ արտծացնում, գիշերները բերում  
լրցնում մեծ մեծ աներ և յետոյ եկեղեցու բակը: Պա-  
ռաւները կը պատմէին, թէ գոնով անցնելիս կազաչէին  
մեզ, ազ կուզէին խոտի հետ ուտելու: Շատերը չկարողա-  
նալով ապրել, սկսան կսորուիլ...

Այս սովը 7 տարի է տևում, «Մարդիկ սկսել են բամ-  
բակի հատը բովել, աղալ, նոյնպէս նուշի, ընկոյզի կեղե-  
ները աղալ, ջրով խմորի պէս շաղախել, երկաթի վրայ ե-  
փել և ուտել: Ղարաբաղի Ունանանց Հայրապետը որ 2  
գութան է ունեցել, սովից մեռնելու ժամանակ նրա նազ-  
լու կինը գլխի արծաթները խփում է գետնով և ասում,  
ինչու ես հարկաւոր, որ Ունանանց Հայրապետը մի նըշ-  
խարհաշափ հաց չի գտնում գնի բերնին յետոյ մեռնի:  
Հայրապետի մեռնելից յետ ամբողջ գիւղով (գաշտեցիք)  
անցնում են Պարսկաստան, գնում Լուարջան. այնտեղ աղ-  
ջիկները ջրի գնացած ժամանակ պարսիկները զողանում  
են տանում տալիս Խառ-խանին: Սա էլ նշանուած լինելով  
խոյ քաղաքում, ուղարկում է խոր նշանածի համար. գնում  
աղաչում պաղատում են, բայց չեն կարողանում յետ ստա-  
նալ, նրանց բոնի թուրքացնում են:

Սովորական երեսյթ էր խանի համար աղջիկ հաւա-

քելը, գալիս որոնում էին և 11—13 տարեկան գեղեցիկ աղջիկներին բռնութեամբ տանում խանի հարեմը, և թուրքացնում։ Այսպիսի կրօնափոխութիւնից աղջիկներին աղատելու համար գեռ շատ մատաղ հասակում պսակում էին չափահաս տղաների հետ, որովհետեւ պսակուածներին չէին տանում։ Պատմում են, որ Մելք Կարապետի ցոյց տալով «Մարտիրոսի քոյր Փարուն բռնում են, որ տանեն. սա հէնց որ այս խմանում է, իշակաթնուկ կոչ չուած խոտի կաթը քսում է երեսին, որ այրի ու տղեզացնի իրեն։ Եւ երբ գալիս են բռնելու, փախչում է և մի բարձր կտրից վայր ընկնում, որ մեռնի, բայց ողջ է մնում։ Բռնում գնում են ձիու վրայ և տանում։ Չիուց վայր է ընկնում և կրկին փախչում, սակայն բռնում են, տանում, թուրքացնում։

1797 թուին ժանտախտ է տարտառում Ղարադաշում. աեղական հայերը գալիս են Վ. Աղուլիս և մի վարդապետի ձեռքով ո. Թովմայի աջը տանում, փրկութիւն հայցելու։ Վարդապետը այդ տեղ վարակում է՝ մեռնում. այն ժամանակ ո. Թովմայի առաջնորդը ուղարկում է ներքին Աղուլիսի քահանայ Տէր Անդրէասին՝ աջը յետ բերելու և սա իւր հետ ըերտում է նաև ժանտախտը։ Շատ մարդիկ կոտորում են։ «Ներքին Աղուլիսում մարդիկ այնքան էին պակասած, որ եկեղեցու ճանապարհի վրայ մի ձմերուկի սերմ ընկնելով բուռել և ձմերուկ էր հասցրել<sup>1)</sup>»։

Այս ժանտախտի մասին Դիսարի ժամագրքի յիշատակարանում ասուած է.

«ՈՄԽԶ (1797) թուին եկն մահ աշխարհս նախիջեան, կաւառն Աղաջիրան (Աղատ Գիլան), Ղափան, Ղաղտաղ, Ղարալազ, Թիֆլիս..., և բազում գաւառ կատարեց. այսպէս յաւն զ. օր քաշէր հիւանդն, աւել ոչ, ապա մեռնէր, փախնողն շատ մեռնէր քան նասողն... այսպէս մնաց գ. տարի<sup>2)</sup>։

Առվից ու ժանտախտից յետոյ նախիջեանի Քեօռ Քալ-

<sup>1)</sup> և <sup>2)</sup> Տէր Յակոբի տետրից։

բալա խանը սաստիկ ծեծելով ու տանջելով Գողթնի շատ դիւզացիների, կարողացել է վսաս (թագաւորապատկան, ազատ) գիւղերից միքանիսը սեպհականացնել։ Այսպէս ներքին Աղուլիսում տանուտէր Մելք Նիկողոսին ծառի վրայ կապած Յ օր շաբունակ անդթարար թակումնեն և հարցնում, թէ համաձայն է կալուածագիրը ստորագրելու։ Զորբորդ գիշերը նրա որդի Մկրտիչը տեսնելով որ Փարաշները քնած են, կտրատում է հօր կապանքները, ծառից վայր բերում, շալակում և կէս վերստից աւելի ճանապարհ տանում, Արհանենց այգու խոր ու չոր առուի մէջ թաքցնում։ Այդտեղ ութ օր պահելուց յետոյ, երբ տեսնում է, որ ամբողջ գիւղը ճիպոտի հարուածների տակ ստորագրեցին կալուածագիրը, լուր է տանում հօրը, որը և ինքնակամ գալիս է և ստորագրում։

Տեի գիւղում միայն մի հայ տոհմ է լինում, որա մեծին ստիպում են, որ զիւղը ծախէ, սա յանձն չի առնում, պատճառաբանելով, որ միայն իրենը չէ, այն ժամանակ սրա ձուաները փայտի մէջ դնելով ջարդում են. ամառ ժամանակ (լինելով) վերը որպնում է։ Յետոյ (սրբան) թուրքացնում են։ Նրա թօռը ընակում էր Փառակա գիւղում, ինձ ցոյց տալով առում էին. «Այժմ թուրքերը սորան հայհոյելիս առում են. Քո պապիդ և այլն<sup>1)</sup>։

Բիստ, Ալահի, Փառակայ գիւղերում «գերեզմանների տապանագրերից սապօնով կնիքներ փորել տալով կնքում էին կալուածագրերը<sup>2)</sup>։ Մորվանիս գիւղին երկու փութ կորեկ են տուել<sup>3)</sup>։

Այսպէս սեպհականացներուց յետոյ հարկերը կրկնապատկում է, նոյն իսկ պատճանիներից գլխահարկ է առնում. «պատճանիների պարանոցը թելով չափում էին, պատճում է Տէր Յակոբը, և երկարակելով ծայլից առամներով ըռնել էին տալիս և փորձում, թէ մնացած մասը

<sup>1)</sup> <sup>2)</sup> և <sup>3)</sup> Տէր Յակոբի տետրից։

գլխովն անցնում էր՝ ամբողջ, իսկ եթէ ոչ՝ կէս գլխահարկ պիտի վճարէին <sup>1)</sup>:

Երեք ֆունտանոց (1 հոլիանոց) քարը քաշ էին անում թթենու ծայրից, եթէ չէր խոնարևում՝ հարկ էին վերցնում, այս պատճառով էլ շատերը թթենիները կտրատում էին և նրանց տեղում ցանք անում:

Հարկի պատճառով աղամարդիկ փախչում էին գիշեղից, այն ժամանակ բռնում էին նրանց կանոնց, միքանիսին միասին կապում շուկայի փայտէ սիւնից կամ մի որեւէ ծառից և սաստիկ ծեծելով ստիպում, որ իւմ ամսուինների տեղն ատեն և կամ իրենք տան պահանջուած հարկը: Շատ անդամ պատիժը աւելի խոտայնելու համար կատու էին ձգում կանանց վարտիկը և ծեծում կատուին, որպէսզի ստ ճանկուուէ կանանց ոտները:

Այսպիսի պատիժներից չէին աղատուում նոյն իսկ քահանաները. — Ներքին Ազուլիսում Վարդավառին «Տէր Աստուածատրին պատարագից ետ Ազամուինց շվակում կապում են փայտի և ծեծում հարկ առնելու համար» <sup>2)</sup>:

Այս երեսիցը այնքան սովորական էր դասել, որ մինչև անդամ երբ կանանցը թակում էին, «փախած ամուսինները Մարիամի խաչի ձորում դափ ածելով ուրախութիւն էին անում» <sup>3)</sup>: Եւ երբ հարկահանները հեռանում էին գիշեղից, իսկոյն գղիրն ընկնում էր փողոցները և կանչում:

Պռօտ կէժը, կայսուատ տայստայրիսունը, ծռտուտ ծռւծը վիկայիք ակիք Խաչկուց բօխչան», այսինքն՝ Պռատ կուժը, կապոյս սփռոցը, ծռտոտ վառեկը վերցրէք եկէր Խաչիկինց պարտէզը, որպէսզի քէֆ անեն, երգ ելով.

Ղողուզն ակալ փուղ ըզահալ փուղ չինիլ,

Ճապուտը վոխն վերն թակալ ճօր չինիլ <sup>4)</sup>:

Այսինքն, Գղիրն եկաւ փող ուղեց փող չկար,  
Ճիպոտով ուին ծեծեցին ճար չկար:

<sup>1)</sup> Հարկերի մասին մանրամասն յետոյ ենք իոսելու:

<sup>2)</sup> <sup>3)</sup> և <sup>4)</sup> Տէր Յակորի տեսարից.

Այս տանջանքների պատճառով գիւղացիներից շատերը գաղթում են, վերջապէս երբ Աբաս Միրզա թագաժառանգը այցելում է Գողթնին ու տեսնում բազմաթիւ աւերակ տները, արտերի մէջ կոտրատուած թթենիները, հարցնում է պատճառը և այս կանչերով նախիջեանի խանին և այս գիւղերի տանսւտէրներին ու առաջաւորներին թափրիզ, որոշեալ գումարներ առնելով յօդուտ խանին, հողը կրկին հաստատում է գիւղացիների վրայ: Միայն ներքին Ազուլիսը վճարել է 700 թուման և 120 թուման էլ Աբաս Միրզին ընծայ է տուել այդ բարերարութեան համար <sup>1)</sup>:

Ուսւածանկական պատերազմի ժամանակ էկսանսիանն ու Շէլի Ալի բէկը գաւաճանելով պարսիկներին՝ 0րդուբագը յանձնում են ուսւներին, ուստի և սրանց տիրապետութեան ժամանակ նախիր են կարգւում <sup>2)</sup>: Այս պատերազմների ժամանակ աեղական հայերը չափազանց նեղութիւններ են կրում: Շատերը փախել են զանազան կողմեր, ուրիշներ թաք կացել հորերի մէջ շինուած առանձին տեղերում, շատ կանանց և երեխանների թուրքերն իբր պատանդ տարել են Արաքսի ափին պահել, որպէսզի սըրանց ամուսիններն ու հայրերը չանցնեն ուսւների կողմը: Պարսիկները նահանջելիս տարել են իրենց հետ հայ կանանց իբրև գերի, որոնցից յետոյ շատ քչերն են աղատուել:

Պատերազմից յետոյ Լազարեանի առաջնորդութեամբ գաղթած մատ 45,000 հոգուց այս շրջանում վերաբնակել են 250 գերգաստան կամ 1340 հոգի, աեղաւորուելով 0րդուբագում, Վերին և ներքին Ազաններում, Դերում, Ալահում, Բիստում և ուրիշ գիւղերում:

Ներկայ պրակտում այս գաղթականների մասին չենք խօսելու, որովհետեւ նրանց մասին գրելու ենք նախիջեանի շրջանն ուսումնասիրելու: Այստեղ մեր ասելիքները

<sup>1)</sup> Տէր Յակորի տեսարից.

<sup>2)</sup> Շոպեհ, յ. գ.

մասնաւորելու ենք բնիկների մասին, և այն էլ նրանց, որոնք յայտնի են զօկ անուամբ։ Սրանք բաղմաթիւ չեն և բռնում են միայն վերին և ներքին Ագուլիսը, Անդամէջը, Գլսարը, Ցղնան, Տանակերտը, Ռամիսը, Քաղաքիկը, Փառական։

Զօկ անուան մասին արուած են հետեւալ բացառութիւնները։

Արժ. Տէր Յակոբը ասել է. Հին գողթնեցիներն այս, այդ, այն, ցուցական գերանուան փոխարէն գործ էին առում զօկ, զոկ, նոկ<sup>1)</sup>։ Եւ որովհետեւ սրանք այդ զոկ (այս) գերանում շատ յաճախ են գործածել, ուստի և նրանց կոչել են զոկ, ճիշտ այնպէս՝ ինչպէս հսու (այս) գործածող պօլսեցիներին կոչել են հսու հսու։ Արժ. Հայրը ուրիշ շատ օրինակներ էլ է բերում ապացուցանելու, որ մեզանում սովորութիւնն է հզած միենոյն բառը յաճախ գործածողներին այդ բառով կոչել, յիշեւ օրինակներից մէկ երկուսը։ Ագուլեցի Աբեանց Կարապետը «Թէպէտ» Կարապետ էր կոչւում, Ներքին Ագուլեցի Բալթարեզենց Յովհանէսը «ինձաւարա» (ուրեմն) Օհաննէս անունն էր կրում։

Միենոյն բացատրութիւնն տալիս է նաև Ք. Պատկանեան, ասելով, որ այդ անունը յառաջացել է հոկ, օկ գերանուան յաճախ գործածելուց, դ նախդրով, որը գործածական է եղել անցեալ դարսւմ՝ զոկ, զօկ։ Իւր այս կարծիքը հաստատում է նրանով, որ նրօդերի յառաջ բերած զօկերէն մի հատուածի մէջ խօսողներից մինը անձանօթ լինելով այդ լեզուի հետ՝ ծաղրելով ասում է. «Ջուզայեցեալն, Ղափանցեալն և Հոռմցեալն լաւ կու հասկացեալն, մասնաւորելու համար չեմ թէ ինչ այ<sup>2)</sup>։

Ա. Սարգսեանի հետ հաւանաթիւն տալով այս բացարութեան, ասենք նաև, որ սմանք էլ այդ զօկ բառը հանում են Զօհակ անունից, որ պարսկերէն Աժդահակ է

<sup>1)</sup> Իսկ այժմեանները՝ հոկ, զոկ, նոկ։

<sup>2)</sup> Կ. Պատկանով. Изслѣдованіе о діалектахъ Арм. языка եր. 54.

նշանակում, իբր թէ գողթնեցիները նրա սերնդի խառնաւրդը լինելով նրա անունով զօկ են կոչուել<sup>1)</sup>։

Զօկերի առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ նրանց բարբառը միանգամայն տարբերում է Հայոց թէ գրական լեզուից և թէ բարբառներից, մինչ այն առափեան, որ գրեթէ բարբառին անհասկանալի է ոչ զօկ հայերին։ Եւ հէնց այս պատճառով էլ բոլոր զօկերը բացի իրենց բարբառից, բաւականաչափ ծանօթ են գրական լեզուին, այնպէս որ մի ուրիշ գաւառացու պատահելիս նրանք գրական լեզուով են խօսում։ Մի ընդհանրացած սովորութիւնն է նաև, որ զօկը երբեք զօկերէն բարբառով մի բան, մի նամակ, մի հաշիւ, չի գրիլ, այլ անշուշտ գրական լեզուով, որքան էլ որ քիչ գիտենայ։ Այս պատճառով և այդ բարբառը ոչ ունեցել է և ոչ ունի գրականութիւն։

Զօկերին և Զօկաստանը համարձակ կերպով կարելի է համեմատել Փիւնիկեցիների և Փիւնիկեայի հետ և առանց մարդարէ լինելու գուշակել՝ որ միենոյն վիճակն է սպասում և սրանց։

Զօկաստանը լիրի, ապառաժոս մի երկիր է, մեծ մասսմբ ծածկուած կաւոտ և աւազոտ մարնայով և կրաքարով, ջուրն էլ սաստիկ սակաւ, ուստի և երկիրը զուրկ է բուսականութիւնից։ Զօկերի անխոնջ աշխատանքն է որ զետակների ափերին այդիներ ձգելով և թթենիներ տընկելով ապրուստի մի փոքրիկ աղբիւր են ստեղծել, որ սակայն դոհացուցիչ չէ։ Միենոյն ժամանակ Գողթնը լինելով այն ճանապարհի վրայ, որ միացնում էր Հնդկաստանը Միջն Ասիայի հետ, մօտ լինելով հայոց հին մայրաքաղաքներին, Արմաւիրին, Արտաշատին, Դուբնին և այլ յայտնի շուկաներին, ամենահին ժամանակից սկսած մեծ յարմարութիւններ ուներ վաճառականութեամբ պարապելու, ուստի և զօկը, իւր ծննդավայրի բնական գրութիւնից ստիպուած՝ փիւնիկեցու նման սկսել է վաճառակա-

<sup>1)</sup> Միսական եր. 314.

նութեամբ պարապել։ Այս պարապմունքը պատճառ է եւ զել զանազան տեղեր փոքրիկ գաղոթներ հաստատելու, ինչպէս նուխի, կախ, ջաքաթալա, ծուշի, Աստրախան, Կ. Պօլիս (Բէկովութաղը), Թիֆլիս, Մոսկուա, Թաւրիդ, Մազանդարա, (Ռէշտ), և այն, և այսպիսով կամ երկար ժամանակով և կամ լնդմիշտ բացակայելու ծննդավայրից եւ հէնց այս պատճառով սէրը դէպի իւր ծննդավայրը, հայրենիքը, հետզետէ մարել է, մանաւանդ որ վաճառականական պարապմունքը պարգացրել է նրա մէջ անձնական շահի, եսականութեան զգացմունքներ<sup>1)</sup>, ապացոյց՝ ազուլեցիների բունած գիրքը գէպի Դաւիթը էկը և նրա գործունէութիւնը։ Միւս կողմից շփուելով զանազան ազգութիւնների հետ, նա բոլորից էլ փոխ է առել զանազան սովորութիւններ և յատկութիւններ, ուստի և այսօր զօկական կուլտուրան ինքնուրսյն շատ քիչ բան ունի, դա խառնուրդ է զանազան տեղերի և ազգերի կուլտուրայի. — նրա հարսանեկան սովորութիւնների մէջ միաժամանակ տեղի են ունենում թէ պարսկական շաբաշը և թէ սուստիկան գորեկոն. հագուստների մէջ մրցում են միմեանց հետ Մոսկուան, Մարտէլլը, Վիեննան, Բերլինը, կերակուրները ամէն ազգից մի քանի տեսակը, և այն և այն։

Ըստուներով օտարինը՝ սրանք հեշտութեամբ մուանում են իրենցը և մինչեւ անդամ այսօր բուն զօկական շատ քիչ բան է մնացել. նոյն խակ լեզուն գործածութիւնից դուրս է ձգւում, ոչ միայն սրբէ դաւառացիների, այլև Զոկաստանի այլ գիւղացիների հետ սրանք ընդհանուր հայերէն լեզուով են խօսում և ոչ թէ իրենց զօկերէնով։

Վաճառականութեան շնորհիւ ըմբռներով ուսման կարեսրութիւնը՝ սրանք շատ հին ժամանակից հոգու են տարել թէ իրենց գիւղերում գոլրոցներ բաց անելու և թէ որդիներին ուղարկելու ուրիշ քաղաքներ ուսումն առնելու։ Եւ պէտք է տաել, որ սրանց մեծ մասը ծննդավայր չի

<sup>1)</sup> Ս. Մարգսեան՝ Ագուլեցոց բարբառը, եր. 13.

վերադառնում, այլ մնում է քաղաքներում, ուր նրա զօկութիւնը միանգամայն կորչում է, մանաւանդ երբ, ինչպէս կրթուածներից ոչ քէրը, ամուսնանում են օտար աղջիկների հետ։

Այսպիսով զօկն ու Զօկաստանը լինելով կովկասի գաւառական անկիւնների մէջ ամենալուսաւորն, ամենապաշկաս ազգագրական ինքնուրոյնութիւնն է ներկայացնում։

### Բ. ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ

Գողթան գաւառը թէ հեթանոսութեան և թէ քրիստոնէութեան շրջանում շատ ջերմեռանդ և աւանդապահ է եղել։ Եռնոտ, առանձնացած երկիր լինելով այստեղ հեթանոսութիւնը՝ կարողացել է պահպանուել մինչեւ ս. Մեսրովը օրերը, ինչպէս և քրիստոնէութիւնը Ս. Բարդուղիմէս առաքեալի քարոզութեամբ այստեղ սկսուելով կարողացել է յարատեել մինչեւ Ս. Լուսաւորիչ։

Գողթան գաւառը իրաւամբ նախահաւատ է կոչւում, որովհետեւ սա և Սիւնկը ամենից առաջ են ընդունել քրիստոնէութիւնը։ Այստեղ քարոզել է ս. Բարդուղիմէս առաքեալը, գուցէ և ս. Թովման։ Ատրպատականից գալով ս. Բարդուղիմէսուը մտել է Գողթն, ուր շինել է մի եկեղեցի, որ կոչուել է Տեռոն ընդ առաջ և բոլորովին կտրել Որդուատի վնասակար ջրերը, մկրտել է նար իշխանին ամբողջ անով և առաջնորդ է կարգել իւր աշակերտներից մինին՝ Կումսին, որից և սկիզբն է առել Գողթնի եպիսկոպոսութիւնը։ Մինչեւ Ս. Լուսաւորչի քարոզութիւնը Գողթնում յիշւում են Բարելաս և Մուշէ, իսկ Լուսաւորչից յետոյ մինչեւ իններորդ գարը, 303 սարիների ընթացքում իրրե. Գողթնի առանձին, անկախ եպիսկոպոս յիշւում էն. Մովսէս Տարօնացի, Սահակ Տարօնացի, Զրուանդատ, Ստեփանոս, Յովհաննէս, Մուշէ (500—550), Անաստաս (550—580), Սիոն (594), Մարտիրոս (628), Եսայի (768—773), յետոյ կաթողիկոս). Թ. գարից մինչեւ Ժ. գարը

այլեւ Գողթնի եպիսկոպոսներ չեն յիշատակւում, որովհետեւ այս միջոցում Գողթնը ենթարկուել է Սիւնեաց մետրոպոլիտի վերատեսութեան, ինչպէս այդ ուստի երեսում է Սարգիս Ա. կաթողիկոսի 1006 թ. շրջաբերականից, ուր որոշ կերպով տառած է. «Եւ յերնջակայ դաւախն Բառաձոր, զոր Գողթնեցիքն էին առեալ, նաև զվանանդեւ Գողթն բոլորովին, որոց թէպէտ եպիսկոպոսնեալ էր և կայր սակաւ վայրացն, այլ ի ներքոյ Սիւնեաց նուաճեալ էր»:

ԺԳ. դարի վերջում նորից երեսում են Գողթան եպիսկոպոսները անկախ Սիւնեաց կամ Տաթեփ մետրապոլիտներից և սրանցից յայտնի են Սարկաւագ (1280 – 1300), Տէրունական (1424), Խաչատուր (1699), Պետրոս (1680), Թովմաս Վանանդեցի (1491 – 1712), Յովհաննէս (1708), Թովմաս (1737), Յովհաննէս (1740), Սիմէոն (1830). Սա եղել է վերջին եպիսկոպոսը, որովհետեւ 1838 թ. եպիսկոպոսութիւնը վերացուել է, ենթարկուելով Երեանեան թէմի առաջնորդութեան և այնուհետեւ նշանակուել են լոկ վանահայրեր: Սրանցից յայտնի են. Յակով վարդապետ (1870), Կարապետ վարդապետ (1871), Անանիա վարդապետ Համազապետանց (1881), Գրիգոր եպիսկոպոս Աղավիրեան (1883) և Սահակ վ. Բաղդասարեան:

#### Գ. ՄՑԱՒԹՈՒ ԵԽ ՀԱՍԱՐԱԿԵԿԵՆ ԶԱՐԴԱՑՈՒՄ

«Դեղեցիկ»<sup>1)</sup> և «դինեէտ»<sup>2)</sup> Գողթն դաւառը բաւական մեծ գեր է կատարել նաև գրական ասպարիզում: Դեռ շատ հին ժամանակներում գողթան երգիչները «ախորդելով» երդել և պատմել են Տիգրան Ա. Վահագնի և Սրաշէս Բ. գործերը: Եւ այն մի քանի բեկորները, որ մեր մեծ պատմահօր ջանքերով ազատուած են կորստից, մեր ժողովրդական բանահիւսութեան գոհարներն են կազմում:

Սակայն վազուց արգէն դադարել է այս երկում

<sup>1)</sup> Մտ. Օրբելեան, գլ. Ժէ. <sup>2)</sup> Մ. Խորենացի

բանաստեղծութիւնն ու երգեցողութիւնը, տեղի տալով Երկար հաշիւներին ու շատկի թխթիսկոցին, եւ թէպէտ քաղաքական ու անտեսական պատճառները միանդամայն կերպարանափոխել են գողթնեցուն, սակայն և այնպէս նրա ստեղծագործող ընդունակութիւնը և երաժշտական ունակութիւնը լիովին չեն անհետացել: Նա նոյն իսկ այսօր շատ հնարագէտ, զանազան առևտրական բարդ յերերումներ կազմակերպով է հանդիսանում. նրանցից շատ շատերը լաւ ձայն և լաւ լուզութիւն ունին, սակայն չմշակելով ոչ մի կատարելութիւն չեն ներկայացրել: Բացի սրանից, գժբաղդաբար այս գաւառակի մասին մինչև XVII դարը մեզ ոչինչ յայտնի չէ, ով գիտէ քանի քանի նշանաւոր «Շուն Գալուստներ»<sup>1)</sup> եւ բազմաթիւ երգիչներ են եղել, որոնք անհետացել, գնացել են:

Միակ տունը, որի յիշատակը պահպանուել է գրականութեան մէջ, Ժէ. դարումն է ծաղկել: Սա նուրիջանեանների տունն է, վանանդից, որ հայրենի երկրում չկարողանալով ծառայել ազգային լուսաւորաւթեան՝ հեռացել է Ամսդերդամ, ուր Թովմաս եպիսկոպոսը իւր գրամով, որա հօրեղբօր որդի Մատթէոսը իւր արհեստով ու եղբօր որդի Ղուկասը իւր գիտութեամբ օժանդակելով միմեանց, տաղարան են հիմնել և բացի իրենց և այլ երկասիրութիւններից հրատարակել են երկու շատ նշանաւոր գործ՝ Մովսէս Խորենացութիւնը՝ որպէս ազգային ինքնաճանաշութեան հիմք, և Համատարած աշխարհացոյցը՝ որպէս առևտրական գիտութիւնների հիմնաքար:

Հենց այս միենոյն ժամանակներում մի ուրիշ գողթնեցի, թէպէտ ոչ գրագէտ, իւր գործնական խելքով ըմբռնելով ժողովրդին հասկանալի, աշխարհաբար գրքերի կարեորութիւնը, մեկենաս է հանդիսացել «վատնելով զգոյս և զինչո բազումս ի ձուլումն գեղեցիկ տառիս, ի շինումն

<sup>1)</sup> Շուն Գալուստը Ներքին Ազուլեցի մի սրամիտ առակախօս է եղել, որի առակները կը տպուին մեր «Ժողովրդական առակներ»-ի առաջիկայ պրակներից մինում:

նորակերտ տպարանիս, ի դտումն պատուական թղթոյս և ի յօրինումն ամենայն իրաց պիտանաւորաց», և 1687 թուին վենետիկում հրատարակել է «Պարզաբանութիւն հոգենուագ սաղմոսացն Դաւթի մարդարէին թարգմանեցեալ ինուաստ Յովհաննիսէ վարդապետէ Կոստանդինուապօլսեցոյ...»։ Այս՝ երախտագիտութեան լիովին արժանի անձնաւորութիւնը ադուեցի խօջայ Գուշազարի որդի խօջայ Նահապետն է։

Սոյն դարում մի ուրիշ վաճառական էլ Վերին Ադուեցի, Զաքարիա անունով, դրի է առել իւր հաշիւների հետ նաև ժամանակակից պատմական անցքերը, իւր ընտանեկան հանդամանքները, տան սարք ու կարգը, նոյն իսկ իւր եղբայրներից բաժանուելու մանրամասնութիւններն ու իւրաքանչիւրի ստացած շարժական ու անշարժ կայքը, պղնձէ և արծաթէ ամանեղինները և սրանց արժէքը և այն։ Այս աշխատութիւնը բաւական արժէք ունի թէ աղդագրական տեսակետից և թէ լեզուաբանական, սրովհետեւ դրուած է այն ժամանակուայ աշխարհիկ, դրաբառախառն լեզուով։ Զաքարիոյի այս օրագրութիւնը կամ «Դաւթարը» (ինչպէս ինքն է կոչում), արդէն տպագրել է տուել պ. Աղ. Քալանթարը և շուտով լրյա կընծայէ։

Այնուհետև մինչև ԺԹ. դարի երկրորդ կէսը դրական հօրիզոնում ոչ մի գողինեցի չի փայլում։

Ութունական թուականներին որպէս մի ասուազ երեւմ է Սարգիս Սարգսեանը։ Սա ծնուել է Ցղնայում, որ սկզբնական կրթութիւնն ստանալուց յետոյ տեղափոխուել է Մոսկուա։ Այստեղ թէ գիմնազիֆնական դասունթացքը և թէ համալսարանի պատմական-լեզուաբանական մամնածիւղը (1878 թ.) աւարտելուց յետոյ մի տարի Գէորգեան ճեմարանում եւ այնուհետեւ Բրեանսկի գաւառական քաղաքի պրօդիմուազինում ուսուցիչ է եղել մինչև 1889 թ.։ Պրօդիմնազինի փակուելով Ս. Սարգսեան մի տարի անպաշտօն է մնացել և տպա հրատիրուել է Լազարեան ճեմարանը հայոց եւ ուսուաց լեզուի դասառու։

Երկու տարուց յետոյ 1892 թ. Մարտի 30-ին Սարգսեան վախճանուել է։

Սարգսեանի ամենանշանաւոր աշխատութիւնը «Աղուլեցոց բարբառն» է, որ լեզուաբանական շատ մեծ արժէք ունի։ Գիրքը, որ տպուած է Մոսկուայում 1883 թուին, բաժնուած է երկու մասի, առաջնում լեզուաբանօրէն հետազօտուած է զօկերի բարբառը, երկրորդում դրի են առնուած զօկերի բարբառով ժողովրդական բանահիւսութեան զանազան կտորներ, որոնք հէնց այժմ էլ արդէն անհետացել են ժողովրդի յիշովութիւնից։

1888 թուին մի ուրիշ գողինեցի, պ. Մկրտիչ Բարխուդարեան, զգալով «Փորձ» ամսագրի գաղարմամբ յառաջացած մի ամսագրի մեծ կարիքը, ասպարէզ դուրս եկաւ, եթէ ոչ լիովին, դոնէ մասամբ լրացնելու, ուստի և սկսեց հրատարակել Մոսկուայում մի կիսամեայ «Հանդէսգրան» գրականական և պատմական»։ Յաջորդ տարին պարսնը բացեց նաև մի տպարան, որ շարունակում է գործել մինչև այժմ բաւականաշափ մոքուր և կատարելազործուած կերպով։ Մինչև 1896 թուականը փոքրիկ ընդմիջումներով հրատարակուեց այս ժողովածուն, տալով ընդամենը եօթ գիրք, որոց մէջ յարգելի հրատարակիչը բացի մի երկու թարգմանութիւնից, ինքնուրոյն ոչ մի երկ չունի, չնայելով որ բաւական նախապատրաստուած է՝ լսած լինելով Մոսկուայի պատմական-լեզուաբանական մասնաճիւղում։ Ուստի և պ. Մ. Բարխուդարեանի մատուցած ծառայութիւնը անհմանափակում է միայն նրա տպարանական և հրատարակչական գործունէութեան մէջ։ Պարզ է, որ պ. Բարխուդարեանի հանդէսը չէր կարող փոխարինել «Փորձ»-ին և ամսագրի կարիքը գնալով աւելի ու աւելի զգալի էր դառնում։ ահա այդ պակասը եկաւ լցուցանելու մի ուրիշ գողինեցի, դա պ. Աւետիք Արասիսանեանն է, «Մուրճ» ամսագրի հիմնադիրը։

Պ. Աւետիք Արասիսանեան (ծն. 1857 թ. փետր. 13-ին Վերին Ադուլիսում), իւր սկզբնական կրթութիւնն ըս-

տացել է Ագուլիսում նախ Հայրապետ Քալանթարեանի և ապա հայոց ծխական դպրոցում, աշակերտելով Պերճ Պոօշեանին, Ռուբէն Ջալալեանին և ուրիշներին, որոնք նրա վրայ «անջնջելի» լաւ տապաւորութիւն են թողել<sup>1)</sup>: 1870 թուին եկել է Թիֆլիս և մտել ոչալական դպրոցը, ապրելով նաև Ատեփանոս Պալառանեանի և Կ. Տէր Աստուածառեանի մօտ, որոնք սէր են ներշնչել գէպի հայկական դրականութիւնը: 1875 թուին նա դրել է իւր առաջին յօդուածը «Մշակուում» (№ 28. Արհեստանոցի հարցը Ագուլիսում), իսկ հետեւ տարին՝ առանձին դրբով հրատարակել է բժ. Բոլի «Գործնական խրատներ Երեխաների մտաւոր և ֆիզիքական կրթութեան համար տանը և ուսումնարանում»:

1876 թուին աւարտելով ոչալական դպրոցը՝ անցել է արտասահման, ուր միասժամանակ լսելով Լայպցիկի և Փարիզի համալսարաններում, վերջնականապէս հաստատուել է Սարապուրդում, ուր 1882 թուին յաջող քննութիւն տալով տեղի համալսարանի պետական դիտութիւնների ֆակուլտետում, սատցել է գոկտորի աստիճան:

Վերադառնալով Թիֆլիս պ. Արտախանեան ստանձնել է ընդհանուր պատմութեան դասեր ներսիսեան և Գայիանեան դպրոցներում, որի պատճառով և պատրաստել է «Արևելեան ազգերի հին պատմութեան» գաստղիրը (առաջուել է 1891 թ.):

Այս ժամանակամիջոցում պ. Արտախանեան կարգացել է Արծրունու թատրոնում եօթ գաստիսութիւն քաղաքաւանեսութեան վերաբերմամբ, որոնցից երկուոք՝ «Ազգաբնական շարժումներ» և «Հողի արդիւնաբերութիւնն ու հասարակութիւնը» առանձին դրքոյեներով հրատարակուել են:

1885 թ. թողնելով ուսուցչական պաշտօնը՝ պետական կալուածների մինիստրի լիազօրի հրաւելով մտել է այն խմբի մէջ, որին յանձնուած էր ստումնատիրել Անդրկով-

<sup>1)</sup> Արտախանեանի ձեռագրից.

կամի պետական գիւղացիների տնտեսական դրութիւնը, ու ճանապարհորդել է Նուխու և Արէշի գաւառներն ու մի տարուայ ընթացքում պատրաստել դրանց ուսումնասիրութիւնը, որ զետեզուած է Մատերիալы для изучения экономического быта государственных крестьян в Закавказском крае» հրատարակութեան VI և VII հատորներում:

Այնուհետև նորից ստանձնել է Ներսիսեան դպրոցում ուսուցչութեան պաշտօն, սակայն տեսչի հետ ընհարում ունենալով հրաժարուել է պաշտօնից, դիմել է Վեհափառին այս մասին քննութիւն նշանակելու, որի առիթով և մեծ բանակութ է ունեցել Գր. Արծրունու հետ: Մնալով անպաշտօն՝ բաց է արել «Արդիւնաբերական և առևտնաբական կուրս», միայն շուտով թոյլտութիւն ստանալով «Մուրճ» ամսագիրը հրատարակելու, վակել է այս կուրսերը և լիովին նորիրուել այս միակ ամսագրի հրատարակութեան:

Մեծ տոկունութեան շնորհիւ պ. Արտախանեանց կարողացաւ 12 տարի շարունակ համբերութեամբ տանել «Մուրճ»-ի հրատարակութիւնը, կրելով նիւթական մեծ գրկանքներ, սակայն պարսնի նընքան մեծ յամառութիւնը հետզետէ իրանից հեռացրեց այն դրական պյտերը, որոնք համախմբուել էին միակ ամսագրի շուրջը: Ի վերջոյ պ. Արտախանեանը ստիտուց վաճառել իւր ամսագիրը պ. Կրասիլնիկեանին, որից մի տարի յետոյ անցաւ նոյնպէս դողմնեցի պ. Լեռն Սարգսեանին:

Պ. Արտախանեանին հէնց սկզբից շրջապատել են ուրիշ գողթնեցիներ՝ պ. պ. Բալանթար, Լ. Արդուեան, Լ. Մանուկեան և Փ. Վարդապարեան: Առաջին երեքը իրեւ խմբագրութեան անդամներ թէ խորհրդով և թէ իրենց յօդուածներով բաւական լու առաջ են տարել ամսագրի խմբագրութիւնը, իսկ պ. Փ. Վարդապարեան (Ներքին Ազուլեցից) յանձն էր առել ամսագրի հրատարակութիւնը Արկայն սրանց միահամուռ դործունէութիւնը հազիւ եր-

կու տարի կարողացաւ տեսել: Պ. Վարդաղարեան հրաժարուեց «Մուրճ»-ի հրատարակութիւնից և սկսեց հրատարակել «Հօրիզոն» վեցամսեայ հանդէսը, որի միայն առաջին գիրքը լոյս տեսաւ: Պ. Վարդաղարեան տւելի լաւ համարեց փոխանակ վեցամսեայ հանդիսի, առանձին գըրքեր հրատարակել և լոյս ընծայեց Յ. Թումանեանի Բանաստեղծութիւնները: Սիրելով հրատարակչական գործը, ող, Վարդաղարեան վարեց նաեւ Ազգագրական Հանդիսի հրատարակութեան վարչութեան անդամի պաշտօն մօտ երեք տարի:

Պ. Աղէքսաննը Քալանթաք ծնուել է Վերին Աղուլիսում 1855 թուի սեպտ. 20-ին. սկզբնական կրթութիւնը ստացել է իւր հօր՝ Հայրապետի դպրոցում, յետոյ մտել է Բաղուի բէալական գեմնազիոնը, ուր տւարտել է 1875 թ. սոկէ մեղալով, ապա գնացել է Մոսկուա, ուր մի տարի տեխնիքական գոլոցում մնալուց յետոյ տեղափոխուել է Պետրուան Երկրագործական եւ Անտառային ճեմարանը, եւ այստեղ 1879 թուին տւարտել է գիւղատնտեսութեան կանդիգատի աստիճանով:

Պ. Քալանթաք իւր դրական գործունէութիւնն սկսել է գեռ աշակերտական շրջանում, 1873 թուին, հրատարակելով իւր առաջին յօդուածը «Մշակում», իսկ յաջորդարին տպագրել է առանձին դրքոյիններով հետեւեալ թարգմանութիւնները՝ Տնտես, Յակոբ Էրլիս Հովմանի, Ասոյանանկ Դրէյֆ: Եաբունակելով աշխատակցել «Մշակում» ընդհանուր եւ տնտեսական յօդուածներով՝ նա առաջինը սկսել է դրել հողային եւ կաթնատնտեսական հարցերի մասին:

Պետական կայքերի մինիստրի յանձնարարութեամբ պ. Քալանթաքը 1882/3 թուին ճանապարհորդել է արտաստիճանան ուսումնասիրելու կայնատնտեսութեան տեսական եւ գործնական այժմեան դրութիւնը եւ ապա՝ մինչեւ 1887 թ. որպէս անդամ Թուսաստանի անասնապահութեան ներկայ գրադիւնն ուսումնասիրող յանձնախմբին եւ

այնուհետեւ մինչեւ 1894 թուականը որպէս Կովկասի պետական արօտատեղերի կարգաւորիչ՝ նո երկար ճանապարհորդել է թէ Ուստաստանում եւ թէ, մանաւանդ, Անդրկովկասում, որով և միջոց է ունեցել ծանօթանալու եւ ուսումնասիրելու Անդրկովկասն ու նրա բնակիչները:

Զկամենալով մի առ մի յիշել նրա գիւղատնտեսութեան վերաբերեալ ուսումներն մեծ եւ փոքր աշխատութիւնները, որոնց թիւը մօտ յիսունի է հասնում, եւ այն գործունէութիւնը որ նա կատարել է թէ որպէս Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան Խորհրդի անդամ եւ նոյն ընկերութեան „Կավազսկое Сельское Хозяйство“-թերթի պատասխանառու խմբագիր, թէ որպէս Կովկասեան Գիւղատնտեսական եւ արդինագործական ցուցահանդիսի կազմակերպութիւններից մին, թէ որպէս Ախալքալաքի երկրաշարժից վաստուղներին նպաստող յանձնաժողովի անդամ և թէ որպէս շրջիկ կաթնարան եւ կաթնատեսական գասախօսութիւններ կազմակերպող Անդրկովկասի գիւղերում, մասնաւորում ենք մեր խօսքը նրա հայկական գրականութեան մատուցած աշխատառութիւնների վրայ, յիշատակելով միայն նրա «Կաթնային արդինքներ» յօդուածը, որի թարգմանութիւնը տպագրուեց «Ազգագրական Հանդիսի» չորրորդ գրքում: Զանց ենք առնում խօսերու նաեւ այն մի շարք գասախօսութիւնների մասին, որ նա կազմակերպել է Բագրում 1885 թուին, մի խումբ երիտասարդների հետ, նիւթ վերցնելով անտեսական, գըրական եւ նոյն խոկ ազգագրական հինդիբներ:

Գեռ 1889 թուին, նա որպէս «Մուրճ»-ամսագրի խըմբագրութեան անդամ՝ նամակեան ստորագրութեամբ զետեղել է «Մուրճ»-ում «Կեանքի գծեր» եւ «Պատրիկեանի նամակինքը», մի շարք քննադատական յօդուածներ եւ նոյն խոկ թարգմանութիւններ, ինչպէս Մարկ Տուէնից, Լդգար Պօից: Ապա 1893 թուին ընտրուելով «Մշակ» լրագրի խմբագիր, մինչեւ օրս էլ վարում է այդ պաշտօնը, գըրելով ոչ միայն առաջնորդողներ, այլ եւ «Մանրանկար-

ներ», տեղագրական յօդուածներ՝ ինչպէս «Սասուն»ը, թատրոնական քննադատութիւններ «Միբող» ստորագրութեամբ, տնտեսական և քաղաքական տեսութիւններ:

Չընկճուելով խմբագրական ծանր և բազմակողմանի աշխատանքների տակ, պ. Քալանթարը կարողացաւ միաժամանակ լինել թէ Ներսիսեան դպրանոցի հոգաբարձու (1893—1899) և թէ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան վարչութեան նախագահ վերջին տասնամեակում, որի ընթացքում ընկերութիւնը հասու իւր ամենաբարձր զարգացման:

Պ. Լետն Սարգսեանը ծնուել է 1862 թ. Հոկտ. 23-ին Յղմայում. սկզբնական կրթութիւնն ստացել է տեղական ծխական դպրոցում, ապա 1873 թ. ուղարկուել է Մոսկուա՝ Լազարեան ճեմարան, ուր 1884 թ. աւարտելով մաել է նոյն մայրաքաղաքի համալսարանի բնագիտական բաժինը և աւարտել 1888 թ. կանդիտատի աստիճանով: Վերագրանալով Կովկաս, նա անցել է Տաճկա-Հայաստան և իւր ճանապարհորդական նկատողութիւնները հրատարակել «Եյց թիւրքաց Հայաստանին» խորագրով:

1889 թ. ստանձնելով ուսուցչական պաշտօն Ներսիսեան և Գայիանեան դպրոցներում, նա միաժամանակ պարապել է գրականութեամբ՝ լինելով «Մուրճ»-ի խրմբագրութեան անդամ և Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան Խմբագրական Մասնաժողովի նախագահ: 1892 թ. պ. Սարգսեան տեղափոխուել է Շուշի, թեմական դպրոցի տեսուչ, սակայն պաշտօնավարութեան երրորդ տարին զանազան խռովութիւնների պատճառով հրաժարուեց եւ երբ Ներսիսեան դպրանոցի տեսուչ լնորուելով Հաստատուեց Վեհափառից, հեռացաւ Մոսկուա եւ ուսուցչական պաշտօն ստանձնեց Լազարեան ճեմարանում: Հինգ տարուց յետոյ 1900 թուին երբ «Մուրճ» ամսագիրը մնցաւ պ. Կ. Կրասիլնիկեանին, պ. Լ. Սարգսեան հրաւիրուեց որպէս խմբագրութեան անդամ: Մի տարուց յետոյ պ. Սարգսեան մոսկուարնակ պ. Պո-

ղոսեանի հետ գնեց «Մուրճ» եւ ինքն սկսեց անկախ խըմբագրել, վերջին տարիս հրատարակչութիւնն անցաւ տ. Քանանեանին, բայց խմբագրութեան ամբողջ հոգաբարցեալ մնաց պ. Լ. Սարգսեանի վրայ:

Պ. Սարգսեան, որ դեռ ուսանող ժամանակ թղթակցել է հայոց զանազան թերթերի, առանձին գրքով հրատարակել է նաև «Ժողովրդի կրթութիւնը մեղանում», «Հին ցաւ» եւ «Մայրենի խօսք» (Կուսիկեանի հետ), բացի «Եյց թիւրքաց Հայաստանին», որ վերեւ յիշեցինք:

Արժ. Կարապետ վարդապետ Ցէր Մկրտչեանը ծնուել է Յղմայում (1866 թ. Մարտի 17-ին): Նրա հայրը շատ ընթերցաբեր և աղօթասէր ու շրջակայքում յայտնի է եղել որպէս «Եփեմերտի նայող», մայրը նոյնպէս մի կրօնասէր և աչքի ընկնող բարեմասնութիւններով օժտուած մի կին է եղել: Բացի այս երկուսից՝ Փոքրիկ Կարապետի հոգու վրայ ահազին ազգեցութիւն է ունեցել նաև նրա պապը՝ մի առաքինի և բարեպաշտ ծերտնի: Սկզբնական կրթութիւնն ստացել է նախ իրենց գիւղի ծխական դպրոցում, և ապա տեղափոխուելով Զաքաթալա իւր մօրեղբօր՝ Յ. ա. քահանայ Աստոմեանի մօռ՝ այնտեղի գաւառական և ծխական դպրոցներում՝ ընկերակցելով բանաստեղծ Աղ. Մատուրեանին: Յետոյ 1880 թուին ընդունուել է Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում որպէս Ճրիավարձ գիշերօթիկ սան, ուր ուժ տարի մնալով աւարտել է առաջնակարգ մրցանակով: Աստուածաբանութեան ուսուցիչ գեր: Օրմանեանի գասաւանդութեան և կուսակրօնութեան պատրաստուող տեսուչ՝ Նահապետեանի մասնաւոր խօսակցութեան ազգեցութեան տակ Կարապետը ուրիշ երեք գասլնկերների հետ ընդունել է սարկաւագութեան աստիճան և մի տարի ճեմարանում ծառայելուց յետոյ Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու միջոցներով գնացել է արտասահման աստուածաբանութիւն ուսանելու:

1893 թուին «Պատղիկեանք ըիւզանդական կայսրութեան մէջ եւ ցեղակից աղանդատը երեւյթներ Հայաս-

տանում» հմտալից աշխատութեան առաջին մասը՝ (Յունական ազգիւրները պաւզիկեանց մասին<sup>1)</sup>) ներկայացնելով Լայզերիկի համալսարանին՝ ստացել է փիլիսոփայութեան դոկտորի միցանակագիր։ Այսուհետեւ միառժամանակ ևս լսելով Բերլինում, Փարիզում և Մարբուրգում՝ ստուածաբանութիւնից քննութիւն է առել վերջինիս համալսարանում և ստացել աստուածաբանութեան լիցենցիատի մրցանակագիր։ Այսպէս՝ թէ փիլիսոփայական և թէ աստուածաբանական գետութիւններն ուսած ու հին ու նոր լեզուների մէջ բաւական վարժուած չնորհունակ կարապետը վերադարձել է Ս. Էջմիածին, վարդապետ ձեռնադրուել և ստանձնել ճեմարանումնախ ուսուցչի, յետոյ տեսչի օգնականի և աղա տեսչի պաշտօն, միաժամանակ աշխատակցելով և միքանի տարի խմբագրելով «Արարատը» Արժ. Հայր սուրբի մի յիշատակելի գրական դորձն էլ այն է, որ նա միքանի ճեմարանաւարտ երիտասարդների օգնութեամբ Մ. Աթոռի բոլոր ձեռագիր Աստուածաշունչներից կարեռագոյններն ընտրելով համեմատել է (մինչեւ Մակարոյեցւոց գրքերի վերջը) և այդ համեմատութեան արդիւնքը բաղդագեղեց երբայերէն և յունարէն բնագիրների հետ՝ Ծննդոց և Ելից գրքերը պատրաստել է տպագրութեան համար, որից, սակայն, մինչև այժմ միայն մի թերթ է տպագրուել։ Արժ. Հայր սուրբը անցեալ տարուանից երեւանի թեմի առաջնորդական վոխանորդ է կարգուած։

Պ. Լետն Մանուէլիանը ծնուել է 1864 թ. Ներքին Ագուլիսում, սկզբնական ուսումը ստացել է իւր ծննդավայրի և Վերին Ագուլիսի ծխական գործոցներում, առաջ 1877 թ. մաել է Թիֆլիսի դիմադիսնը, ուր 1885 թ. աւարտելով շարունակել է Մոսկուայի համալսարանի պատմական—լեզուաբանական բաժինը; Այսուղ պետական քըննութիւնը տալուց յետոյ վերադարձել է Կովկաս և ուսուցչական պաշտօն վարել Գէորգեան ճեմարանում (1891—

<sup>1)</sup> Սրա երկրորդ մասը՝ «Թոնդրակեցիք մեր օրերում» յետոյ լոյս է տեսել Zeitschrift für kirchengeschichte ամսագրում:

94), և ներկաիսեան գողթանոցում (1894—1897): Ապա սահպատած լինելով թողնել ուսուցչութիւնը, աեղափակուել է Բագու, ուր մինչեւ անցեալ տարի մատենագրանապետ էր Մարգարիտական Ընկերութեան Գրադարան—ընթերցարանում:

Պ. Լ. Մանուէլեան, որ հայ վիպասանների և բանաստեղծների շարքում իւր որոշ տեղն ունի, մինչև այժմ տուել է հետեւեալ երկերը. Տիգրանուհի, Խորտակուածկեանը, Բանաստեղծութիւններ, Նկարիչ Թաշճեան, Չալաբինների արշաւանքը, Գոկասր Երուանդ Յօշայեան, Դէպի վեր, Գրամատիկական պոէմա:



Գողթան գաւառը ոչ միայն գրական ասպարիգում, այլ և հայերիս մտաւոր—հասարակական գարգացման գործում բաւական մեծ դեր է կատարել, տալով բարձրագոյն կրթութիւն ստացած բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնք ոչ միայն որպէս մասնագէտներ, այլև որպէս հասարակական գործիչներ ծառայել են գիտութեան և ժողովրդին: Ուստի և մենք հարկ ենք համարում այսուեղ յիշել այդ բոլորին, գոնէ որքան մեզ յայտնի են, թուելով միանգամայն նրանց մատուցած ծառայութիւնները: Հարկ համարեցներ յիշել նաև այն անձնաւորութիւնները, որ թէպէտ բարձրագոյն կրթութիւն չեն ստացել, բայց և այնպէս՝ գոնէ իրենց զիւղում հասարակական մի որոշ գեր են կատարել:

Ամենից վազ և ամենից շատ վերին Ազուլիսն է տուել բարձրագոյն կրթութեան տէր մարդիկ: Տէրեան տունը առաջինն է եղել, որ մետաքսի առետրով բաւական մեծ հարստութիւն դիզելով ոչ միայն իւր, այլ և համագիւղացիների որդիների կրթութեան մասին հոգս է տարել, բաւական մեծ գումար նուիրելով տեղական հայոց գպրոցին: Այս պատճառով և այդ արժանայիշատակ նուիրատուն՝ Աւետիսը՝ թաղուած է նոյն ուսումնարանի և Ս. Քրիստոփոր եկեղեցու գաւթում: Այս միենոյն անձնաւորու-

թիւնն է, որ շինել է Աղա գիւղում, Դիրան-չայի վրայ մի քարաշէն, ահագին կամուրջ:

Այս միւնոյն տանից Դրիգորը վաթսունական թուականներին ուսանելով Մոսկուայի համալսարանում, հոգացել է Սպուլիսում գրադարան—ընթերցարան բաց անելու<sup>1)</sup> և սկսել է հայերէն թարգմանութիւններ անել, սակայն վաղահաս մահը անկատար է թողել նրա ցանկութիւնները: Սոյն տնից համալսարանական կրթութիւն են ստացել նաև հատեեանները, որոնցից միքանիւը փոխանակ Տէրեանի՝ Տէր Մկրտչեան են կոչւում՝ եղբայրներից մինի անունով. պ. պ. Մարտիրոս և Մկրտիչ Տէրեանները աւարտել են Մոսկուա՝ իրաւարանական բաժինը, ասածինը շարունակել է իրենց հայրական առևտրական գործը, իսկ երկրորդը՝ հաստատուած է Մոսկուայում և պարապում է իրաւարանութեամբ:

Պ. Դրիգոր Տէրեանը աւարտել է նոյնպէս Մոսկուա՝ բժշկական բաժինը և այժմ այդ միւնոյն տեղում հոգեկան հիւանդութիւնների սեպհական հիւանդանոց ունի: Քրիստափոր Տէր Մկրտչեանը աւարտել է նոյնպէս Մոսկուայում, միայն բնագիտական բաժնում, այժմ արգէն վախճանուած է: Պ. Մտեփան Տէր Մկրտչեանը աւարտել է Մոսկուայում և հաստատուել նոյն տեղում: Կարապետ Տէր-Մկրտչեան լսել է Փարիզում մատիւմատիկական գիտութիւններն և այժմ ուսուցիչ է Գէորգեան ճեմարանում:

Տէրեաններից յետոյ, բայց թուով նրանցից աւելի, բարձրագոյն կրթութեան մարդիկ տուել է Քամանթարեան տունը, որից պ. Յովհաննէսը դեռ 1860 թուին աւարտելով բժշկական մասնաճիւղը Լօնդոնի համալսարանում, ընդմիշտ հաստատուել է Անգլիայի ծովեգերեայ Սկարբեր քաղաքում: Սա արել է միքանի գիւտեր, ինչպէս արհեստական սառոյց պատրաստելու նոր միջոց, նոր ձեի ջերմաչափ, կատարելագործուած բիցիկ և այլն: Սրա եղբայր. պ. Դաւիթթը Խալիլեան գլուխն աւարտելուց յետոյ ազատ ունկնդիր է եղել Լայպցիկի համալսարանում, ապա մի առժամանակ ուսուցիչ է եղել Վ. Ագուլիսում, Երեանի թեմական դպրանոցում, իգդիրում և Գէորգեան ճեմարանում, այնուահետեւ առաջ Տրապիդոնում, իսկ այժմ վերահաստատուած է Բրուսասայում, ուր ունի սեպհական վեցդասարաննեան դպրոց:

Այս երկուսի աւագ եղբայր պ. Հայրապետը թէն չէ ստացել բարձրագոյն կրթութիւն, այլ միայն ուսել է եղմիածնում, սակայն 40 տարի շարունակ ծառայելով դպրոցական գործին և

<sup>1)</sup> Հայկական աշխարհի Կոռոնկ. 1865 թ. № 5—6 եր. 130.

իւր գրեթէ բոլոր որդիներին բարձրագոյն կրթութեան տալով միանգամայն արժանի է յիշատակութեան: Նա առաջինն է եղեւ որ բացել է Ագուլիսում կանոնաւոր դպրոց տղաների համար 1848 թուին, որ յետոյ փակուել է, երբ բացուել է պետական առմտրական դպրոցը, իսկ 1861 թուին սա բացել է աղջիկների դպրոց, առաջինը Անդրկովկասի գաւառներում, ուր դասաւանդել է նաև նրա ամուսինը: 1864 թուին նա վերաբացել է նաև տղաների դպրոցը: Այս երկուսն էլ յարատելել են մինչև 1870 թուականը: Այսուհետեւ պ. Հայրապետը ուսուցչական պաշտօն է վարել Բագու Մարգարիտական Ընկերութեան դպրոցում, և յետոյ մի առժամանակ ևս իւր սեփական դպրոց բաց արել Բագուում:

Սրա որդիներից՝

պ. Աղէքսաննըրը՝ աւարտել է Պետրոսեան Երկրագործական և Անտառային ճեմարանը, և այժմ «Մշակ» լրագրի խմբագիրն է: (Տես եր. 38): պ. Աւետիսը միւնոյն ճեմարանում. այժմ հաստատուած է Պետրբուրգում իր գլխաւոր վերահսկող կաթոնանահութեան: պ. Արսէնը աւարտել է Գէյզէնհայմի (Գերմանիա) գիւղանտեսական ճեմարանը, հաստատուած է Թիֆլիսում և աշխատակցում է Կավե. Սելյէ. Խ03. Թերթին, ունի միքանի թարգմանութիւններ: Պ. Դրիգորը աւարտել է Ցիւրիխում քիմիական բաժինը և հաստատուել է Բագուում: Պ. Անուշաւանը նոյնպէս քիմիական բաժինը Բերլինում: Սշխատակցել է «Մուրճ» թիւն, իսկ այժմ «Մշակ»-ին: Հաստատուած է Բագուում: Պ. Ծիգրանը աւարտել է իւրէվի անասնաբուժական բաժինը:

Արասխանեան տնից, որ զանալով Տէրեան տան փեսան՝ սկսել է գեր խաղալ Ագուլիսում, եղել է միայն մի համալսարանական, պ. Աւետիսը, «Մուրճ» ամսագրի հիմնադիրը:

Այս տներից յետոյ սկսել են գեր խաղալ Հայկականագարեան, Աբիեան և Ներսիսեան տները, որոնց միացած առևտրական տունը մասնաճիւղեր ունենալով Մոսկուայում, Երևանում, Բագուում, Աստրախանում, Ասխաբատում, Բալֆորչում, Սարգում, Ղշաբուր, Թուրբաթ (չորսն էլ Պարսկաստանում), և Մարսէլլում, բաւական նպաստել են բամբակի և բրդի առևտրին:

Հայկականագարեան տանից Սարգիսը վաթսունական թուականներին միջնակարգ կրթութիւն ստանալով Խալիպեան դպրոցում, շատ պիտանի է եղել իւր հայրենի գիւղին, կատարելով մի շարք հասարակական պաշտօններ. այսպէս 12 տարի շարունակ հոգաբարձու լինելով Հայոց ծխական դպրոցներին Վեհ. Մակար կաթողիկոսից «Մշանչեստաւոր պատուաւոր հոգաբարձուի» տիտղոսին է արժանացել: Իր Գողթն զաւառակի ներկայացուցիչ

մասնակցել է կաթուղիկոսի ընտրութեան համար թեմական պատգամաւորի ընտրութեան: Գէորգեան ձեմարանում և Երևանի թեմական պարզոցում զանազան ժամանակներ որդեգիրներ է պահել: Երկար ժամանակ երեսփոխան է եղել Ագուլեաց զանազան եկեղեցիներում և Ս. Թովմայի վանքի հոգաբարձութեան անդամ: Միւնոյն ժամանակ նա համարում է վերոյիշեալ առևտրական տան հիմնադիր-անդամ:

Արիշեան տունը տուել է երկու համալսարանական՝

Պ. Քրիստափորը աւարտել է Պետերբուրգի Անտառային ձեմարանում և հաստատուել է Աստրախանում:

Պ. Խաչատորը՝ Մոսկուայի բժշկական բաժնում և հաստատում է Թիֆլիսում:

Ներսիսեան անից

Պ. Մենտորը աւարտել է Ֆրէյբերգի հանքարանական ձեմարանը:

Բաւական գեր են խաղացել և խաղում են նաև Տէր Միքայէլեան տունը, որից պ. Յովիաննէսը աւարտել է Խարկովի բժշկական բաժնում և հաստատուած է նոյն տեղում, իսկ պ. Հայկը եղել է Պետերբուրգի տեխնոլոգիական ձեմարանում, հաստատուած է Բագրում և մի ժամանակ աշխատակցել է Մշակին Նեմօ ստորագրութեամբ:

Այժմ գեր է խաղում նաև Փանեան տունը, սակայն գերիս համալսարանականներ չեն տուել:

Բացի վերոյիշեալ տներից, որ Ագուլիսում նշանաւոր են համարում և հասարակական որոշ գեր են կատարել կամ կատարում են, կան նաև ուրիշ համալսարանականներ, որոնց տան մեծութիւնը իրենցով է սկսում. այսպիսիններն են. պ. Յակոբ Տէր Զանեան, աւարտել է Փարիզում բժշկական բաժինը և Ռուսաստանում քննութիւն տալուց յետոյ հաստատուել Թիֆլիսում:

Պ. Մինաս Մկրտչեան աւարտել է Կիեվում բժշկական բաժինը և հաստատուած է Թիֆլիսում, ուր ունի կանանց հիւանդութիւնների մասնաւոր հիւանդանոց:

Պ. Շմատոն Աղամիքիսեան, աւարտել է Մոսկուայի բժշկական բաժնում և հաստատուած է Բագրում:

Պ. պ. Արշակ Բարխուդարեան, Գրիգոր Դէորգեան, Աղէքսանդր Մնացականնեան, Արշակ Յակովիքեան, Թովմս և Ասլանեան աւարտել են Մոսկուայի համարանի իրաւարանական բաժինը, առաջին երեքը հաստատուել են Թիֆլիսում, իսկ վերջին երկուը՝ Մոսկուայում:

Պ. Քրիստուփոր Միքայէլեան աւարտել է ուսուցչական

ինստիտուտ և եղել է Մոսկուայի Պետրոսեան գիւղատնտեսական ձեմարանում:

Պ. Յովսէփ Թաղէոսեան, աւարտել է Մոսկուայի համալսարանի պատմակղուաբանական բաժինը և 2 տարի լսել Միւնիսի և Յներլինի համալսարաններում: Աշխատակցում է «Մուրան»<sup>1)</sup>, Quidam ստորագրութեամբ. այժմ վարում է ուսուցչական պաշտօն Բագրում:

Յիշատակութեան արժանի է Քրիստափոր Թաղէոսեանը, ուսուցչական ձեմարանից, որի փոքրաթիւ բանաստեղծութիւնները բաւական տարածուած են մանաւանդ Ագուլիսում: Սա աեսուչ էր Աղէքսանդրապոլի Հայոց ծխական պարզոցում, ուր և՛ վախճանուեց: Այս վաղամեսիկ բանաստեղծի ուսանաւորները հրատարակուած են Բագրում մի խումբ համակրողների կողմից:

Պ. Գարեգին Աթարէկեան, աւարտել է Մոսկուայում՝ բժշկական բաժինը:

Պ. Աղամիքիսեան, Մոսկուայի Պետրոսեան գիւղատնտեսական ձեմարանում:

Պ. Թովմաս Մարգարեան աւարտել է Պետրոսեան Գիւղատնտեսական ձեմարանում և այժմ հաստատուած է Աստրախանի նահանգում:

Յիշատակութեան միանգամայն արժանի է նաև գերասան պ. Ստեփան Սաֆրավեան, որ ոչ միայն արժանապէս ծառայեց բեմին Կովկասում, այլև Պարսկաստանում ուսհանորդ (pionnier) հանգիսացաւ:

Օրբորդներից միմիայն մինը՝ Շուշանիկ Տէր Նիկոլասեան աւարտել է Մոսկուայի ատամնարութեական բաժնում և հաստատուել է Թիֆլիսում:

Ներըին Ազուլիսում մի. գարում նշանաւոր է եղել Սէթեան Մահտեսի Մելքոնը, որ շինել է այս գիւղի և ուրիշ վեց եկեղեցիներ. ինչպէս և՛ իւր անունով այժմ էլ կոչուող աղբերը Ներքին Ագուլիսում<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Մահտեսի Մելքոնի մասին աւանդաբար պատմում են, թէ Շահ-Արաւը Ներքին Ագուլիս եկած միջոցին հաւանում է նոյն տեղի մահտեսի Մելքոնի չափազանց գեղեցիկ կոտջը և կամենում է իւր հարիմը տանել: Ժողովուրդը ցանկանում է մի ուրիշին ուղարկել, որովհետեւ մահտեսին իրենց առաջաւոր մարդն էր: Սակայն մահտեսին չկամենալով շահի բարկութիւնը ժողովրդի վրայ թափել, հաշառում է զառը ճակատագրի հետ և թոյլ է տալիս, որ տանեն կոտջը: Մի առ ժամանակից յետոյ երբ նկատում է որ

ԺՀ. գարում նշանաւոր են եղել ՄԵԼիք Գիւլամբար, ՄԵԼիք Ստեփան և ՄԵԼիք Յովհաննէս տանուտէրերը, որոնք ոչ միայն գործիք են եղել խաների ձեռքում ժողովրդին կեղեքելու, այլ և իրենք որպէս մի մի բռնակալներ՝ կեղեքել են ժողովրդին։ Զիամինալով ծանրանալ այս կէտի վրայ՝ բերում ենք միմիայն մի ապացոյց։

Վշտից հալ ու մաշ է լինում, վեր է կինում, զնում Սպահան, և ծպտուած սկսում իր հասալակ սրմնազիք աշխատել շահի պալատի մօտ, յուսալով մի օր առիթ ունենալ տեսնելու իւր կնոջը շահի մօտ, եւ յիրաւի, մի օր տեսնում է իւր կնոջը շահի հետ նստած՝ նարզի խաղալիս։ Խակոյն պարսկական սովորութիւնից օգտուելով սկսում է երգելով աշխատել և ասում է,

Քէօննա ղարդը՝ թագալանտի, օղլան վեր զեան (հին վէրքիրս վերանորոգուեցան, այ տղայ կիր տուր)։

Կինը ամուսնու ձայնը լսելով խակոյն ճանաչում է նրան ու պատասխանում կողմնակի կերպով, զառը ձգելով. Քէշաննան ըեշմակ կեարակ, եա կեալասան շաշ ու փանջ։ (Անցեալից պէտք է անցնել, այ թէ գաս վեց ու հինգ)։

Շահ-Արաս կասկածում է այս երգի և նրան համապատասխանող պատասխանի վրայ և ստիպում է կնոջը խոստովանելու, ապա թոյլ է տալիս նրան  $\frac{1}{2}$  ժամով տեսնուել ամուսնու հետ և եթէ կամենում է՝ գնալ նրա հետ։ Կինը հասկանալով, որ այդ միմիայն իւր զգացմունքները փորձելու մի միջոց է, տեսնուում է իւր ամուսնու հետ, և ասում նրան, որ եթէ շահը առաջարկէ վերցնել իրեն, նա հրաժարուի, ապա թէ ոչ գլուխը կը կորցնի, միենոյն ժամանակ նրան մեծ քանակութեամբ ոսկի է տալիս, որ զնայ եօթ եկեղեցի և եօթ ազրիւր շինի իւր կորած հոգու փըրկութեան համար։ Ամուսինը կատարում է կնոջ պատուէրը, մերծում է Շահ-Արասի առաջարկը յետ վերցնելու կնոջը ասելով, որ նա միայն շահի վայել կին է, և ապա եկեղեցիներ շինելու թոյլութիւն ստանալով վերադառնում է և շինում Թաւրիզի, չին նախիջևանի, Դաստակի, և Ազուլիսի և ուրիշ երեք եկեղեցիներ ու եօթը ազրիւր։ Դեռ մինչև այժմ էլ Դաշտի բազարի մօտի ազրիւր «Մահանսի Մելքումի ազրիւր» է կոչում։

Մահանսի Մելքումը կրկին ամուսնում է և երբ երեխայ է ունենում, սրա ձեռի մէջ թագանման նշան է լինում։ Մահանսին չարագուշակ համարելով այդ նշանը՝ խեղեկ է տալիս այդ երեխային, բայց յետոյ երազում տեսնում է մի ալեռ, որ նրան յանդիմանում է գործած յանցանքի համար, ասելով որ նա շատ նըշանաւոր մարդ պիտի զառնար։ Մահանսին զզջալով կտակում է, որ իրեն իւր շինած եկեղեցու մէջ չժաղեն, որովհետեւ անսարժան է, այլ կճընոցի գերեզմանատանը։ Արժ. Տէր Յակորի ասելով նրա գերեզմանը մինչև իւր ժամանակը յայտնի էր և վերան գըրուած էր. ի զիր գամբարանի. բարէ, զաշտու մահանսի Մելքոնի որ փոխեցաւ սա 'ի Քս. թվ. ՌՃՌՊ.

ՄԵԼիք Ստեփանը կամեցել է զարկեար Յարոնի Բալասան անունով աղջկայ հետ ամուսնանալ, սակայն սա սարսելով նրա դաժանութիւնից չի կամենում և փախչում է Վերին Ազուլիս, իրենց բարեկամ Փանոնց ջրհորի մէջ թաք է կենում։ ՄԵԼիքը որոնում գանում է և կանչում է քահանային, որ պսակի։ Աղջկը մի կերպ մէխողել է ձեռք բերում, խմում և գնում եկեղեցին պըսակուելու։ Վերադարձին վայր է ընկնում և մեռնում։ «ՄԵԼիքը բարկանալով առանց քահանայի քաշ է տալիս, տանում թաղում<sup>1)</sup>։ Սա շատ մարդկանց իւր տան մէջ սպասել է և թաղել։

ԺԹ. զարում նշանաւոր է եղել Եարդուշեան տունը, որ շինել է տուել զիւղի «Ամարային» կոչուած եկեղեցին ու Ս. Միհասի մատուռը։ Յետոյ յառաջ են եկել Վարդազարեան տունը, որ 1860 թուին Մոսկուայից առաջինը բերել է տուել բոժոժից թել քաշելու շոգեմեքենայ, որով և մեծապէս նպաստել է այստեղի շերամապահութեան զարգացման։ Այս տունը տուել է նաև մի ինժիներ—տեխնոլոգ պ. Ստեփան անունով, որ աւարտել և հաստատուել է Մոսկուայում։ Այս տնից է նաև պ. Փիլիպպոս Վարդազարեանը, «Մուրճ»-ի և Հօրիզոնի հրատարակիչը, որ Զարգարեանի հետ կաշու գործարան ունի թիֆլիսում։

Այս տան հետ միաժամանակ նշանաւոր են եղել Նունուսեան, Զարգարեան և Մանուէլեան տները։

Առաջինն այժմ էլ Նիբքին Ազուլիսում մետաքսի թել քաշելու գործարան ունի և զիւղի առաջաւոր տունն է համարւում։

Երկրորդ, Զարգարեան, անից, Արիստակէսը աւարտել է Մոսկուայում բժշկութեան մասնաճիւղը և հաստատուած է Թիֆլիսում։ Սա 1896 թուին Թիֆլիսում մի շարք գասախօսութիւններ է կարգացել երեխաների հիւանդութիւնների մասին, եղել է Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի և Ազգագրական Հանդիսի հրատարակութեան Վարչութեան անդամ։ Պ. ՄԵԼիսակը աւարտել է Մոսկուայի համալսարանի բնագիտական բաժինը և ուսուցիչ է Երևանուում։ Օր. Եւգենիսիս աւարտել է Նոյնապէս Մոսկուայի ատամնարուժական մասնաճիւղը։

Իսկ երրորդ, ՄԱՆՈՒԷԼԵԱՆ, անից նշանաւոր են վիպասան պ. Լեւոնը, որի մասին խօսեցինք արդէն, պ. պ. Ստեփանը և Արշակը աւարտել են Մոսկուայի Առևտրական գիտութիւնների գործնական ճեմարանում։ Պ. Ստեփանը 1881 թուականից մինչև այժմ Թիֆլիսում պահելով հաշուապահական դասընթացքներ, ահապին ծառայութիւն է մատուցել, պատրաստելով բազմաթիւ հաշուապահական գործութեան մասնաճիւղ։

<sup>1)</sup> Տէր Յակորի տեսրից։

շուապահներ: Պ. Աւետիսը աւարտել է Մոսկուայի լեռնային ճարտարապետական ճեմարանը:

Այս գիւղից նշանաւոր է նաև պ. Կարապետ Ստեփանեանը, որ աւարտել է Մոսկուայի համալսարանի բժշկական բաժինը և հաստատուած է թիֆլիսում: Պարոնը այժմ ներսիսան դպրանոցի հոգաբարձու է և մի ժամանակ եղել է թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան վարչութեան անդամ:

Պ. Պ. Մինիթար Տէր Անդրէասեան և Մենտոր Ռոստումիան, երկուսն էլ ինժիներ—տեխնոլոգ, աւարտած Մոսկուայում և հաստատուած Բագրում:

Պէտք է յիշել նաև Պ. Յարութիւն Թումանեանին, որ աւարտել է ուսուցչական դպրանոցը և այժմ թիֆլիսի ո. Նունէի օրիորդաց դպրոցում հայոց լեզուի դաստու է. ունի նաև միքանի պոչմաներ:

Հանդամէջը տուել է միայն երկու համալսարանականներ, այն էլ միենոյն՝ Աւետիսեան՝ տնից, պ. պ. Մինաս և Խաչատուր. երկուսն էլ աւարտել են Մոսկուայի համալսարանի բժշկական բաժինը, առաջինը հաստատուած է թիֆլիսում, երկրորդը՝ Սալեանում:

Ցղնայում բարձրագոյն կրթութիւն ստացած անձեր տուել են Սարգսեան, Մելիք Սլահվերդեան, Տէր Մկրտչեան, Զօրեան և Բունեաթեան տները:

Սարգսեան տնից հանգուցեալ Սարգսի և պ. Լետնի մասին խօսեցինք արդէն:

Պ. Պ. Յարութիւնն ու Դարեգինը աւարտել են Մոսկուայի համալսարանի բժշկական բաժնում, առաջինը հաստատուած է Հազախում, երկրորդը Բագրում:

Պ. Բաղդասարը աւարտել է նոյնպէս Մոսկուայի իրաւաբանական բաժինը, ծառայել է Օրգուբագում, Բաշնորաշէնում իբր քննիչ, իսկ այժմ հաստատուած է Բագրում:

Պ. Երուանդը աւարտել է Մոսկուայի Պետրոսեան գիւղատնտեսական ճեմարանում և հաստատուած է թիֆլիսում, աշխատակցում է «Մուրճ»-ին և Կավկ. Սելչ. Խօն. թերթին:

Պ. Կարսապետը աւարտել է Մոսկուայի Սոնեարական ճեմարանը և հաստատուած է նոյն տեղում:

Այս գիւղը տուել է երկու արժանաւոր հոգեբարականներ՝ Կարապետ վարդապետ Տէր Մկրտչեան, որի մասին արգէն խօսեցինք (իր. 41), և Արիստակէս եպիսկոպոս Վանկեան, առաջնորդ Ամասիոյ և Մարգուանի:

Բացի Սարգսեան տանից, բարձրագոյն կրթութիւն են ըս-

տացել նաև երկու հոգի Մելիք Ալահվերդեան տնից: Առաջինը՝ Մելքոնը աւարտել է Մոսկուայի համալսարանի լեզուարանական և Պետերբուրգի Արենելեան լեզուների բաժնում: Ապա Լազարեան ճեմարանի վարչութեան կողմից ուղարկուել է թէհրան Պարսից լեզուի մէջ գործնականապէս կատարելազործուելու: Յետոյ ըստանձնել է նոյն ճեմարանի լսարաններում պարսկերէն լիզուի դասաւանդութիւնը, սակայն շուտով (1891 թ.) վախճանուել է:

Միւրը՝ պ. Աղէքսանդրը աւարտել է Մոսկուայի համալսարանի ընագիտական բաժինը, և մինչև այժմ ուսուցիչ է Ներսիսեան և Արճեստաւորաց դպրոցներում:

Զօրեան տնից պ. Ստեփանը գուրս է եկել Պետրոսեան գիւղատնտեսական ճեմարանի վերջին կուրսից:

Յունեաթեան տնից պ. պ. Մեստորը և Սղէքսանդրը ստացել են համալսարանական կրթութիւն արտասահմանում, ուսանելով պիտական գիտութիւնները:

Քաղաքիկում Դէրզեան տնից աւարտել է միայն պ. Մամիկոնը Մոսկուայի համալսարանի իրաւաբանական բաժինը և հաստատուել է թիֆլիսում: իսկ Սանթուրեան տնից միայն մի օրիորդ՝ Հոփիսիմէն, թիֆլիսի մանկաբարձական ինստիտուտը և հաստատուել է թիֆլիսում:

Կերոյիշեաններից հետեւում է, որ Գողթան գաւառի եօթ գիւղերից միայն հինգն են բարձրագոյն կրթութեան անձինք տուել և սրբագր ըստ մասնագիտութեան դասակարգում են այսպէս:

Գիւղեր	Աստուածաբ.	Բժիշկներ	Կրաքարած	Բնագչտ.	Պատմական	Հայոցադաս	Կրկանահատ	Անառապետ	Առան. դոժ.	Հնդանդներ	Արա. բնակ.թ.	0	
Պ. Աղուլիս	—	11	7	2	1	2	1	2	1	6	1	34	1200 2,8
Ցղնա	1	2	1	2	2	3	—	—	2	—	1	14	530 2,6
Հանդամէջ	—	2	—	—	—	—	—	—	—	—	2	77	2,6
Ն. Աղուլիս	—	3	—	1	—	2	4	—	—	—	3	13	524 2,5
Քաղաքիկ	—	—	1	—	—	—	—	—	—	—	1	163	0,7
Հնդանդներ	1	18	9	5	3	7	5	2	1	8	1	4	64 2494 2,5

Այս 64 անձերից 48 բարձրագոյն կրթութիւնն ստացել են մուսասահնում, ամենից շատը (45 հոգի) Մոսկովայում, որի հետ կապուած են առևտրական կազերով, 13 արտասահմանում: Մըանցից 20 հաստատուել են թիֆլիսում, 12 Բագում, 4 Մոսկովյանում, 4 արտասահմանում, մէկ մէկ էլ Պետերբուրգում, Խարկովում, Սալիխանում և այլն, մի հոգի էլ բուն ճննդավայրում՝ Վ. Ագուլիսում, այն էլ ծերութեան պատճառով:

Մտաւոր յառաջադիմութեան կողմից իդական-սեռն արականի համեմատութեամբ շատ յետ է մնացել, միայն երեք հոգի կարողացել են միջնակարգ կրթութիւնից յիսոյ շարունակել և նոյն իսկ միջնակարգ կրթութիւն ստացողների թիւն էլ չափազանց փոքր է:




## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆ

Օրդուբագի կամ Ագուլիսի ստիկանական շրջանը իւր բնական գիրքի չնորհիւ բաժանուում է հինգ ձորի. Ա. Օրդուբագի, ը. Ագուլիսի, գ. Վանանդի, դ. Ցղնայի և ե. Բստի: Խւրաքանչիւր ձորը, որ Պարսից տիրապետութեան ժամանակ կազմում էր մի առանձին մահալ, այժմ այլևս առանձին միութիւն չի ներկայացնում, այլ բաժանուած է միքանի գիրքական հասարակութիւնների, որոնցից իւրաքանչիւրը կառավարուում է մի տանուտէրով: Բոլոր գիրքական հասարակութիւնների թիւն է 14, իսկ սրանց կազմող գիրքերի թիւը՝ 55:

Անցնենք քաղաքի և գիրքերի նկարագրութեան՝ հետևելով բնական գիրքին, ձորից ձոր:

## ՕՐԴՈՒԲԱԳԻ ԶՈՐ

Այս շրջանի կենտրոնական քաղաքը գտնուում է այն հովտում, որ տարածւում է շրջանի արևելահարաւային մասում: Հովիտն ունի 2—7 վերտա լայնութիւն և ձգւում է մինչև Արաքսը: Արևելեան կողմում ձգւում են մեքանի անանուն, լերկ բլուրներ, իսկ արևմտեան կողմում Ալանդեազի մերկ շղթայի ճիւղը: Հովտի միջով անցնուում է Օրդուբագի գետակը, որ սկիզբն է առնուում Խաշի-ղաղ լեռից: Ամբողջ հովիտը բաւականաչափ թեքուած է հիւսիսից հարաւ, գէպի Արաքսը, հողն էլ աւագային է, խառնուած կրի և սկահողի հետ. այնպէս որ անձրեկ ջուրը այստեղ կանգ չի առնուում և կազմում է նեխոււած փոսեր, որոնք տարածում են օդի մէջ ժանտահոտութիւն, ինչպէս նախիջևանում: Եւ եթէ այս ասիական քաղաքի նեղ փողոցների կեղտուութիւնը չլինէր, օգը չափազանց մաքուր կը լինէր: Կլիման բաւական տաք է, մինչև կէսօր հողը, իսկ կէսօրից յիտոյ արևելեան կողմում գըտ-



նուած լերկ, քարքարոս լեռները սաստիկ տաքանալով տարածում են անտանելի ջերմութիւն, որ տևում է մինչև երեկոյեան ժամը 9. միայն այսուհետեւ մեղմանում է և փշում է հիւսիս—արևելեան քամին: Այս տոթը բաւականաչափ մեղմանում է բազմաթիւ, յըստակ աղբիւրների (մօտ 70) աղղեցութեամբ, որ համարեա ամէն մի տան գաւթում հոսում է: Շնորհիւ սեահողի ու ջերմ կլիմայի հովիաը պատած է սրանչելի այդիներով, ուր առասութեամբ բուժնում են, բացի խաղողի բազմաթիւ տեսակներից և այլ պըտուղներից, նաև շալալի և թալալի:


Այս սրանչելի հովտի մէջ գետեղուած է Օրդուրադ քաղաքը, երասխից հազիւ 3 վերսա և նրա ջրի մակերեսոյթից միայն հազար ոտնաչափ բարձր, 38°, 49°20' հիւսիսային լայնութեան և 63°, 43°20' արևելեան երկարութեան տակ. 3119 ոտնաչափ բացարձակ բարձրութեան վրայ, յինուած պորֆիրեայ, սեորակ ժայռերի վրայ:

Որքան գեղեցիկ է հովիաը, այնքան տղեղ է քաղաքը, որովհետեւ փողոցները սաստիկ նեղ են, ծուռն ու մուռ և հողէ պարսպով պատած, որի յետեւ միայն գանւում են տները, այնպէս որ շատ քիչ և այն էլ միայն վերջին ժամանակներս շինուած տների պատուհաններն են բացւում փողոցի վրայ: Միմիայն մի, նոր բացուած փողոց յիրաւի գեղեցիկ է, որովհետեւ ուղիղ է, լայն, ծառազարդ և մայթերի մօտից ջուր է հոսում: Գեղեցիկ է նաև այն քարաժայոր, որի վրայ հնումը մի միջնարերդ էր գալնուում, իսկ այժմ հայոց փոքրիկ, հասարակ եկեղեցին (Ս. Ստեփանոս) է կառուցուած և առաջը զրուավայր գարձրած, որտեղից թէն մի սքանչելի տեսարան է բացւում, սակայն ինքը զուրկ է նոյն իսկ կանոնաւոր ծառերից, ուստի և շատ իրաւացի է թւում նեփեղէվի նկատողութիւնը, թէ Օրդուրադը կարելի է համեմատել մի գեղանի կնոջ հետ, որ փայլում է աղամանդներով, բայց ծածկուած է ցնցուախներով<sup>1)</sup>:

Քաղաքը, որ բանում է 45 քառ. վերստ կամ 4725 դեսիատին, բաժանուած է հինգ թաղի. Սար-շաղար, Մինզիս, Ամպարաս, Քիւրդատար և Խւչ-Տարանկեայ: Այստեղ բացի հայոց անշուք եկեղեցուց, կայ նաև մի ոռուաց, բաւական գեղեցիկ եկեղեցի, շինուած ագուլեցի. Արաւախնեանի ծախսով: Քառասուն և մէկ մզկիթներից նշանաւոր են 5—ը, թէպէտ և սրանք էլ ճարտարապետական տեսակէտից առանձին արժէք չունին: Մրանց

<sup>1)</sup> Взглядъ на Армянскую область. Изъ путевыхъ записокъ Н. Нефедьева. Спб. 1839. кр. 70

վրայ պէտք է աւելացնել և այն թաղակազ սըբաստեղին, որ գտըն-  
ւում է մօտակայ ժայռերից մինի վրայ և որի մասին պատմում  
է թէ Ալին իւր անտեսանելի մատով արարական տառերով դրոշ-



Օ Թ Ա Կ Ա Բ Ա Կ Ա Բ

մել է ժայռի վրայ «Ալի, մարդ Աստուծոյ» ստորագրութիւնը,  
որը, սակայն, Նեֆելէվը «Հնայելով որ ամէն կերպ սրել է իւր  
տեսողութիւնը, բայց և այսպէս չէ կարողացել նկատել»<sup>1)</sup>:


Մզկիթների առջև տարածում են փոքրիկ հրապարակներ,

որոնք Օրդուրագում ծառայում են իր հասարակութեան ժողո-

<sup>1)</sup> Յիշ. Գ. Կը. 71.

վատեղի, և ուր «մահմեղական ծուլութիւնն ու հայկական գործու-  
նէութիւնը որոնում են իրենց սովորական զուարձութիւնը»<sup>2)</sup>:

Քաղաքի հնութիւններից ամենից նշանաւորը մի առի է, որ  
իւրահասակի մէջ մհծաղոյնն է, ինչպէս վկայում է Բեցհոլդ բնագէտ



Ա. Դ.

## ՀԻՆԱՐԱՐԵՑ ՍՈՍԻՆ ՕՐԴՈՒՐԱԳՈՒՄ

այցելուն 1863 թուին<sup>2)</sup>: Սա գտնումէ քաղաքի ներքին մասում, մի  
մզկիթի հրապարակում. բունը 17 արշին շրջապատ ունի և 6 ար-  
շին բարձրութիւն, կայծակի հարուածներից ջախջախուած: Սա-  
ղարթախիտ ճիւղերը ծածկում են հրապարակի մհծ մասը: Բնի  
միջի մասը փթել է և առաջացել է 4 արշին 12 վերշոկ երկարու-

<sup>1)</sup> Նեֆելյև. յ. գ. կը. 69.

<sup>2)</sup> Petzhold. Der Kaukasus. I. 263. յիշ. Սիստկանում կը. 318.

թեան և 3 արշին 5 վերշոկ լայնութեան մի դադարկութիւն, ուր երեմն կօշկակարի մի խանութ էր զեսեղուած և ուր յաճախ 8—10 մարդ հաւաքում են, սեղան գնում, թէյ խմում և թուղթ խաղում: Այս սօսին, որի մասին բոլոր այցելուները հրճուանքով խօսում են, տեղացիների ասելով մօտ հազար տարեկան է:

Մի ուրիշ հասութիւն համարում է մի հին կարաւանատեղու աւերակներ, որի միջից մի ստորերկրեայ մուտք տանում է այն փոքրիկ եկեղեցին, որ, ինչպէս ասում են, շնուած է եղել Բարդուղիմէոս առաքեալից և կոչում է Տեառն ընդ առաջ<sup>1)</sup>, և որի հմաքերի վրայ այժմ բարձրանում է պարսից զիխաւոր մզկիթը<sup>2)</sup>:

Քաղաքում կայ պարսից մի մէտրեսէ (գպրոց) բաւական գեղեցիկ շնքի մէջ ամփոփուած և մի պետական քաղաքային գպրոց: Կայ նաև մի զինուորական հիւանդանոց, փոստատուն, հեռագրատուն, մի հիւրանոց, և այլն:

Հայերն այստեղ զաղթել են 1827 թուին Մուժանրարից, Գուխարզանից ու Թաւրիզից և պարապում են զիխաւորապէս արհեստներով և առեւրով, այժմ նոր նոր սկսել են այգիներ գնել և այգեպանութեամբ զբաղուիլ:

Օրդուրագում կայ 7 մետաքսի մասարան և ոլորող գործարաններ (шելկомոտально—шելկօրուտիտельное), որոնց մէջ նըշանաւորը Բարայեանինն է: Սրանց մէջ աշխատում են 211 հոգի, որոնց տարեկան արդիւնաբերութիւնը համում է 66760 ր.:

Բնակիչները ընդամենը 2244 ար. 2006 իգ. իմիասին՝ 4250 հոգի են, որոնցից հայ են 179 ար. 173 իգ. իմիասին 352 հոգի. Թուրք շինուիր՝ 2063 ար. 1828 իգական. ոռուներ՝ 2 ար. 5 իգական:

Օրդուրագը հայերիս մտաւոր-բարոյական զարգացման բաւականաչափ նպաստել է տալով «մեր գրամատիկական առաջնակարդ ուժերից մինին»<sup>3)</sup> պ. Գէորգ Պետրոսեանին: Սա ծնուել է այստեղ 1860 թուին, սկզբնական կրթութիւնն ստացել է հայոց ծիսական գպլոցում և ապա գնացել է Մոսկուա՝ Լազարեան ճեծիսական սակայն չսիրելով հին լեզուները՝ եկել է Թիֆլիս և մտել բէալական ուսումնարանը, ուր և աւարտել է իւր ուսման ընթացքը: Դեռ աշակերտ ժամանակ Օրդուրաթեան կեղծ անուամբ մասնակցելով 1881—82 թ. հայ թատերական մշտական խմբի ներկայացումներին, պ. Պետրոսեանը իւր վրայ է դարձել հաստ-

<sup>1)</sup> Սիսական, եր. 318,

<sup>2)</sup> Статистическое описание Нахичеванской провинции. СПБ.

1833 թ. եր 194

<sup>3)</sup> Մշտական, թ. 1903 թ. № 159.

րակութեան ուշադրութիւնը, որ կարծում էր թէ նա «ժամանակով կարող է զարդարել ոչ միայն մեր, այլ և աւելի զարգացած բեմը<sup>1)</sup>»:

Այս մշտական խմբի քայքայուելուց յետոյ պ. Պետրոսեանը գնացել է Ռուսաստան և խաղացել Մոսկուայի «Մալый թատրուում և Պետերբուրգի ժողովարաններում, ուր «ամէն անգամ երիտասարդ գերասանը գրաւել է հասարակութեան հրճուանքը<sup>2)</sup>»:

Միրելով իւր մայրէնի բեմը, «աստուածային կայծից ոչ զուրկ<sup>3)</sup>» պ. Պետրոսեան վերապարձել է Թիֆլիս և 1891 թուին, «Սպամեանական բեմը աւերակների վրայ կանգնել է մայրէնի թատրոնի նոր շէնք<sup>4)</sup>», կազմակերպել մշտական խումբ, որը, սակայն, երկար չէ տեել: Այսուհետեւ մինչև այժմ սիրով և մեծ եռանգով ծառայելով հայկական երերուն ընմին, «մեր գերասանական խմբի անխոնջ և բազմաշխատ մշակը<sup>5)</sup>» երեմն Բագրում, երեմն Թիֆլիսում, ամառները Շուշում և այլ գաւառական քաղաքներում քանակ և հինգ տարի շարունակ ներկայացումներ է տալիս, ամէն տեղ արժանանալով սիրալիր ընդունելութեան:

Օրդուրագի հիւսիս արևմտեան կողմը գտնուում է Հանդամէջ կամ Մնդամէջ զիւլը, որ այգիներով կպած է Օրդուրագին և նըշրանից հազիւ երկու վիրստ հեռու է: Հանդամէջը բաժանուում է երկուսի՝ Վերին և Ներին. առաջնուում ապրում են միայն թուրքեր, իսկ երկորութում՝ զիխաւորապէս հայեր: Հայկական մասում կայ մի բաւական մաքուր, թաղակապ եկեղեցի, մօտը բաւական զեղեցիկ սենեակներ՝ քահանայի բնակութեան յատկացրուած և մի այգի: Ամբողջ գիւղը շատ գեղեցիկ տեսք ունի, ծածկուած լինելով բարձրուղէշ բարպիներով: Տները ևս բաւական գեղեցիկ են: Այժմ այս ներքին Մնդամէջը այլև զիւլ չի համարւում, այլ Օրդուրագի արուարձան: Բնակիչները ընիկ են: Ներքին Մնդամէջում՝ ընդամենը 37 ծուխ, 170 ար. 150 իգ. իմիասին՝ 324 հոգի, որից 21 ծուխը 77 ար. 69 իգական, իմիասին՝ 146 հոգի հայեր են, իսկ 16 ծուխը, 93 ար. 85 իգ. շիի թուրքեր:

Վերին Մնդամէջում բոլորն եւ շիի թուրքեր են 35 ծուխ, 157 ար. 104 իգ. իմիասին՝ 213 հոգի:

Օրդուրագից դէպի արևելահիւսիս ձգուում է մի ձորակ, որի միջով հոսուում է մի վտակ: Այս ձորակի վերին մասում գտնուում է Գանձակ կամ Գանձա գիւղը, որ երեմն հայաբնակ, իսկ այժմ

<sup>1)</sup> Մշտական, թ. 12 Մայիսի. <sup>2)</sup> Տարագ 1892 թ. № 7, ուր և գետեղուած է պ. Պետրոսեանի մեծապիր պատկերը:

<sup>3)</sup> և <sup>4)</sup> Կավказъ 1892 թ. 11 յանվար.

<sup>5)</sup> Մշտականք 1892 թ. 12 յունուար

թրքաբնակ է: Այստեղ դեռ ևս կանգուն է մի հինաւուրց եկեղեցի, որ մինչև այսօր էլ ուխտատեղի է համարւում շրջակայ հայերի համար և լաւ պահպանւում է: Բնակիչները 28 ծուխ են:

Գանձակից երկու վերստ ներքեւ, բարձր բարդիների տակ, նոյն վտակի ափին տարածում է «Անապատ», ճնուց հայարնակ բայց այժմ թրքաբնակ գիւղը: Այստեղ ևս կայ մի ընդարձակ եկեղեցի բոլորովին աւեր, մի փոքրիկ մասուռ և ձորի լանջին մի ընդարձակ գերեզմանատուն:

Անապատից ներքեւ միքանի վերստ տարածութեամբ ձգւում են այգիներ և ծառաստաններ, ապա ամայի գաշտ՝ մինչև Արաքս գետը:

Այս ձորից գէպի արևելք այլևս ձոր չկայ, միայն մի նեղ ձանապարհ Արաքսի ափով գնում է գէպի կարձեան: Իսկ այս ձանապարհից գէպի վերև, սարերում գտնուում են հաւանականօրէն շատ հին Քէօթամի Քլիթ թրքաբնակ գիւղերը: Այս երկուսի մէջ բարձրանում է մի անանուն լեռն, որի գագաթին կայ մի ընդարձակ քարայր, տեղական տւանդութիւնն ասում է, թէ այստեղից մի ստորերկրեայ անցք ձգւում է մինչև Արաքսը: Այրի մէջ կան բազմաթիւ, գեղեցիկ ստալակտիւններ:

Թէ Քեօթամի և թէ Քլիթի բնակիչները շիլ թուրքեր են, առաջնում՝ 20 տուն, 51 ար. 77 իգ. ի միասին 128 հոգի: Իսկ երկրորդում՝ 32 տուն, 157 ար. 132 իգ. ի միասին՝ 289 հոգի: Յաւերժայիշատակ հայր Ալիշանը ենթագրում է թէ Քլիթը հաւանականօրէն նախնի Գողթն աւանը պիտի լինի, որի անունով և կոչուած է ամբողջ զաւառը: Արգեօք աւելի հաւանական չէր լինի ենթագրել, որ «Քեօթամ»-ն է եղած այդ Գողթնը, քանի որ սա թէ հնչմամբ աւելի մօտ է Գողթան բառին և թէ գիրքով Օրդուքազին, այն տեղին, որի մասին Ստ. Օրբելեան ասում է. «իսկ սուրբ առաքեալն (Բարդուղիմուս) շինէ եկեղեցի ի Գողթն յարեւմնից եզրն»... և անուն կոչեցին Տեառն ընդ առաջ, և արարին նշանըս մեծամեծս: Քանդի էր ջուր վեասակար ի յՈրդվատ գիւղ... և ազօթեցին յանկարծակի, և կորուսին զջուրն»: Արդ յայտնի է, որ Տեառնընդառաջ եկեղեցին գտնուում է Օրդուքազում, ուղիղ արևմուտք Քեօթամից, մինչդեռ Քլիթից բաւական հեռու է և արևմտահիւսի է գտնուում:

Քլիթից փոքր ինչ արևելահիւսիս, մի ապառաժուա ըլքի գագաթին տեղաւորուած է Կարճեւան՝ հայարնակ գիւղը, որ այս շրջանի արևելեան սահմանի վերջին գիւղն է: Սա բաւական գեղեցիկ տեսք ունի, մասնաւանդ ջրընկեցը, կլիման համեմատաբար աւելի մեղմ է և առողջաբար, ուստի և մի ժամանակ այստեղը

եղել է խաների ամարանոց, որնց ապարանքի և փոքրիկ ամրոցի հետքերն են այժմ մնում: Գիւղի մօտ գտնուում է երկու մարդակերպ քարեր, որոնց տեղացիներն «հարս ու վիեսայ» են անտառնում և որնց մասին պատմում են, թէ խանի հարեմն ընկնելու վանգից աղատելու յուսով վեսան իւր գեղեցիկ հարսին առել է և փախել սակայն խանի ծառաները հասել են սրանց յետկոց, որոնք երկիւղից քար են կտրել Գիւղից 4—5 վերստ հեռու, դէպի հիւսիս Սաղալ լերան լանջին գտնուում է Նուխուտի և Յովհաննէնի մէջ այս քարերեւանելի է<sup>1)</sup>:

Բնակիչները թէպէտ ընիկ են, և իրենց սովորութիւններով, հագուստով և նոյն իսկ տիպով շատ նման են մեղրեցիներին, սակայն բարբառը բաւական ենթարկուած է զօկերի լեզուի աղղցութեան: Ընդհանրապէս բաւական քաղաքակրթուած են, ունին բաւական գեղեցիկ, կահաւորուած սենեակներ, մաքուր նիստ ու կաց: Սրանցից նշանաւոր է եղել իւր քաջութեամբ Աղայեանց Մելքոնը, որ Պարսից տիրապետութեան ժամանակ հերոսութեամբ պահպանել է գիւղը Արաքսի աջ ափի բնակիչների յարձակումներից: Բնակիչներն ընդամէնը 38 տուն են, 262 ար. 211 իգ. ի միասին՝ 473 հոգի: Բացի սովորական պարապմունքից, սրանք պարապում են նաև խանաբածութեամբ:

Կարձեանի և Մեղրիի միջն բարձրացող լերան վրայ գտնուում է Մանդաշ-խաչ տերակ ուխտատեղին, իսկ գէպի արևելահիւսիս, զիս չհասած Ագարակու պղնձահանքին (ընկնում է Զանգեզուրի գաւառում), գտնուում է մի ուրիշ ուխտատեղի Ըկնըցաւու-խաչ մնունով, ուր ուխտ են զնում աշբացաւ ունեցողները:


### ԱԳՈՒԼԻՍ ԿԱՄ ՈՍԿԵ ՉՈՐ

Օրդուքազից գէպի արևմուտք, հազիւ 3 վերստ հեռու, հիւսիսից գէպի հարաւ ձգւում է մի ձոր, որ կոչում է Աղուլիսի կամ Ռոկէ ձոր: Առաջին անունն ատացել է այստեղ գտնուուած մեծ աւանից, երկրորդ անունը տուել են նրան թուրքերը, տեսնելով

<sup>1)</sup> Այս ուխտատեղու վերաբերութեամբ աւանդութիւններ տես «Հաւատք»-ի բաժնում:

որ այստեղի բնակիչներն՝ անյիշատակ ժամանակներից վաճառականութեամբ պարապելով՝ մեծ քանակութեամբ ոսկի են դիզել:

Այս ձորի երկու կողմում ձգւում են բուսականութիւնից լիովին գուրի ապառաժու բլուրներ, որոնք համարւում են Աւանդեազի ճիւղաւորութիւններ: Չորս հարաւային մասում բաւա-



ԱՎԱՆ ԱԳՐԻՄ

կան լայնանում է, այնպէս որ այդտեղ զետեղուած գիւղը տեղի դիրքով թաշտ է կոչուել: Չորի միջով հոսում է մի զետակ, որ սկիզբն է առնում Նգիդէն գիւղի մօտ միախառնուող երեք առուակներից: Այս զետակը ամառը սասափի փոքրանում է և չի էլ հասնում Արաքսին, սակայն գարնան սկզբին ձիւնը հալչելիս կամ

յորդ անձրկ և կամ կարկուա գալիս սասափի հեղեղում է և երբեմն, ինչպէս 1884 թ. մեծամեծ վասաներ պատճառում: Ամբողջ ձորը ծածկուած է այգիներով:

Չորի ամենաբարձր, հիւսիսային մասում, ուր ձորը սաստիկ նեղանալով կիրճեր է կազմում, ապառաժու մի տեղում զետեղուած է Նգիդէն փոքրիկ գիւղը, որ ունի 22 տուն թուրք բնակիչ, 178 ար. 94 իգ. ի միասին՝ 272 հոգի: Սրանք չափազանց աղքատ են, մեծ մասամբ պարապում են խաչնարածութեամբ և մշակութեամբ: Այստեղից դէպի հիւսիս տարածւում են արօտատեղիներ և անջրդի վարելանողեր: Արօտատեղիներից ամենամեծը կոչւում է «Փիրի-քաշուան», ուր կան 20—30 հատ հինաւուրց, մեծ ծառեր, որ այժմ տեղացի թուրքերից սուրբ են համարւում: Ինչպէս երեսում է հետքերից, այս կողմերում հոսում անտառ է եղել: Այստեղից մի նեղ կածան տանում է դէպի Լիշկ հայաբնակ գիւղը:

Նգիդէնից ցածր գտնուում է Վերին-գետ գիւղը, որ այժմ միացած լինելով Ագուլիսի հետ, նրա մի թաղն է համարւում:

Ագուլիսը հնումը կոչուել է Արգուլիք, ինչպէս գրուած է Սարգիս կաթուղիկոսի կոնդակում (ԺԱ. գարում), և ինչպէս գրում է Զաքարիա Վաղարշապատցի գիւնական վարդապետը ԺԷ. ղարի կիսին՝ Աստուածաշնչի յիշատակարանի մէջ: Այժմ գրականութեան մէջ կոչւում է Ագուլիս, իսկ տեղական ժողովրդի բերանում՝ իւզիւլիս:

Այս անուան ճիշտ բացատրութիւնը յայտնի չէ. ոմանք ըստ պարանում են իրը «Այգիւ-լիք», ոմանք էլ պատմում են աւանդաբար, թէ ո. Թագէոս առաքեալը մի գիշեր մի քարակոյափակ քնել է և երբ աչքը բաց է արել, արգէն լուսացած է եղել և իրը թէ այս պատճառով ասել են Ակն ի լոյս, որը ազաւազուելով դիրքել է Ագուլիս<sup>1)</sup>: Այս քարակոյալը, որ գտնուում է Ագուլիսի և Հանդամիջի միջի ձգուող մի փոքրիկ ձորակում, այժմ էլ ուխտատեղի է համարւում:

Այս գիւղը փոքր ինչ ներքեւ գտնուած համանուն գիւղից տարբեկելու համար ստացել է «Վերին» մակդիրը:

Այստեղ, ուր զետեղուած է Ագուլիսը, ձորի լայնութիւնը հազիւ  $1 \frac{1}{2}$  վերստ լինի, այնպէս որ գիւղը տարածւում է ձորի երկարութեամբ մօտ 3 վերստ: Ամենամօտիկ լեառը տեղական լեզուով կոչւում է Գինդարու, իսկ որանից ներքեա Աղասար: Արևմըտեան կողմի սարն էլ «Հուռի զլուհ» (հորի զլուի) է կոչւում,

<sup>1)</sup> Սիսական Կր., 325.

թերեւս այն պատճառով, որ այդ սարի լանջին կայ մի հոր, որ անդից թորոն շինելու համար կաւ են հանոււմ:

Ազուլիսը բաժանուած է հետեւալ 10 թաղերի. ա. Վերին-գետ, որ ինչպէս ասացինը, առանձին գիւղ է համարւում, թ. Շոնատակ, որ այսպէս կոչում է մօտակայ սարից վաղող շառանի (ջրնկէց) պատճառով, գ) Վանքի թաղ, ուր գտնուում է Ս. Թովմա առաքեալի վանքը. դ. Նուրիջանաց մահլա. ե. Լինջ (լանջ), գ. Վեարին թաղ (վերին թաղ) և է. Խուճոծուը (Խուցաձոր) ը. Մալէյի խուպան (ամենալաւ մաս): Սրանք հայաբնակ են, իսկ հետեւալ երկուսն էլ՝ թրբարնակ, ա. Չիզ-փուղ (Չիզ-փողոց) և թ. Խշկաշէն:

Ազուլիսի փողոցները շատ անկանոն ե, մանաւանդ, սաստիկ նեղ են, այնպէս որ կառքեր չեն կարող անցնել: Տների մեծագոյն մասը քարաշէն են, երկու և նոյն իսկ հոյարկանի, պարտէզներով շրջապատուած: Գրեթէ իւրաքանչիւր թաղում բարձրանում է մի կամ միքանի գեղեցիկ, քարաշէն եկեղեցիներ, որոնց ընդհանուր թիւը համուում է տասն և մէկի—մի ապացոյց, որ Ազուլիսը մի ժամանակ բաւական բազմամարդ է եղել: Սրանցից ամենանշանաւորը թէ իւր պատմական անցեալով և թէ ճարտարապետական շինուածքով Ս. Թովմայի վանքն է, որի նմանութեամբ և՛ շինուած են միւս եկեղեցիները, ուստի մանրամատն նկարագրելով ո. Թովմայի վանքը, չենք կամենում նոյն կերպ նկարագրել նաև միւս եկեղեցիները, մանաւանդ որ սրանք ճարտարապետական տեսակէտից մի առանձին նշանակութիւն չունին:

Վանքից դէպի հիւսիս գտնուում է Ամենափրկիչ անունով փոքրիկ, երկու սիւնի վրայ հաստատուած մատուռը, որի հաբաւային կողմում ամփոփուած է Ս. Բարդուղիմէոս առաքեալի Կումսի աշակերտի մարմինը: Մատուռի զրան վերև կայ մի խաչքար՝ հետեւալ արձանագրութեամբ, Խոչ յիտկ Քանակ: Խոթնչնյ Փերյ ավելիիլ: Ազիկ: Ձլթ: Աւանդաբար պատճում են, թէ այստեղ գտել են արիւնոտ քարեր կտաւի մէջ փաթաթած, որ կրկին ամփոփել են գտնուած տեղում:

Այստեղից փոքր ինչ բարձր գտնուում է ս. Մահփանսո քարաշէն եկեղեցին, եռայարկ զանգականով, որ նորոգուած է 1845 թ. մահեսի Յովհաննէս Տէր-Զանեանի ծախքով:

Շոնատակ թաղում գտնուում է ս. Մինաս անունով փայտածածկ եկեղեցին, իսկ սրանից փոքր ինչ ցած՝ Գինդարու լեռան սասրուած բարձրանում է Ս. Քրիստոփորի սրբատաշ, գեղեցիկ եկեղեցին, որ միանգամայն մի թոյլ ընդօրինակութիւն է Ս. Թովմայի վանքի: Եկեղեցիների մէջ սա ամենազեղեցիկն է: Ահա թէ

ինչ է պատմում սրա մասին Զաքարիա Ազուլիսին իւր օրագրութեան տետրում (եր. 44): Նա ասում է թէ այս եկեղեցին ո. Թուզէոս առաքեալն է հիմնարկել և որ 1660 թուին, պարսից և օսմանցոց պատերազմի միջոցին շտապով վերանորոգել են, սակայն 10 տարուց յետոյ ինքն իրեն փուլ է եկել, ուստի և «Վերին թաղի խօջայ Գրինագարի» և ուրիշների վերակացութեամբ 1671 թուին սկսել են հիմնովին վերաշինել և 1675-ին աւարտել են: Հետաքրքրական է, որ պատերի մէջ խաչքարեր էին կանգնեցնուած իրը յիշատակ այն անձի, որ եկեղեցուն մի որևէ գումար էր նուիրում: Զաքարիան ասում է, «Այս եկեղեցուս գ. (3) որմին իե (25), ոմն պատկեր վասն յիշատակի գրեցին: Այս գալտար գրող Զաքարէս մին Աստուածածնոյն պատկերն ես գրել տվիր. ամէն խաչի թէ պատկերի մէկ մէկ թուման տվին եկեղեցուն<sup>1)</sup>»:

Ս. Քրիստոփորի գաւթում շինուած է օրիորդաց դպրոցի շէնքը, որ կառուցուած է 1867 թուին սոյն եկեղեցու գումարներով:

Սրանից բարձր գտնուում է փոքր Աստուածածին մատուռը:

Գետի արեւելան կողմում Միջին փող թաղում գտնուում է «Անանց լոյս», «ս. Յակոբ Ալփիան», իսկ այժմ «Բնձանաց լոյս» կոչուած եկեղեցին, որ 1879 թ. Տէր Միքայելեանները հիմնովին քանդելով սկսել են վերաշինել սակայն զիս ևս չին աւարտել:

Շուկայից ներքե գտնուում է Ս. Շմաւոն քարաշէն, գեղեցիկ եկեղեցին, իսկ Խճոնորի թաղում՝ ս. Յովհաննէս, որի ճախակողմեան խորանում թաղուած է Շահ-Արասից նահատակուած Տէր Սնդրէսի մարմինը: Եկեղեցին ունի զանգակատուն, առջել պարտէզ, աղբիւր և քահանայի բնակութեան յատկացրուած տուն: Եկեղեցու գմբէթի վրայ, ներսից, գրուած է.

Կառուցաւ հոյակալ եւ հրաշազան եւ վայելուշ երեք ըեմեայ սը եկեղեցիս յանուն սը Ածածնի, սը Մկրտչի եւ սը Նախավկացի ի Ոծժթ. իսկ ի Ոծլի. զանցաւ եւ ի Ոծժթ. զարմանալի կաթողիկէս շինեցաւ ի փառս Քսի Ածոյ:

Բաւական գեղեցիկ է փայտի մանր կառուներով, սատափով և փղուկով կերտուած գուռը, որի վերև գրուած է.

Ծիշատակ է դուռնս այս չախումին եւ կողակցին եւ որդոցն նոցին. Ած ողորմի աշխատառացն թվին ՈծլլԱ.

Այս թաղում, «Փոքր Սար» կոչուած բլրի ստորոտում կայ նաև ս. Յակոբ անունով մի փոքրիկ եկեղեցի, որ ուխտատեղի է համարւում:

Գրիգից դուրս, նրա արեւելան կողմը, սարի լանջին, որտե-

<sup>1)</sup> Զաքարիա Ազուլիսի. եր. 44.

դից մի շատ գեղեցիկ տեսարան է բացւում, զանւում է ու Աստուածածնի եկեղեցին, որ համանուն եկեղեցուց տարրերելու համար «Մեծ» մակդիրն է ստացած:

Աւանդաբար պատմւում է, թէ սա կրատուն է եղել և թէ ու. Թաղէս առաքեալն է կոքերը կործանել ու այդ միմնոյն տեղում եկեղեցի հաստատել: Բոլոր ագուլեցիները պատմում են, որ այդ եկեղեցին վերանորոգելիս կոքեր են գտել, և մոլեռանդութեամբ կոտրատել: Այս մասին բաւական հանգամանօրէն գրել է արժ. Տէր Յակորը իւր տետրում այսպէս. «1847 թուին երբ Շուշկցի Շխեանց Կարապէտ աղէն խոլերայի պատճառաւ Թարգիզուց փախչելով եկած էր Ագուլեաց Դաշտը, Դաշտից ուխտ գնաց Աստուածածնին: Աստուածածնայ նորոգութեան համար հարիւր ոսկի ընծայելով պատուիրեց Սարգիս Սարուխանքէկովին, որ իւր հսկողութիւնով նորոգել տայ: Այն ժամանակ Աստուածածնայ եկեղեցին մէջտեղից պատով կորած երկուսի էր բաժանուած. պատի մէջտեղից դուռ ունէր՝ զրսի մասից ներսի մասը մտնելու. զրսի մասում, զրան զլխին կաւից շինուած սեղան ունէր, զրան աջ ու ձախ կողմից աստիճաններ. միացնելու համար միջի պատը քանդած ժամանակ կաւից շինուած սեղանի միջից խեցեայ և չուզունեայ կուռքեր է դուրս զալիս: Նա և իւր կնքաւոր Օհաննէս Մակարովը... մոլեռանդութիւնով խփում են քարերին՝ ջարդ ու փշուր անում: Միքանի միջոց անցնելուց յետոյ այս անցքը նորա պատմեցին ինձ, որ շատ ափսոսացի»:

Ամէն տարի, Աստուածածնի տօնին զրեթէ բոլոր ագուլեցիները, ոմանք նոյն իսկ բորիկ հետեւում են նոզենորական դասին, որ թափոր ամսելով բոլոր 10 եկեղեցիներում, բարձրանում է Ա. Աստուածածնի այս տաճարը և այստեղ պատարագ մատուցանում, հասարակական մատաղ անում: Հետեւեալ օրն էլ Ներքին Ագուլեցիք են նոյն թափորով, խաչով խաչվառով զալիս այստեղ, պատարագ մատուցանում, մատաղ անում: Այս բոլորն ապացուցանում են, որ արդարե այս տեղում մի ժամանակ մի նշանաւոր մեհեան է եղել: Եկեղեցու կողքին կայ մի աղբիւր և մի ընդարձակ տաշզան՝ շատ հին ժամանակից: Կան նաև միքանի սենեակներ պահապանի և ուխտաւորների համար:

Գիւղի զրեթէ կետրոնում ձգւում է շուկան, որ երկու շարք խանութներից և մի փոքրիկ հրապարակից է բաղկացած: Այստեղ կան մօտ 90 բաւական գեղեցիկ խանութներ՝ եւրոպական ապրանքներով, որոնք նոյն իսկ Օրգուբագում չի կարելի գտնել: Ամառը ամբողջ հրապարակը ծածկուած է լինում բազմաթիւ և բազմազան մրգերով, որ չափազանց արժան են ծախտում:

Թէ կրպակների առջև և թէ հրապարակի շուրջը ծառեր են տնկուած:

Այս կրպակների հարաւային կողմը կայ մի շարք փոքրիկ կրպակներ և մի կարաւանատուն:

Շուկայի մօտ գանւում է շինական դատարանը, փոքրիկ պարտիզով շրջապատուած, իսկ հանդէպը՝ պոստ-հեռագրատունը, կողքին՝ փոստային կայարանը:

Ագուլիսում կան 17 աղբիւրներ, որոնց ջրերը շատ մաքուր և առողջաբար են: Սրանք բերուած են 1—1 $\frac{1}{2}$  վերստ հեռաւորութիւնից, և բաւական թանգ արժեն: Սրանց ջուրը ժամերով վաճառում են այդիներ ջրելու համար, որոնց արժէքի մասին կը խօսենք արդիւնաբերութեան մասին խօսելիս: Աղբիւրներից ամենալաւը Փըզըջի կամ Փոջի կվոյն (փողոցի աղբիւրն) է, որ գանւում է շուկայի մօտ:

Ագուլիսում կայ նաև երկու բաղանիս, մի գեղատուն: Եղել է նաև մի բաւական հարուստ գրադարան-ընթերցարան:

Թէ Ագուլիսը պաշտօնապէս զիւղ է համարւում, բայց և այնպէս թէ տեսրով, և թէ, մանաւանդ, բնակիչների կենցագալարութեամբ, միանգամայն քաղաքի է նմանւում և նոյն իսկ միքանի գաւառական քաղաքներից, ինչպէս, օրինակ, Նախիջևանից, բարձր է:

Բնակիչներն են.

Հայեր.

Թուրքեր.

Ծուխ.	ար.	իգ.	միասին	Ծուխ.	ար.	իգ.	միասին.		
վ.	Ագուլիս.	201.	902.	764.	1666.	56.	346.	247.	593.
	Վերին Գետ.	55.	297.	242.	539.	12.	90.	48.	138.
	Խմիասին.	256.	1199.	1006.	2205.	68.	436.	295.	731.


Ուրեմն բոլոր բնակիչները միասին՝ 324 ծուխ, 1635 ար. 1291 իգ. և միասին՝ 2926 հոգի:

Ագուլիսի հայ բնակիչները բոլորն էլ զօկեր են, ուրիշ գաւառացիներ չկան: Սրանց կազմուածքը, մանաւանդ դէմքի գծագրութիւնը, համեմատելով միւս զօկ գիւղացիների հետ աւելի նուրբ է: Զօկերէն լեզուն շատ աւելի մշակուած է, քան միւս գիւղերինը, այնպէս որ միւս գիւղերի կը թուածները աշխատում են այս բարբառով խօսել: Կանանց միծագոյն մասը սակաւարինն է և զոնատ, հաւանականօրէն՝ լաւ սննդի պակասութեան պատճուով: Ներքին, հոգեկան զարգացումը շատ աւելի ստոր է քան արտաքին, հագուստի, նիստ ու կացի մէջ տիրապետող զարգացումը:

Ագուլիսի, որի հետ միասին և ամբողջ Գողթնի, ճարտարա-

պետական հրաշալիքը՝ Ս. Թովմայի վանքն է, ուստի անցնենք նրա նկարագրութեան:

Ս. Թովմա առաքեալի վանքը աւանդութեան ասելով հիմ-



Ա. Թովմա պատմութիւն

նել է ս. Բարդուղիմէոս առաքեալը և այստեղ թողել է իւր աշակերտ կումսին, որի պատճառով և առանձին, Գողթնի եպիսկոպոսութիւն է սահմանուած<sup>1)</sup>:

Ս. Թովմա առաքեալի վանքը գտնւում է Վերին Ազուլիսի և

<sup>1)</sup> Տես պատմական բաժնուած.

Վերին-Գետի միջև, «Վանքի թագում»: Վանքը պարապապատ է, և վեց աշտարակներով ամրապնդուած: Աշտարակներից չորսը բոնում են քառանկիւնի պարսպի չորս անկիւնները, իսկ երկուսը՝ բարձրանում են հիւսիսային և հարաւային պատերի մէջտեղերում<sup>1)</sup>: Վանքը կառուցուած է կարմրաւոյն կոփածոյ քարերով<sup>2)</sup>, միայն պատերը միապատզ են, զուրկ քանդակներից և ներսանկուածներից ու կամարներից: Մինչև անգամ կաթուղիկէն շատ պարզ է, 12 պատուհաններով, որոնք կաթուղիկէի համեմատութեամբ այնքան կարծ են, որ փոխանակ գեղեցկացնելու, նոյնիսկ տղեղացնում են, մանաւանդ որ կամարներով ու քանդակներով չեն եղբափակուած: Միւս տասն և մէկ պատուհաններն էլ, որոնցից միմիայն երկուսն են կամարակաղ, թէև միաչափ են (6 Փ. բարձր. և 2 Փ. 4 դիւյմ. բայն.), սակայն միմնոյն բարձրութեան վրայ չեն գտնւում, այլ արևմտեաններն աւելի բարձր են: Արեելեան պատի սեղանի վերայ բացուազ պատուհանն աւելի փոքր է և խաչաձև: Ունի երեք գուման, որոնցից արևմտեանն ամենազեղեցիկն է: Նուրի նշխերով եղբափակուած երեք համակենդրոն, ոռմանական կումարներ, պատում են քառանկիւնի գուռը, որի վերև քանդակուած է Քրիստոսը՝ խաչը ձեռին և Թովմայ առաքեալը, որ ծընկաչափ շօշափում է նրա կողը: Սրա կողքերին նկարուած են Տիրամօր և կոյս Մագդաղինէի պատկերները, վերեւում հայր Առառուած, արե, լուսին, իսկ ներքեւում արձանագրուած է.

Բարդուղիմէոս ի հայո եկեալ զտուն Տեառն նախ աստ հիմնարկեալ սր. Թովմայի առաքելոյն անուն կոչեալ զա՞ նաստատեալ. Կոմսի անուն զիւր աշակերտն տեսուց տեղոյս զնա եղեալ. որ եւ զտոն Գողթ զաւառիս ի նա յանձնեալ զնոտն ընտրեալ մերձ Ազուլիս եւ Դաշտ զօվեալ Ցղնա, Ուամիս սմա յանձնեալ. Բուտ, Փառակա եւս տվեալ. Բուհրուտ, Տեիք անքակ եղեալ եւ Ծըջու ընդ Մասրեան Ազանեցիք ցանկ հաստատեալ. Դաստակ, Վանանդ կցորդ եղեալ Ծրունիս, Տնակերտ միաբանեալ Օրովանիս եւ Քաղաքիկ եւ Անապատն Յանկամիջաց Վերին Գետցիք եւ Քեշերեցիք, Նուանուս, յՈրդվատ քաժին կարգեաց. սրբն Գրիգոր յորժամ եկեալ է առաքելոյն նօմնա տեսեալ ձեռազրով նոյն հաստատեալ եւ նզովիք ամրափակեալ, յամին Տեառն Գօնի եւ հինգ հասեալ Հուսատրշն պատճէն զրեալ արձանագրիս որ աստ եղեալ:

<sup>1)</sup> Այս պարիսպը իւր աշտարակներով վերաշինել է 1668 թուին Ս. Թովմայի առաջնորդ՝ Պետրոս քարդապետն: Տես Զաքարիա Ազուլիցի, Եր, 33.

<sup>2)</sup> 38 արշին երկարութիւն և 27 արշին լայնութիւն ունի:

Այս դուն հարաւային կողմում, պատի վրայ արձանագրուած է վանքի շինութեան օժանդակողների անունները.

Ցիշեցէք ազուլեցի Քալանթար Ովանէսն, վանքիս վէրիլ Հայրապետն, Մէլիք Ասկարիսանն, մհտեսի Հայրապետն, Վարդանն, Առաքելն, Ալէքսանն, Աղամշանն, Ովանէսն, Նահապետն, Մբելընն, Թասալին, Աղամիրզէն, Մաթեոսն, Ամիրն, Ղուլին, Մուշկին, Գուլպասարն որք օժանդակ եղեն սուրբ եկեղեցւոյ:

Նաև նոյն գրան հիւսիսային կողմը.

Ցիշեցէք ոամեցի խօջայ Աւետիքն եւ եղբարքն իւր Նաւասարդն եւ Նաշն եւ երէցփոխան Վարդանն եւ Գրիգորն եւ Պետրոսն, Փիրին, Նուրին, Արգանին, Վարդանն եւ Բարաքազն, Գրիգորն, եւ տր. Գրիգորն՝ որ բազում օժանդակ եղեն սը. Եկեղեցւոյ:

Այս արձանագրութիւնից վերև, մեծ պատուհանի տակ առաջին տառերով փորագրուած է թվ ՌՃԽ9:

Այս դուն կողքին գրուած է.

Ցիշատակ է դուռն Դաշտեցի Խօջա Սէթուն եւ ծնողացն Ածատուրին եւ Խաթունջանին եւ եղբարցն. թվ. ՌՃԽ9.

Այս գրան առաջ եղել է մի զանգակատուն, որը նախ կառուցուել է 1825 թ. Արաս-Միրզա թագաժառանդի ծախսով, որի մասին արձանագրուած է մի մարմարոնեայ քարի վրայ այսպէս.

1243 اسلامی

این بیت درایام عمر دولت فتحعلی شاه قاجار بفرموده نائب السلطنه روحنا فداه تعمیر وقوع یافت و مبلغ خطیری ازین بناحا کمان اخذ میکردند نائب السلطنه بر لطف فرموده بدوازنده (۱۲) تمان از نقد و جنس قرار فرمود.

Միքանի տարի յետոյ այս զանգակատունը քանդուել է, ուստի և այս արձանագրութիւնը կրող քարը մինչև այժմ էլ պահում է վանքի սենեակներից մինում:

1831 թուին Հախումեանք իրենց ծախսով նորից շինել են և գմբէթի շուրջը, ներբուսա, արձանագրել.

Ցիշեցէք այսինքն Ազուլեցի ի Շուշի քնակեալ Հախումեանց Սահակի որդիքն աղա Մնացական, մահտեսի աղա Մատթէոս նաև Մարտիրոսի որդի աղա Թոնմաս եւ որդիքն սոցին Սահակին, Անդրէասին, Մարտիրոսին, Յարութիւնին եւ Առաքելին եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ մերոյ 1831 թուին շինեցաւ զանգակատունը<sup>1)</sup>.

<sup>1)</sup> Մ. Փափազեան. Հնութիւնք հայրենիաց. Դ. գիրք:

Այժմ այս զանգակատունը հիմնովին քանդել են և նորն են կառուցանում:

Երկրորդ գուռը գտնուում է հիւսիսային կողմում երեք ոռմանական կամարներով շրջապատուած, վերևում քանգակուած է Պողոս առաքեալի արձանը, մի ձեռին գաւազան, միւսին՝ աւետարան, որի ներքև արձանագրուած է.

Թուականիս հայկականի

Մի յոթելեան երկ շրջանի,  
Եռակ տասանց որով վարի,  
Սա կառուցաւ քառանկինի,  
Չեռամք Ցովհան վարդապետի  
Որ էր յաջորդ յայսմ թեմի  
Բազում ծախիք անթուելի.  
Չորիք ամօք սա կատարի  
Երեք դրամք ըստ խորհրդի  
Կամարակազ զարմանալի,  
Անուամք մեծին Ս. Թովմայի  
Նման վերնոյն ըստ Սիօնի  
Սա մեզ շնորհեաց պարգեւ քարի  
Զաստուածամուկ աշըն ծրի  
Ամուր պատուարը քոլոր թեմի  
Պաշտօնէից իւր հովանի.  
Պարծանք է սա հողթ զաւարի,  
Եւ ցնծութիւն Հայոց ազգի,  
Նպաստութեամք Ցեառն Ցիսուի  
Ի փառս անուան մի եռակի:

Այս դուն առաջ երկու ամբողջական և երկու կեսասիւների վրայ բոլորում են ոռմանական կամարներ, կրելով իրենց վրայ մի փոքրիկ գմբէթ:

Երրորդ գուռը հարաւային կողմումն է. սա շատ պարզ է և կամարակալ քարի վրայ գրուած է.

Խշանութեամք Պարսից ազգի.

Շահ Հուսէին թագաւորի,  
Դիւսնբէկութեամք Մուսաքէկի  
Որ էր տեղեաւ Ազուլեցի  
Եւ Ցովհաննու առաջնորդի  
Վերաիշխող յայսմ թեմի.  
Որոյ յաւուրս սա կանգնի  
Այս վայելուշ Եկեղեցի:

Այս գուան մօտ, դէպի ձախ չորս ահագին սիւների վրայ բարձրանում է մի բաւական մեծ զմբէթ, հովանաւորելով իւր տակ թաղուած միքանի անձերի սոկորները, որոնց յիշատակն արդէն մոռացուած է: Կարելի է ենթագրել, որ Զաքարիա Ագուլցու հետեւալ խօսքերը (եր. 25) այս մատրանն են վերաբերում: Պետրոս վարդապետն Խաչատուր վարդապետի (+1664) վրայ տաշած քարով մեծ մատուռ շինեց եկեղեցւոյ հարաւակումը:

Եկեղեցին ներքուստ շատ տևելի գեղեցիկ տեսք ունի քան արտաքուստ: Քառանկիւնի, բայց եղբերը ուղիղ անկիւնով փոքր ինչ հատուած չորս սիւների վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով իրենց վրայ կաթուղիկէն և նոյնպէս կիսաբոլոր ձեղունը, որ ամբողջովին ծածկուած է արևելեան ճաշակի գունաւոր ծաղկանկարներով: Հիւսիսային և հարաւային պատերի մէջ կան արաւական կամարներով պտրհաններ, որոնք բաւական տպեղացնում են ընդհանուր, գեղեցիկ տեսքը: Այս պտրհաններից մինի մէջ զետեղուած է մլրտութեան աւազանը, որի վրայ կայ հետեւալ արձանագրութիւնը.

Քի տիմար ծառա Տէր Խաչատուր թվ Ռութի.

Փրկիչ պահեա զօնոփերիոս.

Բեմի արևմտեան երեսը մարմարինից է, առաքեալների պատկերներով և ծաղկանկարներով զարդարուած:

Ունի միայն մի սեղան, որի վրայ կանգնեցրած խոչկալը մի բաւական նուրբ և գեղեցիկ գործ է. գեղեցիկ են նաև հինգ հատ ջահերը: Երկու խորաններից աջակողմեանը ծառայում է որպէս եկեղեցական թանգարան, ուր բաւական խնամքով պահուում են թուլմայ առաքեալի, Յակոբ Հայրապետի աջերը, Կենաց փայտի մասունքը, և Գային անդամանը: Գորի այս մասում ևս, արևելեան կողմից ձգուում է Ալանգեազի լերկ լենաշղթան, իսկ արևմուաքից՝ անանուն, լերկ ըլլակների մի շարք, որոնցից Ներքին Ագուլիսի մօտ եղածը կոչուում է Կոնդոնց, որովհետեւ մի գագաթ կայ կոճղի նմանութեամբ բարձրացած: Գիւղը գուրկ է կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներից, տները քարաշէն, բաւական գեղեցիկ, երկու և նոյն իսկ երեք յարկանի են, պարտէզներով պատած: Միակ աղբեւրը, որի ստորեկրեայ անցքը անցնում է գերեզմանաւոան և միքանի տների ու արտաքնոցների մօտով, շատ տների բակերում ունի բացուածք, որտեղից ջուր են վերցնում: Այդ անցքերը գրեթէ միշտ բաց լինելով, շատ անգամ կետուացնութիւնը, կատուի ձագեր, վառեկներ ընկնում են և նեխուում, ապականում ջուրը: Գիւղի արևմտահիւսիսային ծայրում բարձրանուում է միակ եկեղեցին, Ս. Երրորդութեան անուան նուիրուած: Սա վեց ամբողջական, կլոր և 14 քառանկիւնի կեղծ սիւների վրայ հաստատուած արարական կամարներով և մի գեղեցիկ կաթուղիկէով շէնք է: Ունի երեք սեղան, որոնցից երկուսի տակ տեղաւորուած են խորանները: Արևմտեան կողմը կայ մի գմբէթազարդ գաւիթ, որ հնումը երեք կամարակապ բացուածքներով միացած է եղել եկեղեցու

Մի փորուրարի վրայ էլ ոսկեթելով ասղնագործած է և էջմիածնի պատկերը: Մի ծաղկանկար եմիփորոն, որի վրայ, չորս աւետարանիչների պատկերները մարգարիտներով են բանուած: Այստեղ կան նաև միքանի ձեռագիրներ, որոնց մասին կըխօսեմ սրանց բաժնուում:

Եկեղեցու շուրջը, պարսպին կից կան բաւականաչափ մի և երկ յարկանի սենեակներ, որոնցից մինի մասին աւանդաբար ասում են, թէ կոստուն է եղել, որա մօտ, արևելեան կողմը, մի աղբիւր է վազում: Այս սենեակներից միքանիսն այժմ յատկացրուած են վանահօր ընակութեան, միւսների մէջ տեղաւորուած է երկսեռ դպրոցը: Գաւթում կան սաղարթախիտ չենարիներ և ջրի աւազան: Պարսպի շուրջը տարածում է վանքապատկան այզին, որի մէջ գտնուում է Մելիք Փարսադանի գերեզմանը՝ այսպիսի տապանագրով: Այս է տապան Հալեծորեցի մելիք Փարսադանին որ է որդի Պալասանի:

Վերին Ագուլիսից հազիւ Յ վերաստ ներքե, բայց այգիներով միացած գանուում է Ներքին Ագուլիս կամ Դաշտ (աեղական բարբառով Դէշտ) աւանը: Չորի այս մասը բաւական լայն է և հարթ, միայն գիւղի հարաւային ծայրում բարձրանուում է մի լերկ բլուր, որ կոչուում է Կոնդլաշ, (կանգնած լաշ, գէշ): Սրա մօտով անցնուում է Վերին Ագուլիսի գետակը, կազմելով Ներքին Ագուլիսի և Օրդուրաղի սահմանը: Չորի այս մասում ևս, արևելեան կողմից ձգուում է Ալանգեազի լերկ լենաշղթան, իսկ արևմուաքից՝ անանուն, լերկ ըլլակների մի շարք, որոնցից Ներքին Ագուլիսի մօտ եղածը կոչուում է Կոնդոնց, որովհետեւ մի գագաթ կայ կոճղի նմանութեամբ բարձրացած: Գիւղը գուրկ է կանոնաւոր, լայն և ուղիղ փողոցներից, տները քարաշէն, բաւական գեղեցիկ, երկու և նոյն իսկ երեք յարկանի են, պարտէզներով պատած: Միակ աղբեւրը, որի ստորեկրեայ անցքը անցնում է գերեզմանաւոան և միքանի տների ու արտաքնոցների մօտով, շատ տների բակերում ունի բացուածք, որտեղից ջուր են վերցնում: Այդ անցքերը գրեթէ միշտ բաց լինելով, շատ անգամ կետուացնութիւնը, կատուի ձագեր, վառեկներ ընկնում են և նեխուում, ապականում ջուրը: Գիւղի արևմտահիւսիսային ծայրում բարձրանուում է միակ եկեղեցին, Ս. Երրորդութեան անուան նուիրուած: Սա վեց ամբողջական, կլոր և 14 քառանկիւնի կեղծ սիւների վրայ հաստատուած արարական կամարներով և մի գեղեցիկ կաթուղիկէով շէնք է: Ունի երեք սեղան, որոնցից յարկանի են, պարտէզներով պատած:

հետ, այժմ այդ բացուածքները պատած են: Եկեղեցու հիւսիսային կողմում նոյն ձեւի և նոյն մեծութեան մի ուրիշ եկեղեցի կայ, որ այժմ կոչում է «Ամարային», որովհետեւ «այստեղ միայն ամառն են պատարագ մատուցել» (?): Սա ևս երեք սեղան ունի, միայն զուրկ է գմբէթից: Այս երկու եկեղեցիների միջնորմի մէջ եղել են կամարակապ բացուածքներ, որ այժմ ծածկուած են: Այս Ամարային եկեղեցում կան երեք տապանաքարեր, հետևեալ տապանագրերով.

Այս է տապան Ամիրի որդի մղտսի Մօսէսին թվին ՌՃՁՔ. յոնվարի ա<sup>1)</sup>.

Այս է տապան մղտսի Մօսէսի որդի Յովսէփին թվին ՌՃՁՔ.

Աստուած ողորմի ասագ երէց Ստեփանոսին որ է որդի Բենիամինի առ Ած փոխեցաւ յամի ՌՃՁՔ.<sup>2)</sup>

Ամարային եկեղեցու աջակողմեան սեղանի ձախ կողմում, մի մարմարոնեայ քարի վրայ արձանագրուած է.

Յշտկ է սք զամիթս այս Ամիրի որդի մահտսի Ազարին եւ Մօսէսին Պետրոսին Պողոսին թվն ՌՃՁՔ.

Զախակողմեան սեղանի արեկեան սիւնի վրայ.

Յշգը զմիաքան սք ուխտիս մերոյ զտը Ստեփանն տր Ովանէսն տր Ռուկանն տր Անանեան տր Ստեփանն եւ զտը Գրիգոր գծող գրոյս թվն ՌՃՁՔ.

Սոյն սեղանի աջ կողմին, մարմարիոնի վրայ.

Այս է սք առաքեալն Պետրոս:

Այս երկու կից եկեղեցիներից իւրաքանչիւրի երկարութիւնն է 35 արշին, լայնութիւնը՝ 20 արշին և բարձրութիւնը՝ մօտ 24 արշին,

<sup>1)</sup> Տէր Յակոբի տեսրում ասուած է, թէ սա է այս եկեղեցու կառուցանողը:

<sup>2)</sup> Աւանդութիւնն ասում է, թէ այստեղ թաղուած քահանան իւր կենդանութեան վերջին օրում՝ պատարագ էր մատուցանում, երբ պարսիկները յարձակուել են այս եկեղեցու վրայ: Սրանց տեսնելով բարեպաշտ քահանան ազօթել է և աներևոյթացել, այնպէս որ պարսիկները նրան չեն տեսել, բայց երբ յետոյ նա իջել է սեղանից, նկատել են և նահատակել: Սա թաղուած է իւր նահատակուած տեղը, եկեղեցու հարաւային պատին կից: Երաշտ ժամանակ սրա գերեզմանի վրայ ջուր են ածել, որպէսզի անձրև գայ:

Առաջին եկեղեցու արևմտեան պատին կից ևս շինուած է մի փոքրիկ գաւիթ, որի վրայ արձանագրուած է.

Յիշատակ է զամիթս Հայրապետի որդի Ածատրին, նարդուլուն եւ որդոցն:

Միքիչ հեռու՝

Ծինեցաւ ծեռամբ ուստա Սուլէյմանի:

Միքիչ էլ հեռու՝

Ծինեցաւ զամիթս թվն ՌՃՁՔ:

Եկեղեցին պարսպապատ է և կամարակապ գարբասի գլուխը զարդարուած մի շատ գեղեցիկ խաչքարով, որ կրում է ՌԾԲ. թուականը:

Պարսպի արեկեան կողմում ևս կան միքանի խաչքարեր, որոնցից մինի վրայ կարդացւում է.

Խչու յշտկ: Մախիթումա: Ժընա: Սլինշա: Սրդանա: Սաֆա: Խլափ յարվլա: Չանվլա: Նորվա: Ջիլ:

Եկեղեցու բակում մի ստորերկեայ անցք կայ, որ երեքի բաժնուելով մինը գնում է զէպի եկեղեցու խորանը, միւսը մինչև մօտակայ աղբիւրը, իսկ երրորդը յայտնի չէ թէ ուր, որովհետեւ արդէն ծածկուած է: Պարիսպը մօտ երկու արշին լայնութիւն ունի, ուստի և սրան կից և սրա վերայ կառուցուած են սենեկաններ, ուր թէ առաջ և թէ այժմ զետեղուած է երկդասեան, երկսեռ պիտական զպրոցը:

Սոյն զիւղի հարաւ արեկեան կողմում գտնուում է Ս. Մինասի մատուռը, որ մի փոքրիկ փայտածածք շէնք է, մի հասարակ գաւթովի: Մատուռի սեղանը հիւսիսային կողմն է, ուր գտընուում է նաև մլրտութեան աւագանը: Խորաններ էլ չունի: Սեղանի երկու կողմերում, պատերի մէջ կան մի մի բաւական գեղեցիկ խաչքարձաններ, որոնցից աշակողմեանի տակ գրուած է.

Ս. Խաչս յիշատակ ջճանքաշխ . . . էլքէլչայ խասխաթի խղճայ դունիաս մէլիքիս ումանբաշխ աթայ մէլիք . . . Յոհանէս թվ. Ջլո. Կոստանդ:

Մատուռն ունի միայն մի գուռն, արաբական կամարով, որի վերև մի մարմարոնեայ խաչքարի տակ գրուած է.

Սը խաչս բարեխօս լինի առ Ած վասն կուս Մարիամին կուս Նոյեմզարին որք եմք սպասարք սը Մինասին:

Թէ գաւթում և թէ բակում կան բաւականաչափ գերեզմաններ մէճ. թուականի տապանագրերով:

Գիւղի հարաւ արեկեան կողմում, Կոնդլաշի ստորոտում

գտնուում է ա. Սարգիս ուխտատեղին, որ նոյնպէս մի փոքրիկ, անզմբէթ, թաղակապ մատուռ է, որի սեղանը հիւսիսային կողմն է գտնուում:

Ներքին Ակուլիսը ձորի վերին և ներքին մասերում պարիսպ և դարպաս է ունեցել, որ ամէն երեկոյ փակել են, բայց այժմ կիւսաւել են:

Ն. Ակուլիսի բնակիչները բոլորն էլ հայեր են 105 տուն, 397 ար. 342 իգ. միասին՝ 739 հոգի:

Ներքին Ակուլիսի և Անդամէջի միջն կայ մի անհշան գիւղ Միրզա-Զաֆար-զիլա անունով, ուր կան 3 տուն շիլ թուրք բնակիչներ, 12 ար. 6 իգ. ի միասին՝ 18 հոգի:

## ՎԱՆԱԴԱՌՈՐ

Ակուլիսից գէպի արևմուտք ձգուում է մի ուրիշ ձոր, որ որաց աւելի լայն և աւելի երկար է: Սրա աջ կողմում բարձրացող զազաթներից նշանաւոր են Գիանուտ, Ծակքար, Սիստակ հող, Բաղրար, իսկ ձախ կողմում՝ Այի-չանզլ, Բաշքեչալու, Բաշլւրտ, Փարտոյ, Զարիսատ, Գիալին-դաշի<sup>1)</sup>, Փաթայ-դաշի, Քանդիրլու, Ղարա-եօխուշ, Դոլու-դայասի, Հափա-քար, Ծիրանաքար, Ճալպատ: Գիտակը, որ սկիզբն է անուում Փազմարի լոսից, ընդունում է այն գիւղի անունը՝ որի մօսով հոսում է: Այս ձորի կիման համեմատաբար աւելի մեղմ է, ուստի և այսուել խազպի այգիներ չկան, միայն առատութեամբ աճում են թթենիներ, խնձորենիներ, սալուրենիներ, ծիրանիներ, ընկուզենիներ և այլն:

Այս ձորում գտնուում է Վանանդ, Տրունիս և Դաստա կամ Դաստակ նշանաւոր գիւղերը, ուստի և ձորը շատ անզամ որանց անունով կոչւում է Վանանդառը, Տրունեաց ձոր և Դաստաձոր:

Այս ձորի ամենավերին մասում գտնուում է Փիզմարա թրբքարնակ գիւղը, որ պատկանում է պ. Գէորգիաններին և որ ունի 6 տուն բնակիչ: 27 ար. 18 իգ. ընդամէնը 45 հոգի:

Այս գիւղից 2 վերաս ներքե զանուում է Ա. Խաչ վանրը, որ բարձրանում է մի փոքրիկ հարթութեան վրայ, գիտակի աջ աշխին: Վանքը անզմբէթ է, սրբատաշ քարով շինուած, 20 արշն երկարութեան, 15 արշ. լայնութեան և 12 արշն բարձրութեան,

<sup>1)</sup> Գիալին-դաշ (Հարսի-քար) լեռան մասին պատմում են, թէ նրա զազաթին գտնուած հարսանման քարը մի ժամանակ կենդանի հարս է եղել, որ գլուխը լուանալիս սկսերայրը վրայ է եկել: Ամօթխած հարսը ամօթից քար է կտրել:

անսիւն և թաղակապ: Պատուհանները սաստիկ նեղ են և կարճ, միակ դռան վերև կայ մի խաչքար, հետեւեալ արձանագրութեամբ: Թվ. Ռազմական թիւ, Բ. Ք. Ք. Ա.

Եկիղեցու մէջ կան երկու փոքրիկ խորան և մի աւագան: Վանքը պարսպապատ է և ունի մի քանի հին և երկու նոր սենեակներ:

Վանքի առաջ տարածուում է մի հրաշագեղ այգի, որ գետի և հանդիպակաց քարաժայռերի հետ միասին մի սքանչելի տեսարան է ընծայում ուխտաւորներին, որոնց թիւը, մանաւանդ Ա. Խաչի տօնին, բաւական մեծ է լինուած:

Այս մենաստանը, որ վանանդեցի Թովմաս հպիսկոպոսի պէս վանահայր է ունեցել<sup>1)</sup>, այժմ բոլորովին անմարդաբնակ է: Թաղաքիկ գիւղից ընտրուած երկու հոգաբարձուներ հսկում են, որ վերջնականապէս չաւերուի:

Ա. Խաչի վանքից մի վերստ ներքե գտնուում է Ռևիս գիւղը, որ հսումը հայարենակ է եղել՝ իսկ այժմ թրքարենակ է. 30 տուն, 123 ար. 63 իգ. ի միասին՝ 186 հոգի:

Ունուսից գէպի հիւսիս, մօտ 6—7 վերստ հեռու, լեռան լանջին կայ մի աւերակ հկեղեցի և գիւղատեղի, որ կոչւում է Օքովանիսի:

Ունիսից երկու վերստներքե, գետակի ձախ ափին տեղաւորուած է փոքրիկ Քաղաքիկ գիւղը, պարտէներով պատաժ: Գիւղում կան բաւական լաւ շինուած տներ, մանաւանդ Գէորգեաններինը: Միակ, հինաւորը եկեղեցին փոքրիկ է, թաղակապ և անսիւն: Միակ գուն վերև մի խաչքարի վրայ կարգացւում է.

Ա. Խաչս յիշատակ է աղա Շահնայ թվ. Պ. Ղ.

Բնակիչները բոլորն էլ հայեր են, բաղկացած երկու սերընգից<sup>(պինս)</sup> Գէորգեան և Սանթուրեան, 37 տուն, 151 իգ. ընդամէնը 314 հոգի:

Սրանից երկու վերստ ներքե գտնուում է Տրօնիս կամ Դիերնիս թրքարենակ գիւղը, որ շատ գեղեցիկ տեսք ունի: Այստեղ կայ մի կիսաւեր, հասարակ եկեղեցի:

Հնումը այս գիւղը կոչւում էր Տրունիս, և պատկանում Տրունեաց տոհմին, որ սերել էր Տուրից: Սա երուանդ Բ.-ի արքունիքումն էր ծառայում և «քութիւն էր անում թագաւորի տնից Սմբատին», որի համար և սպանուեց երուանդից: Արտաշէս Բ. իրեկ փոխարէն իւր երախտաւորի արեան, նրա տասնն հինգ որդիներին ժառանգական ազգ հաստատեց, իրենց հօր ա-

<sup>1)</sup> Տես պատմական մասում.

նունով Տրունի կոչելով, որ Ս. Սահակի գահնամակում ծէ. կարգումն էր դաստում և զօրաբաժնին տալիս էր 300 մարտիկներ: Պատմութեան մէջ շատ քչերն են յիշում այս տոհմից. միայն ուժերորդ դարում Հայերի Հագարացոց դէմ ապստամբուած միջոցին յիշում են և Տրունիք, որոնցից մի քանի սեպուններ ընկան մարտնչելով Արճէցում: Խններորդ դարու կիսում յիշում է Վահրամ Տրունին, Բուղայի ժամանակ և տասներորդ դարի սկզբին՝ Յիսէ Տրունեաց աէր, որդի Հոնաւարայ 1):

Տրունիսի մօտ մի ուխտատեղի կայ որ. Աստուածածին անունով, որի մօտ մի ժայռ՝ վրան խաչեր քանդակուած. ասում են, և նոյն իսկ պնդում բազմաթիւ ուխտաւորները, որ ամէն տարի, Համբարձման տօնին, այստեղ, այս ժայռի վրայ, ինքն իրեն մի խաչ է քանդակուում:

Դերնիսի բնակիչները այժմ թուրքեր են 64 տուն, 275 ար. 153 իդ. ի միասին՝ 428 հոգի:

Տրունիսի երեք վերստ ներքե գտնուում է Տաննակերտ գիւղ, որ զետեղուած է համանուն բլրի լանջին, զետակի աջ ափին: Գիւղի գրեթէ կենարոնում բարձրանուում է եկեղեցին, որ չորս սիւների վրայ հաստատուած, փոքրիկ գմբէթով մի շէնք է: Մի վերստ հեռու, գէպի արեւտահարաւ մի բաւական բարձր տեղում գտնուում է Բերդակ կոչուած Ս. Յովհաննէս Մկրտչի ուխտատեղին, որ մի փոքրիկ, հասարակ մատուռ է: Հաւանական է, որ սա մի ժամանակ բերդ (ամրոց) եղած լինի: Այս գիւղում տները համեմատարար աւելի հասարակ են, միայն շատ շատերի առաջ տարածում են պարտէզներ, որոնք գիւղին բաւական գեղեցիկ տեսք են ընծայում: Փողոցներից միայն մինը կանոնաւոր է և ծառազարդ, միւները ծուռն ու մուռը:

Այստեղ կլիման համեմատարար տաք լինելով խաղողը հասնում է, ուստի և ձորակում կան նաև խաղողի այգիներ:

Բնակիչները բոլորն էլ հայեր են 66 տուն, 283 ար. 244 իդ. ընդամէնը՝ 527 հոգի:

Տաննակերտից ներքե գտնուում է Սալ թրքարնակ, աննշան գիւղը, որ միայն 2 տուն բնակիչ ունի 4 ար. 3 իդ. ի միասին՝ 7 հոգի:

Նոյնքան աննշան է և սրա մօտի Լիւտ-վաւի-Սուլթան-ղլիզան որ նոյնպէս երկու տուն բնակիչ ունի, 9 ար. 3 իդ. ի միասին՝ 12 հոգի:

Սալից երեք վերստ ներքե գտնուում է Դիսար գիւղը, որ

1) Սիսական եր. 338.

ունի մի հինաւուրց, հասարակ եկեղեցի: Բնակիչները հայ և թուրք են, ընդամէնը՝ 28 տուն, 96 ար. 68 իդ. ի միասին՝ 164 հոգի, որից հայերը 13 տուն են, 45 ար. 30. իդ. ի միասին՝ 75 հոգի, թուրքերը՝ 15 տուն, 51 ար. 38 իդ. ի միասին՝ 89 հոգի.

Դիսարից մի վերստ ներքե գտնուում է Վալաւիր թրքարնակ գիւղը, որ նախկին Վաղաւեր հայարնակ գիւղն է, առանց մի որևէ նշանաւոր հնութեան: Բնակիչները թուրքեր են՝ 21 տուն, 72 ար. 69 իդ. ի միասին՝ 141 հոգի:

Վալաւիրից մի վերստ ներքե, ընդամական Վանանդի գիւղը:

Իւր չափազանց գեղեցիկ տեսքով և բերրութեամբ այս տեղը շատ հին ժամանակից գրաւել է մարդկանց, որի մասին վկայում է այն բագինը, որ քանդել է ս. Բարդուղիմէսու առաքեալը և նրա տեղը կանգնեցրել ս. Թոմայի անուան նուիրուած մի եկեղեցի, որի ողբացող աւերալին է մնացել այժմ: Այստեղ է վախճանուել և ս. Բարդուղիմէսու լուսիկ աշակերտը, որի գերեզմանի վրայ շինել են մի փոքրիկ մատուռ, որ մինչեւ այժմ էլ ուխտատեղի է: Այստեղացի են եղել Վահրամ Գողթնեցին և Թովմաս եղիսկոպոսը, Դուկաս բանասէրն ու Մատթէուսը<sup>1)</sup>, որոնք ահազին ծառայութիւն են մատուցել հայկական տպագրութեան:

Վանանդի այժմիան բնակիչները բոլորն էլ շիի թուրքեր են. 125 տուն, 409 ար. 382 իդ. ի միասին՝ 791 հոգի:

Վանանդի բերքերից առանձնապէս ուշաղը բութեամբ արժանի է ծիրանը:

Վանանդից ներքե, չորս վերստ հեռու գտնուում է Աղրի թրքարնակ գիւղը, որ ունի 17 տուն բնակիչ, 40 ար. 39 իդ. ի միասին՝ 79 հոգի: Սրա մօտ էլ ընկած է նոյնպէս թրքարնակ լունաղա գիւղը, 37 տուն բնակչով, 108 ար. 86 իդ. ի միասին՝ 194 հոգի: Միքիչ հեռու գտնուում է Զաֆար-խան ղլզա աննշան գիւղը 6 տուն թուրք բնակիչներով. 22 ար. 14 իդ. ի միասին՝ 36 հոգի:

Խանաղայից էլ ներքե, Վանանդաձորի վերջաւորութեան վըրայ, ուր տարածում է մի բաւական ընդամակ գաշտ մինչի Աշբաքու, հրաշալի պարտէզների ու այգիների մէջ փռուած է Դաստա (Ծուսերէն՝ Դոստի) թրքարնակ գիւղը: Սա հին, հայարնակ թաստակ գիւղն է, որի վերջի հայ բնակիչները զաղթել են Սկուլիս և Շուշի: Այստեղ կայ մի կիստեր եկեղեցի, որ այժմ ուխտատեղի է համարւում շրջակայ հայերի համար: Բարձր և գեղեցիկ

1) Տես պատմական բաժնում:

սոսու սաղարթներով հովանաւորուած հրապարակը, իւր քաղցլաւամ ջրի աղբիւրով հիացմունք է պատճառում անցորդին:

Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 229 տուն, 829 ար. 681 իգ. ի միասին՝ 1510 հոգի:

### ՑՂԱՅԻ ԿԱՄ ԶԱՆԱՆԱԲԻ 20Ր

Վանանդաձորից դէպի արևմուտք, գարձեալ հիւսիսից հաշրաւ ձգում է մի ուրիշ ձոր, որ տեղ տեղ աւելի ընդարձակ է, քան վանանդաձորը: Այստեղ, ձորի երկու կողմում գտնուած լեռների մէջ նշանաւոր են Զին գաշը, Դաշբաշին, Ղուրթ-թափան, բոլորն էլ մերկ: Չորի միջով հասում է մի գետակ, որ սկիզբն է առնում Եաղու-դարա լեռան մէջ տեղից և ստանում է այն գիւղի անունը, որի մօտով անցնում է:

Չորի կլիման հիւսիսում համեմատաբար ցուրտ, իսկ հարաւում աւելի տաք է: Չորը պատաժ է գլխաւորապէս թթինիներով. կան նաև խաղողի այգիներ:


Չորի ամենավերին մասում, բլուրների գոգաւորութեան մէջ գտնում է Ռամիս կամ Ռոռումիս գիւղը, որի ճանապարհը չափազանց վաստ է: Գիւղը ունի մի եկեղեցի, այժմ էլ հայաբնակ է, բնակիչներն ընդամենը 31 տուն են, 377 հոգի, որից 207 ար. և 170 իգական: Սրանք գտնուելով Դարաբաղին սահմանակից՝ թէ սովորութիւններով և թէ բարբառով աւելի նրանց են նման քան զօկերին:

Խամբից 3—4 վերստ ներքե, ձորում, տարածւում է Ստոպի կամ Ռւստուփի թրքաբնակ գիւղը, 90 տուն բնակիչներով, 527 ար. 215 իգ. իմիասին՝ 742 հոգի:

Ռւստուփից հազիւ մի վերստ ներքե, գետի երկու կողմում փուռում է Յղնա կամ Չանանաք գիւղը, որի հիւսիսային ծայրում գտնուում է ո. Աստուածածնի վանքը, հարաւային կողմում, ջրի ձախ ափին, Տամրրի թաղում բարձրանում ո. Սարգսի եկեղեցին: Իսկ սրանից վերև ցցուած է Հարս ու փեսի քարը: Փողոցներից շատերը թէն ծառազարդ, բայց անկանոն են ու նեղ, տներից շատերը պարտէզներով պատած են, մի քանիսը երկյարկանի և եւրո-

<sup>1)</sup> Պատմում են, թէ մի աղայ ու աղջիկ միմնանց վրայ սիրահարուելով փախել են, որպէս զի իրենց միութեան հակառակող ծնողների բանութիւնից ազատուին: Ասկայն երբ սրանք իմացել են նրանց փախտստը և անիծել, իսկոյն քար են կարել ու միմնանց գրկախանած մնացել իրր անխօս բողոք իրանց ծնողների բռնութեան դէմ:

պական ճաշակով կահաւորուած: Մարդ հիանում է երբ ապառաժու, մերկ բլրակների ու ամուլ շրջակայքի վրայից հայեացքը ձգում է գիւղի վրայ, ուր ամէն մի բոյսը, ամեն մի քարը, քարաժայուերի միջով անցկացրած ջրանցքներն ու անանցանելի քարափների մէջ շինած Սարգսեանների հւրոպական ձեր մետաք-



սեայ գործարանը վկայում են զօկի սնիսոնչ աշխատասիրութեան և տոկունութեան մասին:

Ս. Աստուածածնի եկեղեցին սրբատաշ քարերով շինուած մի հոյակապ շէնք է: Չորս իսկական և ութ կեղծ սիւների վրայ բուրուում են ուսմանական կամարներ՝ կրկելով ութ պատուհաններով զարդարուած գմբէթը: Ուրիշ իննը պատուհաններ (1 արշ, երկ. 1/2

արշ. լայնութեան) էլ բաւականաչափ լոյս են սփռում: Միայն այս եկեղեցու մէջ ևս միտութեան աւագանի կողքին և հանդէպը, պատերի մէջ կան պահարանի բացուածքներ՝ պարսկական ճարտարապետութեան մի տպեղ ներմուծութիւն:

Խորանների միջից գաղոնի անցքեր ձգում են պատերի մէջ և տանիքի տակ, ուր բաւականաչափ տեղ կայ թէ իրեր պահելու և թէ, վտանգաւոր ժամանակներում, թաք կենալու:

Եկեղեցին ունի երկու գուռն, երկուսն էլ շատ գեղեցիկ քանդակներով եզրափակուած: Հարաւային դասն վերև քանդակուած է Պօղոս և Պետրոս առաքեախների պատկերները, իսկ առաջը բարձրանում է եռայարկ, գմբէթաւոր մի զանդակատուն, նախ չորս և ապա ութական սիւների վրայ հաստատուած: Այս զանդակատան հարաւային ճակատին քանդակուած են աջ կողմում՝ Աստուածածինը, ձախում՝ խաչուած Յիսուսը, երկուսն էլ մարդաչափ մեծութեան:

Հիւսիսային դասն վերև ևս քանդակուած է Աստուածածինը՝ Յիսուս որդին գրկում, որի ներքի արձանագրուած է.

ՄԵՆՔ, Յղիու եղեալ իշխանքս շինեցինք տունս Այս սք. ածածին դվինք ԺԲ. Ալարը ոսկի էլ մեր մըն վախուպ արինք տասնին մէկն որ պայծառ լինի որ է մէկ հատն արեվելեան կողմն կեղն յարեվմտեան կողմն սարն, հարվային կողմն Մակն դաշտու քարն, հիւսիսն կողմն համամն:

Սոյն դուսն ձախ կողմը կայ հետեւեալ արձանագրութիւնը.

Յիշատակ է Մրշանանց Խաչատուրին եւ իւր կողակից Մարգարտին. ԺՎ. ՈՒԾԵՅ.

Եկեղեցու պատերի վրայ, արտաքուստ, գրեթէ մէջ տեղից ձգում է մի շղթայածն քանդակ, որին միանում են պատուհանների և գուների շարքը պատող նոյնանման քանդակներ: Նաև կըտուրի չորս անկիւններից քաշ են արտած մի մի քարէ օդակներից շինուած շղթաներ, որ օրորւում են քամու ազգեցութեամբ:

Եկեղեցու մէջ կան մի քանի գերեզմանաքարեր որոնց վրայ ամբացրած մարմարնեայ տախտակների վրայ գրուած է.

Տապանս այս է խօնայ Պաղտասաարին զոր բազում օգնականութիւն արար ի վերայ եկեղեցոյս շինութեան ի թվին ՈՒԾԵՅ.

Ի Յղնու պարոն Պարսագան պէկի բվերորդի Գուրգէն պէկի զերեզմանն է ի թվին ՈՒԾԵՅ, ով կարգայ ողորմի ասի:

Տապանս այս է խոճայ Անդրէասին ի թվին ՈՒԾԵՅ

Տապանս այս է յօրինեալ իշատակի մնանիսի Անանիայի որդի խօճայ Միմնին ԺՎ. ՈՒԾԵՅ.

Տապանս այս է յօրինեալ ի յիշատակի Ոհանիսի որդի խոճայ Յակոբին ԺՎ. ՈՒԾԵՅ.

Ս. Աստուածածնի եկեղեցին պարսպապատ է և պարսպի մէջ ունի մի և երկյարկանի շինութիւններ, ուր երբեմն գետեղուած էր ծիսական գպլոցը:

Գիւղի հողը այս եկեղեցուն է պատկանում, ուստի և գիւղիները տարեկան 100 ըուբլի են վճարում եկեղեցուն իբր կուպալագրամ:

Ս. Սարգսի եկեղեցին փայտածածք և փայտի սիւների վրայ յենած մի հասարակ շէնք է, որի սեղանի վրայ մի շատ գեղեցիկ խաչ կայ հետեւեալ արձանագրութեամբ.

Սբ Խաչս յիշատակ Պհան մելիք Էնէքէկ Ածատուրայ,

Մալթանայ Ջաֆարշհայ...

Աջ կողմում ևս մի ուրիշ խաչի վրայ.

Սբ Խաչս յիշատակ Անդոնայ Ուղանայ եւ Էլինախայ. ՊԶԳ.

Եկեղեցին ունի երկու գուռն, որոնցից արեմտեանի աջ կողմին գրուած է.

Հայրապետութիւն Հայոց Տը Մելիքսէթ գեղիս քահանայութիւն պարոն տէր Աւետին տր Ղուկաս եպիսկոպոս տեղիս ախսախսալոք խոճայ Անծեւ Հայրապետ, Աւագ, ուիտ Աղամիք Դաւլաթ, Խորայէլ, Միլիաք յետ գրլյ դրմն խատր ԺՎ ՌԿ.

Սրա վերև մի գեղեցիկ խաչի տակ.

Սբ Խաչս յիշատակ... Ռիլսե.

Դուսն ձախ կողմում, Թագաւորութիւն Շահ-Աբաս, կաթողիկոսութիւն Տէր Մելիքսէթէկ եպիսկոպոսութիւն տէր Օէտին գեղիս եպիսկոպոս Ղուկասն ԺՎ ՌՂ.

Սրա վերև ևս կայ մի ուրիշ խաչ Խուականով:

Հարաւային դուսն աջ կողմի խաչքարի տակ.

Խաչս յիշատակ Սարգսի երիցու եւ կողակցն Եղիսաբէթայ դստերն Ուտիանէ. ԺՎ ՊԶԳ:

Զախ կողմի խաչքարի վրայ. Խաչս յիշատակ Խալիւ սարկօակս Մարգարին ԺՎ ՋԼՂ.

Սոյն դուսն վերև

Գիւղիս սբ Սարգսի եկեղեցիս նորոգուեցաւ Յղնայ ժողովրդեան ծախիք վերակացութեամբ Սաղաթէկ Սաղաթէլեանցի 1890 ամի.

Պարզ է, որ միայն այս արձանագրութիւնն է վերաբերում հկեղեցուն, միւսները զանազան գերեզմանների վրայից վերցրած խաչքարեր են, ինչպէս և հկեղեցու հարաւային պատի մէջ ամրացրած երկու խաչքարը, որոնցից մինի վրայ կարգացրում է.

Խաչու յիշատակ է Մամփորիկայ, Հոռենանայ, Յոհաննայ, Խիդիրշահայ որդի Անիսիդիրայ եւ Խաթունայ, թվ ջիջ.

Գիւղից փոքր ինչ բարձր նկատելի են մի հին ամրոցի հետքեր:

Բնակիչներն ընդամենը 86 տուն են, 543 ար. 437 իդ. ի միասին՝ 980 հոգի, որից միայն 3 տունը՝ 13 ար. 4 իդ. թուրքեր են, մնացածը հայեր:

Ցղնայից մօտ հինգ վերստ հեռու գէպի հարաւ, մի հարթութեան վրայ գանւում է Ս. Ստեփանոսի ուխտատեղին, որ մօտակայ աւերակ գիւղատեղով անունով Միւզկունց վանք էլ է կոչւում: Սա Թովմաս եպիսկոպոսի յիշատակած Մցզունի Ս. Ստեփանոսի վանքն է, ուր եղել է նաև Արքահամ կաթուղիկոսը Հին-Զուղարաց գնալիս:

Այս վանքն այժմ վերաշնուռած է. անցեալից մնում են միայն կիսակործան պարիսպն: Այժմեան վանքը մի հասարակ, փայտածածք, փոքրիկ շէնք է:

Ցղնայից ներքեւ գտնուում են Դիւզլուն և Դիւզլունդիզա գիւղերը, երկուսն էլ թրաբնակ, տուածնում կան 49 տուն բնակիչ, 146 ար. 101 իդ. ի միասին՝ 247 հոգի, միւսում 9 տուն, 24 ար. 11 իդ. ի միասին՝ 35 հոգի:

## ԲԱՏԱՋՈՐ—ԳԻԼԱՆՍՅՈՐ

Ցղնայի ձորից դէպի արևմուտք, զարձեալ հիւսիսից հարաւ ձգուում է մի ուրիշ ձոր, որ թէ երկարութեամբ և թէ լայնութեամբ ամենամեծն է Գողթանի շրջանում: Այս ձորում հնումը նշանաւոր է եղել Ազա և Գիրան (Ճիրան) քաղաքները, ուստի և ոչ միայն այս հովիտը, այլ և ամրող Գողթան գաւառակը սրանց երկուսի միացեալ անունով կոչուել է Ազա-Ճիրան: Այժմ այդ անունը այլ ևս գործածական չէ և այս ձորը աւելի յիշուում է Բիստ և Բելի գլխաւոր գիւղերի անուններով: Այս ձորի միջով հոսում է Գիլան-չայը, որ յառաջանում է Սաղկար-սուի և Սյրի-չայի միախառմամբ և ընդունելով միքանի վտակներ, ինչպէս Բատաչայ, Տերչայ և Բելչայ՝ թափուում է Արքսի:

Այս ձորը հետզհետէ լայնանալով վերին և ներքին Ազաների մօտ մի ընդարձակ դաշտ է ներկայացնում, կտրառուած միքանի բլրակների շարքերով:

Այս ձորի երկու կողմում բարձրացող գագաթներից նշանաւոր են Գոյ-գաղը, 12173 սանաչափ բարձրութեան՝ Նիւրգուտ գիւղի արևմտահիւսիսային կողմում, Գեաւակը (5677) Տեփ գիւղի մօտ, Արգալը և Զարաջուրը Բելի մօտ, Ղարաւու-թափան ու Էլտին, Մապարախը, Մարա-զարա-զարին, Օղան-գեօղը և այլն:

Այս ձորի հետ միանում են երկու ուրիշ ձորակներ, ուր զետեղուած են միքանի նշանաւոր գիւղեր: Սրանցից առաջինն է Մարգանիսի ձորակը համանուն վտակով, որ թափում է Բստագեակ մէջ համանուն գիւղի մօտ և Բելի ձորը, նոյնպէս համանուն գիտակով, որի շուրջը գետեղուած են Բիլե, Բէհրուտ և Փառակա գիւղերը:

Չորի ամենավերին մասում գետեղուած է Նիւրգուտ գիւղը, որ ունի 26 տուն թուրք բնակիչ, 151 ար. 64 իդ. ի միասին՝ 215 հոգի: Սրանցից փոքր ինչ ներքե 6405 սանաչափ բարձրութեան վրայ տեղաւորուած է Խուրստ հայարնակ փոքրիկ գիւղը, մի հին, կիսաւեր եկեղեցիով և 6 տուն բնակչով, 37 ար. 24 իդ. ի միասին՝ 61 հոգի: Մի քիչ ներքե գտնուում է Ազնամիր գիւղատեղին, մի աւեր եկեղեցիով: Փոքր ինչ էլ ներքե, թաւաքեալի բլրի լանջին տարածուում է Ալլահի հայարնակ գիւղը: Սրա գրեթէ կենարոնում բարձրանում է Ս. Ստեփանոսի եկեղեցին, որ հասարակ քարով շինուած, մի գմբէթաւոր շէնք է: Փոքր ինչ հեռու գտնուում է ս. Հոփիսիմէի ուխտատեղին, ուր գտել են մի պուլիկ մէջը բամբակով փաթթաթած ոսկորներ, իսկ պուլիկի վրայ, ասում են, իրը թէ զրուած է եղել թէ ս. Հոփիսիմէի մասունքն է: Գիւղի տները Ղարադաղինի նման բաղկացած են էյվանից, տնից և տնամիջից: Գիւղում ոչ մի աղբիւր չկայ և խեղճ կանայք մօտ  $\frac{1}{2}$  վերստ ամենավատ ճանապարհով են գնում Գիլանիշայից ջուր բերելու:

Բնակիչները գաղթել են Մուժանբարից, Ղարադաղից և Սալմասուց և մինչեւ այժմ պահպանել են իրենց բարբառը, տների, շորերի ձեր և իրենց սովորութեամբները: Դպրոց երբէք չեն ունեցել և ոչ էլ մի որևէ նշանաւոր զործիչ տուել: Պարապում են երկրագործութեամբ և մեղսապահութեամբ: Տղամարդկանցից շատ շատերը մշակութիւն են անում զանազան քաղաքներում: Ընդամենը 38 տուն են, 201 ար. 146 իդ. ի միասին՝ 347 հոգի:

Ալլահից գէպի արևելք, հազիւ 5 վերստ հեռու գտնուում է Մեսրոպավան կամ Մարգանիս և կամ ուստերէն՝ նասիրվագ կամ

Նասիր-արագ կոչուած զիւղը: Պատմական դարեւոր աւանդութիւնն ասում է, թէ այս զիւղն է այն վաղեմի սրբավայրը, ուր սուրբ Մեսրոպը, հալածելով նախնի կռապաշտութեան մնացորդները, հիմնել է այն փոքրիկ եկեղեցին, որ թէպէս նուիրուած է ո. Գըրիգոր Լուսաւորչու անուան, բայց և այնպէս՝ հիմնագրի, ո. Մեսրովի անունով այժմ էլ կոչում է Մեսրորավան կամ Մսրվանիս:

Այս աւանդութիւնը հաստատում է Մովսէս Խորենացու հետեւալ վկայութեամբ: (Ս. Մեսրովը) «Գնում բնակում է Գողթն գաւառում, ճգնաւորի կեանք վարելով<sup>1)</sup>, և ապա հայկական տառերը գանելուց յետոյ կրկին «անցնում է իւր առաջին բնակութեան Գողթն գաւառը<sup>2)</sup>:»

Այս սրբավայրը, որպէս առաջին քարոզութեան վայր, այնքան սիրելի է եղած այդ աղքալոյս Բարերարին, որ նրա մահից յետոյ «ումանք առաջարկում էին տանել նորա (մարմինը) նրա առաջին աշակերտած Գողթն գաւառը<sup>3)</sup>:»

Այսուղեւ սիրելի է եղած նաև Աղան Արծրունուն, Ղազար Փարփեցու ուսուցչին, «որ Ս. Սահակից կրօնաւորութեան սքեմ բնդունեց և գնաց առանձին բնակեց Գողթան գաւառում, սուրբ Մեսրովի վարդապետութեան տեղում<sup>4)</sup>:»

Այս Մսրվանիս զիւղը գետեղուած է Ալանդեագ լեռան լանջին: Երկու փոքրիկ վտակներ՝ Ալանդեագի և Զաննապետի՝ հոսելով զիւղի արևմտեան և արևելեան կողմերում, թափւում են զիւղի հարաւային կողմից հոսող Մսրվանուց գետակը, որ սկիզբն է առնում Գեամի-զայա լեռից: Գիւղի արևմտեան կողմում բարձրանում է Գիւլում զիւղում կոչուած քարաժայուր, որի մասին պատմում են, թէ մի ժամանակ սրա ստորոտում մի զիւղ է եղել, որի բնակիչները բարյապէս սաստիկ փչացել են: Այս քարաժայուն երեք անգամ կանչել է. «Գիւլում, զիւղում, զիւլըմ», (գալիս եմ, զալիս եմ, զալիս), որպէսզի զիւղացիներն զգաստանան և ապաշխարեն, բայց սրանք ոչ մի ուշադրութիւն չեն զարձրել և շարունակել են իրենց անբարյական կեանքը, ուստի և քարաժայուր փուլ է եկել սրանց վրայ, և բոլորին սպանել: Այդ օրուանից քարաժայոն իւր հանած ձայնի պատճառով վիրակոչուել է Գիւլում զիւղում: Սրա կողքին Ալանդեագ լեռոն է, իսկ սրանից դէպի արևելք Ղարա-զայա սարն, և Գեամի-զայա ձիւնապատ գագաթը: Գերջինիս մասին պատմում են, թէ նոյի տապանն ընդհարուել է

<sup>1)</sup> Մովսէս Խորենացի Գ. գլ. ԽԴ.

<sup>2)</sup> Անդ. Գ. գլ. 4.

<sup>3)</sup> Անդ. Գ. գլ. Կթ.


<sup>4)</sup> Թողմա Արծրունի. Կր. 80.



Деревня гдѣ жилъ С. Месропъ  
изобрѣтатель арм. азбуки.

## ՍՈՐԱՆԻ

Village où o vecu S. M srob, inven-  
teur de l'alphabet arménien.



սրան, և միքանի տախտակներ կոտրուել մնացել են սրա վրայ և իր թէ սա էլ ասել է. «Երթի Մասիս, նա բարձր է քան դիս»: Գիւղի հարաւարեկելեան կողմում բարձրանում են Նարի-իւրտ և Հազար-իւրտ լեռները: Պատմում են, թէ Հազար-իւրտ լեռն իւր անունն ստացել է Սուրջինի վանքի կառավարիչ Հազարից, որ այս լեռից մինչև վերոյիշեալ վանքը խողովաճներ էր անցկացրել որի միջով այս լեռան վրայ կթուած ոչխարների կաթը գնում էր Սուրջիի վանքը:

Լեռների գեղարուեստական տեսքը, վտակներն ու սրանց ափերում աճող բարձր ու բարակ բարդիները, գիւղի ներքեսում տարածուած այգիները, մեղմ կլիման սքանչելի ամարանոց են դարձնում այս գիւղը:

Գիւղի արևմտեան կողմը, Ալանգեաղ վտակի աջ ափին, մի փոքրիկ հարթութեան վրայ, արդէն կիսաւեր պարսպով մեկուսացած, բարձրանում է այն փոքրիկ վանքը, ուր սուրբն Մեսրով աղօթել է Հայաստանի լուսաւորութեան համար և քարոզել հետեւ իրեն օրինակին:

Սա դարերի ընթացքում միքանի անգամ վերաշինուած և հասարակ քարով կառուցուած մի շինք է: Չորս սիւների և ութ կիսասիւների վրայ բոլորում են արաբական կամարներ, կրելով ութ պատուհանաւոր մի մեծ զմբէթ և սրա մօտ՝ մի շատ փոքրը: Ունի մկրտութեան աւազան և սրա մօտ ու հանդէպ՝ նոյնանման բացուածքներ: Խորաններն երկուս են. սեղանը զարդարուած է Ոսկան Ոսկանեանի նուիրած բաւական գեղեցիկ պատկերներով: Պատուհանները շատ նեղ են և կարճ, իւրաքանչիւր պատիճան 3 հատ: Միակ արևմտեան զուոը բացուում է չորս սիւների վրայ հաստատուած թաղակապ գաւթի մէջ:

Եկեղեցու ձախ կողմում կայ մի գերեզման առանց տապանագրի:

Եկեղեցու երկարութիւնն է 6 սաժէն, լայնութիւնը 3 սաժէն և 2 արշին, իսկ բարձրութիւնը հինգ սաժէնից փոքր ինչ աւելի: Եկեղեցու վրայ կան հետևեալ արձանագրութիւնները.

Սեղանի ձախ կողմը, մի խաչարձանի տակ.

Թաղոսի եւ մալրս Գոհարին եւ հաւը Ազիզբէկին Ամիրջանին Սիրունակին... թվ. ջթ.

Սյս կողմը, մի ուրիշ խաչի տակ. Խաչս յիշատակ Մարտիրոսի Գիւլստանին թվ. Ռիդի.

Սեղանի աջ կողմը զարձեալ մի խաչարձանի տակ.

Խաչս յիշատակ է Փօղոսին թվ. Ռիդ.

Գաւթի ձախ կողմում. Արդ յիշեցէք վանքիս միաբանքն

աներախտ աւուր վանացս տր Ղազար քահանայն իւր աշակերտ տր Գրիգոր. եւ զեղիս օքնեալ քահանայն տր Ազարիան...

**Գաւթի աջ կողմում.**

...(մի ամբողջ տող եղծուած է).

սբ ածածին ըեզ լինի հովանի պահապան . . . դպիր սուտանուն Դաւիթ որդի տէր Գրիգոր սբ Ածածին զրեցաւ թվին ՌՃԺՀ:

Այժմ այս վանքը հասարւում է գիւղի ծխական եկեղեցի և բաւական ինամքով պահպանում է:

Ս. Թարդմանչաց տօնին շրջակայ Ալլահի, Բիստ, Փառակա, Ցնա և Ռամիս գիւղերից բազմաթիւ ընտանիքներ ուխտ են զալս այս վանքը: Երենք Մորվանցիները իրենց մէջ փող են հաւաքում և հասարակական մատաղ մասում: Անազին բազմութիւն միասին նստում է վանքի գաւթի առաջ և ուտում հասարակական մասապը:

Գիւղի բնակիչները թէւ բնիկներ են համարւում և խօսում են Երևանի բարբառին մօտիկ մի բարբառով, սակայն ո. Մհարովի մասին չեն պահպանել մի որեէ աւանդութիւն: Բոլորի գիտեցածն էլ մեր պատմապիքների հաղորդածներն են:


Սոյն գիւղում կայ նաև մի ուխտատեղի ո. Հոփիսիմէ անունով ուր խաչքարի վրայ արձանագրուած է.

Խաչս յիշատակ Դանիէլ վարդապետին, թւին ՌՃ որ կանգնեցաւ խաչս փրկութեան հոգոյն:

Բնակիչները 38 տուն են, 245 ար. 126 իգ. ի միասին՝ 371 հոգի, որից 22 տունը՝ 248 ար. 82 իգ. հայեր են, իսկ 16 տունը՝ 97 ար. 44 իգ. թուրքեր:

Մորվանիսից հինգ վերստ հեռու, գէպի արևմտահիւսիս գտնուում է այն նշանաւոր գիւղը, որի մասունով այժմ ամբողջ ձորակն է կոչւում: Սա—Բիստը տարածւում է այն ապառաժոտ լեզուակի վրայ, որ ձգւում է Մորվանից ձորում: հիւսիսից հոսում է Բատայ կամ Գիլանայ գետակը, իսկ հարաւից Մորչայը, որ թափւում է առաջնի մէջ գիւղից  $\frac{1}{2}$  վերստ ներքեւ: Գետակների ափերին տնկուած են բարդի ծառեր, որ բաւական գեղեցիկ տեսք են ընծայում գիւղին: Փողոցներ գրեթէ չկան, տները կուտակուած են միմեանց վրայ, մեծ մասը գետի քարերով, մի մասն էլ հում աղիւսով շինուած: Իւրաքանչիւր տուն բազկացած է էյվանից, տնից և տնամիջից: Գիւղի մէջ աղբիւրներ չկան, այլ միայն մի արխ է անցնում: Գիւղի հիւսիսային կողմում, մի ահազին ժայռի վրայ կառուցուած է մի բաւական գեղեցիկ եկեղեցի, ամ-

բողջալին կարմիր, տաշած քարից: Զորս սիւների և ոռմանական կամարների վրայ յանկած եռանկիւնածն ձեղունը մէջ տեղում մի կտր ծակ ունի, որի վերայ, սակայն, չի բարձրանում մի որեէ գմբէթ: Խորանները երկուս են. բացի մկրտութեան աւաղանից կան նաև 14 պտրհան, իւրաքանչիւր պատի մէջ կայ երեք պատուհան 1 արշին բարձրութեան և 3 վերշոկ լայնութեան: Սրևմբառեան միակ գուռը երեք շարք կամարակապ նշխերով եղբափակուելով բացւում է մի անգմբէթ, երկու հաստ սիւների վրայ յանկած գաւթի մէջ: Եկեղեցու երկարութիւնն է 15 սաժէն, լայնութիւնը 7 սաժէն, իսկ բարձրութիւնը 5 սաժէն:



ԲԻՍՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ

**Գաւթի աջ կողմի պատին գրուած է.**

Ի թվին ՌՃՆ, սպասատը քանին ար Ալէքսան զիմս փոքրիկ յիշատակ իւրեան:

**Սրա ներքի**

Ի թվականին հայկազն Ռ երորդ Շ երորդ ութիւնակ թվի ի . . . ով ընթերցողք ասացէք մէկ ողոքմի մեր զեղացոց փոքր եւ մեծ. եւա արաւել ապրանամ ու Ելեմիան, որը զտուց ետուն զումարմթութը եիլի: Հոգում առուր տնի սինա. Զենմա մեղ նոցին թողութիւն լինի ամէն. Եղիցի, Եղիցի:

Այս եկեղեցուց փոքր ինչ բարձր գտնուում է թուրքաց մկիկը, որ մի շատ հասարակ շինութիւն է:

Բիստից հազիւ շ վերստ հեռու գանուում է Ս. Նշանի վանքը, որ վերջերս վերանորոգուած, մի փոքրիկ եկեղեցի է, պարսպապատ: Կարծում եմ, որ այս վանքի մասին է խօսում Աբրահամ՝ կաթոլիկոսը, յիշատակելով այսպէս. «Եյցելեցի Պուստ մեծ զիւղն, յորում կայր պատուական եկեղեցին, և յետ ուխտելոյ յեկեղեցին, ելի ի վանքն աղաւնանման աղինասարաս, ի վայելու բարձրանիստ տեղի, լի պարտիզօք, ջրարրի և բարերել հողով, և պարզ և առողջարար օգով. զուարձացաւ սիրտ իմ, մոռանալով զաշխատութիւնս ճանապարհին. այլ և առաջնորդ Տէր Պետրոս վարդապետն այլ խոհեմ և բարեբարոյ. միաբանք՝ սիրով և ճնազանդ. և մնացի անդ երկու օր»<sup>1)</sup>:

1670 թուին Զաքարիա Ագուլեցին իւր կնոջ և ուրիշ շատ ուխտաւորների հետ այս վանքը գալով յիշատակազրում է. «Եյս այն ս. Նշանն է, որ Քրիստոս աշակերտաց ոտնն լուաց. այս խաչս այն թաշտի պղինձն է. սորայ առաջնորդն էր... ըստուցի Ալեքսան վարդապետն:

Եյս գիւղից է եղել Յակոր վարդապետը, որ աշակերտել է Յովհան Որոսնեցուն և Գրիգոր Տաթևացուն և որի խնդրով Գրիգոր Տաթևացին գրել է իւր փոքր Հարցմանց գիրքը: Բնակիչները հայեր են և թուրքեր, ընդամենը 115 տուն. 719 ար. 544 իգ. ի միասին՝ 1263 հոգի. որից հայերը՝ 52 տուն են 359 ար. 274 իգ. ի միասին՝ 633 հոգի. մնացած՝ 63 տունը՝ 360 ար. 270 իգ. ի միասին՝ 630 հոգին թուրքեր: Պէտքէ ասել, որ այս գիւղացիները բաւական անկիրթ և կոպիտ են մնացել, ու համարեա ոչ մի նշանաւոր մարդ չեն տուել: Պարապում են առաւելապէս անամապահութեամբ, երկրագործութեամբ և մեղուապահութեամբ: Եւ թէպէտ աճում են թթենիներ, բայց շերամապահութեամբ չեն պարապում, որովհետեւ դեռ ևս այդ աստիճան չեն յառաջացել: Խաղողի այդիներ չկան, որովհետեւ կլիման մեղմ լինելով խաղողը շատ ուշ է հասնում:

Բիստից 6 վերստ ներքեւ գտնուում է Թեւի, հնումը հայաբռնակ, իսկ այժմ թթաբռնակ գիւղը, ուր գտնուում է այս հասարակութեան գտարանը, որ բաւական գեղեցիկ, պարտիզով շրջապատուած մի շէնք է: Այստեղ հայկական նախկին եկեղեցու միայն երկու սունն են կանգուն և մի խաչքար, որի վրայ կարդաւում է.

Յիշատակ է Յոհանի որդուն. թվին Ռ.Ռ.

<sup>1)</sup> Միական եր. 344.

<sup>2)</sup> Զաքարիա Ագուլեցի եր. 44.

Եկեղեցու տեղը այժմ պարտէզ է դարձրած, մօտը տուն շինած նոյն այդ եկեղեցու քարերով:

Եկեղեցուց փոքր ինչ բարձր, մի թուրքի տան գաւթում ևս կայ մի խաչքար, որի վրայի արձանագրութիւնից կարդացւում է միայն Ռ.Ռ. թուականը: Այս խաչքարը գուրս էր եկել երբ այդ տեղում տան համար ճիմք են փորել: Տան տէր թուրքը իւր կրած պատուհաններն այդ խաչքարի տուածը համարելով կամեցել է սիրտն առնել, ուստի և նրա վերև մի փոքրիկ կամար է կապել և լաւ պահպանում է:

Յիշել ենք, որ այս գիւղում ծծմբային ջուր կայ, որից թուրքերը բոլորովին չեն օգտուում:

Բնակիչները 74 տուն են, 284 ար. 140 իգ. ընդամենը՝ 424 հոգի:

Այս գիւղից 4 վերստ հեռու, զէպի արևելք Նաւուշ գիւղատեղում կայ սրբատաշ և քարերով շինուած մի եկեղեցի, որ թաղակապ է, անգմբէթ, 2 խևական և վեց կեղծ սիւներով: Բացի մկրտութեան աւազանի տեղից կան նաև միքանի կամարակապ, պատուհանածն բացուածքներ—պարհաններ: Սեղանի աջ կողմն էլ մի գաղանի սանդուղ տանում է խորանի վերին մասը, ուր մի կամարակապ խաչքար կայ ծուռը ձգուած, որ կրում է հետեւալ տապանագիրը.

Խաչս յիշատակ է Մովսէսի թվ ԶիԴ.

Մի այսպիսի խաչ էլ սեղանի վրայ կայ՝

Խաչս յիշատակ է տը Սարգսին. թվ. Ռ.Ռ.:

Միակ, կամարակապ դռան վերայ պարզ կարդացւում է.

Թվ Ռ.Ռ. Ծնորհօք սբռոյն Երբորդութեան ծեռնարկեցաք նորոգութեան սը տաճարիս այս տրունեան սբռոյն Ստեփաննոսի անուան. եղեւ օծումն օրնութեան ծեռամբն Պետրսի ղետի Գողթան եւ Հայոց հայրապետութեան տո Յակոբայ վեհ Երանեան արդեամքք եւ տրօք ողորմութեան Ցեսոյ օրնուեալ ժողովրդեան եւ յօժար կամօք խօստացան տալ վանիցս ՇԷն հակն այն իրաւանց քնյակն իդ բաժնէն զԱ հիսայն եւ որք տալ ոչ կամենան նզովեալք են մինչ յափիտեան յատուս Յոհաննու ըաբունեան աստ միաբան հաստատեցան եւ որք յուսով աշխատեցան վարծս ընկալցին յարութեան. ամէն:

Եկեղեցու առաջ կայ մի փոքրիկ, թաղակապ գաւիթ, որի

մօտ մի աղբիւր, այժմ ցամաքած: Վանքը ունեցել է և պարիսպ, որ այժմ գրեթէ բոլորովին աւերուած է:

Այժմ այս վանքը բոլորովին անխնամ է թողնուած:

Եկեղեցու առաջից մի նեղ ձորակ է ձգւում, որի միջով հոսում է Նաւուշի վտակը:

Արքահամ կաթողիկոսը 1733 թուին այս վայրերին այցելելիս զիւղն աւեր է գտել, իսկ «վանքը՝ ամայի, և 'ի Կուսանաց անապատն», (որ հաւանականաբար մեր նկարագրած ո. Ստեփանոսի վանքն է եղած), եօթն միայն ապաշխարող<sup>1)</sup>:

Թեից գէպի հիւսիս արևելք, հազիւ երկու վերստ հեռու Սուրջի-թափա բլրակի լանջին գտնուում է Սուրջի կամ նախկին Շըջու եկեղեցին, որի ձախ կողմից հոսում է համանուն վտակը:

Եկեղեցին այժմ կիսաւեր է և բոլորովին անխնամ ձգած:

Այս շրջանի միւս եկեղեցիների նման սա ևս կառուցուած է չորս սիւների վրայ օրօրոցածե, անդմբէթ ձեղունով: Սեղանի շուրջը կան հինգ, իսկ պատերի մէջ երեքական պարհաններ: Ունի երկու խորան, որոնց միջից գաղտնի սանդուխտներ բարձրացնում են վերև, թաքստեան տեղեր: Պատուհանները շատ կարճ են և նեղ: Ունի միայն մի դուռն, գեղեցիկ քանդակներով եղբափակուած, վերեսում մի ուղիէթ խաչ: Մրա առաջ կայ մի կիսաւեր գաւիթ: Եկեղեցին պարսպապատ է եղել և ունեցել է միքանի խըցեր, որոնց հետքերն են այժմ մնում:

Ենմի վրայ կայ մի խաչքար այսպիսի արձանագրութեամբ.

Յիշատակ է խաչս մահտեսի Աւետիսի որդոյ ուստա Յոսէփին թվին Ռժիթու:

Թեից հազիւ տասն վերստ ներքեւ Բատածորին միանում է մի ուրիշ ձոր, որի միջով հոսում է Ղափուճը և եալուս-դարա լիսներից սկիզբն առնող մի վտակ, որ կոչում է Փառակայի կամ Բելմի գետ: Այս ձորակում գտնուում են Բելեւ, Բեհրուտ և Փառակա կաւուկերը: Առաջին երկուան այժմ թրբարնակ են, թէկ հնումը հայտնակ են եղել և նոյն իսկ երկրորդը ունեցել է մի նահատակ Սահակ անունով, 17 տարեկան, որ ժթ. դարու սկզբում վաճառականութեան պատճառով զնացել է Աղափա քաղաքը, (Աղով) ուր այլադէնները «հարեալ ի գեղ և ի հասակ աղնիւ պատանեկին» ամէն կերպ աշխատում են ուրացնել տալ քրիստոնէական հաւատը, սակայն սա արիաբար ընդդիմագրում է և նահատակւում<sup>2)</sup>:


Բելեւ, որ իւր անունը տուել է գետին և ձորին, ունի 122

<sup>1)</sup> Սիսական եր. 344.

<sup>2)</sup> Սիսական եր. 345.

տուն ընակիչ, բոլորն էլ թուրք, 408 ար. 361 իդ. ի միասին՝ 769 հոգի: Իսկ Բեհրուտը, որ Բեխրուտ էլ է կոչւում՝ 19 տուն, 86 ար. 51 իդ. ի միասին՝ 140 հոգի:

Բեխրուտից հազիւ 3 վերստ հեռու, գէպի արևելք, նոյն ձուրի մէջ ձգուած մի լեզուակածն բլրակի վրայ զետեղուած է Փառակա գիւղը: Թէ այս բլրակը և թէ սրա մօտերքում, գետի ափին բարձրացած քարակոյտերը պարունակում են իրենց մէջ քարացած ժմմակներ: Դիւղի փողոցները չափազանց նեղ են և անկանոն, աները կուտակուած են միմնանց վրայ, գիւղում աղբիւրներ չկան և բնակիչներն ահագին նեղութիւններ են կրում գետա-



Ա. Տ.

#### ՓԱՌԱԿՈՅԻ Ս. ՅԱԿՈԲԻ ՎԱՆՔԻ

Կից ուսուկ ու էշով ջուր բարձրացնելով: Զորակում տարածւում են պարտէզներ, բայց այգիներ չկան, չնայելով, որ խաղողը հասնում է:

Դիւղի ներքին մասում գտնուում է ո. Շմաւոն եկեղեցին, սրբատաշ քարով շինուած, փոքրիկ գմբէթով, և մի թաղակապ զաւթով: Սրևմտեսն զրան վերև արձանագրուած է.

ՅԱ. ՔԱ. ԹՎ. ՌԺԻԹՈՒ:

Շինեցաւ տունս ապաւէնի ի հայրապետութեան տուն Յակոբայ եւ յատաջնորդութեան տանս Գողիթնա տու Պետրոսի եւ Յոհաննու Ած... (աբան) վարդապետի աելումն (վայելումն) Փառակու քահանայիցն եւ ժողովրդոցն եւ արդ

Տը Յս սբ Շմատոնի տաճարս հաստատում պահեա մինչի  
միւս անգամ քո զալուատն, ամէն:

Սյս հին եկեղեցին այժմ բաւական ինամքով պահւում է,  
որովհեաև զիւղի աղօթատունն է: Բացի սրանից զիւղում կայ Ս.  
Ստեփանոս անունով մի հին եկեղեցի, որ բոլորովին աւեր է և  
այժմ ուխտատեղի է համարւում: Մի ուրիշ ուխտատեղի էլ զիւղի  
ծայրին կայ, ո. Հոփիսիմէի խաչ անունով, որ մի փոքրիկ մատուռ է:

Մօտակայ բլրի գագաթին էլ մի ուրիշ մատուռ է բարձ-  
րանում, որ յայտնի է ո. Եղիա մարգարէի անունով:

Բնակիչները 65 տուն են, 524 ար. 309 իգ. ի միասին՝ 833  
հոգի, որից 55 տունը՝ 460 ար. 279 իգ. ի միասին՝ 739 հոգի  
հայեր են, իսկ 10 տունը՝ 64 ար. 30 իգ. ի միասին՝ 94 հոգի  
թուրքեր: Պարապում են երկրագործութեամբ, մասամբ շերամա-  
պահութեամբ և առաւելապէս քաղաքներում խոհարարութիւն և  
ծառայութիւն անելով: Կանայք վարպետութեամբ դործում են  
գորգեր և կապերաներ:

Փառակայից հազիւ մի վերսա հեռու զէպի հարաւ գտնուում  
է Ս. Յակոբ Հայրապետի վանքը, այժմ կիսաւեր: Սա շինուած է  
կարմրաւոյն, տաշած քարով: Չորս ամբողջական և ութ կիսա-  
սիւների վրայ բոլորում են ոռմանական կամարներ կրելով մի  
շրջանակ, որի վրայ բարձրանում է 12 կարծ և նեղ պատուհան-  
ներով զարգարուած գմբէթը: Ունի մի կամարակապ-սեղան և  
երկու խորան, գաղտնի պահարաններով: Բացի մկրտութեան  
աւագանից կան նաև 6 պարհաններ, որ բաւական տգեղացնում  
են եկեղեցու տեսքը: Եւրաքանչիւր պատի մէջ կայ մի արշին  
բարձրութեան և կէս արշին լայնութեան երեքական պատուհան-  
ներ, որոնք արտաքրուստ շրջապատուած են գեղեցիկ քանդակ-  
ներով: Միակ արևմտեան գուռը բացւում է մի գաւթի մէջ, որ  
այժմ բոլորովին քանդուած է: Դուռը շրջապատուած է երեք կա-  
մարներով, որոնց ներքե գուրս ընկած տառերով արձանագրուած է.

Աստ ընակի երեք անծք եւ մի ընութիւն սովաւ ելանիմք...  
Վանքը շրջապատուած է եղել պարապով, որի միայն դար-  
պասն է կանգուն:

Սյս վանքին է պատկանում շրջակայքից եօթ խալվար (25  
ական փութ) վարելահող: Թէ այս հողը և թէ ո. Ստեփանոս  
եկեղեցու պատկանող փոքրիկ անտառը վերահաստատուած են արժ.  
Տէր Մովսէս Մելիք-Ստեփանեանի ջանքերով:


Բելից ներքե Բատաճորը սաստիկ նեղանում է, որովհեաև  
այստեղ բարձրանում են Հարապութիւն, Ելտի, Զին-զաղ, Դաշ-

բաշի (5642) և Մատարախ լեռները, ուստի և այս մասում զիւղեր  
չկան: Առաջին փոքրիկ գիւղը, որ դիզա (ամրոց) է կոչւում, տե-  
ղաւորուած է Մարա-գարա-գարսի (3839 ոտ) լերան ստորոտում և  
կոչւում է Քեարիմ-ղուլի-դիզա, ունի 26 տուն թուրք բնակիչ,  
119 ար. 110 իգ. ի միասին՝ 229 հոգի: Սյս զիւղից էլ փոքր ինչ  
ներքե տարածում է Խուլավէրդի-թէկ-դիզան, 21 տուն թուրք  
բնակչով, 38 ար. 22 իգ. ի միասին՝ 60 հոգի: Սրա մօտ է Օղան-  
գեօդ և Հարա-փաչա-բուրուն լեռները: Իսկ վերջինիս լանջում  
Քոշ-դիզա կամ Հիւսէին-Ալի-թէկ-դիզան, 7 տուն թուրք բնակ-  
չով, 14 ար. 17 իգ. ի միասին՝ 31 հոգի: Ապա զալիս են Սմբա-  
տան դիզան (21 տուն, 52 ար. 25 իգ. ի միասին՝ 77 հոգի), որի  
մօտ կան հին ամրոցի աւերակներ, Քալանթար-դիզան (13 տուն,  
21 ար. 14 իգ. ի միասին՝ 35 հոգի) և Միրզա-Հասան-դիզան,  
(11 տուն, 18 ար. 13 իգ. ի միասին՝ 31 հոգի): Սրանից ներքե  
ձորը լայնանում է, և մի հարթ գաշտ տարածում է մինչև Ա-  
րաքսի ափը: Ահա այստեղ միմնանց կից ընկած են Վերին Ազա,  
Դեր և Ներքին Ազա հայրենակ զիւղերը: Ներքին Ազայում, Ա-  
րաքսի զրեթէ ափին, բարձրանում են երկու գմբէթաւոր շիրիմ-  
ներ: Գիւղի մէջ մի բլրակի վրայ մնում են մի եկեղեցու հետքեր,  
իսկ սրա մօտ՝ երկու մարմարնեայ ահազին տապանաքարեր,  
արաքսի արևմտեան գուռը բացւում է ածկուած: Սյս երեք զիւղերուն էլ կան  
մի մի հասարակ եկեղեցի: Ուշադրութեան արժանի է գեղեցիկ,  
քարէ կամուրջը, որ ձգուած է Գիլան-չայի վրայ Տէրեան տան  
ծախկով, որին և պատկանում են Աղաները:

Բնակիչները Պարսկաստանից 1827-ին եկած գաղթականներ  
են, որոնք զրեթէ լիովին պահպանել են իրենց առանձնայատկու-  
թիւնները: Վերին Ազայի բնակիչների մեծագոյն մասը հայեր են,  
125 տուն, 426 ար. 329 իգ. ի միասին՝ 755 հոգի, 4 տուն էլ  
թուրք, 24 ար. 15 իգ. ի միասին՝ 39 հոգի: Ներքին Ազայում մե-  
ծամասնութիւնը թուրք է՝ 40 տուն, 98 ար. 100 իգ. ի միասին՝  
198 հոգի, իսկ հայերը միայն 19 տուն, 61 ար. 47 իգ. ի միասին՝  
108 հոգի: Դերում բոլորն էլ հայեր են, 71 տուն, 258 ար. 220  
իգ. ի միասին՝ 478 հոգի: Վ. Ազայում գտնուում է Նախիջևանից  
Օրբուբագ տանող փոստային ճանապարհի կայարան: Սրանից  
հազիւ 4 վերսա զէպի արևելահարաւ գտնուում է Գիրան քաղաքի  
աւերակները \*), իսկ զէպի արևմուտք Եայիջի թրքարնակ զիւղը

\*) Իմ այս ճանապարհորդութեան ժամանակ միքանի ժամ  
միայն կարողացայ մնալ այստեղ և լուսանկարել այն միքանի զիւ-  
ղեղմանաքարերը, որ ունին արաքսի արևմտեան գուռը ապահովերը:

ուր Ուչ թափա գագաթների վրայ կան ամրոցի մնացորդներ, զիւղում բաղանիսի աւելակներ և ընդարձակ գերեզմանաստուն մարմարոնեայ տապանաքարերով։ Բնակիչները 176 տուն են, 1702 ար. 919 իդ. ի միասին 1981 հոդի։



Զանգեզուրի գաւառում իմ կատարած պեղումների մասին զեկուցանելով Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան Կովկասեան ձիւղին՝ ես ներկայացրի նաև այդ տապանագրերը և հրաւիրեցի միջոցներ գտնել այդտեղ պեղումներ անելու։ Ժողովը համակռւթեամբ վերաբերուեց առաջարկիս, ուստի և ես, յուսալով կրկին վերադառնալ այդ հետաքրքրական վայրը՝ յետաձգում եմ դրա նկարագրութիւնը, որ յամենայն դէպս կը զետեղեմ սրան սահմանակից Երնջակ գաւառակի տեղագրութեան մէջ։

Յ աշխարհ՝ աշխաղեմ ու ավազանաց ճայք նոր ժայռք որ  
մասնից առն մայր մասն բամանքն օքան ուր ընդ  
ու առ բառակայր ուր որ չեն հայր մայր և յանձնածեմ, ոյ  
նումը ուղարք քայլանամ շնորհ է առ կանչնուշ մեջու ուր  
չեն գրան տան մեջութ է նույնոց որ չեն Շ պատրու ոյ Յ  
խովանքայ ճայք առանձին է պատ քայլու ոյ Յ մասներին  
առ գրեցու հայտ Յ Ա ճայլանաց ու համայ քարու ժայռու  
ծին որ ճայնութ Յ նույնուց պատ կատախոյ բայութ չայուս  
շնորհոր խովանքայ պատառն առաջ պատառ նույնու  
պատին պատու ու հայք ուղարք ուստ ուստ ուստ ուստ ուստ  
ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ  
ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ

## ԱԳՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա ունիութ է նույնուց պատ աղամայու ու ունաւուի պարու ուն  
ուրաք քանուան ու աղամայ աղամայու ու ունաւու Յ գրայ Յ Ա ու  
ուր ուստ  
ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ  
ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ  
ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ ուստ

## Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

Գողթնում նկատելի են երեք տիպի տներ, հին հայկական,  
միջին պարսկական և նոր եւրոպական: Առաջին երկու տիպից  
այլիս չեն կառուցանում, այլ միայն ճները կարկատելով գործա-  
ծում են կամ որպէս բնակարան և կամ որպէս խոհանոց կամ պա-  
հաստի տեղեր:

Հին հայկականը զլիսատուն կամ ղարադամն է, որ առա-  
ւելապէս յառուեկ է Պարարազին<sup>1)</sup>: Դիտելով այս տիպի կանգուն  
և սեփ տները, կարելի է նկատել սրա աստիճանաբար զարգացումը.  
այսպէս ամենահին զլիսատան ձեզունը յենում է չորս սիւների  
վրայ, միջին ժամանակինը՝ երկու, իսկ նորը՝ միմիայն մինի վր-  
ռայ: Այս վերջին տեսակի տները բազմաթիւ են առաւելապէս  
նախիջևանի շրջակայ գիւղերում: Բացի որանից նկատում է նաև,

<sup>1)</sup> Այս տիպի տունը ցաւական մանրամասն նկարագրած լինելով իմ «Բար-  
շտուի գաւառ» և «Զանգեզուրի գաւառ» աշխատովիների մէջ, աւելորդ և նո-  
մարում կրկնել: Այսաեղ կը կամենայի աւելացնել միայն այն, որ Գողթնում տարին  
երկու անգամ սպիտակ հնգով սպիտակեցնում են (տղեզում են) տան պատերը և  
որ բալոր շինքերը շինում են հում սպիտից:

Կուլտուրական տեսակէտից կարեսը ևմ համարում յիշել նաև այն, որ Գողթ-  
նում բոլոր տներն ել ունին տանձին արտաքնոցներ, մինչդեռ կուլտուրապէս  
աւելի ստոր գիւղերում (ինչպէս Դամանի, Պարտակետպի) մի երկու արտաքնոց  
հազիւ է պատահում:

որ փայտէ կամ կաւէ շտեմարանը, որ անհրաժեշտ կարստին է եղել այս տիպի բնակարանի, փոխանակ տան դռան մօտ շինուալու, ամփոփուել է դռան պատի մէջ, որ այս պատճառով մօտ երկու արշին լայնութեան է դառել: Շտեմարանի բերանը զանւում է մի պարհանի<sup>1)</sup> մէջ, որ բացուում է ձեղունին մօտ: Պատի մէջ, ներքեւումն էլ մի փոքրիկ անցք է թողնուած, փայտէ կափարէչով փակած, որտեղից հանուում են շտեմարանի մէջ ածած ցորենը կամ ալիւրը երրորդ փոփոխութիւնը կայանուում է նրանուում, որ միջնատուն կոչուած սենեուուկը կիսագետնափոր գարճելով զործածել են իր մառան, ուր առաւելապէս զինի են պահել: Վերջերը՝ պարսկական տան ազգեցութեամբ շատ և մեծ պարհաններ և մի կամ երկու պատուհան են շինել զլխատան մէջ:

Միջին՝ պարսկական տիպի տները բաղկացած են 3—4, երրեմն և աւելի, սենեակներից, մասանից (մազազա) և բաղզազուց (չունան):

Այս տիպի ընդհանուուր, յատկանիշ կողմը կայանուում է նրանուում, որ մեծ ջանք է թափուած որքան կարելի է մեկուսացնել փողոցից: Տները գանուում են ոչ թէ ուղղակի փողոցի վրայ, այլ գութուում, փողոցի առջևով ձգուում է կամ գութի կամ տան յատելի կողմի, անպատճան պատր: Բացի սրանից նոյն իսկ գութի մէջ բացուուղ պատճաններն ել ծածկուած են շատ փոքրիկ բացուածքներ ունեցող փայտէ կամ երկաթէ շրջանակներով: Գրեթէ բոլոր սենեակների մէջ կան մի կամ երկու շարք պարհաններ, որոնցից մի բանիսը ծառայուում են որպէս պատճաններ: Առաջնակարգ սենեակների առաստաղը ծածկուած է զանազան ձեւերով կարառուած մանր ապատակներով:

Նոր, եւրոպական տիպի տները լիսվին չեն ապատուած պարսկական ազգեցութիւնից: Սրանցից շատերը նոյնպէս գտնուում են գութուում, կամ նրանց յետելի մասն է գարծուած դէպի փողոցը: Այս պատճառով և ճարտարապետութեան վրայ առանձին ուշազրութիւն չի գարձուած: Սրանցից շատերն երկյարկանի են, բաղկացած 3—5 սենեակներից, բաւական մեծ պատճաններով և ընդարձակ պատշաճով: Շատ շատերի առաջ կան պարտէզներ, ուր ոչ միայն կան պատճառու ծառեր, այլ և բազմազան ձաղիկներ: Գեղեցիկ են, մանաւանդ, խաղաղի վագերով շրջապատսւած հովանոցները, որոնք ամսալ իր նմշարան են ծառայուում:

Կահաւորութիւնը կէս պարսկական, կէս եւրոպական է. աչ-

<sup>1)</sup> Պարհան կոչուում է պատի մէջ թողնուած բացուածքը, որ ծառայում է իր պահարան կամ պարսկական ճաշակով զեղեցկութիւն է տալիս:

քի ընկնուղ մասը կազմում են գորգերը, որոնցից շատ հիանալի ներն ու թանգաղինները կան:

## ԶԳԵՍ ԵՒ ԶԱՐԴ

Ա. Կանանց.—Զոկերի առանձնայատուկ զգեստն ու զլխի յարգարանը այժմ միմիայն պատաներն են կրում: Միջին սերունդը՝ վրացնակ, իսկ նորը՝ եւրոպական տարազով է, հետեազէս և մի երկու տասնեակ տարիներից յետոյ այս տարազը ևս բոլորովին զուրս կըգայ զործածութիւնից, տեղի տալով երոպականին:

Կանանց զգեստը շատ պարզ է և միանգամայն նման զարարացիներին: Շապիկը երկար է, ուներից 3—4 վերշոկ բարձր, երկար թիերով և կուրծքին հասարակ կամ զատ բաֆտա (սոկեթէ ժապաէն) կարած: Առաւելապէս շիլա կամ ղանաւուզ կտորից: Շապկի վրայ հազնուում են արխալուղ, չմից կամ մետաքսէ կտորից: Սա զրկելով իրանը, նուաճով սեղմուում է մէջքին և ապա լայն քանացքներով իջնուում մինչեւ ծնկները: Թեները երկար են, և ծայրերին զառ բաւթա ու արծաթէ կոճակներ կարած: Սրա վրայից, մէջքին կապում են մետաքսէ կամ հասարակ կտորից զօտիք: Ցուրոտ ժամանակ մի երկուրով արխալուզ էլ հազնուում են առաջնի վրայ, իսկ հարուստները՝ թաւիշից կամ հասարակ կտորից կարած մուշտակ:


Փողոց զուրս գալիս և մանաւանդ եկեղեցի գնալիս ամրող ջովին փաթաթւում են սպիտակ չարսաւի (զօն) մէջ, ծածկելով նոյն իսկ երեսը: Պատաները չեն կրում այս չարսաւը:

Ուներին հազնուում են զուլպայ և քոչ՝ կանանչ կամ կարմիր:

Բ. Ցղամարդկանց.—Զօկերի հին սերունդը, մանկաւանդ աղքատները, հազնուում են տեղական, հին տարազով, իսկ նոր սերունդը, մանաւանդ հարուստները՝ նոր, երոպական տարազով: Վերին Ազուլիսում տեղական տարազը զրեթէ լիսվին տեղի է տուել երոպականին, մինչդեռ միաս զիւղերուունա զեռ ևս յարատեւում է:

Հին, տեղական տարազը կայանուում էր հետեւալում: Շապիկը կարւում էր կտաւից, կրծքի բացուածքը կոճկուում էր անբակի մօտ, թիերը հանուում էին մինչեւ զաստակը և այստեղ կոճկուում: Սրա վրայ, ուներին հազնուում էին շալուար շալից կամ հասարակ կտավտագոյն կտաւից: շալուարի վերին մասն ուշխուրով ամրանում էր, իսկ ներքին մասը, փեղքերը, զրւում էին գուլպայի մէջ և վերայից տոլազով կտպւում: Շապիկի վրայից հազնուում էին արխալուղ կտպոյտ կտաւից կամ չմից և կամ դանա-

ւուզից: Արխալուղի կուրծքը կոճկւում էր կամ զայթանի և կամ մետաղեայ կոճակներով: Մէջքին կապում էին գօտի, հասարակ կամ շալ կտորից, մօտ երկը մետր երկարութեան: Արխալուղի վրայից հազնում էին չուխայ, շալից կամ մահուղից: Սա երկու



տեսակ էր լինում. թերթաւոր և շարքազի: Առաջինը տարրեւում էր երկուրդից առաւելապէս նրանով, որ առաջնի սովորական թեքերի փոխարէն, ունէր բաւական երկար թեքեր, որոնք կուն տակից կախ էին ընկնում, թոյլ տալով որ բազկի վրայ արխալուղի ամրող թեքն երեայ: Գեղեցկութեան համար թեքա-

ւոր չուխի թեքերը կամ ձգում էին ուսերին և կամ ձախը ձգում էին ձախ ուսերին, իսկ աջը բանում էին մէջքին դրած ձեռներում: Ուսներին հազնում էին գուլպայ և քոշ: Գլխին ծածկում էին զառան մորթուց կարած շատ բարձր (բուխարու) կամ միջակ բարձրութեան փափախ:

### ԳԼԽԻ ՅԱՐԴԱՐԱՆՔ

Ա. Աղջիկների.—Սրանք մինչեւ ամուսնանալը գլուխ չեին կապում, այլ մազերը սանրում էին, երկու հաւասար մասի բաժանում, յետերի մասը հիւսում, Յ—Շ ծամ անում, իսկ քունքերի մօտինը այտերի վրայով քաշ ձգում: Ապա մի «Ելախ»—կարմիր կտակից եռանկիւնածե ծալուած մի կտոր—ձգում էին զլխին, ծայրերը բկով անցկացնում և ծոծրակի մօտ հանգուստում, այնպէս որ ճակատից փոքր ինչ բարձր երկում էին մազերը, իսկ չիւսուած մազերի փնջերը կախ էին ընկնում այտերի վրայից մինչեւ կուրծքը:

Հարուսաները աղջիկների զլխին ելախի տակից մի արախ-չին էին ծածկում, որի առաջի մասում, ճակատի վրայ, արծաթի գրամիներ էին շարուած լինում:

Իբր բուրմունք զործ էին ածում վարդի ջուր (գիւլար), որ սպատրաստում էին վարդը ջրի մէջ եփ տալով:

Նորափեսաները իրենց հարանցուներին նուիրում էին «մը-իրկալած ինձիւր» և սրանք ամենայն խնամքով պահում էին իրենց գրպաններում, որպէսզի անուշահոստթիւն ըուրէ: Մըլը-կալած ինձիւրը մի ինձոր էր, վերան չոր մեխակներ իրած և ոսկեզօծ (զառ) թղթի մէջ փաթաթած:

Գեղեցկանալու տենչացողներն աչքերին «ծարուր» (սիւրմա) էին քաշում, որը պատրաստում էր այսպէս, զմակ կամ հաւի իւզի մէջ բամբակէ պատրոյզ էին անցկացնում, վառում և փոքր ինչ բարձրից մի աման բնում, որպէսզի մուրը նստի վերան. ապա այս մուրը հաւաքում էին և լցնում հաւի ոտի կաշուց կարած պարկի մէջ ու պահում. հարկաւոր դէպքում միլով—կեռ փղոսկրով —վերցնում էին այս մրից և քաշում աչքերին, որպէսզի սեորակ զաննան:

Մազերը երկարացնելու յուսով թէ աղջիկները և թէ կանայք հինա էին զնում: Նոյնը անում էին պառաւները զլխի քորը կտրելու, աչքերը չցաւելու նպատակով: Հինան ջրով կամ զինով շաղախում էին, զնում միքիչ տաք տեղ՝ ձմեռը՝ քիւրսու վրայ, ամառ՝ արեի տակ՝ որ թթուի: Յետոյ զլուխները լուանում էին,

հինան քառում գլխարին, մի շոր փաթաթում և մի օր այսպէս փաթաթած մնալուց յետ՝ հետեւալ օրը լուանում էին: Պառաւ կանացից շատերը այժմ էլ շարունակում են տարէնը մի կամ երկու անգամ հինա զնել:

Մազերը կակղացնելու համար լուանում էին մածունով, կամ թանով, և կամ ձուի զեղուցով: Խոկ թեփից աղասուելու համար զլուխը լուանալիս ջրախան քացախ էին զործածում:

Բ. Կանանց.—Մրանք սովորաբար շարաթը մի անգամ, շարաթ օրը, լուանում էին զլուխներն սապոնով կամ զիլով և յետոյ, երբ չորանում էր, կապում էին յարդարանքը և այզպէս կապած մնում ամբողջ մի շարաթ: Նոյն խոկ զիշերները չէին քանզում, որովհետեւ կապելլ 1—2 ժամ է խուս: Արբան տանջում էին նորահարսերը մինչև որ ընտելանում էին այդ ծանր և միշտ կապած յարգարանքին:

Գլուխը սաներելուց յետոյ զագաթի մէջ տեղից հերագիծ (րայե) են բաց անում, յետեի մասի մազերը հիւսում են և ծամեր անում: ապա քունքի մօտի մազերը ոլորում են և այտերի վրայով կախ ձգում, ծայրերը բոնում բերանով, ապա «տկի ելախը» (Եռանկիւնաձն ծալուած սովորակ կտու) ձգում են զլխն, ծայրերը բերում բկի տակով անցկացնում և կապում ծոծրակի վրայ: Սրա վրայից կապում են թաքեալթուն և պալին:—թաքեալթուն 9 սանտիմետր լայնութեան և 72 սանտիմետր երկարութեան երկտակ մի կտոր է, որի մէջ տեղում երեք կոճակներով միացած է պալին: Վերջինս պատրաստելու համար 27 սանտիմետր երկարութեան զանազան կտորների վրայ շրէշ կամ խմոր են քսում և ոլորում, մինչև որ դանում է 13 սանտիմետր հաստութեան, ապա նրան պայտածն զիբրը են տալիս: Թաքեալթին ձգում են զագաթին, այնպէս որ ծածկում է ճակատի կէսը, ապա ծայրերն ականջի տակով անցկացնելով հանգուստում են: Պալին նստում է զագաթին, ծայրերը զէպի ծոծրակը ուղղուած: Պալու տակից կապում են «պալի տակի շորը», որ 9—12 սանտ, լայնութեան ծալուած կտորի կտոր է: Սա կապում են, որպէսզի պալին բարձրանայ թեաքեալթից, որի հետ միացած է զայթանի բաւական երկար ճարմանաներով:

Յետոյ մի ուրիշ կտակ կտոր նախ եռանկիւնաձն և ապա 23—27 սանտիմետր լայնութեան ծալելով, կտորում են ճակատի վրայով ծոծրակին՝ այնպէս որ զրկում է թաքեալթին և պալին ու որանց թիք պահում: առ կոչում է դամզա: Ապա ըլշմաղը, որ 72 սանտիմետրաչափ քառակուսի, սովորակ կտոր է, եռանկիւնաձն ծալում են, բերանի ու քթի ծայրի վրայով ձգում և երկու ծոծրակի մօտ հանգուստում են: ապա այս կտորի

կրծքի վրայ կախ ընկած եռանկիւնաձն մասը միքանի անգամ իրար վրայ ծալում են և բկի մօտ 9 սանտիմետր լայնութեամբ ամրացնում այնպէս՝ որ սա զնչի տարածութիւնը 9 սանտիմետրաշափ երկարացնում է:

Սովորութիւն է, որ ինչան յարգանքի և շխոսկանութեան՝ մինին տեսնելիս ըլշմաղը բարձրացնում են քթի վրայ, խոկ առանձին եղած ժամանակ քաշացնում են բերնից ցածր:

Բըշմաղի վրայից, երեմն էլ տակից, կապում են վըրի ելախը, մի մետրաչափ քառակուսի կտակը ձգում են գըլ-խին, կողքերը ոլորում և քունքերի մօտով անցկացնելով բկի տակով տանում են և ծոծրակի մօտ հանգուստում: Ապա 36 սանտիմետրաչափ կտակը նախ եռանկիւնաձն և ապա 18—22 սանտիմետեր լայնութեան ծալելով, զնում են ճակատի վրայ և հանգուստում ծոծրակի մօտ, սա կոչում է դամզա: Ապա 72 սանտիմետրաչափ քառակուսի, սպիտակ մի կտոր նախ եռանկիւնաձն և ապա 18—22 սանտիմետր լայնութեան ծալելով զնում են ըլշմաղի վրայ, այնպէս որ բերնի մօտի բըշմաղից 5 սանտիմետրաչափ ցածր լինի, և յետոյ զի վրայ տարացնում: Յետոյ կապում են շալաբանդը, սա եռանկիւնաձն, երկտակ, երկու կտորներ են (31 ո. երկ, և 16 ո. բարձ.) որոնց երկու ծայրերը միացած են միմեանց հետ ժապավենով, խոկ երրորդ ծայրերին ամրացրած է զայթան: Սա անց են կացնում զլխի վերայ այնպէս, որ եռանկիւնիների հիպոտենուզան ձգում է այտերի ուղղութեամբ և ամբողջ կտորը զրկում է ծոծրակը: Յետոյ ծայրի զայթաններն անցկացնում են բկի տակով և հանգուստում ծոծրակի մօտ: Ապա քունքի մօտի մազի փնջիկը ոլորում են և ծայրը ամրացնում այս զայթանի վերայ: Յետոյ կապում են մանղիլը:—Սա քիշմիք կամ շալ և կամ ուրիշ թանգագին, գունաւոր կտոր է, 45 ո. երկ, և 36 ո. լայնութեան, տատառած և վերին ծայրերում «կրպուճ»—կտորէ ժապաւէնն—կարսած: Սա զնում են ընթքկապու վրայ, ժապաւէնն անցկացնում վզավը և բկի մօտ ամրացնում: Մանղիլը ձգում է խոր երկարութեամբ (39 ո.) կրծքի վրայ: Երեմն մանղիլի շուրջը արծաթաթիլով ծովեր՝ զիւլարաթլու սաշազ—են կարում: Յետոյ անց են կացնում հըրսանոցը:—մի թելի վրայ անց է կացրած 16—20 հատ արծաթեայ սնամէջ և զարդարուած զնդակիկներ, որոնց միջի երկու զնդակիկների մօտ ամրացրուած են արծաթեայ քողով եռանկիւնաձն ճարմանդներ՝ պտիկ չանդեալ՝ և մի մի արծաթեայ քորոց՝ սանմաղ պաշի: արծաթեայ շղթայով թելի վերի մասումն էլ մի պղնձեայ ճարմանդ կայ: հըրլասանոցը անց են կացնում վըրին այնպէս, որ զնդակիկները կանգնում են քունքերի մօտի

մազերի վերայ, վերի ճարմանդն ամբացնում էն զագաթին, իսկ ներքեւ, մի զնդակիկից վերև եղող ճարմանդներից խւրաքանչխւրը բարձրացնում էն և խրում ճակատի վրայի զամպի վրայ: Ապա մի ուրիշ 36 սանտիմետրաչափ քառակուսի կտոր՝ նախ եռանկիւնածն և ապա 9 ս. լայնութեան ծալած կապում էն ըկի տակով մանդիլի վրայից և ամբացնում վզի վրայ: Յետոյ 72 սանտիմետրաչափ կարմիր մետաքսեաց մի կտոր, որ «զըլլմըլզ» է կոչում, նախ եռանկիւնածն և ապա 9—14 սանտիմետր լայնութեան ծալելով կապում էն կրակի վրայ, այնպէս որ միայն սպիտակ բըշմազից 2 սանտիմետրաչափ երեսում է, իսկ միւս չընթքկապները ծածկում էն: Սրա վրայից նոյն կերպ կապում էն կանանէ ղըրմըլզ և ապա Հալապի կոչուած նոյն մեծութեան և նոյն կերպ ծալուած, առաջնը կանանչ, երկրորդը զեղին ու կարմիր մետաքսեայ կտորները, մինը միւսից փոքր ինչ ցած, այնպէս որ զնչի վրայ երեսում էն սպիտակ, կարմիր, կանանչ զեղին և կարմիր զոյնի կտորները: Ապա ծածկում էն ճըլլըտանցը, որ այսպէս էն պատրաստում: 54 ս. երկարութեան շաքարի թզի վրայ շրէշ կամ խմոր էն քսում, և 12 ս. լայնութեամբ 3 կամ 4 անգամ ծալում, ապա սրա վրայ շոր էն կարում, յետոյ երեսին քաշում էն արծաթի թելով ասկնըզործած մի կտոր: Սովորաբար ասզնազործում էն վարդ, թոչուն, խաչ, սոսոզեր և այլն: Սրա վարի եզրից ամբացնում էն արծաթեայ մի շղթայ՝ շամփայ, որից արծաթեայ կարճ շղթայով կախուած էն «Ճիթ»-եր, որ բաղկացած էն արծաթեայ երկու կամ երեք կտոր տափակ, մսամէջ, նշխուած 2 $\frac{1}{2}$  սանտիմետր ենկարութեան և մօտ 1 $\frac{1}{2}$  ս. լայնութեան «Ճապաղայ» ներից, որոց միջինի վերայ ամբացրուած էն կարմիր և կանանչ հասարակ ակներ: Թապազաների ծայրին ամբացած է 3 հատ արծաթեայ փոքրիկ զընդակիկ—պիտիւծ կամ ճիթըպըտոկ, ճըլլըտանցի չորս ծայրերին էլ ամբացրուած էն ժապաւէններ: Ճըլլըտանցը զնում էն զիսին այնպէս, որ ճիթերն իջնում էն մինչեւնքերը, յետոյ յետի մասում ժապաւէնները հանգուստում էն միմեանց հետ: Ճըլլըտանցի վրայից ձգում էն՝ երիտասարդ կոնայք կարմիր՝ իսկ պառաւներն՝ սպիտակ՝ կընջիկ: Սղուորները սպի ընթացքում, և այրիները մինչեւ կրկին ամուսնութիւնը կընջիկ չեն ձգում:

Կընջիկը չիքիւայ է, եռանկիւնի ծալուած, որի եռանկիւնի ծայրը ձգում էն զագաթին, իսկ ուղիղ մասը ծոփերով քաշ տառիս ճըլլըտանցի երեսին՝ այնպէս որ աչքերն էլ ծածկում էն: Կնջիկի վրայից ձգում էն միծ յիշախ, որ սովորաբար լինում է զունաւոր շալ կամ մետաքսեայ կտոր՝ հալաթի, 6—7 ս. արժու-

զութեան, քառակուսի, մօտ մէկ ու կէս մետր մեծութեան, որի մի ծայրին կայ արծաթեայ ճարմանդ-չանգեալ: Եռանկիւնածն ծալում էն, ճարմանզաւոր մասը ձգում զիսին, ապա նոյն ծայրն անցկացնում ըկի տակով և միւս կողմից նոյն շալի մէջ ճարման զում: Յետոյ շալի միւս ծայրը վերցնում էն, իրար վերայ երկու մնզամ եռանկիւնածն ծածկում և վերի ծայրերը ձգում ուսերի վերայ, ապա հըրանցը չանգալը, որ զամպի վրայ էր իրած, հանում էն և ամբացնում այս շալի վրայ, ինչպէս և սանճաղ պաշիները: Շարն այնպէս էն ձգում, որ պառաւներինը ամբողջ ճըլլըտանցը ծածկում է, իսկ երիտասարդներինը՝ մնում է միայն զագաթի վրայ և կնջիկը ամբողջովին երեսում է: Շալի վրայից վզի վերայով ձգում էն չանգալը: Սա արծաթեայ երեք խուփ է, իւրաքանչիւրը 2—4 ս. մեծութեան, որոնք միացած էն միմեանց հետ 4—5 արծաթեայ շղթաներով, որոնցից վերջինի, ինչպէս և այս խփերի վրայ, քաշ էն գալիս 2 սանտ. շղթաներով փոքրիկ արծաթեայ, մնամէջ զնտակիկներ՝ պիտոն: Միջին խուփի վերի մասից մի երկատկ արծաթեայ շղթայ է ձգում, մօտ 11 ս. երկարութեան, որի ծայրին եռանկիւնածն մի ճարմանդ՝ զիսի չանցիկալ՝ է ամբացրած: Միւս երկու խուփերից մինի վերայ ևս մի ուրիշ, եռանկիւնածն արծաթեայ ճարմանդ՝ չանգեալ՝ է անմիջապէս միացած, իսկ երրորդի վրայ՝ երկու արծաթեայ կարմիր էն ամբացրուած: Կարթերը ձգում էն ըրեսանցի ներքին զնդակիկի վրայից, այնպէս որ զնդակիկը մնում է կարթերի բացուածքի մէջ, միւս ճարմանզը վզի վերայով անցկացնելով միւս քունքերի մօտ ճարմանզում էն, իսկ զիսի չանգալը ամբացնում զանզի վրայ: Չանգալն այսպիսի երկու հատ է լինում, որ ամբացնում էն զիսի աջ և ձախ կողմերում:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՁՐ

### ԱՍՈՒԽՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՄԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հասակ.—Գողթան գաւառն այն սակաւաթիւ զաւառներից է եղել, ուր փոքրահասակների ամուսնութիւնը շատ հաղիւ է տեղի ունեցել<sup>1)</sup>): Երիտասարդը 20 տարեկանից,

<sup>1)</sup> Հին հարսանիքի վերաբերութեամբ էս նիւթեր եմ հաւաքել Ցինայում առաւելապէս պ. Գասպար Գարբիկեանից, և Ագուլի-

աղջիկը՝ 15-ից յետոյ միայն ենթարկուել են ամուսնական լծին, իսկ այժմ աւելի ուշ:

Ամսանացողների հասակի համեմատովինը. — Ամուսնացող զոյգի հասակի տարբերութիւնը շատ մեծ չէր լինում. 5—10, շատ հազիւ 15 տարի: Քուան տարեկանից բարձր աղջիկը, որ պառաւած էր համարւում՝ միայն այրիացած մարդու հետ կարող էր ամուսնանալ: Համարեա բոլորովին չէր պատահում, որ կինը ամուսնուց տարիքով տւելի լինէր: Այժմ համեմատաբար շատ աւելի բարձր հասակում են ամուսնանում:

Ամսանացողներն ըստ ազգութեան. — Հնումը հազիւ էր պատահում, որ զոկը ուրիշ գաւառացի հայի և մանաւանդ օտարազգի հետ ամուսնանար: Ահազին հեռաւորութիւնից վերագանում էր իւր հայրենի զիւղը յատկապէս պատկուելու նպատակով, միքանի ամսից յետոյ թողնում էր կնոջը և նորից պանդխառում 1—3—5—7 տարի մնալով օտար երկրներում: Շատ շատերի համար ծննդավայրի հետ կապող կապը միայն կինն ու երեխաներն էին լինում: Բայց այժմ շատ յաճախ պատահում է, որ զոկը նչ միայն ուրիշ գաւառացի հայի, այլև օտարազգու հետ ամուսնանում է, շատ անդամ ընդ միշտ կտրուելով իւր ծննդավայրից: Եւ այս երկոյթն առաւելապէս նկատում է ուսում, մանաւանդ բարձրագոյն ուսում, տուած մարդկանց մէջ: Իգական սեռից թէպէտ և շատերը հաճութեամբ հարս են դնում Մեղրի, Օբրուբադ, Նախիջևան և այլ տեղերի հայերի տները, բայց գեռ չէ պատահած մինը՝ որ ամուսնացած լինէր մի օտարազգու հետ:

Ամսանացողների համաձայնութիւնը. — Հնումը զոկերը ևս ամուսնական խնդրում առանձին նշանակութիւն չէին տալիս փեսացուի և մանաւանդ հարսնացուի կամքին ու համաձայնութեան: Շատ անգամ օտարութեան մէջ եղող ուսւմ՝ պ. Գրիգոր Արիեանից: Բայց սրանից ինկատի եմ ունեցել Տէր Յակոբ հօր տեսրը՝ Ներքին Ագուլիսի և պ. Հախնազարեանինը՝ Վերին Ագուլիսի վերաբերութեամբ:

որդին նամակ էր ստանում ծնողներից, որ իրեն նշանել են և պատուիրում են, որ մի քանի ամսից վերադառնայ պսակուելու: Աղջկայ համար չափազանց մեծ ամօթ էր համարում, որ հետաքրքրուէր ամուսնու ընտրութեամբ. այդ մասին խօսք լինելիս՝ նա անշուշտ պիտի հեռանար և լուէր: Այժմ այդ «նամուսի» ժամանակներն անցել են, և նչ միայն աղան այլ և աղջիկը իրենց ձայնը լսելի են դարձնում:

Փառակայում աւանդաբար պատմում են, թէ իին ժամանակներում իրենք աղջիկներն էին լնալութիւն անում և ոչ թէ աղաները: Եւ ում հետ որ կամենում էին ամուսնանալ զնում էին նրա տան հերթիկից մլաւում: Ուշագրաւ է նաև այն, որ Աղէքսանդրապօլում երբ մի աղջկայ համար կամենում են ասել թէ ցանկանում է ամուսնանալ՝ հեղնում են, թէ մըոնիառ է կանչում:

Օրօրոցախազի սովորութիւնն այս գաւառում ևս տեղի է ունեցել: Ծնողները միմեանց հետ բարեկամանալու և մանաւանդ վրէժինգրութիւնը կամ տոհմային թշնամութիւնը վերացնելու նպատակով խոստանում էին իրենց երեխաներին միմեանց հետ ամուսնացնել, երբ 10—11 տարեկան դառնան: Նոյնն անում էին նաև այն ծնողները, որոնց որդիները չէին ապրում. յուսալով, որ նշանածի արել կարող էր պահպանել այսպիսի որդուն, նրան շուտով նշանում էին: Այժմ այս սովորութիւնը բոլորովին վերացել է:

Աղջիկ փախցնելու սովորութիւնը շատ հագւագէպ է եղել, իսկ այժմ բոլորովին վերացել է:

Լևիլիքատ. — Իբր այս վագեմի սովորութեան մնացորդ նկատելի է այն՝ որ վախճանուած փեսացուի փսխարէն՝ նրա եղբայրն է ամուսնանում սրա նշանածի հետ, ինչպէս այդ պատահել է Փառակայում, և կամ վախճանուած հարսնացուի փոխարէն՝ նրա քոյրն է հարսնանում սրա նշանածին, ինչպէս եղել է Ցղնայում:

Աղջիկ ուզել. — Հարսնացուի ընտրութեան միջոցին

մեծ ուշադրութիւն դարձնում են նրա մօր բնաւորութեան վրայ, առաջնորդուելով այն սկզբունքով, թէ «Եթէ մայրը ծառը բարձրանայ՝ աղջիկը ճիւղերի վրայ ման կը գայ»։ Ընտրութիւնից յետոյ երիտասարդի մօրեղայրը կամ քեռայրը իբր «ինսամախօս» դնում է աղջկայ ծնողների մօտ և ասում. «Աստծոյ հրամանաւը նո՞ղը ըք ձիր ախչիկը միր աղին հետի, եթէ ցղնեցի է, կամ՝ նիզա՞մ ըք ձիր ախչիկը միր աղան հա՞տի, եթէ աղուեցի է։

Եթէ կամենում են մերժել՝ ասում են. Ակնիս վա՛րա՛ն ըս ակալ, տղադ ալ ա օքուտ, տօնդ ալ ա օքուտ, տմա միդ ախչիկ չօննիք ձիր աղան տալու։

Իսկ եթէ մտադիր են տալու, մի երկու օր ձգձգում են, իբր թէ խորհրդակցելու են և ապա խօսք տալիս։ Իսկոյն օդի են մատուցանում, որ հետեւել կերպով բարեմախտելով խմում են. Աստուած շնորհաւոր արի, Աստուած պարի վայելում տօ։

Բալզահ. — Աղջկայ ծնողներից համաձայնութեան խօսքն առնելուց յետոյ եթէ փեսացուն բացակայ է լինում դիւզից, նրա ծնողները կամ խընըմախօսները խնձորի մէջ խրած մի մատանի տանում են աղջկայ տունը, հիւրասիրում և մատանին հրապարակաւ դնում աղջկայ մատը։ Եթէ երիտասարդը ներկայ է լինում՝ բարգահ տեղի չի ունենում, այլ ուղակի՝ նշանագրութիւն։

Նըշընդիք. — Միքանի օրից յետոյ մի երեկոյ փեսացուի մայրը մրգեր է ածում մի խօնչի մէջ, նշանի մատանին մի մետաքսեայ թաշկինակի ծայրին կապած դնում վերան և փեսացուի ու մօտիկ բարեկամ տղամարդկանց ու կանանց հետ գափ ածելով ու երգելով դնում հարսնացուի տունը։ Ներս մանելով «բարիլյո» էին ասում, չնայելով որ երեկոյ էր, որպէսզի չարը խափուի թէ լոյս է և չմերձենայ իրենց։ Փեսացուն քաւորի հետ միասին կանգնում էր դրսի գուան առաջ, մինչև որ զոքանչը, քենին և այլ խնամիներ չէին գալիս բարեւում նրան ու ներս հրաւիրում, տալով նրան զանազան քաղցրեղէններ. ոմանք

նոյնիսկ մի կտոր շաքար դնում էին նրա բերանը, իսկ նա հանում էր և տալիս խաչեղբօրը՝ որ պահի։ Երբ մօտենում էր դահլիճի դուանը՝ ներսից նրա բարեկամները ծիծաղելով հարցնում էին հարսնացուի հօրը, թէ՝ ի՞նչ է ընծայելու փեսացուին, որ ներս մտնի։ Նա էլ կատակով խոստանում էր մի այգի, մի պարտէզ ընծայել։ Փեսացուն մտնում էր ներս, համբուրում աներոջ ձեռքը, սա էլ նրա ճակատը և ապա խելօք կանգնում քաւորի մօտ։ Ամօթ էր համարւում նսաել, խօսել և կամ՝ ընթրիքի ժամանակ հաց ուտաել։ Մի քիչ յետոյ հարսնացուն մի կոոջ առաջնորդութեամբ զալիս էր և կամունում փեսացուի գէմը. քանանան, որ նոյնպէս հրաւիրուած էր լինում, օրհնում էր մատանին և տալիս փեսացուին, որ անց էր կացնում հարսնացուի աջ ձեռի միջամատը։ Ապա հարսնացուն հեռանում էր, իսկ միւսները նստում էին ընթրելու։ Հիւրերը ցրուելիս փեսացուին թոյլ չէին տալիս գնալու, նորից սփոսց էին ձգում և զիսաւորապէս կանացը սկսում էին հիւրասիրել նրան։ Զոքանչը և սրա հետեղութեամբ միւս կանացը միշտակ գինի էին մատուցանում փեսացուին, որ խմելուց յետոյ մի գուան (30 կ.) կամ՝ մի փանաբանդ (15 կ.) էր ձգում բաժակի մէջ և յետ տալիս։ Այս բաժակը կոչում էր՝ փսաթոս—փեսայի թա։

Այսպէս կատարւում էր ներքին Ագուլիսում և Յղնայում, մինչզեռ Վերին Ագուլիսում նշանագրութիւնը երկու հանդիսով էր կատարւում. «Նշան կապել» և փսական։ «Նշանը» տարւում էր փեսացուի տանից առաջ փեսայի կտօմ մի ուրիշ մօտիկ բարեկամի առաջնորդութեամբ, միքանի ազգականների հետ։ «Նշանը» մի մեծ մատուցարանի մէջ ածած չոր և թաց մրգեր էր, մէջտեղ մի փոքրիկ զըլուխ շաքար դրած, կողքին մի զեղեցիկ, փոքրիկ, յաճախ արծաթեայ, տուփի մէջ 10—20 սոկներ և մի մատանի զրած, վերան էլ մի մետաքսէ թաշկինակ ձգած, ու ամբողջը ձաղկի փնջերով զարդարուած։ Շատ անգամ չորացած մեխակներ ցցելով մի մեծ խնձորի մէջ զրում էին հրաւիրում, տալով նրան զանազան քաղցրեղէններ. ոմանք

հարսնացուի անոնը: Շաքարի դուխը և մրգերից շատերը լսմաբած էին լինում—ոսկեփոշով ոսկեզօծած: Հարսնացուի տաճն էլ հրաւիրում էին նրա բարեկամ տղամարդիկ և կանայք «նշանը բաց անելու», մէկ մէկ վերցնում էին ուղարկուած իրերը, նայում և շնորհաւորում: Ապա ընթրում էին և ցրում: Հետեւալ օրը նոյն մատուցարանի մէջ լցնում էին նոյնպիսի չոր և թաց մրգեր, զարդարում ծաղկի վնջերով, մի խնձորի վրայ մեխակով զրում փեսացուի անոնը և ուղարկում փեսացուին: Այս դարձի նուէրի մէջ դրուած էր լինում նաև մի մետաքսէ թաշկինակը, իբր «խալաթ» «նշան բերող» փեսային:

Միքանի օրից յետոյ հարսնացուի ծնողները հրաւիրում էին փեսային նրա ծնողների և բարեկամների հետ իրենց մօտ, ուր ժողովում էին նաև իրենց բարեկամները: Այս հրաւէրը կոչւում էր փսականչ:—Փեսացուն մի ոսկի մատանի, խակ իւր բարեկամնը մի մի զարդ էին տաճում հարսնացուի համար: Երեկոյեան փեսացուն տեսնուում էր հարսնացուի հետ և ամենից ուշ վերապառնուում տուն:

Այժմ «նշան տաճնելը» վերացած է, կատարում են միայն «փեսականչը», երբ քահանան օրհնում է փեսացուի բերած մատանին և դնում մատանեմատը: Փեսացուի ծնողները այս հանգիսին—փսականչին—չեն մասնակցում:

Շալակ:—Նշանապրութիւնից յետոյ փեսացուն շատ հազիւ էր այցելում աներանց տուն, ամաչում էր նոյն խակ աներոջ հետ խօսել: Նրա նշանածն էլ նրանից էր փախչում, թաք կինում, ինչպէս Ա. Կ. որ փախել մտել էր թորոնը և խուփը վրայից ծածկել: Մինչդեռ նշանուածները այսպէս հեռու էին մնում միմեանցից, ծնողները միմեանց հետ շարունակ տեսնուում էին, ամէն նշանաւոր տօն օր միմեանց նուէրներ ուղարկում: Այս նուէրները շալակ էին կոչւում և բաղկանում էին թաց ու չոր մրգերից ու մի որեէ զարդից կամ հագուստից: Շալակը մեծ մասամբ ուղարկուում էր փեսացուի տաճնից: Փեսացուի քոյրն անշուշտ զնուեմ էր շալակ տաճնողի հետ և հիւրաժիրուում: Ծննդեան

և զատկի երեկոները փեսացուի քոյրը կամ եղբօր կինը և կամ մի այլ մօտիկ ազգականունի շալակ տաճնելով հարսնացուին՝ իւր հետ բերում էր եկեղեցի, ուր փեսացուի ազգականները համբուրում էին նրան և քաղցրեղէն ու մի մի մատանի, զարդ, ոսկի կամ արծաթ դրամ նուիրում նրան: Սյս նուէրները կոչւում էին իրիստենսուկ: Սյս սովորութիւնը ևս այժմ վերացել է:

Հարսնքախարջ:—Հարսանիքից մի քանի շաբաթ առաջ փեսացուի մօրեղբայրը կամ քեռայրը և կամ հօրեղբայրը գնում էր խնամոնց տուն, ուր ճաշով հիւրաժիրուելուց յետ սակարկութեան էր մտնում հարսնացուի հօր հետ և վերջի վերջոյ որոշում, որ փեսացուի հայրը տաց նրան իբր հարսնքախարջ 2 փութ միս կամ մի ոչխար, մի փութ բրինձ, 10 փունտ իւզ, 5 փութ հաց, 1—2 գլուխ շաքար և 4—5 բուլիանց մետաքսէ թափտա (արխալուղի կամ շապկի կտոր) հարսնացուի մօրը՝ իբր ծծաղին և մի չուխաց՝ հօրը:

Երբեմն այս բոլորը գնահատում էին և դրամով վրացականում:

Այժմ այս սովորութիւնը վերանալով՝ ոչ թէ փեսացուի հայրն է վճարում, այլ հարսնացուի հայրը՝ հարիւրից մինչև միքանի հազար բուլի և կամ մի որեէ կալուածք, իբր օժիտ:

Շըրածեւանք:—Հարսանիքից մի շաբաթ առաջ մօտիկ ազգականուները հրաւիրում են փեսացուի տունը և մինչդեռ սրանք այստեղ հիւրաժիրուում են, երկու կին մի կտոր շաքարի վրայ կանաչ կարմիր թել են փաթաթում և մի իրիստենուկ (մի զարդ կամ դրամ) առած զնում խնամոնց տունը, իրիստենուկը և շաքարը տալիս հարսնացուին և կանաչ կարմիր թելով չափն առնում, որ շապիկ կարեն: Ապա վերադառնում են փեսացուի տունը և սկսում են ձեել: Սակայն նախ նուէր են պահանջում, պատճառաբանելով թէ մկրատը չի կտրում: Նոյն օրը փեսացուի համար ևս շորեր են կարում:

Տօշտուղիք. — Հնումը հարսանիքները մեծ մասամբ ձըմենն էր լինում, երբ մարդիկ համեմատաբար ազատ էին, իսկ այժմ՝ ամառը, որովհետև ձմեռը պանդխտում էն ուրիշ քաղաքներ աշխատելու և այս ժամանակ վերադառնում էն հայրենի գիւղը իրը ամառանոց:

Հարսանիքի պատրաստութիւնը միշտ սկսում է չորեղաբթի օրը: Թէ աղայի և թէ աղջկայ տանը հաւաքւում էն մօտիկ աղդականուհիները հարսանեկան հայի ալիւրը մաղելու: Երեկոյեան գէմ հացթուխը վերցնում է շամփուրն ու հացառը, ալիւր մաղողը՝ մաղը, խոհարարուհին՝ շերեփը, և երաժշտութեան ներգաշնակութեամբ պարում, իւրաքանչիւրը ձեացնելով իւր սնելիքը, — ալիւր մաղել, հաց թխել, կերակուր եփել և այն: Տանափիկինը և աղդականուհիները սրանց նուէրներ էին տալիս: Բաւական երկար պարելուց յետոյ աղդականուհիները ընթրում էին և ցրւում, իսկ բան անող կանայք ալիւրը մաղում պատրաստում: Հինգաբթի առաւտեան շատ վաղ սկսում էին թխել ոչ միայն հաց, այլ և գաթայ (եղանաց): Ապա վիեսացուի տանից մի սկստեղի վրայ կենա թուով հաց, գաթայ, կոտապ<sup>1)</sup>, մի կուժ զինի զրած՝ նազարա-զունի տուշնորդութեամբ տանում էին հարսնացուի տունը, որտեղից նոյնպէս միևնույն բաներից, միայն զոյդ թուով, բերում էին վիեսացուի տունը:

Եղիը մորթելը. — Ռւրբաթ առաւտեան նազարա-զունան ածում էր թագաւորի տան առաջը: Միքանի երիտասարդներ մի եղը բռնած կանգնում էին թագուորի հանդէպ, իսկ աղջիկներ ու նորահարսներ եռանդով պարում էին: Ի վերջոյ երիտասարդները վայր էին գլորում եղանը և մի նուէր առնելով թագաւորից՝ մորթում: Վերջինս իւր զրչահատը խաչածե քսում էր արեան մէջ, փակում և զրբանը դնում, զզուշանալով, որ առագաստի զիշերից վաղ բաց չանի, որպէս զի «կապ չընկնի» — առնականութիւնը կորցնի:

<sup>1)</sup> Աղինձ, (կրոպիվա), սոխ, սամիթ և այլ կանաչեղին զնելով խմորի մէջ, բարակ և երկար ձե են տալիս և եփում:

Սրանից յետոյ թագուորի տնեցիներից միքանիսը նազարա-զունի առաջնորդութեամբ գնում են մի մօտիկ աղդականի հրաւիրում «մակար-բաշի» լինելու, ու մի գաւազանի ծայրին մի թաշկինակ կապում տալիս ձեռը: Սա էլ նոյն նազարա-զունայով շրջում է և հրաւիրում երիտասարդներին՝ իրը մակարներ — թագուորի թիկնապահներ: Միևնույն միջոցին տատամէրը մի թաշկինակի մէջ (ձմեռ՝ չորացած, ամառ՝ թարմ) ծաղիկներ ածած շրջում է տնից տուն և մի մի փնջիկ տալով՝ հրաւիրում էր հարսանիքի, իւր այդ ծառայութեան համար մի մի հաց նուէր ստանալով: Այժմ հրաւիրազրեր են ուղարկում:

Երբ մակար-բաշին կազմակերպում է մակարների խումբը, նազարա-զունի առաջնորդութեամբ գնում է քաւորի տունը՝ նրան հրաւիրելու:

Բաւորը զոկերի մէջ ևս տոհմական է լինում և շատ հազիւ գէպերում փօխում է: Սանամայրը նրանից սաստիկ պատկառում է, անխօս էր միում:

Բաւորնց տանը մի մեծ խոնչա են պատրաստած լինում: — մի մեծ սկստեղի վրայ ածած են լինում մրգեր, վերան գաթաներ, մի եփած հաւ, մի գազ կարմիր զանաւուզ, և մի կարմիր տղլուխ կամ մի արխալուզացուզրած: Կարմիր զանաւուզը նրա համար էր լինում, որ թագաւորը պատկ զնալիս՝ իրենց տնից վերցրած կանանչ կտորի հետ խաչածե կապէ իւր կլծքին:

Բացի այս խոնչից, պատրաստած են լինում նաև մի «ուսի ճիւղնը», — Մի ուսի ճիւղի վրայ շարում են չամիչ, ալմաւ, բակլի, սիսենի, ընկոյզի, զանազան կորիզների շարաններ (մազաշար):

Բաւորի տանը փոքր ինչ ուրախութիւն անելուց յետոյ մակարները՝ խոնչան և ուսի ճիւղը երկու մարդու ձեռք տուած՝ նազարա-զունի առաջնորդութեամբ զալիս են թագուորի տունը, որտեղից սանամայրը թագուորաքուրերի և միքանի տնեցիների հետ հարսնացուին հինա է տանում:

ԽՍԱՅՐՈՍՔԻԾ.—Մի մեծ սկուտեղի՝ խոնչի՝ մէջ ածում էին մրգեր, վերան դնում հարսնացուի մօր՝ ծծագինը—արխալուզի կամ շապկի կտոր—հօր չուխէն, մի գլուխ շաքար՝ ոսկեզօծած և գագաթին մի մետաքսէ թաշկինակ կապած, մի ափսէով հինա՝ մէջտեղը մի նուռ՝ վերան մի վառած մոմ, մի կուժ գինի, օղի, ներկած ձուեր, գաթաներ և այլն։ Չորս մեղրամոմ էլ վառում էին խոնչի շուրջը։

Մի խոյի մէջքին էլ հինայով խաչածե նշխեր էին առում, եղջիւրներին երկու մոմ վառում։ Ապա սանամայրը միքանի մարդկանց հետ այս խոնչան և խոյը առած թոյպաշու առաջնորդութեամբ գնում էր հարսնացուի տունը։ Եցստեղ, ընթրիքից յետոյ սանամայրը հինայի ափսէն ձեռն առած, կամ զլիխն դրած, պարում էր, հրաւիրեախները դրամներ էին ձգում հինի վրայ։ Նրան հետեւում էին միքանի աղջիկներ ու հարսեր։ Հինան այսպէս պար ածելուց յետոյ սանամայրը վերցնում էր իրեն նուիրած զրամները և հինան շաղախում, գնում նախ հարսնացուի ձեռներին ու սոներին և ապա ներկայ եղող բոլոր աղջիկների ու հարսների ձեռներին։

Նոյն զիշերը թագուորը և սրա մօտ եղած աղջիկներն ու հարսներն էլ հինա էին դնում իրենց ձեռներին։ Այս սովորութիւնը այժմ բոլորովին վերացել է։

Սափրելու ծէսը. Հետեւել օրը, շաբաթ, առաւօտեան, մակարները հաւաքում էին թագուորի տանը, որոնց հրաւիրելու համար գնում էր թոյպաշին նաղարա-զուռնի առաջնորդութեամբ։ Ամէն մի հրաւիրեալ մի թաշկինակ էր կապում նաղարի վերայից՝ իբր նուէր։ Հրաւիրեւում էր սափրիչը և նախ մակարների, ապա բաւորի միրուքն ու զըլուխը սափրում։ Բոլորից յետոյ սափրում էր թագուորի միրուքը, և գագաթին խաչածե մի բացուածք անում։ յետոյ հրաւիրում ներկայ եղողներին, որ համբուրեն թագուորի գագաթի այդ մասը։ Նախ քաւորը և ապա մակարները համբուրում էին և դրամ ձգում թագուորի մօտ դրած ափսէի մէջ։ Ի վերջոյ սափրիչը վերցնում էր այդ

դրամները և յետոյ սափրում թագուորի գլուխը՝ ու կատարին մի փնչիկ թողնում, որ «քանքիւլ» էր կոչւում։ Այս սովորութիւնը ևս այժմ վերացած է։ Սափրուելուց յետոյ դնում էին քաղցրի խոնչա—մատուցանում էին մեղր, կարագ, հրեշակ, գաթայ և օղի։ Ներկայ եղողները մի մի բաժակ օղի էին խուռամ, մի քիչ բան ուտում։ Ապա մի խոնչի մէջ զրած բերում էին թագուորի և հարսի շորերը. քահանան օրհնում էր, քաւորը խաչակնքում և վերցնում էր թագուորի զտակը՝ գնում նրա զլիխն, յետոյ գոտին կապում և չուխան հաղցնում։ ապա իրենց անից բերած կարմիր և որանց տանից վերցրած կանանչ կտորները խաչածե կապում էր կրծքին։ Աստուած շնորհաւոր անի, բարի վայելում ասելով։ Այս կանանչ-կարմիր կտորը կոչւում էր օրսակ և նշան էր թագուորութեան<sup>1)</sup>։

Այս միջոցին մակարբաշին վերցնում էր շորերի խոնչան, ուր մնացել էր միայն հարսնացուի շորերը՝ շապկի, քող, զլիխի շորեր և այլն, մրգերի և ծաղիկների մէջ զրած ու մի մեծ, մետաքսէ թաշկինակով փաթաթած։ Ապա «Աստուած շնորհաւոր անէ» ասելով գնում մի երիտասարդի զլիխի, մոմեր էր բաժանում բոլոր ներկայ եղողներին, մի մի հասա մոմ էլ տալիս թագուորին ու քաւորին, յետոյ հարսնքափափոջից թաշկինակներ առնում ու քաշ անում մակարների գոտիներից, որպէս նշան նրանց թիկնապահութեան։ Յետոյ պարզելով գաւազանի ծայրին կապած իւր թաշկինակ-զրոշակը, ուռան էր կանչում և ուղերւում գէպի հարսնքափափունը։ Նրան հետեւում էին թագուորն ու քաւորը մակարներով և թագուորաքոյրերով շրջապատուած։ Թագուորի ծնողները չէին գնում, այլ սպասում էին, որ հարսը գայ իրենց ոտը։

Թէպէս և լոյս է լինում, բայց և այնպէս՝ բոլորն էլ մոմերը վառած են գնում։

Երբ համնում են հարսնատոն, դռան առաջ կանդ են

<sup>1)</sup> Ներքին-Ագուլիսում օսկապը քահանան էր կտորում եկեղեցում պատկի խորհուրդը կատարելուց յետոյ։

առնում, և հարսի շորերը կրող կինը պար է զալիս։ Հարսնացուի մայրը և մօտիկ աղքականունիները դուրս են գալիս, համբուրում թագուրին և մի կտոր շաքար, կտմ մի խնձոր կտմ մի նուռն նուիրում էր նրան, որ վերցնում էր և դնում կողքին բռնած խոնչայի մէջ։ Մի նուեր—մի թաշկինակ—ես տալիս են շորերը պար ածող կնոջը և բոլորին ներս հրաւիրում։ Միքիչ յետոյ գալիս է հարսնացուի քահանան և նշանը օրհնում։ Սանտամյուրը վերցնում է հարսնացուի համար բերուած շորերն և առնում նրան հազցնում։ Յետոյ սկսելով գլուխը յարգարել, սանտամյուրը մկրաար դնում է քուերի մօտի ծամի վերայ և կամենում է կտրել՝ ասելով, «սաչի քցի պրայիք»։ Թագուրը և սրա հետ եկողները միքանի փանարաթ էին նուիրում։ Սանտամյուրը միքիչ կտրում էր ծամի ծայրից և սկսում գլուխը կտպել։ Գլխի «դազման» կապելիս կրկին փող էր ուզում — զիսի կապի պրայիք։ Դարձեալ թագուրն ու նրա բարեկամներն էին նուեր ատլիս։ Ներքին Ազուլիսում հարսնացուի գոտին հարսնեղացը էր կապում, մի որևէ ընծայ տալով։ Այս միջոցին հարսնացուի ծնողները մակարների գոտիներից և զուռնի վրայից մի մի թաշկինակ էին կապում։ Հարսնացուին հազցնելուց յետոյ սանտամյուրը առաջ էր բերում և կանգնեցնում թագուրի աջ կողքին, ինքն էլ կանգնում մօտը։ Թագաւորի ծախ կողմումն էլ քաւորն էր կանգնում, վառած մոմը ձեռին մի թաշկինակի հետ, որի միւս ծայրը թագուրն էր բոնում, դարձեալ մի վառած մոմի հետ։ Երբ մակարբաշն ուռայ կանչելով առաջ էր ընկնում, թագուրը բռնում էր հարսի ձեռը և նրան հետեւում։ Բոլորը վառած մոմերը ձեռներին, նաղարազունի առաջնորդութեամբ, երգելով, պարելով զնում էին եկեղեցի։ Ներքին Ազուլիսում մի «ուսի ճիւղն» էլ էին առնում իրենց հետ եկեղեցի։ Այս ուսի ճիւղն էլ վերև յիշուածի նման զարդարուած էր լինում վարապած թղթի կտորներով, բակլայի, սիսեռի, չամիչի, չոր ծաղիկների, ընկոյզի շարաններով։ Ճիւղի վերին մասում մի նուռ էր

խփած լինում, իսկ ներքեում, մի լաւաշ հաց, մէջը աղ ածած և ծալած։ Երբ գնացքը հասնում է եկեղեցուն, մօտիկները հսկում են, որ չարամիտ մարդիկ թել չդնեն եկեղեցու դռան սեմի վրայ և թագուրի անցնելուց յետոյ համազոց ձգեն, որպէսզի թագուրը կատ ընկնի։ Միենայն նպատակով թագուրն էլ մի կողաէք էր կողառում ու պահում զրաբանում, արիւնոտ գանակի հետ, որ միայն առազատի երեկոյին պիտի բաց անէր։ Քահանան հարս ու թագուրը իսուանավէս խոստովանեցնելուց, և նրանց համաձայնութիւնը միմեանց հետ ամուսնանալու վերաբերութեամբ առնելուց յետոյ, կատարում էր պատկի խորհուրդը։ Երբ ամոները զլուխ զիսի էին դնում՝ թագուրը մի զարդ (մատանի) կամ զրամ էր տալիս հարսնացուին։ Եւ երբ երեսները պիտի դարձնէին դէպի սեղանը, սրանցից իւրաքանչիւրն աշխատում էր առաջնը կոխել միւսի ոտը, որպէսզի աղազայում ինքը դերիշնէ նրա վրայ։ Պատկի խորհուրդը կատարելուց յետոյ ծաղիկներով զարդարուած թագը դնում էին թագուրի զիսին և առնում սեղանի մօտ կանգնեցնում։ Մի թաշկինակ էլ ձգում զիսին, ու սրա ծայրերը տարածելով կրծքին՝ Աւետարանը դնում էին վերան, նորահարսի ձեռն էլ Աստուածածնի պատկերն էին ատլիս, իսկ քաւորին՝ խաչը։ Ապա հրաւիրում էին բոլոր հարսներին, որ համբուրեն Աւետարանը և խաչհամբոյր ձըղեն յօպուտ քահանայի։

Յետոյ արդէն նոյն կարգով, միայն այժմ աւելի մեծ աղմուկով և ուրիշ փողոցով վերապանում են հարսի տունը։ Ճանապարհին բարեկամների տան մօտից անցնելիս սրանք քաղցր խոնչա էին զուրս բերում — մի խոնչի մէջ զիսի, օղի, հրեշտակ, գաթայ, հաց, մեղր, ծուածեղ և այլն։ Մակարբաշն այս խոնչից մի բաժակ զիսի վերցնելով մօտեցնում էր թագուրի շրթունքին և բղաւում։

«Այ թագաւորի մակարներ»։

Մրանք միարերան բղաւում էին։

— Հա բալի. (հրամայիր)։

«Թագաւորի խումը անուշ, անուշ, անուշ;  
—Անուշ, ձայնակցում էին մակարները:

Թագուորը դիմին խմելուց յետոյ մակարբաշին կըր-  
կին ձայն էր տալիս, այս անդամ յիշատակելու խոնչա-  
բերողի անունը:

«ԱՌ թագաւորի մակարներ:

—Հա բալի:

«Աստուած շէն պահի այսինչի տօնը -(տունը), վո-  
խը (փոխարէնը) սրա որդոցը ընէ:

—Շէն կենայ, բաւում էին մակարները:

Երբ համում են հարսի տունը՝ հարսը գնում էր  
ներսի սենեակն, իսկ թագուորը գնում նստում էր յաստէլ  
իրեն համար պատրաստուած թախտի վրայ, միքանի կո-  
պէկ տալով այն երեխային, որ նախապէս զրաւում էր  
այդ տեղը: Քաւորն էլ բարձրանում նստում էր կողքին:  
Մի քիչ յետոյ ծառայողներից մինը հացի սփոցը ձեռին  
պար էր զալիս և ապա սփուռմ գետնին: Անմիջապէս ծա-  
լապատիկ նստում էին և սկսում էին ճաշել: Սովորաբար  
մատուցանում էին դնդում-խորոված, բոզբաշ վիտ,  
պէսնձար, խորոված և տոլմա—վեց տեսակ: Ընտրում  
էին թամադա—սեղանապետ և նրա առաջարկով խմում  
էին 1) քահանայի, 2) թագուորի, թագուհու և քաւորի,  
3) երկու կողմի խնամոնց, 4) հարսներների մի առ մի  
կամ միքանիսին միասին, վերջը՝ թամագու կենացը:

Ճաշից յետոյ բոլորը խմբւում էին բակում, մինը  
զիլին էր դնում հարսնահօր կողմից թագուորին նուիրելու  
վերաբերուն և պարում, որից յետոյ հազցնում էին թագ-  
ուորին: Այս ժամանակ սանամայրը առաջ էր բերում  
հարսին, որի ձեռքը բոնելով հայրը՝ տալիս էր թագուո-  
րին՝ ասելով, Բարով վայելես: Հարս ու թագուոր խնսար-  
հում էին և համբուրում նրա ձեռքը: Խոկոյն բոլոր հան-  
գիսականները մոմերը վառում էին և մակարբաշու առաջ-  
նորդութեամբ, նաղարա-զուռնով ուղեսրւում դէպի թագ-  
ուորի տունը: Հարսի հետ զնում էր մի կին, որ կոչւում

էր «Ենգահ», և հարսի եղբայրը կամ մօտիկ աղքականը,  
որ կոչւում էր հարսնախպէր: Հարսի ծնողները չէին գը-  
նում, այլ յետելից նայելով մի կաւէ աման էին կոտրում,  
որպէսզի հարս այլիս յետ չգառնայ, այսինքն չայրիանայ  
ու հօրանց տուն վերադառնայ:

Տան ծառան կանգնում էր և այժմ էլ կանգնում է  
դռան առաջ և թոյլ չի տալիս հարսին տանելու, մինչեւ  
որ քաւորից մի ընծայ չի ստանում:

Հարսներները բարեկամ աներից քաղցր խոնչա ըն-  
դունելով զնում էին մինչեւ թագուորի տան դռաը, ուր  
կանգ էին ամնում: Թագուորի հայրն ու մայրը ընդառաջ  
էին զալիս, համբուրում նախ թագուորին և ապա հարսին  
ու քաւորին<sup>1)</sup> Յետոյ թագուորի մայրը միքանի լաւաշ  
հացեր ծալելով զնում է հարսի կրների տակ, որպէսզի  
«գովլաթով» ներս մտնի, գուան առաջն էլ մի գորդ էր  
սփոռում, որ նրա վրայով անցնեն: Ապա երբ մտնում էին  
բալը, թագուորի հայրն ու մայրը սկսում էին միասին  
պարել: Թագուորի մայրը մի սփուէի մէջ ածած մրգեր՝  
ծիրան, վշատ, ընկոյզ, կաղին և այլն, բերում էր և շաղ տալիս  
հարսի գլխին: Հարսներները և մանաւանդ երեխաները  
միմեանց հրճելով սկսում էին հաւաքել: Յղնայում այս  
փոքր ինչ տարբեր կերպով էր կատարւում: այնտեղ թա-  
գուորի մայրը՝ ձեռին մրգերով լի խոնչան՝ պար էր զալիս  
սանամօր հանգէպ, որ նոյնպէս պարում էր ձեռին մի  
սփուէ բռնած, որի մէջ գրուած էր լինում խաշած հաւի  
մի բուգ, մի զաթայ, մի աման հրեշտակ (հալուայ) և մի  
սրուակ վարդաջուր: Պարի աւարտին՝ թագուորի մայրը  
միրզը ածում էր հարսի գլխին, իսկ սանամայրը վարդա-  
ջուրը շաղ էր տալիս հասարակութեան վրայ, իսկ հաւի  
բուգը, զաթան և հալուան տալիս հարսին: Արանից յետոյ  
մօտիկ բարեկամները մէկ մէկ, կամ զոյգ զոյգ պարում  
էին, ձեռքին ունենալով միորենէ զարդ կամ կաոր, որը և

<sup>1)</sup> Թագուորի մայրը քաւորի ձեռն էր համբուրում, որքան  
էլ փոքրահասակ լինէր սա:

պարից յետոյ ձգում էին հարսի զլիքին: Իսկոյն մակար-բաշն բարձր ձայնով յայտարարում էր, որ չեն կենաց այս ինչ բարեկամը, այս տեսակ նոռէր տուեց հարսին:

Ի վերջոյ թագուորի հայրը կամ մակարբաշն մի ընծայ՝ շորեղէն կամ դրամ՝ էր տալիս հարսնեղօրը, որ թոյլ տայ հարսին տուն մտնելու: Եւ երբ բոլորը ներս են մտնում, հարսին տանում են կանանց բաժինը և խնդրում նստել թախտի վրայ, սակայն սա չի նստում, մինչեւ որ սկեսուրից մի որևէ ընծայ չի ստանում: Հոգասար սկեսուրը անմիջապէս մի արու երեխայ է բերում և գնում հարսի գիրկը, որպէսզի սրա առջինեկը արու տղայ լինի: Հարսն էլ իւր հետ բերած մանր քիսաներից մինը տալիս է այս երեխային, իսկ միւսները յանձնում մինին, որ բաժանի տան երեխաներին:

Թագաւորը քաւորի հետ բարձրանում էր իւր համար յատկապէս պատրաստուած թախտի վրայ, այս անգամ էլ մի նոռէր տալով այդ տեղը դրաւող երեխային: Այս տեղ թագուորը բարե բոնում (ձեռները կրծքին դնել) կանգը-նում էր, իրաւունք չունենալով նստել՝ մինչեւ որ սփորդը պար կածէին, կը սփոէին, տղամարդիկ կը նստէին ընթ-րելու և կը մատուցուէր «պանճար» կոչուած կերակուրը: Այս ժամանակ թագուորը նստում էր, ծանր ու մեծ, անխօս: Նրա համար յատուկ բաժին էին բերում նազարով-գունով, բազկացած ամենալաւ կերակրներից: Մի քիչ յետոյ էլ հարսի հօրանց տնից համար բաժին—կըն-ձրթաման—էին բերում, որը նազարա-զուռնի առաջնոր-դութեամբ տանում մատուցանում էին հարսին: Սովորու-թին էր, որ հարսն այդ առաջին օրը ոչ թէ սկեսրանց, այլ իւր հայրական հացով պիտի կերակրուէր:

Ընթրիքից յետոյ հարսներներն ցըւում էին, հարսը քնում էր ենգանի (նրան ուղեկցող կնոջ) մօս, իսկ թա-գաւորն առանձին, քաւորն էլ գնում էր իւրենց տուն:

Պէտք է նկատել, որ երբեմն այս ընդհանուր կարգից շեղումներ էին պատահում, այսպէս երբեմն թագուորն

ուղղակի եկեղեցի էր գնում և այնտեղ սպասում, մինչեւ որ իւր մակարների մի մասը գնում և հարսին բերում էր: Եթէ հարսնացուի ծնողները չքաւոր էին լինում, պսակից յետոյ հարսներները եկեղեցուց այլևս հարսի տունը չէին գնում, այլ ուղղակի թագուորի տունը: Այս գէպքում հարսի հայրը մակարներին հիւրասիրում էր եկե-ղեցում քաղցրի խոնչով և մի մի հատ թաշկինակ նուիրում: Խոնամականչ. — Հետեւեալ օրը, կիրակի, առաւօտեան թագուորի տան կարին նազարա-զուռնան ածում էր սահա-նի կոչուած եղանակը: Իսկոյն մակարները հաւաքւում էին, սկսում էին պարել, զօտեմարտել, երգել: Ապա մա-կարբաշու առաջնորդութեամբ, առանց թագաւորի, նազա-րա-զուռնի առաջնորդութեամբ գնում են հարսի հօրն ու մօրը հրաւիրում և իւրենց հետ բերում թագուորի տունը, ուր նրանց հիւրասիրում էին ճաշով: Այս հրաւէրքը կոչ-ւում էր խոնամականչ:

Ուզու: — Երեկոյեան մակարները դուրս էին գալիս բակը և այստեղ հերթով վերցնելով մի հաւ և քաւորի գաշոնը կամ սուրը՝ պար էին գալիս: Երբեմն այդ հաւը հարսի տնից էր ուղարկուած լինում մի կուժ զինու հետ: Պարելիս մակարներն ատամներով պոկում էին հաւի փե-տուրներից և գէսի վեր փշում: Ի վերջոյ պարելու հերթը հասնում էր թագուորին, սա էլ թուրը ձախ՝ իսկ հաւը աջ ձեռին բոնած միքիչ պարելուց յետոյ հաւի վիզը խը-փում էր սրին և կարում: Իսկոյն մակարները կեցցէ էին բղաւում և նրան զրկում, վեր բարձրացնում: Իսկ զուռ-նաշին շտապում էր հաւը վերցնել, որովհետեւ այդ նրան պիտի պատկանէր:

Սրանից յետոյ զալիս էր բահանան և թագուորի ու հարսի նարօսն արձակում խաչեղոր ներկայութեամբ, որ այդ ծիսակատարութեան միջոցին մի մերկացը թուր էր բոնած ունինում ձեռին:

Եթէ որս հետեւեալ օրը պահք լինէր, այսինքն չորե-

շաբթի կամ ուրբաթ, նարօար չէին արձակիլ՝ մեղք համարելով, և յետաձգում էին հետեւալ օրուան:

Գիշերը ենդահը պատրաստում էր առագաստը և հետեւալ առաւօտ սաւանը տանում ցոյց տալիս թագուորի և հարսի մայրերին ու ընծայ ստանում:

Թագուորը սոյն, առագաստի դիշերը մի ընծայ էր տալիս հարսին իրը բերանաբացիք, որ իւր հետ խօսի:

Մակարի խոնչա.—Հետեւալ առաւօտ նաղարա-զուռնան նորից հնչեցնում էր սահարի եղանակը թագուորի տան կտուրից: Մակարբաշին և մակարները մի մի «քաղցրի խոնչա» առած գալիս էին թագուորի տան: Այստեղ հաւաքում էին նաև բարեկամ կանայք: Երբ բաւական բազմութիւն արգէն հաւաքուած էր լինում, քաղցրի խոնչաները մէկ մէկ ցոյց էին տալիս և յիշատակում թէ ով է բերել: Յետոյ խմում էին այդ բերած օղիից և ուտում քաղցրեղէններից: Կէսօրին ճաշի էին նստում և ուտում «խաշ»:

Կանանց ճաշելուց յետոյ նորահարսը մի կնոջ առաջնորդութեամբ գալիս էր կանանց մօտ և հերթով համբուրում բոլորի ձեռքերը: Սրանք էլ մի մի ընծայ՝ մտասնի, արձաթի դրամ, թելի վրայ շարուած բուստեր և այն, ընծայ էին տալիս նրան: Այս ընծաները ևս կոչւում էին իրիստեսում: Այսուհետեւ շարունակում էին պարել, երգել, կատակներ անել: Շատ անգամ մակարները միմեանցից դանդառում էին թագաւորին՝ կատակով մեղագրելով միորեէ յանցանքի մէջ: Թաղաւորն էլ կարգագրում էր իրը տուգանք մի հաւ, մի կուժ զինի, կամ մի ուրիշ ուտելիք կամ խմելիք պահանջել մեղագրուածից: Խոկոյն միւս մակարները բոնում էին մեղագրուածին, սեանից կաղում, ոտները շղթայում, մինչեւ որ դոքանչը նշանակուած տուշանքը կըրերէր:

Այսպիսով վերջանում էր պսակագրութեան հանդէսը: Երեք-չորս օրից յետոյ նորահարսը ջուր էր տաքացնում և լուսնում սկեսրարի, սկեսրոջ, և տէզրների ոտները, սկսե-

լով միշտ աջ ոտից: Իւրաքանչիւրի ոտը լուանալուց յետոյ խոնարհուում էր և համբուրում, կամ ձեացնում թէ համբուրում է: Մի քանի փանարանդ ձգում էին տաշտի մէջ՝ իրը վարձարութիւն:

Դըլխըլուայ.—Պսակից մի շաբթի յետոյ հարսի տանից մի կին վերցնելով մի որե է զարդ և սապոն, սանրու ու որբիչ, զալիս էր հարսի մօտ, զարդը նուիրում նրան, և վուխը լուանում, սանրում: Հարսի սկեսուրն էլ իւր կողմից մի ընծայ էր տալիս այս կնոջը: Այս սովորութիւնն էլ այժմ վերացել է:

Մի քանի շաբթից, երբեմն նաև ամիսներից յետոյ մի կնոջ առաջնորդութեամբ բերում էր հարսի օժիտը: Նոյն օրը հրաւիրում էին մօտիկ ազգականներ, որոնց մի առ մի ցոյց էր արւում այդ օժիտը:

### ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Ամլութիւն. — Գողթնում ևս ամլութիւնը մեծ վիշտ է պատճառում և տատուածային պատիժ է համբուրում, ուստի և ոչ միայն բժիշկների, այլ և սրբերի օգնութեան են դիմում երեխայ ունենալու համար: Շատերը ուխտ են զնում Դաստա, այժմ թթվաբնակ, գիւղի Քեշիշ (քահանայի) զերեզմանին, նրա հողից ածում իրենց վրայ, ուրիշներ նոյն խոկ սատարուիկ գնում են Ս. Ստեփանոս, Ս. Կարապետ և այլ ուխտատեղիներ, ուր երեխայ ունենալու վառցանկութիւնը աղօթքով յայնելուց յետ՝ մասունքի վրայից մի մատանի են զողանում, խոստանալով, որ եթէ սուրբը կատարէ իրենց խնդիրը և երեխայ տայ՝ ոչ միայն այդ մատանին յետ կըրերէն, այլ և մի խաչ կընծայեն: Եւ յիրաւի, երբ երեխայ են ունենում, դոնէ զուռ են ընկնում, մուրում և ստացած դրամով մի արծաթէ շղթայ և մի փոքրիկ խաչ շինել տալիս, կախում երեխայի վզից: Երբ վերջինս 3—4 տարեկան է դասնում, այդ շղթան ու խաչը հալել և մի մեծ խաչ են շինել տալիս, ու գողա-

ցած մատանու հման մի մատանի և երեխայի բարձրութեան երկու մոմ առած՝ երեխայի հետ գնում են ուխտառեղին, ու իրենց շնորհակալութեան աղօթքը անելուց յետոյ մոշ մերը վասում են ու մատանիներն ու հաշը կապում մոշ սունդից:

Յղութեան միջոցին կանանց բոլոր քմահաճութիւնները կատարում էին և այժմ էլ կատարում են. ինչ էլ որ ցանկանայ ուտել՝ ինչ էլ որ լինի նրա «սըրարզելիք»-ը՝ անշուշտ գտնում տալիս են:

Բայց երբ չափից անցնում էին նրա պահանջները՝ մի առաւօտ վաղ գնում էին և եօթը անից եօթ տեսակ կերակուր հաւաքում և բոլորը մի սկուտեղի վրայ զրած բերում դնում էին յդի կնոջ առաջը և մէջքին թեթևութեամբ խփելով առամ. կեր կշատացիր:

Միենոյն ժամանակ հաւատալով, որ երեխան արգանգում խաղալիս մայրը ում գէմը որ կանզնած լինի՝ երեխան նրա բնաւորութիւնը կստանայ, աշխատում էին լաւ մարդկանցով շրջապատել նրան:

Յդի կանայք իրենց պաշտպան համարում էին կիրկամուտ, ըըրբքը թամուտ, ըըրբթամուտ ողիները, ուստի և նրանց պատուի համար շարաթ, երեքշարթի և հինգշարթի երեկոները չէին աշխատում և առագաստ չէին մտնում:

Ծննդեան օրերը մօտենալիս երկիւղ կրելով, թէ մի գուցէ չկարողանան աղատուիլ, հաղորդուում էին:

Երկունքի ժամանակ հրաւիրում են տատմօրը և, եթէ առաջին ծնունդն է, ծննդկանի մօրը:

Սովորաբար պարկած են աղատուում, ոմանք էլ կանգնած կամ չոքած:

Ծնունդը հեշտացնելու համար դիմում են հետեւալ միջոցների.

Աղ ու հաց են մօտենալում ծննդկանին, որի վրայ ստ գնում է ձեռքը և պատուիրում տանել աղքաներին տալ: Ենթադրելով, թէ ծննդկանը «հոտ է առել», այսինքն

մի որեէ ուտելիքի հոտ է առել, ցանկացել է ուտել, բայց չեն գտել, ուտաի և «երեխան չի ծնւռում», տառեխի գըլուխ, ձուի կեղի, վազի վայտ և զինի խառնում են իրար, վասում և ձուխը թողնում ծննդկանի շապկի տակ, որպէսզի «երեխան հոտն առնի՛ գուրս դայ»:

Աւագ ուրբաթ գիշերը առանց խօսելու շինուած մատանի են ձզում ծննդկանի մատը, որպէսզի չարերը հալածուին և նա հեշտութեամբ աղատուի:

Ծով անցած կամ զուգաւորուած օձերը միմեանցից բաժանած մարդը իւր փէշով ջուր է տալիս ծննդկանին խմելու:

Եթէ ծննդկանը ուշագնաց էր լինում՝ հրացան էին արձակում, և երբ ուշքի էր զալիս՝ մի մեծ ընեռ էին մեխում ուշագնաց եղած տեղում:

Երբ ծննդկանը աղատուում էր, նրան պարկեցնում էին տաք մոխրի վրայ, վերան վերմակով ծածկում: Յետոյ տատմայը ըըրբակը պարի «պահանջում և միքանի կոպէկ նուէր ստանալով կտրում է երեխայի պորտը, որ տանում ձգում են եկեղեցում, որպէսզի երեխան ժամասէր լինի, թագում են տան մի անկիւնում՝ որպէսզի տնարար լինի: Ընկերքն էլ չոր տեղումն են թաղում, որպէսզի երեխայի աչքերը չձպոտի: Յետոյ տատմայը լողացնում է երեխային, աղ ցանում վերան, փաթաթում խանձարուրի մէջ և դնում ծննդկանի աջ կողմը, խրատելով վերջնիս, որ շարունակ աջ կողքի վրայ պարկի, որպէսզի հետեւալ ծնունդը արու լինի: Ապա նոզգատար տատմայը մի սոխ էր անցկացնում մի շամփուրի վրայ և սկսում պատերին զանազան պատկերներ նկարել: Մինը գիտմամբ հարցնում էր թէ ինչ է անում: Նա էլ լըջութեամբ պատասխանում էր, թէ Աստուածածնայ պատկերն է նկարում, որպէսզի չարը չհամարձակուի ներս մտնել: Պատկերը նկարելուց յետոյ՝ շամփուրը գնում էր ծննդկանի բարձի տակը, ուր շատ անգամ գնում են նաև կիպրիանոս, դաշոյն և այլն, որպէսզի «չարերը» չմօտենան:

Այս բոլորից յետոյ հրաւիրում են քահանային, որ գայ տունը փարատէ։ Սա օրհնում է ջուրը և շաղ տալիս ծննդկանի, անկողնի, սենեակի պատերի վրայ։ Այս օրհնուած ջրով ծննդկանը լուանում է իւր ծծերը և ապա ծիծ տալիս նորածնին։ Այս «փարատմամբ» հեռացնում են չար ողբներին, բայց չեն սրբում ծննդկանին, որ պիզդ է համարում մինչեւ երեխայի մկրտութեան օրը, այնպէս որ նրան առանձնացնում են, նրա զործածած ամաններն ու շորերը ջոկում, առանձին պահում, թոյլ չեն տալիս ձեռք տալ ոչ մի բանի, որ իրեն չի յատկացրուած։

Սկսելով խնամել ծննդկանին, նախ և առաջ մի բաժակ ձեթ էին խմացնում, որպէսզի նրա «մէջքը պինդ լինի», յետոյ խաւիծ էին տալիս, (զանձաֆիլով) թէյ խմացնում։ Սովորաբար նրան տալիս էին ուտելու ճրլում-բում, շշշտուայնգ, և աղածու (եղածու)։ Այս կերակրութերը մեծ մասամբ բերում են բարեկամ կանայք, որ տեսութեան գալով շնորհաւորում են որդեծնութիւնը։ Տատմէրը երեխային վերցնում է և դնում այցելուի գիրկը՝ յուսալով միքանի կոպէկ նուէր ստանալ։ Այս այցելուներն զգուշանում են, որ իրենց վերայ ոսկէ զրամ կամ ոսկէ զարդ չունենան, ապա թէ ոչ՝ երեխան գեղնուց կարող է բատանալ։ Այսպիսի անզգուշութիւնից յառաջացած դեղնութիւնը բժշկելու համար վերցնում էին այդ ոսկէ զրամ կամ զարդը, դնում տաշտի մէջ և երեխային նրա վրայ լողացնում։

Թէ ծնողները և թէ բոլոր այցելուները աւելի մեծ ուրախութիւն են արտայայտում երբ նորածնինը արու է։

Մկրտութիւն։—Սովորաբար նորածնին մկրտում են ծննդեան եօթերորդ օրը, թէպէտ և պատահում է աւելի ուշ, երբեմն նոյն իսկ մի տարի յետոյ։ Մկրտութեան նուխորդ օրը տատմէրի ձեռքով «կնքալուսիկ» են ուղարկում քաւորին, ինպեսզի զալ երեխան մկրտելու։ Կնքալուսիկը բաղկացած էր լինում չորս խնձորից, մի փունջ ծաղկից և մի կուժ զինուց։

Մկրտութեան օրը տատմայրը պատրաստուելով լողացնել երեխային, հրաւիրում է անեցիներին, որ դրամ ձգեն տաշտի մէջ իբր վարձատրութիւն նրա կրած աշխատանքի։ Ապա մի պողպատ է դնում տաշտի մէջ, որպէսզի «չարերը հալածուեն», որովհետև նրանք սաստիկ վախենում են պողպատից, առաք ջուրի լողացնում երեխային և փաթաթում՝ եթէ առջինէկ է՝ նրա տատի ընծայ բերած խանձարուրի մէջ։ Միքիչ յետոյ ինքը վերցնում է երեխային, իսկ մի ուրիշ կին մի աման տաք ջուր և մի «կնքակլուով» (կնկուղ) և դնում եկեղեցի։ Այստեղ գալիս է նաև քաւորը, երկու մոմ, և սանամօր համար մի որևէ ընծայ՝ զիմի փաթաթան կամ մի այլ բան, և մի սաւան առած։ Քահանան կատարում է մկրտութեան խորհուրդը և երեխային աալով քաւորի գիրկը, ինքը շուրջառը վերան ձգած, մի փոքրիկ զանդ ձեռին, և ոյս ի լուսոյ շարականն ասելով առաջնորդում էր ծննդկանի տունը։ Երբ մօտենում էին՝ բահանան սկսում էր զանգահարել, ծննդկանը և բոլոր ներկայ եղողները ոտի էին կանգնում։ Քաւորը ոտը զընում էր մի բարձի վրայ և սանամայրը խոնարհելով համրուրում էր ու վերցնում երեխային, զնում իւր աջ կողմը։ Այժմ այլս ոտը չեն համբուրում, այլ երեխայի խանձարուրը։ Երբ աւարտուում էր մկրտութեան խորհուրդը, բոլոր ներկայ եղողները համբուրում էին քահանայի ձեռին բոնած աւետարանը և խաչհամբոյը տալիս։ Անմիջապէս քահանան և քաւորը նստում էին ծննդկանի մօտ և օղի խմելով ձուածեղ ուտում, որպէսզի երեխան լացկան չկինի<sup>1)</sup>։ Ապա զնում էին միւս հանզիսականների մօտ, որոնք յատկապէս հրաւիրուած էին լինում, և ձաշում էին։

Ներքին Ազուլիսում քաւորը կնքալուսիկն ստանալուց յետոյ ոչխարի մի բուդ (հում) և մի կուժ զինի, և կամ մի «թաբախ» էր ուղարկում սանամօրը։ «Թաբախ»-ի մէջ զրուած էր լինում մի շիշ օղի, մի ափսէ հրեշտակ, վերան կարմիր ձուեր շարած, մի տապակած հաւ, մի սրճա-

<sup>1)</sup> Տէր Յակոբի տհարից։

ման ժիրով (մեղրով ու կոճապղպեղով պատրաստած թէյ՝ ծննդկանի համար), և կոճապղպեղի փոշի. վերջինս ուղարկում էր նրա համար, որ կանայք քաւորի կենացը խմելիս այդ փոշուց ածէին գինու բաժակի մէջ<sup>1)</sup>: Կնունքի ճաշի ժամանակ այս «թապախը» բերում և ցոյց էին տալիս հանդիսականներին, իսկ ճաշի տարածին՝ ծննդկանի կողմից ևս մի թապախ էին բերում և դնում քահանայի առաջ: Սրա մէջ դրուած էր լինում երկու խնձոր կամ սերկելի և կամ նուռ, վերան մի թաշկինակ՝ ծայրին կապած այնքան զրամ, որքան կարծենար քաւորի բերած սաւանը և ընծան: Քահանան վերցնում էր մրգերից մինը, դնում իւր զբանը, իսկ թապախը տալիս քաւորին:

Մկրտութեան հետեւալ օրը «մուրնհանիքյ» էին անում առանց մի որևէ առանձին ծիսակատարութեան լողացնում էին երեխային և մեռնաջուրն ածում թոնիրը կամ գետը:

10—15 օրից յետոյ ծննդկանը վեր է կենում անկողնուց, զգուշանալով, որ մինչև քառամներորդ օրը արևի երես չտեսնի, սեամից էլ անցնելիս ծայրին սոխ ցցած շամփուր առնի ձեռքն, որ «չարերը շվիեն»:

Քառասունքին բարեկամ կանայք հաւաքւում են ծննդկանի տանը, և երեկոյեան ժամասացութեան ժամանակ ծննդկանին առաջնորդում եկեղեցի. տառմայրն էլ երեխան զրկին հետեւում է նրանց, տանելով նաև մի եփած վառեկ, 2—4 հատ գաթայ, մի հաց և մի շիշ գինի: Ժամասացութեան աւարտին քահանան եկեղեցում կատարում է քառասունքի ծէոր, և ժամուորների հեռանալուց յետոյ եկեղեցու սպասաւորների հետ ուտում վառեկը, որ նշանակ է ու Աստուածածնի տաճարին ընծայած տարածին:

Մանկատածութիւն. — Որպէսզի երեխան չը կոխուի, շրլով չընկնի, (նիհարի և մեռնի), ծննդաբերութիւնից յետոյ առաջին անգամ հայրը տուն գալիս երեխային վերցընում են, ընդառաջ տանում և դնում նրա աջ ուսին և այդպէս ներս բերում: Նաև մինչև քառասունքը երեխային

<sup>1)</sup> Այս բաժակը կոչւում էր տիտղաթօս-պղպեղի բաժակ:

բարձրացնում են տեղից և գուրս տանում երբ մեռել են անցկացնում տան մօտից և միս են բերում տուն: Իսկ եթէ չեն զգուշացել և երեխան կոխուել է՝ եթէ մեռելից է՝ մի ուրիշ մեռելի տակից անց են կացնում, իսկ եթէ այս կամ այն մարդուց՝ գնումնրա տան կտրանը միզում են:

Չնայելով, որ հաւատում էին, թէ շատ ծիծ տան՝ բթամիտ կը լինի երեխան, այնուամենայնիւ 2—4 տարի ծիծ էին տալիս: Սակաւ կաթ ունեցողները փշատը փըշրում էին, կաթի մէջ շաղախում և ուտեցնում: Շատ անգամ էլ իսաշխաց էին ուտեցնում, որ երկար քնի, կաթ չուղէ:

Ծծից կարելիս ծծի վրայ կուպը էին քսում, և ցոյց տալով երեխային ասում: «Քը ա» (վատ է): Նոյն նպատակով մի կարմիր ձու էին դնում կժի բերանին, և երբ երեխան ծիծ էր ուղում, ցոյց էին տալիս ձուն և ասում: Այ դնա վեր առ:

Աղջիկ ունեցողի կաթը իրը գեղ գործ էին ածում: Բամբակը թրջում էին այդ կաթի մէջ և դնում ցաւող տչրերի վեայ:

Ատամ' հանելիս սոխ էին տալիս ձեռը, որ կրծի, բորբ կորուի, գլուխն էլ յաճախ լուանում էին:

Եթէ նախ վերին ծնօտի վրայ ատամ' գուրս զար, տուում էին, թէ ոտ «մարդու զլուխ է ուտելու»—տանից մինը մեռնելու է:

Երեխայի եղունգներն ու մազերը չէին կարում, ոչ էլ սանրում, որպէսզի «ատամները միմեանցից հեռու զուրս չզային»:

Երեխային ձու չէին ուտեցնում, որպէսզի ուշ լեզու չէինի, և եթէ ուշ էր սկսում խօսել, բերում էին եկեղեցու զուան բանալին և երեխայի լեզուն անցկացնում նրա կոթի ծակի մէջ, որ շուտով լեզու ենէ:

Եթէ ուշ էր ոտ ելնում, ծգնայում տանում էին ձրդնաւորի քարի անցքով երեք անգամ անցկացնում: Մկրտա-

ձգելով իմանում էին, թէ որ սրբիցն է և այն սրբի դուռը տանում երեխային, մատաղ անում:

Եթէ երեխան չէր քնում, վախեցնում էին, որ քնի. Օլը (ալը) ակալ ա, քուն ըլի: Կուլի կուլին (շունը) ակալ ա, քուն ըլի:

### ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ

Զօկերի ընտանեկան կեանքը ուշագրաւ է առաւելապէս նրանով, որ նա ներկայացնում է հանապետական կեանքից ընտանեկան կեանքի անցողական շրջանը: Զօկ ընտանիքն այլևս կաշկանդուած չէ նահապետական գերգաստան բռնակալական շղթաներով, սակայն և՛ հասած չէ անհատական ազատութեան: Զօկ կինը թէ գերգաստանի ստրուկը չէ, բայց և՛ ամուսնու հաւասար ընկերը չէ, թէպէտ և նա ազատուած է առանձնացած, փակ կեանքից, բայց և այնպէս դեռ ևս լիովին չի ընտելացիլ տղամարդկանց հասարակութեանը, նա որանց մէջ մի տառանձին խումբ, մի տառանձին շրջան է կազմում, նրանց ընդհանուր խօսակցութեան չի մասնակցում: Միշտ նկատելի է, որ մի վիճ բաժանում է այս երկու սեռի էակներին, թէպէտ և այն ևս զգալի է, որ այդ վիճն արագութեամբ փոքրանում է:

Զօկ կինը տղամարդու պէս՝ տւելի մոքի, քան զգացմոնքի էտկ է, նրա մէջ տւելի խելքը քան սիրտն է զարգացած: Մոքի զարգացմամբ նա իրեն պահել գիտէ և կարող է յարմարուիլ առմէն շրջանի ու հանգամանքի. նա ամենայն արագութեամբ ընդունում է իրեն շրջապատող քաղաքակրթութիւնը, շատ հեշտութեամբ սովորում է լեզուներ, հեշտութեամբ ըմբռնում է իւր ամուսնու առեարական ձեռնարկութիւնների ողին և նրան խորհրդատու է հանգիստնում: Նա նաև լւա տանալիկին է, խնայող, որ, սակայն, ումանց մէջ չափազանցութեան է համում, տնտես, նրա մասանը միշտ լի է զանազան, նրա ձեռքով պատրաստուած պաշարեղէնով, բռնուածքներով և այլն: Նրա աշխատասիրութիւնն այն ասաթիճանի է համում, որ ամենահարուստ տներումն անգամ խանանցի ամբողջ հոգու նրա վրայ է ընկած:

Զօկ կնոջ մի գովելի յատկութիւնն էլ նրանումն է կայանում, որ նա միանգամայն ըմբռներով ուսման կարեռութիւնը, ամենայն կերպ աշխատում է իւր որդիներին ուսման տալ: Զօկ կնոջ պարձանուածքների որդիների կրթու-

թիւնն է: Ո՞րքան էլ որ բարձր լինի որդիներին ուսում աալու ծախըը նրա նիւթական զրութիւնից, այնուամենայնիւ զօկ կինը կաշուց դուրս է գալիս, հազար ու մի զրկանքի է ենթարկում իրեն, որպէսզի իւր որդին հարեանի որդուց յևս չմնայ, որպէսզի ինքն էլ կարողանայ պարծիւ, թէ իւր որդին էլ ուրիշ քաղաքում է սովորում:

Սակայն այս լաւ կողմերի հետ զօկ կինն ունի նաև բաւական պակասութիւններ. — նախ նրա ներքինն արտաքինից շատ պակաս է զարգացած, չուստի և շատ տւելի բամբասաւէր է, քան կարելի էր սպասել՝ զատելով արտաքինից. նա նաև մյաքան մաքրասէր չէ, որքան, օրինակ, տխալքալարցին. նրա մաքրասիրութիւնն էլ արտաքուստ է, լոլոր գիւղերից միայն Վերին Ազուլիսը մի բաղսնիս տնի, որը և՛ տարուայ մեծագոյն մասը փակ է: Սակայն այս բոլորից տւելի ցաւալին այն է՝ որ նրա սիրու, հոգեկան կեանքը, մաքի համեմատութեամբ քիչ է զարգացած: Աէրը, անկեղծ, սրտազին բարեկամութիւնը, օրօրը, երգեցութիւնը, նուազածութիւնը միանգամայն թերի են: Ամբողջ Զօկաստանում մի սիրային արկածք կամ այդ մասին մի սրտաքուզի երգ յայտնի չէ, «Յօրդի պրտական էլիս աղիկը այ, քան թէ սուրբի» առածը ցոյց է տալիս նրա կրօնական զգացմունքը, ժողովրդական երգերի պակասութիւնն ազացուցանում է նրա սրտի չորսութիւնը:

Եւ ինչպէս կարող էր չօրանալ նրա սիրու, երբ երկար տարիների ընթացքում բացակայում են նրա սիրոյ առարկաները՝ ամուսինը և զաւակները<sup>1)</sup>:

### ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՑ

Հիւանդը մերձիման դառնալիս՝ նրան ինսամողները շտապում էին հրաւիրել քահանային, որ հաղորդութիւնն առյ նրան: Ապա՝ դեռ չմեռած՝ երեսը դարձնում էին դէպի աղօթարան՝ արեկելք: Երբ աւանդում էր հոգին՝ ձեռները խաչում էին կրծքին, աշքերը հուփ տալիս՝ որ խիուին:

<sup>1)</sup> Հետեւելով մեր ընդունած ծրագրին, պէտք էր, որ խօսէինք նաև զողթնեցիների զործածած կերակրների, ժողովրդական զեղիքի մասին ևս, սակայն որպէսհետեւ սրանց փերաբերեալ ոչ մի առանձնայատուկ քան չգտնանք, ուստի և զանց ենք առնում, իսկ հաւատքի և զպորցների մասին կը խօսենք ամբողջ նախիջեանի զաւառի մասին՝ միանգամից:

Սուրբն ու լացը բռնում էր ոչ միայն ամբողջ տունը, այլ և ամբողջ փողոցը: Դրկից, բարեկամ իսկոյն հաւաքւում էին լայ լինելու և մօտիկներին միմիթարելու: Գալիք էր քահանան հոգոց ասում և օրհնում մի աման ջուր, որով պէտք է լողացնէին ննջեցեալին: Անմիջապէս առանձնացնում էին ննջեցեալին և նրա հանգած տեղում ճրագ վառում, որ վառ էր պահւում մինչև նրա թաղուիլը: Յետոյ եթէ տղամարդ էր՝ 2 տղամարդ, իսկ եթէ կին՝ երկու կին լողացնում էին. — ննջեցեալին պարկեցնում էին մի տախտակի վրայ՝ երեսը դէպի արեելք գարձրած և արալողացնողները ձեռներին մի մի ձեռնաւոնն (քսակ) անցկացրած, տաք ջրով, առանց սապոնի, լողացնում էին, սկսելով դիմից: Երբ աւարտում էին, կանչում էին տնեցիներին, որ այդ ջրով ձեռները լուանան, ապա նոյն ջրի կաթսան բերինքսըվայր էին դնում և այգապէս թողնում երեք օր, իսկ փոքրիկ կուժը, որով ջուր էին ածում, կոտրում էին, որպէսպի «այլս ուրիշը չմեռնի և նոյն կժովի վերան ջուր չածեն»: Այս ժամանակ քահանան կրկին գալիս էր, կարում մի վարշամակ, ու մի նշանաբի ու խնկի հետ զընում ննջեցեալի բերանին: Մի զոյգ մոմ էլ երեք անգամ վառելուց և հանգնելուց յետոյ, դնում էին ննջեցեալի աջ ձեռը, ապա տեղական կտաւից պատանք էին կարում և պատանքում, փաթթաթում մի կապերափ մէջ և դնում եկեղեցուց բերած հասարակական նաժի մէջ: Շարունակ մօտիկ և հեռաւոր ազգականներ ու ծանօթները գալիս էին տեսութեան և խնդրում քահանային, որ հոգոց ասի:

Սովորաբար ննջեցեալին առաւօտն էին թաղում, ոչ երբէք արելք ծագելուց առաջ կամ մայը մտնելուց յետոյ: Փոքրահասակներին կամ տնից ուղղակի գերեզմանատուն էին տանում, կամ եկեղեցի էին դնում և առանց պատուցանելու՝ տանում թաղելու, մինչդեռ հասակաւորներին անշուշտ եկեղեցի էին տանում և պատարագ մատուցանելուց յետոյ վերցնում:

Շատ հազիւ էր պատահում, որ ննջեցեալին երեք-չորս

օր անթաղ պահէին, ուստի և պատահում էր, որ լետարգեան քնով քնածներն էլ կամ թաղւում էին և կամ թաղման պատրաստութիւնը տեսնելիս արթնանում էին:

Բարեկամներն ու ծանօթները հաւաքւում էին մեռելատունը, մեռելին եկեղեցի տանելու: Ննջեցեալի տէրը երեցիսից մի երկու ըուբլու փարա էր վերցնում<sup>1)</sup>, և մի թաշկինակի մէջ ածած կանգնում ննջեցեալի կողքին: Թաղման տան կարգը կատարելուց յետոյ բոլոր յուղարկաւորոները մօտենում էին, թաշկինակի միջից մի մի փարա վերցնում և ննջեցեալի վրայ զրուտծ խաչը համբուրելով փարան ձգում նրա մօտ զրուած ափսէի մէջ, իբր խաչմբոյր, որ պատկանում էր քահանային<sup>2)</sup>: Կանայք լաց էին լինում ողբեր ասելավ, որոնք զրեթէ բոլորն էլ թուրքերէն էին: Վերջապէս ննջեցեալին վերցնում էին և տանում եկեղեցի: Եթէ փոքրահասակ էր ննջեցեալը՝ անմիջապէս կատարում էին թաղման կարգը և տանում զերեզմանատուն, իսկ եթէ չափահան՝ սկսում էին պատարագ մատուցանել: Պատարագի աւարտին կանայք ըրջապատում էին նաժը, և լալիս ու թուրքերէն ողբեր ասում: Քահանան էլ գտնձ էր ասում, որից յետոյ միմիայն յուղարկաւորող կանայք համբուրում էին խաչը և խաչնաբոյր ձգում, առնելով փարաները մեռելատէրի թաշկինակից: Ապա չորս մարդ բոնելով նաժի չորս ծայրերից, երեք անգամ բարձրացնում էին, դնում գետնին և յետոյ վերցնում և տանում գերեզմանատուն: Այս ժամանակ ննջեցեալի տէրը յուղարկաւորող կանանց մի մի թիրա (լոււաշ հացի մէջ փաթթաթած միս կամ պասին՝ լորի, կարտոֆիլ, բակլա) և մի մի բաժակ զինի էին տալիս, որ ննջեցեալի հոգու մասին բարեմախտութիւններ անելով

<sup>1)</sup> Սա տաճկական փող է, ութ փարան արժէր մի շահիմէկ ու կէս կոպէկ:

<sup>2)</sup> Յետոյ փարայի փոխարէն ձգում էին պղնձի կոպէկ, որ մօտաւորապէս 2 ½ փարա արժէր. ապա մի քառորդ արծաթ կոպէկ որի վեցը մի շահի, 5 կ. արժէր:

խմում էին և յետ դառնում դէպի սկասունը։ Տղամարզիկ վասփակալի վերցնելով՝ նաժը՝ գնում էին գերեզմանատուն, ուր թաղման կարգը կատարելուց յետոյ բոլորը համբուրում էին ննջեցեալի վրայ գրուած խաչը և խաչհամբոյք ձգում, դարձեալ վերցնելով՝ ննջեցեալի տիրոջ թաշկինաւ կից։ Ապա ննջեցեալին հանում էին նաժից ու կապերախց ու դնում գերեզմանի մէջ, վերցնելով սրա վերայ խաչածե դրուած թիւն ու բրիչը։ Երբ քահանան ննջեցեալի մօտիկ անձնաւորութեան բում, հող էր օրհնում և ձգել տալիս գերեզմանի մէջ, բոլոր յուղարկաւորողները հետեւում էին նրան և երեքական բուռ հող ձգում։ Երբ թաղման կարգը աւարտուում էր, նաժը բերինքսիվայը էին դարձնում, դազման ու բահը կոթահան անում, որպէսզի այլիս ննջեցեալ չպատահի։

Ապա ննջեցեալի տէրը ամէն մի յուղարկաւորողի հացի մէջ փաթաթած մի պատառ միս և մի բաժակ գինի կամ օղի էր մատուցանում, սկսելով քահանայից, որ ուտելուց յետոյ հոգոց էր ասում։ Յետոյ ամէն մինը մօտենում էր ննջեցեալի տիրոջը և զլուխ տալով ասում։ Աստուած հոգին լուսաւորի, սուրբ հոգով մխիթարիք։ Այնուհետեւ բոլորն յետ էին դառնում, ննջեցեալի տիրոջից հրաւիրուելով հոգուհացի։ Գրեթէ բոլորն էլ գնում էին։ Տան դռան առաջ մի ծառայ աջ ձեռին մի սափոր, ծախին կրնկ բռնած, ուսին էլ սի սրբիչ ձգած ջուր էր ածում։ որ յուղարկաւորողները ձեռները լուսանան։ Անմիջապէս ծալապատիկ նստում էին արգէն սփուած սփուցների շուրջը և քահանայի օրհնութիւնից յետոյ սկսում ուտել։ Նախ մինը առաջ էր բերում գնդում խորոված (դգուսից, մից և սոխից պատրաստած) մի մեծ ափսէկ մէջ տծած և մօտենալով հացի նստողներին մի մի զգալ ածում էր նրանց ներկայացրած հացի վրայ, որ ուտեն։ Յետոյ մատուցանում էին ամէն մինին կամ երկուսին մի ամանով բողբաշ, շիլածօշ, պահճարածօշ և տոլմա, իսկ սլասին՝ ընկոյզով պատրաստած դնդում խորոված, մըշածօշ (լորու ձաշ),

ձէթով շիլածօշ և բրնձով տոլմա։ Ճաշի ընթացքում քահանայի առաջարկով խմում էին մի մի բաժակ գինի, բարեմախաելով, որ Աստուած լուսաւորէ այս գերդաստանի նոր, հին, և գիւղի բոլոր ննջեցեալների հոգիները։ Ներքին Ազուլիսում ճաշի աւարախն սպասաւորը մի ափսէկ մէջ երկու խմուր կամ երկու սերկելի զրած մատուցանում էր քահանային։ Սա էլ վերցնում էր, հոտ քաշում և տալիս սինը աջ, միւսը ձախ կողմը նստողներին։ Անմիջապէս սպասաւորը քահանային և սրանց մի մի բաժակ գինի էր մատուցանում, որոնք խմում էին նոր ննջեցեալի հոգու փրկութեան մասին բարեմախատութիւններ անելով և յետոյ խմուր տալիս իրենց մօտ նստողին։ Երբ բոլորը այս կերպ խմում էին հոգու բաժակը, խմուրը կրկին տալիս էին քահանային, որ հոտ էր քաշում և դնում գրպանը և վեր կենում «հոգւոց» ասում։ Ապա աղամարդիկ ցրւում էին «Աստծով մխիթարուխ» ասելով ննջեցեալի աիրոջը։ Տղամարդկանցից յետոյ կանայք էին ճաշում, որոնց նախագահում էր իրիցկինը։ Ճաշից յետոյ առաջ էին բերում ննջեցեալի շորերը և ողբեր ասելով լաց լինում։ Ի վերջոյ ջուր էին մատուցանում սրանց, որ արտասուալից աչքերը լուսանան և զնան իրենց աները։ Երեկոյեան քահանան, գերեզման նստողները և ննջեցեալին լողացնողները կրկին զալիս էին, հոգոց ասում և ընթրում։ այս կրկնում էր եօթ օր շարունակ։

Թաղման երկրորդ օրը, առաւօտեան գնում էին «ետնահող»։ Բարեկամ և ծանօթ կանայք մի մի կուժ գինի կամ օղի և մրգեր առած դալիս էին մեռելատուն, բերածները տալիս տանափինոջը և ննջեցեալի շորերը առաջ բերելով կրկին լաց լինում և ողբեր ասում։ յետոյ զալիս էր քահանան, հոգոց ասում և բոլոր կանանց հետ զնում գերեզմանատուն։ Շրջապատելով գերեզմանը՝ ոտների և զիսի մօտ մի մոմ էին վառում և մինչզեռ քահանան կատարում էր ծէսը, կանայք բարձրածայն ողբեր էին ասում և լալիս։ Երբ աւարտում էր այդի կարգը՝ մեռելա-

աէրը, որ իւր հետ բերած էր լինում օդի, զաթայ, խաշած միս և մրգեր, հիւրասիրում էր բոլորին՝ հէնց գերեզմանի կողքին, որից յետոյ վերադառնում էին մեռելատուն, ճաշում և կրկին ողբեր ասելով լալիս և ապա իւրաքանչիւրը իւր բերած կուժը դատարկելով վերցնում էր և դնում տուն:

«Ելստնլիվ»-ին, թաղման եօթներորդ օրը, սովորաբար պատարագ էին մասուցանում և կանանց ու տղամարդկանց ահազին բազմութիւն հրաւիրում «հոգու հայ» ուտելու:

Սոյն օրը ննջեցեալի շրերը, որ թաղման երրորդ օրը բարեկամ կանայք լուացած էին լինում, բաժանում էին առաւելապէս ննջեցեալին լողացնողների և միքանի բարեկամների մէջ:

Հետեւեալ շաբաթ օրը, երեկոյեան, կանայք և տղամարդիկ հաւաքւում էին մեռելատունը, ուր հայ ուտելուց յետոյ սպաւորներին տանում էին եկեղեցին՝ երեկոյեան ժամերգութեան ներկայ զտնուելու: Ժամերգութիւնից յետոյ քահանան մօտենում էր և հոգոց ասում: Իսկ երեք կամ չորս շաբաթից յետոյ բարեկամները հրաւիրում էին սպաւորներին իրենց տուն «սըգահանիք». — հիւրասիրում էին նրանց ու նրանց պատճառով հրաւիրուած մօտիկ բարեկամներին ձաշով և թէյով:

Առաջին նաւակատիքին բարեկամները կրկին հաւաքւում էին ննջեցեալի տունը սպաւորներին մխիթարելու, և հիւրասիրում էին ընթրիքով: Հետեւեալ օրը կրկին հաւաքւում էին և սպաւորների հետ միասին գնում գերեզմանատուն, գերեզմանը օրհնել տալիս:

Ննջեցեալի տարելիցին ուներները պատարագ էին մասուցանել տալիս և «հոգու հայ» տալիս:

Երեխաների գերեզմանների վրայ ինձոր, մրգեր, ծաղիկներ էին դնում: Ծննդեան և զտոկի երեկոներին մոմեր են վառում գերեզմանների վրայ:

Այրի կանայք, մինչեւ կրկին ամուսնակալը՝ իրը ողի նշան՝ երեսներին կնջիկ չէին ձգում:

Թաղման վերաբերեալ սովորութիւնների մէջ այժմ շատ քիչ փոփոխութիւններ են մտած. «թիքան», հոգունաց կամ մեռելաճաշը հիմայ էլ են աալիս: Միակ նկատելի փոփոխութիւնը նրանումն է, որ այժմ գաղաղով, հանգերձներով են թաղում: Դաղաղի վրայ էլ «երեսաքաշ»—մետաքսէ կամ մահուղի կտոր—են քաշում, որ թաղման ժամանակ վերցնում են և քահանային նուիրում: Թարմ և արուեստական ծաղիկներից պսակներ են դնում գաղաղի վրայ, կանայք սկ շոլեր են հագնում:

Գերեզմանատանելը գանեւում էին զիւղից դուրս, փոքր ինչ հեռու, այնպէս որ ժամանակի բնթացքում զիւղը մեծանալով շըջապատում էր սրանց, և վերջ ի վերջոյ քանդում, բնակարաններ կառուցանում, ինչպէս Ագուլիսուն ո. Քրիստավոր եկեղեցու գերեզմանատունը, ուր այժմ շինական դատարանն ու շուկան են գտնեւում: Ամէն մի եկեղեցի իւր առանձին գերեզմանատունն է ունեցել. այս պատճառով և Վ. Ագուլիսում 10 գերեզմանատուն է եղել, որոնցից ամենայարմարը՝ Ս. Յովհաննէս եկեղեցու «Բէկողլու» անուն կրողը և ո. Աստուածածիննը են: Գերեզմանները, գիւղական աների նման, խառն ի խուռն են զասաւորուած, միայն իւրաքանչիւր գերդաստանինը միմեանց մօտ են կուտակուած: Գերեթէ ոչ մի գերեզմանատուն չունի ոչ պարիսպ և ոչ ծառուղիներ: Գերեզմանատարերը մեծ մասամբ քառամկիւնի են, կան և զաղաղածն ու օրորոցածե: Ուշաղը է, որ կանանց գերեզմանները շատ աւելի բազմաթիւ են քան աղամարդկանցը. պարզ է, որ օտարութեան մէջ գեգերող աղամարդկանցից քչերին է յաջողուել հսնդչիլ ծննդավայրում: Տաղանազրերը զրաբառ են, և մեծ մասը միօրինակ՝ Այս է տապան այսինչի: Առաջ բերեմ մի երկուսը՝ Վ. Ագուլիսում:

Այս է տապան Մղղոսի Ամիրի որդի Զաքարին թիւ ՌՃԼԹ<sup>1</sup>):

<sup>1)</sup> Թերես այս լինի մեզ յայտնի վաճառականը, որի օրագրութիւնը տպագրեց պ. Ա. Քալանթարը:

Այս է տապան մղպոի Աղամիրին կողակից Առի Գիւլին. թ. ԽՃԺ.

Այս է տապան Ավումասի կողակից Հոռմումիմին թվ. ԽՃԺ.

## ԵՇԱՆԻ ԼԻ ՈՒ ՏՕՆԵԲ

Գողթնում տօներից շատերը կորցրել են արդէն իրենց ազգագրական նշանակութիւնը, ուստի և ես կը նկարագրեմ միայն նրանք, որոնք այնուամենայնիւ նշանաւոր են այդ տեսակէտից.

Վարդավառ. — Սովորաբար առաւօտը միմեանց վրայ ջուր են սրսկում: Մինչև 1850 թուականը դեռ ևս պահպանում էր այն սովորութիւնը՝ որ այս առաւօտը կանայք թելերի վրայ ամրացնելով ծաղիկներ, խնձոր, մանր վարունկ, և մանաւանդ վարդեր, խաչաձև կապում էին երեխաների կրծքին և այդպէս տանում եկեղեցի: Պատարագից յետոյ ատեանի առաջ երկու զրակալ էին դնում, որոնցից մինի վրայ Աւետարանն ու նշխարք էին դնում, իսկ միւսի վրայ մի ամանով ջուր: Երբ ժամուորները մօտենում էին Աւետարանը համբուրելու և նշխարք վերցնելու, մի տիրացու ձեռի փունջը թաթախելով ջրի մէջ սրսկում էր սրանց վրայ:

Ճաշից յետոյ կանանց և տղամարդկանց ահազին բազմութիւն հաւաքւում էր զիւղից դուրս՝ մի հրապարակ՝ «ինդում տօք» անելու<sup>1)</sup>: Այս նպատակի համար նշանուած աղջիկների ձեռքով նախապէս մի ամանում կանաչացրած զարու կամ ցորենի մէջ ամրացնում էին շատ անգամ խաչաձև կամ միքանի թեւաւոր փայտ, որը զարդարում էին վարդերով, խնձորով ու մանր վարունկով. Այս զարդարած փայտը կանանչի հետ միասին կոչւում էր «խոնդում»: Մի պառաւ կին վերցնում էր այս «ինդումը», տանում այդ հրապարակը, վայր դնում և նստելով մօտը

<sup>1)</sup> Տէր Յակոբի տետր և Ս. Սարգսեան Ագուլեցոց բարբառը:

հսկում: Հանդիսականները պար էին բռնում և դաւուլ զուռնի ներդաշնակութեամբ պարում այդ խնդումի շուրջը, երկարատև պարից յետոյ պառաւը վերցնում էր խընդումը, դնում գլխին և խնքը սկսում պարել՝ երգելով.

Խնդում օնիմ՝ վա՛րդաւ լի,

Զրբգըփչեծ խնձո՛ւր լի.

Վախիմ թա քո՛ւնը տանի,

Խնդումըս եազին տանի:

Այս ժամանակ երիտասարդներից ճարպիկը գաւազանով խփում էր խնդումին և վայր գլորում, իսկոյն բոլորը վրայ էին վազում և խլխլում ծաղիկներն ու մրգերը: Իսկ պառաւը անիծում էր սրանց՝ երգելով.

Խնդումըս եազին տարալ այ...

Ճօր ըրահիք՝ այ հարայ.

Խզըկուտուր էլի<sup>1)</sup> նօ,

Ուվ ա՛մ խնդումըս տարալ այ,

Աստված քու ջանիդ քուր տօյ,

Բո՛ւթերիս էզունք չի տօյ,

Ուվ ա՛մ խնդումըս տարած այ,

Տիսնիմ օր այսաղ սիւն տօյ<sup>2)</sup>.

Նօ կնընչկուտուր էլի<sup>3)</sup>,

Ա՛րկու ակնաւ խվարի,

Գինզարու<sup>4)</sup> չունք պտօկ<sup>5)</sup> արի,

Ըրասիր չունք չիրք արի:

Վերափոխումն ս. Աստուծածնի. — Այս տօնը մի առանձին շքով կատարւում է վերին Ագուլիսում, յատկառէս ս. Աստուծածին եկեղեցու տօնախմբութեան պատճառով: Ինչպէս տեսանք տեղագրական բաժնում, այս եկեղեցու տեղումը հնումը կանգնած է եղել մի բաւական նշանաւոր կոտառն, որի տօնը շատ մեծ շքով կատարում էր վարդերով, խնձորով ու մանր վարունկով. Այս

<sup>1)</sup> Գեռահաս մեռնիս:

<sup>2)</sup> Այնքան նուազիս՝ որ ասեղը կարողանայ իրը նեցուկ ծառայել քեզ:

<sup>3)</sup> Գալար մեռնի:

<sup>4)</sup> Ագուլիսի մօտ մի սար է:

<sup>5)</sup> Մարմինի վրայ յառաջացող վերք:

բուելու պատճառով, աւանդաբար շարունակում է և այժմ։ Աստուածածնի պատի ամբողջ շաբաթի ընթացքում տատառները շատ վաղ, արշալուսին, առաւելապէս կանայք ուխտ են գնում այդ եկեղեցին, ու մոմ վառում և միքանի անգամ պատռում եկեղեցու շուրջը։

Բոլոր ժողովուրդը, մանաւանդ նորապի կանայք և աղջիկները, ամէն ջանք գործ են գնում պատրաստուել՝ կարելոյն չափ լաւ պճուելու այդ օրը։ Ամիսներ առաջ պատռէրներ են ապիս, Թիֆլիս, Բագու, Մոսկու, Պետրովուրդ, Մարտէլ, Փարիզ և ուրիշ քաղաքներ թանգարգին և նոր տարապի շորեր՝ յատկապէս այս օրուայ համար։ Վերջապէս բացւում է ցանկալի առաւտուր, բոլորն սկսում են զուգուիլ, պճուելի, բայց մինչև սրանց պատրաստուիլը՝ զիւղի ամբողջ նողերականութիւնը միքանի տասնեակ պառաւ կանաց և ծեր մարդկանց ու մանր երեխաների հետ խաչով խաչվառով անցնում են բոլոր 10 եկեղեցիները՝ սկսելով ս. Թովմայի վանքից և ամէն տեղ թափոր կատարելով՝ վալիս ս. Աստուածածնի եկեղեցին։ Այսեկ ևս նախ թափոր են կատարում և ապա պատարագ մատուցնում։ Այս ժամանակ ամբողջ Ագուլիսի և մասամբ շրջակայ զիւղերի ընակիչները թափում են մեծ մասամբ եկեղեցու ընդարձակ զաւիթը, մի մասն էլ մանում է եկեղեցի։ Ահազին բազմութիւնը վերին աստիճանի հանգիստ, քաղաքավարի կանգնած ցածր ձայնով խօսում է, միմեանց նայում, սրա նրա հազուսները քննադատում։ Գիւղական տօներին յատուկ աղմուկը, զօտեմատը, դաւուլ-զուռնան, արքեցողութիւնն ու հայնոյեանքը, կոփոր՝ միանգամայն տեղի չեն ունենում։ Մարդ հիացմունքով նայում է այս բազմատարագ և բազմազան հասարակութեան վրայ, որի արտաքինը մի կատարեալ մըցումն է ներկայացնում զանազան մայրաքաղաքների, և երբէք թոյլ չի տալիս նրանց իբր զիւղացի նկատելու։ Ափառս միայն, որ նրանց խօսակցութեան նիւթը, հետաքրքրութեան ա-

ուարկան և այլն ցոյց չեն տալին արտաքնին հաւասար նաև ներքին, մտաւոր, հոգեկան կրթութիւն։

Օրհնուած խաղողը և մատաղի պատառները<sup>1)</sup> բաժանելիս՝ մի այնպիսի կարգապահութիւն է ափրում, որ նոյն իսկ մեծ քաղաքներում չի նկատում։

Հետևեալ օրը, երկուշարթի, Ներքին Ագուլիսի հասարակութիւնն է թափորով գալիս այս եկեղեցին, պատարագ մատուցնում, մատաղ անում և բոլորը միասին դաւթում նստած ճաշում։

Համբարձում. — Վիճակ հանելու սովորութիւնը այս գաւառում ևս եղել է, միայն այժմ բոլորովին վերացել է։ Սովորութիւնն է եղել նաև, որ այդ օրը կանայք ջուր էին տաքացնում և եօթը տեսակ ծաղիկ մեջը ձգելով՝ զլիները լուանում։ Այս գեռ ևս բոլորովին չէ վերացել։

Համբարձման նախորդ երեկոյեան էլ ոմանք վարդի դալար թուփը չափում էին մի թիզ գեանից և թելով կապում։ Առաւտեան կրկին չափում էին և եթէ թուփը երկարացած լինէր՝ նշանակում էր, որ թել կապողը երկար պիտի ապրի։

Ումանք էլ նոյն երեկոյին մաքրում էին «Չոետանի» (անձրել հոսելու համար զրուած խողովակ) առաջը և վերան մի բար զնում. առաւտեան վերցնում էին այս քարը և տակը մազ որոնում, որ, նրանց կարծիքով, բուսած պիտի լինէր, և եթէ մազը սպիտակ լինէր՝ երկար, իսկ եթէ ոհքիչ պիտի ապրէին իրենք։

Շատերը հաւատում էին, թէ զիշերը լոյս էր իջնում և ծառերը միմեանց ողջոյն էին տալիս, ուստի և արթուն հսկում էին, որ տեսնեն՝ և ինչ ցանկութիւն որ ունեն նոյն վայրկենին խնդրեն՝ կատարուի։

Համբարձման օրը մեծ բազմութիւն ուխտ էր զնում «Խաչ-քար» կոչուած ուխտատեղին, որ զտնուում է Վերին զետից գէպի հիւսիս 2 վերստ հեռու, զետի տփին. սա մի

<sup>1)</sup> Մատաղի միսը զնում են լաւաշ հացի մէջ և եկեղեցու զրանը բաժանում ժամուորներին։

մեծ քար է, «որի վրայ ամէն համբարձման դիշեր մի խաչ  
է դուրս գալիս»:

Այս օրը կաթնաւ կամ կախցածօշ (կաթնապուր) եւ-  
փելու ընդհանրացած սովորութիւնը այսաեղ ևս շարու-  
նակւում է:

Նաւասարդ.—Այս տօնին վերաբերեալ սովորութիւն-  
ներից մնացել է միայն հետեւեալ երկուուր. — հրայսակ (խաչ,  
հարիսա) են եվում և երեկոյեան եօթ աեսակ միրգ են  
դնում մի սկուտեղի վրայ և մատուցանում տնեցիներին՝  
ուտելու:



Եղանակ առաջնորդութիւն ունեցած ունեցած առաջնորդ առաջ-  
նորդ ունեցած ունեցած ունեցած առաջնորդ առաջնորդ առաջ-  
նորդ ունեցած ունեցած առաջնորդ առաջնորդ առաջնորդ առաջ-

## ՉԵՌԱՎԻՇԱՌԻՑԻՑ

Գողթնի կուլտուրական զարդացումն երեսում է նաև այն  
բազմաթիւ ձեռագիրներից, որոնք գտնում են ո. Թովմայի վան-  
քում, զիւղական եկեղեցիներում և մասնաւոր մարդկանց մօտ:  
Ընդհանրապէս սրանք բոլորն էլ շատ անխնամ են պահւում, և  
շատերը արգէն խոնաւութիւնից բարբառել են, միայն ո. Թովմայ  
վանքինը փոքր ինչ լու զրութեան մէջ են:

Ս. Թովմայի վանքում կան հետեւաները.

1. Աստուածաշունչ հին եւ նոր կտակարանաց. Բամբա-  
կեայ թղթի վրայ, երկսիւն, բոլորագիր, կազմած, զրել է Յակոր  
«սպառորը», ի Գաղատիեայ, որ յորջորջին յԱնկիւրիա, ընդ հո-  
վանեաւ ոք Ածածնայ և տիրածին կուսին տաճարիս: Յամի հա-  
զարերորդի յիսուն և ինն երրորդի հայոց թուականութեան<sup>1)</sup>:  
Զայսու ժամանակաւ սպասեցան և կորեան ապստամբք ձէլէլիք,  
ամենայն յերկիր խաղաղութեան դարձաւ:

2. Աստուածաշունչ հին եւ նոր կտակարանաց. Մագաղա-  
թեայ, քառածալ երկսիւն, նոտրագիր. չորս աւետարանիչների  
պատկերներով, որոնց վրայից ներկը թափուելով բոլորագին եղ-  
ծուած է: Կան գեղեցիկ ծաղկագրեր, կազմը ընկած է: Գրուած է  
ի թվին թջէ Յակոր սարկաւագի ձեռքով

3. Աւետարան. մագաղաթեայ. ութածալ. բոլորագիր. ար-  
ծաթապատ կազմով: Յիշատակարանը.

Ծնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ Նորին կատարեցի  
զիւղակաւէտ աւետարանս ևս, Թորոս, ի Զի թուականիս, ի թագա-  
ւորութեանս բարեկաշտ և Ածասէր արքային Հայոց Հեթմոյ, որ-  
դըւոյ Լիոնի, ի զառն և ի զմնդակ ժամանակիս, որ էր հալա-  
ծուած քրիստոնէից, զոր յայսմ ամի քանդեալ աւերեցան գեղեց-  
կաշէն քաղաքն Հոռվմայեցոց ծովեզրեայքն Տրապօլոսոց և Աքայիոյ  
և եկեղեցիք քրիստոնէից եղեն հօտից և խաշանց փարախ. և զկնի  
մի ամի առաւ աստուածարեալ գղեակն Հոռմէլոյ ի գոռողէն  
փարաւոնէ, որ էր աթոս Հայրապետացն Հայոց, և սպասք սրբու-

<sup>1)</sup> Յամանանն նաւասարդի Փ. երբայիցոցն ամսոյն միհրշուանն Փ. Հոռմա-  
յցոց յամանյն նոյեմբերի Փ. յաւըն շաբաթ ժամն քսան:

թեան գերի վարեցան հանգերձ մեր զլխովի հայրապետաւն, որոյ անունն Ստեփաննոս, և հասեալ ի քաղաքն Դամասկոս ճգնաւորական հանդիսիւ փոխեցաւ յաստեացս, և եթող սուզ անմիտիթար ազգիս Հայոց և յայնժամ խորհուրդ ի մէջ առեալ՝ թագաւորն Հայոց Հեթում բալոր ուխտիւն եկեղեցւոյ և իշխանոքն հանգերձ, շնորհել բերդ ամուր և երկիր առաս սուրբ Աթոռոյ Լուսաւորչին առ ի հաստատել վերստին. և առաքեն զիմս նուաստութիւն և զսիրելի և զմննպակից եղբայրն իմ զպատուելի եպիսկոպոս՝ զտէր թուման՝ յաշխարհս արեելից, առ ի մեծարանս եպիսկոպոսաց և իշխանաց, զալ վերստին նորոգել զԱթոռ սուրբ Լուսաւորչին. և մեզ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն, յառաջազոյն զալ ի գիրս սուրբ առաքելոցն թագէսոսի, առ գերահաչակ և արժանապատիւ եպիսկոպոսն Տէր Տիրացուն, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս թագէսոփ առաքելոյ: Եւ յայսմ ժամանակի փայլէր, իրրե ջահ փառեալ ի մէջ գիշերի, որ էր նաւահանգիստ զտանգելոց, քաղցելոց և ծարտաելոց, շնորհօք ո. առաքելոյն, և Բ ամաւ յառաջ եկեալ սուրբ արքայն Հայոց Լուս բարի և մնուցող և երախտաւոր Տէրն իմ յայս սուրբ ուխտս. և բազում սէր զտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէն Տէր Տիրացուէ. նա և ես նուաստ թորոս վայեեալ ի սէր սորա և ի...

Շարունակութիւնը կտրուած է և չկայ, թերթերը թափուած են:

4. Աւետարան. մակաղաթեայ, քառածալ, երկսիւն, կաղմած: Յիշասակարանը.

Այս զրեմ զպատճառն աւետարանիս ի թուարերութեան հայկաղեան տօմարիս Ռիմ թուին: Սպանեցաւ Շահ-Խսմայիլն ի ձեռն ըստ սոսիխին իւրոյ, և կանգնեցաւ թագաւոր մի արիւարքու և անողորմ, անուն Խուդարանդայ կոչեցեալ, որ էր եղբայր Շահ-Խսմայիլին, և ի թագաւորէն նորա շարժեաց բարկութիւն աստուածային ի վերայ երկրի: Ահա առաջինն վերացաւ սէրն ի մարդկան: Յառաջ աստուածայինն ի ապա իշխանացն. զարձեալ բորբոքցաւ սուր սուսերի և պատերազմունք և եկն սով ասստիկ և մահարաժամ: Ով եղբայրք, մի ամօթ համարէք բանս այս և սով մեծ մնացեալ է ի որդիս մարդոյ, և տեսանք աչօք մերովք, որ աւերեցաւ բազում երկիր և եկեղեցեաց ճրագ անցաւ. և զոմն մահաջինչ եղե, և զոմն անօրինաց ահէն կոծայր, և ոմն նեղեալ սովու, և թարշամեալ անձինն վայ տայր, լալու է ժամանակս այս, որ հայրքն ոչ ճանաչէին զորդիս իւրեանց. և այլք ի զազիր յիրօք կերակրեցան. և մի ոմն ճաշակեաց զմիս որդւոյն և եղրօր իւրոյ. և այլք բազումք մեռան, կորստական և կերակուր եղան զազանաց և բառ օրինացն իւրոց ոչ թագեցան. և եկն այս ամե-

նայն պատուհաս վասն ծովացեալ մերոց: Եւ այր ոմն Սիմէօն անուն և կողակիցն իւր Նանէն, որ էլմ հեզ և խոնարհ, հրւըլնկալ և աստուածաւէր. որ անէին որդի և գուստըն այլ և ե, որ անունք սոցա՝ առաջինն—Նասիլ, Մանկասար, Պազդասար, Մելքոն, Քառապար. և զատերացն—Ռւստիանա, Աղիզ. Հուսումսիմա, Սանամ, Դօվլաթ: և գառն մահուամբ, որպէս ծաղիկ, թարշամեցան և իջան ի գերեզման խաչիւ, աջոկ և քահանայիւ, և ծնողս սոցա Սիմէօն և Նանէն . . .

Ինդրեցին զրել մեծաւ փափառանօք զաւետարանս վասն յիշատակի և վասն փրկութեան նովոցոցն իւրոց: Այլ և ես, մեղօք զառածեալ, սուտ անուն Ասպարէլ արեղայս, վասն ծովացեալ մեղացս իմոց և եղայ ալեկոծման ի վերայ երկրի, հանգիսկեցայ սոցա և սիրով ընկալան զիս հոգեոր որդի իւրեանց, և ի սոցին փափառանացն զրեցի զաւետարանն . . .

«Գրեցաւ սա յերկիրս Ռշտունեաց, ի գիւղս որ կոչի Շատաւան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սրբոյն Ստեփաննասի Նախավիկային և սուրբ Քէորգայ զօրավարի, յամի Տեան ԶԼՌ յառաջնորդութեան Տեան Զաքարեայի նորընծայ կաթուզիկոսի: Այլ և յաշխարհակալութեան Աղութ խանին ի զասն և վշտարեր ժամանակի, յորում միահամուռ ամենեքեան ընցան զհետ ոչինչին և զասնեն զոչինչ և զարձան մոլար օրէնս Մահմէզի, որ արձակ ճանապարհան տանի ի կարուստ. և բռնադատեան զամենհանան զմանկունս եկեղեցւոյ զառնալ ի մսոտի և ի պատիր յոյն իւրեանց, հալածնն, նեղեն և տառապեցուցանեն, զոմնաց ինչն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայհոյելով. և ոչ այսու վերջացան՝ այլ և զրապաւմ եկեղեցիս տապալեցին, և զիսաշ և զաւետարան հախատեցին: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղացս մերոց, և ոչ զառնամբ և ոչ զղջանամբ, զի միմիանս առեմբ, փոխանակ սիրոյ, և մտանեմբ, փոխանակ բարւոյ: Եւ Տէր Ամենակալ երկայնամիտ լինի ի վերայ չարեաց մերոց...»:

5. Աւետարան թղթեայ, ոն 4. երկսիւն, բոլորագիր, կազմած, զրել է մի ոմն Յակոր յամի և թիւն հարիւրերորդի քառասներորդի վեցերորդի թվականի Հայոց ի վասնանդեան զաւասիս, ի գիւղս որ Գողիս կոչիր, մերձ ի մայրաքաղաքն Կարս: Նախ Խութլուրէկ և Թիրրիշ եղբայրները և ապա՝ Ապրելուս և Խերիսաթուն կողակիցները ստացել են այս աւետարանը:

6. Աւետարան թղթեալ, ոն 32. երկսիւն, բոլորագիր, չորս աւետարանիների գունաւոր պատկերներով, զրուած ԶՀ թուին. վերջին յիշատակարանը քերած է և Պաւլոս վրզպետի անունը զրած:

7. Աւետարան. ին 4. թղթեայ, երկսիւն, բոլորագիր, կազմած, պրուած է ԶՀԶ թուին, Աստուածատուր բահանայի ձեռքով, տեղը յիշուած չէ:

8. Աւետարան. թղթեայ, ին 2. երկսիւն, բոլորագիր, կազմած, զրել է Թումա արձիւեցին: «Ե յերկրիս Գողթան, ի յանապատիս որոյ անուն Կոպատափ կոչի, որ է յանդիման գեղին Բուայ ի յայսմ ամի որում արևելից աշխարհն առանց թագաւորի եկաց ամ մի: Քանզի երեք թագաւորք փոխեցաւ և մի ի նոցանէ ժամանակ ոչ արար: Առաջինն անչափ բարի էր քրիստոնէից և նու ճաւատայր զԲա. Ա. իսկ երկրորդն ուեղծ և անիծեալ որ անունով Ալի փաշախ կոչի նման էր տուաշին կուսպաշաիցն, յարոցց բազում հալածանս ի վերայ քրիստոնէից և գեկեղեցին քակեաց և զիաշերն խորսուկեաց և շատ չար արար Քսի հաւատացելոցս, բայց յետոյ Ա. մատնեաց զնա ի սուր սուսերի և չարաման արար, Արդ եղբարք այս ամէն որ եղի յայսմ ժամանակի վասն մեզաց մերոց եղեւ: Արդ զրեցաւ սա ի թուականիս հայոց ԶԶԵ:

ԶԶԵ. թվին Ազարիս արքեպիսկոպոսը վերստին կազմել է սուել: Նոյնը արել է Ա. թուին Կախիկ եպիսկոպոսը:

9. Աւետարան. թղթեայ. քառածալ. երկսիւն. բոլորագիր. կազմած. 12 պատկերներով. զրել է Կարապեա կրօնաւորը հայոց Պէ. և ստացել է Թանկիսաթուն արկիինը:

10. Աւետարան. թղթեայ ին 32. կազմած. երկսիւն. բոլորագիր, 4 աւետարանիչների պատկերով: Քրուած է ձեռամբ Եղիա արեղայի աշխարհաւ յԱղվանից և տեղեաւ Դիլուկեցի և գեղաւ Հաւրուգեցի: «Քրեցաւ որ մատեանս ի յանապատիս որ կոչի ճգնաւորի բար. ընդ հովանեաւ որ. ածածնիս, որ է մատ ի բազաքս Եղեղիս. ի թվիս հայոց ՊՀԵ:

11. Աւետարան. մազաղաթեայ. ութածալ, երկսիւն, բոլորագիր: Զորս աւետարանիչների գունաւոր նկարներով և ծաղկազրերով զարդարուած, արձաթապատ կազմով: Յիշատակարսնում ասուած է.

Եւ արդ զրեցաւ որ. աւետարսնս ի թվին Հայոց Զ. և Ի. ամի ի ձորս Աշոտա և ի վասն Յանկիւնեաց, ընդ հովանեաւ որ. Լուսաւորչին և որ. Վարդի հաւը գերեզմանիս աես տաճարիս և սրանչելազար որ. նշխարացս, ձեռամբ մեզամած և անարժան զրչի Զաքարիաի, ի թագաւորութեան Հասան պարոնի որ առ ու զերի արաւ զաշխարհն Տփեւա Կ. Ռ. մարդ. Լ. Ռ. ի սուրն անցուցին. Լ. Ռ. զերի. վայ ինձ հազար բերան: Ի հայրապետութեան Տէր Սարգսի:

Հետեւալ երեսի վրայ կայ այս.

Արդ և Զաւարս, որդիին իմ Մկրտիչն, Թաւարեալն, Փա-

նոսն, գուստրն իմ Զբահնուպարն, ևս Զաւարս և իմ կողակիցն, որ տվաք զմեր ջաղցին փայլն աէր պրն Սէթ իրիցուն վախմըն, յիշատակ ինձ և իմ որգոցն և իմ ծնողացն ևս Հերապետ վկա, Խոցագեզս վկա, դարբեցն Խոցագեզս վկա, իւր փեսայ Պարալին վկա, Ա. վկա, ով էս աւետարանս կարգայ ողմիս. տայ յիշատակ ծնողացն, ով էս բանիս հակառակ լինի՛ մասն Յուղայի առցէ, ամէն. Հայր մեր:

12. Աւետարան. թղթեայ, ութածալ, բոլորագիր, 27 գունաւոր պատկերներով, կաշեկազմ. զրել է Մխիթար զրիչը «ի գառն և նեղ ժամանակի յորտւմ նեղիմք ի յանօրինաց հարկապահանչութենէ, ևս ասաւել ի պութենէ նացի որ լիտր ալիւրն դ շնի. գ փրյ. ծախեցին, ու զզլպաշն եկաւ ի վերայ Վանաց և բազում ոճիր զործեաց ու արինահնեղութիւն արարին ի միմեանց. բայց զառչիկայն Սասուած զիտէ, որ աշխարհս ամէն ի մէջ նեղութեանց և տառապանաց է, միթէ մթան լուսարարն Քրիստոս լոյս առնէ ամենայն աշխարհն... ի յերկիրն Մայեկայ ի գեօղն, որ կոչի Սեպ և ծաղկեցաւ ի մայրաքաղաքս Խիզան, ընդ հովանեաւ որ. ի խորանացս՝ որ. Յարութեան և որ. Սատուածածնին, որ. Յովանիսին և որ. Գրիգորին, որ. Ստեփանոսին, որ. Սարգսին, և որ. Մարտիրոսին. ի թուականիս հայոց ի ՌԾԴ. ի հայրապետութեան անտէր Մելքիսէթ կաթողիսի. Էջմիածնայ և ի մերոյս Ախթամարայ տէր Գրիգորիս կթղկոսի. ամենայն հայոց:

Դարձեալ կրկին անդում յիշենջիք զվերջի ստացող որ աւետարանիս, և սուկեզօծ բուրաստանիս Ագուեցի պրն. Թուման, որ ի գառնան յերկրէն նողկաց ի Թէոդոսովիս, հանդիպեալ էր աստանօր սրբոյ աւետարսնիս զոր ուխտիւ ըստացաւ զստ ի հալալ ընչից իւրոց առ ի ընծայելոյ ի զուռն որ. Թովմայի առաքելոյ վանիցն, որ զինի գալոյն իւրոյ յԱղվուիս՝ երեք և ընծայեաց ի թվին ՌԾԴԱ.

13. Աւետարան. մազաղաթեայ, ութածալ, երկսիւն, բոլորագիր, 4 աւետարանիչների պատկերներով և բազմաթիւ ծաղկանը-կարներով զարդարուած: Արձաթապատ կազմով: Յայտնի չէ թէ ով է զրել, միայն ստացել է մզգոփ էվազը և նուիրել «սուրբ Ածածին եկեղեցւն ի ձորն Ագուեցի: Ի ժամանակս թագաւորութեան Պարսից փոքր Շահարազին, ի կաթողիկոսութեան Էջմիածնայ տեսոն Յակոբին, ի յառաջնորդութեան Թումայի որ. ուխտին զոէր Պիտրոս արհ. Եպիսկոպոսին և Մովսէս վարդապետին: Գեղիս առաջնորդն Մանդվին: Թվ: Ա. և երրորդի ումի»:

14. Աւետարան. մազաղաթեայ, քառածալ, երկսիւն, բոլորագիր, կաշեկազմ և անչափին երեսին արձաթեայ խաչ: Գրուած է

«Ճեսամբ նուաստ և յետին գրչի Աղամալ Զուղայեցի մեղապարտ և ունախագործ մեղաւորի, ի թուարերութեանս ասքանազեան և արէթական տումարի ՌՃ և Ժ. և ի գալստենէ կենարարին՝ ՌՌԿէ ի սոսոյդ և ընտիր օրինակէ, ևս տուաւել ի համարայիցն, զի գաղտփար սորին էր ի գրանէ կամակատար Ա.ծածնի և Մօզնոյ սրբոյն Դէորդեա զօրաւարէ եկեղեցւոյ ի յաշխարհս վրաց ի մայրաքարս Տիֆիխո, ընդ հավանիւաւ բարձրակառոյց Փաշիվանիցս որ յանուն սուրբ ածածնին և ամենափրկիչի, ի հայրապետութեան սր. էջմիածնի, ան. Յակովին և տուաջնորդութեան այսմ նահանդի, Սանահնոյ Մարգիս եպիս.-ին, և Հաղբատոյ Աւետիս եպիս.-ին: Եւ ի թագաւորութեան վրաց Բագրատունեան ցեղէ Շահնուալ խանին, և Մարիամ Դեսոփալիին:

Գրել է տուել աստուածասէր պարոն Բէժանն և ամուսինն իւր պրն. Լէլօն: (Ճետաքրքրական է որ կնոջ համար ևս պարոն է գործածուած և այս էլ ոչ սիսլմամբ, սրովհետեւ մի քիչ ներքի կրկնում է. յիշենջիք զպարոն Բէժանն և կողակիցն իւր մեծ Զահանցի որդիի պրն. Ղանգուրալու գուստր պրն. Լէլօն... և մայրն իւր զպրն. Թինաթին): Ապա այս աւետարանը իրն աւար տարել են և ՌՄԽԵ թուին Ազուլեցի Տուտենց Յարութիւնի որդի Մարտիրոս վաճառականը գնել է և նուիրել սր. Թովմայի վանքին. յիշատակելով այս մասին Աստապատցի Արքահնամ վարդապետը<sup>1)</sup> շարունակում է.

«Առ մերսկո ժամանակաւ որդին Մահմադ—Հասանայ՝ մեծազօր բոնաւորին՝ ազայ-Մամադ-խանն՝ ըստ յաջողելոյ բազրին զօրացեալ յոյժ՝ յինքն գրաւեաց բովանդակ աշխարհն Պարսից և տիրեաց մասնաւորապէս նահ այլոց աշխարհաց, և թագաւորական շըռվ և անուամը նստէր ի քաղաքն Թէհրան: Սա ի թուականիս մերում ՌՄԽԵ եկն անթիւ բազմութեամբ զօրաց ի Դաւրէծ քաղաք և ի Մարանդ գաւառ, և անտի հրաբրական առաքեալ է զինուորական իրողութիւնս, և ասիւծան հզօր ի պատերազմի, որ անձամբ անձին մղեալ է զրազում պատերազմունս յաղթական գտեալ յամենայնի օգնականութեամբ վերին զօրութեան: Բանզի ի թուականութեան մերում ՌՄԽԵ նախարարն Ահարա, այն է Նարագալի Մուսատափայ խանն եկն բազում զօրօք ի վերայ Գողթան գտաւոիս, և կողովուեալ յաւարի էտո զամենայն ինչս մեծի առաքելական Աթոռոյս, և եկեալ Քեալ-զալի խանին խորտակեաց զօրութիւն նորա՝ մեծաւ քաջութեամբ և փախոյց զնա ամօթով յետո: Եւ զկնի երկուց ամաց՝ Խալիլի խանն Շուշի բերդին՝ ժողովեալ զեկոնականս, որք լեկզի կոչին, եկն ի վերայ սորս ծանը զօրօք, և սա ամբացաւ ի բերդն իւր Նախշուան: Եւ յետ քանի մի աւուրց օգնութիւն գտեալ ի յերեւանոյ և ի Խոյոյ, ել ի յամբոցէն և ենար չարաչար զօրս նորա և ցան և ցիր կացուցեալ՝ փախատական արար: Եւ այլ բազում մասնաւոր քաջութիւնս զործեաց, զորց չէ տեկոյս զրել մի բառ միոցէ: Զոր և ի թուականութեան ՌՄԽԵ, առեալ ընդ իւր Աղա-Մամադ-խանին՝ զնաց ի վերայ Նիւթալի խանին՝ որն նստէր ի Թիրման քաղաքի: Զոր յետ պաշարելոյն ամիսս ութ, էտո մեծաւ պատերազմաւ. զրազումս ի բնակչացն սրոյ ճարակ ետ և զնոյն ինքն՝ զեխիթալի խանն Ճերբակալ արարեալ կուրացոյց զաչս նորա, որ զկնի սակաւուց իւրովի զեղակուր եղեալ՝ վճարեցաւ ի կենաց: Յետ որոյ առաւել ես զօրացեալ Աղա-Մամադ-

<sup>1)</sup> Հրամանաւ գերապատիւ Հօր մերոյ և առաքելաշաւիլ Ա. տուաջնորդին Գողթան գաւառին Տոն. Թօմայի խոհեմազարդ վարդապետին Դաստակեցւոյ որ է վիցերորդ եպիսկոպոս ի շինութիւնն այսմ առաքելական Աթոռոյս, այր խորհրդական և հանձարեղ, խոնարհամիտ և հեղաճամբոյր, քաղցրաբարոյ և բազմապարզի, զարդարեալ ձրիւք հոգուոյ և մարմնոյ և փառաւորեալ յամենցունց: Որ կայ այժմ և կառավարէ զոյն սր. Աթոռոս խոհական խորհրդով, թէպէտ և կրէ պէսպէս վիշտա և նեղութիւնս ի դառնութիւնէ և յաղթատութենէ ժամանակիս:

և լ ընդ որս և գրաջ իշխողն Նախիջևանու՝ զբեալպալի խանն՝ զորդին Հասան խանին: Որք հնապանդութեամբ զնացին առ նա և եղեն նմա հարկատուք: Եւ նորա մեծապէս պատուեալ զոսոս զամենես-սին, զարձուց յիւրաքանչիւր զտեղիս, առնելով պատանդս, այսինքն զաւալս ի նոցանէ, զոմանց կամայս և զոմանց որդիս և զեղբայրա: Բայց Հերակլ բարեպաշտ արքայն վրաց և նախարարքն Շուշի բերդին և երեւանոյ՝ ոչ կամեցան մտանել ընդ լծով հնապանդութեան նորա: Եւ նա ի նմին ամի զարձ արարեալ՝ զնաց ի քաղաքն իւր ի Թէհրան: Եւ զկնի երկուց ամաց առաքեաց զՄուլէյ-ման խանն, որոյ եկեալ նստաւ ի Դաւրէծ քաղաքի և կոչեաց առ ինքն զբեալպալի խանն էր իրաւասէր և արդարադատ, խնամող Հայկա-զեանս ազգի, սիրող եկեղեցեաց և վանօրէցից, միանզամայն և քաջահմուտ և յաջողակ ի զինուորական իրողութիւնս, և ասիւծան հզօր ի պատերազմի, որ անձամբ անձին մղեալ է զրազում պատերազմունս յաղթական գտեալ յամենայնի օգնականութեամբ վերին զօրութեան: Բանզի ի թուականութեան մերում ՌՄԽԵ նախարարն Ահարա, այն է Նարագալի Մուսատափայ խանն եկն բազում զօրօք ի վերայ Գողթան գտաւոիս, և կողովուեալ յաւարի էտո զամենայն ինչս մեծի առաքելական Աթոռոյս, և եկեալ Քեալ-զալի խանին խորտակեաց զօրութիւն նորա՝ մեծաւ քաջութեամբ և փախոյց զնա ամօթով յետո: Եւ զկնի երկուց ամաց՝ Խալիլի խանն Շուշի բերդին՝ ժողովեալ զեկոնականս, որք լեկզի կոչին, եկն ի վերայ սորս ծանը զօրօք, և սա ամբացաւ ի բերդն իւր Նախշուան: Եւ յետ քանի մի աւուրց օգնութիւն գտեալ ի յերեւանոյ և ի Խոյոյ, ել ի յամբոցէն և ենար չարաչար զօրս նորա և ցան և ցիր կացուցեալ՝ փախատական արար: Եւ այլ բազում մասնաւոր քաջութիւնս զործեաց, զորց չէ տեկոյս զրել մի բառ միոցէ: Զոր և ի թուականութեան ՌՄԽԵ, առեալ ընդ իւր Աղա-Մամադ-խանին՝ զնաց ի վերայ Նիւթալի խանին՝ որն նստէր ի Թիրման քաղաքի: Զոր յետ պաշարելոյն ամիսս ութ, էտո մեծաւ պատերազմաւ. զրազումս ի բնակչացն սրոյ ճարակ ետ և զնոյն ինքն՝ զեխիթալի խանն Ճերբակալ արարեալ կուրացոյց զաչս նորա, որ զկնի սակաւուց իւրովի զեղակուր եղեալ՝ վճարեցաւ ի կենաց: Յետ որոյ առաւել ես զօրացեալ Աղա-Մամադ-

խանին, հաստատեցաւ յիշխանութիւն իւրում: Եւ ի թուականիս մերում ՌՄՌԴ, և ին միւս անգամ անթիւ բազմաթիամբ զօրաց պարսից ի յԱստրապատական երկիր, բնրելով ընդ իւր և զՔևալպաւած-խանն: Եւ անցեալ ընդ Երասխ գետ, զիմեաց ի յԱրցախ աշխարհն, որ ի Ղարաբաղ, և պատեաց զանասիկ և զընդարձակ բերդն Շուշի: Եւ անտի ասպատակ սփռեալ յաւարի էտո զգաւառոն Արանդայ՝ զջաւանգուր և զիմինչիւզ և գերեաց զբազում: Եւ զեղբայրն իւր զԱլի-Ղուլի խանն առաքեաց երկոտասան հաղարօք առ Նախջուանաւ ի վերայ Երևանայ, որոյ եկեալ ընակեցաւ հանդէպ բերդին, ուր եկն ընդ առաջ նորա տոտուածապատիւ Հայրապետն մեր տէր Ղաւկաս երջանիկ կաթուզիկոսն սուրբ աթոռոյն եջմիածնի, իրբե քաջ հոգիւ զնելով զանձն իւր ի վերայ հօտին: Եւ մատոյց նմա բազում ընծայս՝ ըստ արժանույն ջանահնար լինելով յամենայնի, զերծ պահել զսուրբ աթոռն ի գլխաւոր վնասուց, և առ այս ծախեաց անդէն առ զրան նորա չափազանց զըրամս: Եւ ինքն սրբազն Հայրապետն՝ մեծապէս պատուեալ՝ փառաւորեցաւ և խիլայեցաւ ի նմանէ: Խոկ յետ աւուրց ինչ զօրավարն պարսից մեկնեցաւ անտի, առեալ պատանգս ի Մահմադ խանէն Երևանայ՝ զիին և զեղբայրն նորին, և զնաց զէպի Վրաստան: Քանդի աղա-Մահմադ-խանն (որ նասէրն ի Շուշի բերդին) իրբե ետես եթէ սրաշարումն բազարի երկարի յոյժ և զժուարին է առնուլն, եթով զայն և խալաց ամենայն հեթանոսական բազմութեամբ յաշխարհն վրաց, և փախուցեալ զարբայն նոցա զրարեպաշտ Հերակլ, էտո զմայրաքազաքն Տիփիխան՝ որ է Թիփիխ, քանդեալ աւերեաց զշինուածս քաղաքին, կոսորեաց զրազումս ի բերան սրոյ, և զանհամար բրիստոնեայս՝ մանաւանդ զհայս ի զերութիւն վարեաց՝ ընդ ծովացեալ մեզաց մերոց, և յաւարի էտո զամենայն ինչս և սուցուածս նոցա և զանօթ եկեղեցեացն: Մահմանդ զմայր Աթոռոյն մերոյ Սրբոյն եջմիածնի՝ մեծապին զգեստս, և զմարզարտաշար և զականակուռ թագս և սաղաւարտս, և զուկեղէն և զարծաթեղէն ծանրագին անօթս, որք անդէն ինմին քազարի ի պահեստի էին, ընդ նոսին և զրազում պատուական զըրեանս: Եւ յետ աւուրց, ընդ կրունկն զարձաւ անտի աղա-Մահմադ-խանն և եկն ի սահմանս Գանձակայ, որ է Փեանջայ: Եւ զի Քեալպալի խանն Նախջուանու փեսայ էր Մահմադ խանին Երևանայ, զատ առաքեաց անտի առ Մահմադ-խանն հաւանեցուցանել զնա և ածել առ ինքն: Որոյ եկեալ Երևան միամտեցոյց զաներն իւր, երաշխաւոր զնելով զինքն վասն նորա առաջի Աղա-Մահմադ-խանին, և առեալ ընդ իւր՝ տարու առ նա: Զոր բազում սիրով ընկալեալ Աղա-Մահմադ-խանն, պատուեաց, իրբե ազգա-

կան իւր՝ քանզի և իշխողն Երևանայ բուն ազգաւ պարսիկ էր, որոյ ցեղն յատուկ անուամբ Ղաճար կոչի: Եւ յետ ոտկաւոց չուեաց անտի Աղայ-Մահմադ-խանն և եկն ի յարգաւանդահող և ի յընդարձակ զաշան Մուզան, և բանակ հարեալ՝ նստաւ անդ: Եւ ի նմին տեղւոջ խիլայեաց զՄահմադ-խանն Երևանայ և մեծապէս փառաւորեաց, կացուցեալ զնա մարզպան, այսինքն է պէկլարբակի, և գարձոյց ի տեղի իւր: Եւ քանզի անզր քան զկուր զետն եղեալ նախարարք, այսինքն Դարբանգայ, և Բագուայ, և Եռիխուայ, և այլոց տեղեաց ևս խանքն հնազանդեալ էին Աղայ-Մահմադ-խանին և թոշակ տային զօրաց նորա, և միայն Շամախի էր ի միջի անդ աղըստամբ: Վասն որոյ առաքեաց Աղայ-Մահմադ-խանն զքաջ զօրավարն իւր Քեալպալի խանն բազում զօրօք ի վերայ Շամախւոյ: Որոյ զնացեալ անզր, յապականութիւն գարձոյց զերկիրն, և պատեալ պաշարեաց զամրոցն, ուր էր արգելեալ՝ ինքն նախարարն Շամախւոյ: Բայց զկնի սուկաւուց ի տեղի Քեալպալի խանին՝ առաքեաց Աղայ-Մահմադ-խանն զայլ ոմն զօրավար և զնա երեր առ ինքն և մեծապէս պատուեալ՝ փառաւորեաց, և գարձոյց խիլային ի քաղաքն իւր Նախջուան: Եւ ինքն Աղայ-Մահմադ-խանն բանակեալ է առ այժմ ի Մուզան զաշտին, ունի ձմերել անդէն, և յաւուրս զարնան զնալ վերասին ի վերայ Շուշի բերդին: և առ նորն ժամանակաւ թէ զինչ իրազործութիւնք հանդերձեալ են լինել Ածոյ: է զիտել, որ է Տէրն ժամանակաց...»:

15. Աւետարան. Թղթեայ, փոքրապիր, երկսին, բոլորապիր կազմած, զրուած է Թձեթթ թուին ի գիւղն կնդանց:

16. Աւետարան. մազաղաթեայ, բառածաւ, երկսին, բոլորապիր, չորս աւետարանիների պատեկերներով, թէ պատեկերները և թէ զիրը զեղեցիկ չեն: Յիշատակարանը թափուած է:

17. Աւետարան. թղթեայ, ութածաւ, երկսին, բոլորապիր, կազմած, առանց յիշատակարանի:

18. Պօղոսի եւ նայի Մարգարէից թղթերը. թղթեայ, երկծաւ, երկսին, բոլորապիր, կազմած, 767 թուին զրուած յիշատակարանում ասուած է:

Արդ յամս վերադիտութեան երջանիկ հոգեոր ան Զաքարեայի հայոց զիտապետի և յառաջնորդութեան սր. ուխտիս հոգէկիր վեհիմատու հովանութեատի ան Պետրոսի և նորին Յովանափի զրեցաւ տառս ածային ընդ հովանեսու սրոյ Նշանիս Վարագայ յոյժ տառապանաւք և նեղութեամբ. ձեռամբ մեղապարտ և անարժան կրի Յակոբի ի թուիս հայկազնեան տումարիս. Եւթն հարիւրողի վաթաներորդի եւթն երորդի. յայսմ ամի որում ծփի ամենայն երամք Քսափառաց ի շնչանէ նկոռողական ազգին

Դարբանդաղուցն զանի. վչելով ի նա սատանայ հարկ հրամայեաց առնուլ յամենայն քրիստոնէից վասն հաւատոցն որ ի թո. և նշան կապոյտ հրամայեայ կարել ի վերայ թիկանց հաւատացելոցս. ևս աւելի կրանսաւորացս հարկ առնուին առանց զանի հրամանին. յետոյ երիցս երանեալ երջանիկ հայրապեան Զաքարիայ հետ զանին գնացեալ մինչեւ ի Բարելոն ամ մի ողջոյն և առլեխ աւ սեալ ի նմանէ զկրանաւորքս և զբանանայոն ազատեաց ի հարկապահանջութենէ, այլ յաշխարհականացն և ի տղայոցն առնուին. որոնց զարդիս խաղաղական կենաւք շնորհեցէ նմայ ար և իւրցոյն ամենայն և գեշիցն յիշատակ աւրհնութեամբ ի թո. եւ յայսմ ամի գարունն առին զհարկեն և աշունն զանն մեռաւ. և այլ եկին ոմն անուն աղլաղու, Սինթամուը և Հասան Թամուը ՌԴՇ մարզով և կրկին հարկ առին յոյժ անչափ և ոչ ոք ընդպիմացաւ նոցա և վանօրայքս որ ազատ էին զոր ըմբռնեցին անհնարին տանջանաւք չարչարեցին և անչափ ակ. առին. մանաւանդ ոք. ուխտս մատնեաւ ի ձեռս նոցա յանկարծակի զաղտարար եկին յերեկունն և ամենեքեան փախեաք և զորս ըմբռնեցին անհնարին տանջարեցին որ ոչ կարեմք պատմել և քաղաքի տաճկնին բազում ինչը առին և հազիւ թափեցին ի ձեռաց նոցա. և այլքս, որ փախեաք այլ չեշիցաք գտանալ ի վանքս, զի հանապազ զոիւ և զգիշեր ի ինզիք ելանին մեղ. և մեր ահարեկեալք ի նոցանէ ահիւ և զողութեամբ կէտք զցայդ և զցերեկ ի որ. լերինդ ի խորշս և ի ծերոս վիմաց և նոքա ամեն աւը զային և զեկեղեաց զոներն և զիցերոցն զամէն բացին և յաւարի տարան զինչ որ զտան. բայց սուրբ Յովհաննիսա դուռն միայն միաց վասն զի ճգնապեաց փակակալս մեր զտար կը. զահ և զերկիւզ ի բաց եղեալ և յեկեղեցին կացեալ բազում աւուրս և որ նշանն պահեաց զնոսա. և ափեցոյց զսիրաս այլազգեացն որ ոչ մաքառեցան ընդ դուռն երկաթի: եւ այլ բազում վիշտ և նեկութիւն և տառապանք կրեցաք յամենայն զիմաց յամարանի և ի ձմերանի փախստեայ լինելով և բացաւթեայ կելով ի որ լերինդ և այլ զմնդակ նեղութիւն որ ոչ կարեմք պտամել. և մեր ամէն կրանսաւորքս կամ աւելի երիցս երանեալ տառչնորդաւս մերով ար Պե. որ ոչ եթող փարատել մի ոք ի մէնչ, որոց զարդիս խաղաղական կենաւք շնորհեցէ սոցա ար. ած. միարան ուխտիս և զելիցն յիշատակաւ աւրհնութեամբ ի թո. եւ մեր բազում ժամանակս զայս նեղութիւնս կրելով և առաւել քան զսոյնս և առ ոէր որ նշանիս և սա ապաւինելով ի սր ուխտէս ոչ հեռացաք. քաղաքն և երկիրս ամեն այսր անար փախեան լուր մաքատատան միաց և մեր ի տեղս հաստատուն կացաք զս. սր. նշանի սիրոյ:

19. Գործք առաքելոց.—թղթեայ ու 32. նրալագիր, միասիւն, կազմած: Վերջում Արխատողէլի Յաղազս առաքինութեան (առ) Աղէքսանդր թագաւոր: Յիշատակաբան չաւնի: Բաց թերթերում զանազան հիւանդութեանց գեղիր են դրուած:

20. Շարական. թղթեայ, ու 32. միասիւն, բոլորագիր, կազմած, առանց յիշատակաբանի. կողքի վրայ դրուած է. Այս շարականցոց ևս ցնեցի Մարտիրոս տասն մասջից զնեցի ի մայրաքաղաքն Համբիթ: Սրա տակը, ուրիշ տառերով. ես ասացի ար ողորմեալ թվ. ՌԶէ:

21. Քաղուած շարակնոց. մակաղաթեայ, ու 32. բոլորագիր, միասիւն, կազմած ձեռամբ Միքայէլի, ի թվ. ՌՃԷԴԻ.

22. Շաղու գիրք. մեծագիր, երկամս, բոլորագիր, դրուած Սարգիս կրօնաւորի ձեռքով ԶԶԹ թուին ի վանս Աղաւնից ի հայրագետաւթեան Սահմաննոսի, որ և ազատեաց զաղգս բահանաւցից ի հարկէ հալածչեաց և նոյն ինքն տեսանէ զաղատութիւն իւր ի թագաւորաւթեան զոր ոչ գոյ. այլ բարձեալ է թագաւորութիւն, քանզի իշխանք են խոռվարաք և տատանեալք ի վերայ միմիանց աղմկեալք, զոր ոչ կարէ բերան պատմել զոր յայսմ ամի տեսին աչք մեր զալէտ տարակուասնաց ի հեծելեաց, զորս երեսուն հազար մարզակէմ զաղանաց ի վերայ երկրիս մերում յարձակեալք, զնեսոս որեալ և զաղեղն լարեալ և զթիւրս իւրեանց թափեալ յարեան ի վերայ երկրիս մերում և ով կարէ պատմել զանաւրէնութիւնս նոցա զոր արարին և զորձեցին. քանզի բազում գաւասս զրեցին և աւերելով կործանեցին և զինչ արգիւնաց զամենայն յափշատկեցին և զամենեսեան զքրիստոնյութիւն կողովուած արարին. մերկ և բոկ և ոչ թողին և ոչ մի ինչ ի վերայ անձանց բըխատոնէից, այլ զանասունս տաւարաց ջոկս ջոկս առեալ տարան զոչխարաց և զեզմնց, զկսվուց և զցլուց, զիշուց և զերիվարաց և զհանգերձս ի յանձնէ մերկացուցին և մերկս արարին ի տեսիլս խայտառակաց. քանզի որ աչք բաւ է տեսանել զաղիւղորմ տարակուասնաց, և կամ որ անձն բաւ էր տեսանել և տանել այսմ չարչարանաց որ յերէկ տան տանուտէր և ամենայն իրաւոք լի և այսաւը բեկեալ որտիւ և տրտմեալ և մերկ ի վերայ մոխրոյ նստեալ. քանզի այնպէս լի էր երկրիս ամենայն բարութեամբ և յանկարծակի այնպէս արարին որ շոնք ի սովոյ սատակէին. քանզի զիսորս ամրարաց հացից հանէին և այնպէս բարկութեամբ և սրտմառութեամբ ի վերայ բոլոր երկրիս արձակեցան, որ և հարիւր անձն որով խողիւղեալ նսհատակեցան, որի ծաղկովի սորս մայրն նետով խողիւղեալ փոխեցաւ ի թո.

23. Շաղու գիրք, մեծագիր, երկամս, բոլորագիր, յիշ-

տակարանը թափուած է: Շատ գեղեցիկ ծաղկազրեր և մի գունաւոր պատկեր ունի:

24. Շաշու զիրք—թղթեայ, մեծադիր, երկսիւն, բոլորազիր, վերջի թերթը պատռուած է և կազմանան եղած. զրուած է նոճիլ թվին, ի հայրապետութեան Յակոր կաթողիկոսի, Դափանի երկրի ի գաւառէն Մացրու, Ավելիս զիւզի միքանի բնակիչների խնդրանօք, որոնց անունները յիշատակուած են, բայց թերթը պատռուած է, այնպէս որ զրողի անունն էլ յայտնի չէ:

25. Պատարազամատոյց. մագաղաթեայ, քառածալ, երկսիւն, բոլորազիր, միքանի պատկերներով, զրել է Եփրեմ քահանան ՌօթՌի թուին, ի հայրապետութեան տո Նահապետի, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քո, և Կողիսկողոսին մերոյ Ստաթէի, որ առաքելոյ, տն. Յովանափիշածարան վրզպի և քաջ հոետորի ի զուռն որ Ստեփանոսի Նախավկային, որ է հովանի և պահապան գեղջիս մերոյ Օղուերձու:

26. Խորհրդատետր, թղթեայ ու 8. երկսիւն, բոլորազիր, կազմած, առանց յիշատակարանի:

27. Տաւենական. թղթեայ, մեծադիր, երկսիւն, բոլորազիր, կազմած. զրուած է մի ոմն Կարապետի ձեռքով Աղթամարի կղզում ՊԼԲ թուին. Ստեփանոս միայնակեացի խնդրով:

28. Քարոզ զիրք: Քերտէ մագաղաթ, ու 8. միասիւն. Նոուրազիր. կազմած, յիշ. չունի: Շապէի Բ. երեսում զրուած է. ես հանգուցեալ Երեմիա պետին Եղբօրորդի Զաքարիայս առի զայս քարոզ զիրքս արգեամբ իմով յումեմնէ քահանայէ ի վայելումն անձին իմոյ և հարազատ Եղբարց ի ՌՄԼԲ. ի սեպ. ԺԵ. ի որ Սթոռս Էջմիածնի: Էջմիածնը ջնջուած և զրուած է թւմի:

29. Քարոզ զիրք. թղթեայ, ու 16. երկսիւն. Նոուրազիր. առանց յիշատակարանի:

30. Մաշտոց. թղթեայ, երկսիւն, բոլորազիր, ու 16. կազմած: Գրեցաւ ի թուականութեանս մեր ՊՂԲ. ամին ձեռամբ... իզնատիսի... ի վանս Ռուխարա ձայնելոյ որ այժմ չեռարձ կոչի. ընդ հովանեաւ որ ածածնի տաճարիս և որ Ստեփանոսիս և որ Սարգսի գըրեղ վկայիս... ի յառաջնորդութեան որ ուխարի Յ... վրդապետս Կրպահ. զրեցաւ ի յառջին ամին հայրապետութեան նորաթոռ Էջմիածնի և նոր ընծայ կաթողիկոսիս որ կրտակոսին:

Կազմիցաւ Մաշտոցս ի թվին ԶԽԲ. ի վանքս Ագուեաց ի հայրապետութեան Ազարիին, ձեռամբ Յավաչի մեղսաւէր արեցիսի:

31. Մաշտոց. թղթեայ, երկսիւն, բոլորազիր, ու 16.

զրել է Դավար Գողթնացին «ի ժամանակին որում Շահարասն հկաւ և զթարվեզ տոեց և զաշխարհս ի գերութենէ ազատեց. ած. իւրն շատ շատ գաւաթ տո. թվ. ԲԾԲ:

32. Փոքր Մաշտոց. Բամբակեայ թղթի վրայ, ու 16. միասիւն, բոլորազիր: Առանց յիշատակարանի:

33. Յայսմաւուրք. ու 2. մագաղաթեայ, երկսիւն, բոլորազիր, կաշեկազմ. շատ գեղեցիկ ծաղկազրերով զարգարուած: Գրել է Կոստանդ քահանան և զաշտեցի Մարտիրոսը յիշատակ է տուել որ. Թովմայի վանքին 1134 թ. Հայոց, Յոհան Գողթնեցու վանահայրութեան ժամանակ:

34. Յայսմաւուրք, թղթեայ, մեծադիր, երկսիւն, բոլորազիր, կաշեկազմ: Գրել է Քրիստոսոսուր գպիրը ի յամի թուարի թերութեան հայկագիւան սեսի ՌՃՌ թւին... ի մեծ և ի հոյակապ մայրագաղաք Քափայ, ընդ հովանեաւ որ Օքսենդ բարձրացէն տաճարին, ի խնդրոց մահաեսի Հախնազարին:

Վերջում, Յամի Ներմարմութեան Տռ 1789 և ի թուականութեան հայոց ՌՄԼԲ մեծահոչակ և կերահրաշ վանքն սրբազնասուրը Ասաքելոյն Թումայի որ է կասուցեալ ի յերկրին Նախիջեւնու, յայսմ ամի ասսարակիցաւ ի չար և անօրէն տաճկացն զօրաց և զամ զինչո սրբոյ վանիցն աւար տոեալ և տարեալ ի յերկիրն Երևանու. վաճառեալ էին անդ զամենայն Եկեղեցական զապաս և կամ զայլ ինչո սրբոյ վանիցն. իսկ սոցա լուեալ զայս համբաւ ըօթալի կարի ժոյժ ցաւեցեալ էին վան զի է տուն հոգոց պայծառ իշխանացուն իշխան հախնեացն իւրեանց, որք իշխեալ էին երկրիս յայսմիկ. իշխանք գոլով ժամանակաւ և կացեալ էին ընդ հովանեաւ սրբոյ վանիցն. վայ մեծաւ փափաղմամբ որոնեալք էին յուղելով թէ զուցէ զամենիցն զապաս սրբոց հրաշկերափ վանիցս և տոեալ զայն վերագարձուցին ի որ վանս, բայց ոչ են զամեալ զինչ ի սպասու սրբոյ վանիցս բացի յայս յայսմաւուր գրքէս, որ զայս ևս զոմին Թիֆլիսիցի տոեալ և տարեալ էր ի Թիֆլիզ, որոց զայս տեսեալ հալալ արգեանց իւրեանց զնեալ, վերստին նորոգեցուցեալ ի տուն յիշատակ սրբոյ վանիցս Թումայի սրբազնասուրը Ասաքելոյն և խնդրեմ ի պատակելութենէ ձերմէ որք հանգիպիք ընթերցման սրբոյն մատենիս յիշեսլիք ի մաքրափայլ յաղօթու ձեր զնուսնուսեցի նաև զնալապեցի կոչեցեալ զամատունեան մատենի Սարգիսն և այլն:

35. Յայսմաւուրք. մեծադիր, երկսիւն, բոլորազիր, կազմած: Յիշատակարանի վերջի թերթը ընկած է, զրել է Յակոր անուն մինը Գողթին և Թումայի վանահայր Խաչատուր եպիսկոպոսի խնդրով, թուականը յայտնի չէ:

36. Հարսնց վարք. բամբակեայ թղթէ, ու 4. երկսիւն, բոլորագիր, կազմած, 1272 երես. Յիշատակարան չունի. Շապկի վրայ դրուած է. ի թուին ՌՃԾԻ. և յամսեանն մայիսի ժ և որ է օրն Գ շրթ այնպէս սէլ եկաւ որ մինչեւ ԺԲ արիւն արեց, տուն քանդեց. ձ տարէն ծառերն տակովն հանեց, վս մեր ծովացեալ մեղացն:

37. Գանձատետր. թղթեայ, ու 16, բոլորագիր, միասիւն, կազմած, գրուած է երեմիա սարկաւագի ձեռորով. Թուականը և անզը յայտնի չեն. ՌՃԾ թուին կազմել է Յովհաննէս հալիսկապուր յերկիրս Գանձոյ ի վանս Խաշաբակոյ:

38. Համառոտումն աստուածաբանութեան. թղթեայ, ու 16. միասիւն, նոտրագիր, կազմած. յիշատ. չունի:

39. Հարցման զիրք. ու 32. մագաղաթ. նոտրագիր, միասիւն կազմած, առանց յիշատակարանի:

40. Վարդան վարդապետի ածաբանական մեկնութիւններ. և «Մեկնութիւն տումարի Անդրէի Յեղեկիէլէ մեկնութիւնէ». Նշանք ընութեան: — Քերուած մագաղաթի վրայ՝ ու 16. միասիւն, բոլորագիր. կազմած: Յիշատակարանում՝ գրեցաւ ածայիս և իմաստայսիրաց գիրքս այս ի թվ. ՊԺԻ. գրողի անունը եղծել են: Նորից նորոգել է տուել Պետրոս վարդապետը Բարսեղ քահանային «ի որ և ի գերահաչակ Դագէի վանս» ի թվիս ՌՃԾ. և երեքին:

41. «Աշխարհալուր եւ տիեզերալոյս վարդապետին Վարդանայ պարզ եւ լուսաւոր խորհրդով եւ դժուարագիւտ լուծմամբ եւ քանիւ մեկնութիւն արարեալ Սաղմոսիս: Թղթէ. ու 16. բոլորագիր, միասիւն, կազմած: Առանց յիշատակարանի:

42. Սարգիս զիրք. մագաղաթեայ, երկծալ երկսիւն, բոլորագիր, կազմած. գրել է Առում քահանան «Յերկիրս Բարշտունաց ի գեօզս որ Կոչի Շատուան, ընդ հովանեաւ որ ածածնին և սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և որ ոսկիանց քնայիցն և որ Դեսրդայ զաւրավարին: Յամի յորում էր թիւն հայկացեան Զ և ԼՅ. յառաջնորդութեան առ Զաքարիայի նորընծայ կաթողիկոսի: Այլ և յաշխարհակալութեան Աղութզանին: Ի գոտն և ի վշտարեր ժամանակի յորում միահամուռ ամեներեան ընթացան զհետ ոչընչին և գտանեն զոչինչ և զարձան ի մոլար աւրէնսն մահմետի որ արձակ ճանապարհաւն տանի ի կորուստ և բանագատեն գամենեսեան զմանկունս եկեղեցւոյ զասնալ ի սնուտի և ի պատիր յոյսն իւրեանց: Հալածեն, նեղեն և տաստագեցուցանին զիմանց զինչն յափշտակելով, զոմն տանջելով, զոմն հայնոյելով և ոչ այսու վերջացան՝ այլ և զբաղում եկեղեցիս տապալե-

ցին և զիմաչ և զաւեստարան նախատեցին: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց:

Սկզբում կայ Սարգիս վարդապետի կենսագրութիւնը:

43. Գրիգորի աշակերտի եռամեծի եւ տիեզերալոյս վրդպետի Յոհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ քաղուածոյ. մեկնութիւն սը Աւետարանի Մատթէոսի: Թղթէ, ու 16, բոլորագիր, երկսիւն, կազմած: Գրուած է ի թուականիս հայոց ոթ հարիւր և երկերիւրոց: յիսուն և երկտաս անցեալ ոչ անջատ այլ միշտ իրերոց, զան և վերջացեալ է ժամս սուր առ սուր բազում խողխողոց: Սաւացել է Զւեզայեցի Դաղար վաճառականն:

44. Յոհաննու Ուկերերանի կոստանդնուպօլսի եպիսկոպոսագետի արարեալ մեկնութիւն Աւետարանին որ ըստ Յովհաննու: Թղթեայ, ու 2. երկսիւն, բոլորագիր, կազմած, գրել է ոմն Ստեփաննոս, էր թիւն իսկըանցն արարչութեանց ի մեզ ՅՇԼԶ ամ. իսկ ի կենարար զալստենէն ՌՃԾԲ. ամ. իսկ ի Խորովայ Պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց ՇԿԶ. իսկ ըստ աւարտման սուաջին շրջանին ՇԼՅ. նորս սկսեալ շար ամաց ԼԻ. ամ:

Սրան հետեւում է Յոհանն Ուկերերանի մանրամասն կենսագրութիւնը, և նրա մարմինի փոխազրութեան պատմութիւնը, որ գրուած է Սրբահամ գրչի ձևորով: Սրա վերջում ասուած է.

Յամի հինգարիւրորգի թուարերութեանս հայոց թարգմանեցաւ պատմութիւն վարուց և ճգնութեան երիցս երանեալ հայրագետին Յովհաննու Ուկերերանին ի յունականէն ի մերս, ի ձևուն սրբազն կաթուղիկոսին հայոց ոռ Գրիգորիսի:

45. Սիմէօնի Վրապտի Զրուայեցւոյ արարեալ քերականութիւն ըստ լեզում հայկաց. ու 16. մագաղաթեայ, նոտրագիր, յիշատակարանը պատրած է: Հասարակ կաշեկազմ, վերջում Տեառն Ներսէսի կաթուղիկոսի ասացեալ հանելուկ ի սուրբ զրոց:

46. Գրիգորի Նարեկացւոյ Գիրք աղօթից, մագաղաթեայ, ութեածալ, երկսիւն, բոլորագիր, վերջում Գր. Նարեկացւու կենսագրութիւնը: Գրուած է «ամաց թվակի աղքանազեան ազինս արեթական առւմարի երկեալ քանից հարիւրոց և տասսանց վեցից, և թուոց վեցից յաշխարհս հոնաց որ կոչի Դրիմ ի հայրապետութեան Գրիգորի և մերոյ արքեպիսկոպոսին ար Կիւրեղին: Զեռամբ թարմատար և փուստ գրչի Քսառու պիտականուն կրաւնաւորի Ընդ հովանեաւ հոչակաւը երկնանգէտ և որ ուխտիս որ Կոչի Քեմակի վանք յանուն կենսակիս մաւրն լուսոյ որ ածածին:

47. Բառզիրք. քերած մագաղաթեայ, ու 16. նոտրագիր, կազմած, միասիւն: Բառզիրք նախ այրութենական կարգով և

ապա Ածաշնչի որոշ գլուխների մէջ պատահած զժուարին բառերի: Դրուած է աւագ սարկաւագ Ռանէսի ձեռքով ընդ հովանեաւ ո. Թովմայի ի ժամանակս թափաւորութեան պարսից Շահ Սուլթան Հուսէնին, և յառաջնորդութեան նահանգիս Գողթան գաւառիս ան յոհաննու բազմաշխատ վրզպաի, որ նորոգեաց զոր աթուոյն եկեղեցին հանդերձ զանկակատնօք և այլ կիսակատարն պարսպիս ի թվականութեանս արամեան ՌՃՇԵ:

48. Համայնագիտական քառարանի նման մի աշխատութիւն է, գլխաւորապէս օրինակները ո. գրից վեցըրած: Մեծագիր է, երկսին, նոտրագիր, սկզբից պակասում է մօտ 72 երես, ամբողջ ա. տառը և համուռմ է մինչե հ. տառը, ընդամէնը 264 երես:

49. Ժողովածու, քերած մագաղաթեայ, ո. 8. երկսին, բոլորագիր, կազմած, բովանդակութիւնն ու թուականը յայտնուում է հետեւելից:—Գրեցի և հաստատեալ կասուցի աւժանգակութեան առեալ ի վերին զաւրութէնէն, ի զէմս քարտէնի ըստ իմումս կարութե զբանս ածայնայն սովորութիւնի ածախին հոգով առ լցեալ ընդորում և զառաս տուածից երկոսասան սրբոց մարգարէից որոց անուանքն գրեալ է ի զպրութիւն կենաց անեղծ պայմանաւ ընդ նոսին հարաբեալ զաւրէն մաքրութե ոսկոց ընդ պայծառութիւն ականց պատուականաց, կամ և հրաշազարդ տեսութեամբ նման արեգական ընդ երկոսասան աստեղաց կենդանակերպաց յերկինս յեւելոց հրամանաւ անեղին այ. որպէս նորա զերկնախնն լուսաւորին զվայրս նոյնպէս և սորա զսուր և կացելոց անձինս ի հրահանգս կրթութեան Սիսնի և ի զարդ պայծառութեան կաթուղիկէ որ եկեղեցոյ. ի թուականութեան հայկազեան տոհմիս տոմարիս, Պ. երորդի, Լ. երորդի, Ես անպիտանս ի մանկունս եկեղեցոյ Ստեփանոս անտրժան չիրաւաւոր... ի յանապատիս որ կոչի Սըխաւու վանք, ընդ հովանեաւ. որ Ածածնիս, որ է հանգէպ Վարազայ ածարնակ լերին ի խնդրոյ... կրօնաւորի կարապետի յիշատակ իւր և ճնողաց իւրոց:

50. Ժողովածու. թղթեայ է, ո. 32. միտին, նոտրագիր, սկզբում քառարան է, նախ 152 երես Աստուածաշնչի յիշատակուած գլախներում պատահած զժուար հասկանալի բառերի, յեւայ այբուբենական կարգով, 300 երես: Սրա վերջում զրուած է. Զմեզսամած Ազարիայ, փծուն զրչակս յիշել մազթեմ ի տէր, թվին ՌՃՇ ուժն ծրեալ եղի:

Սրանից յեւայ զալիս է. Սիմէօնի վարդապետի Զուղացոյ արարեալ քերականութիւն. ըստ լեզուի մերում հայկազան:

Ըստամէնը 236 երես նոյն Ազարիայի ձեռքով, նոյն թուին գրուած: Ապա զալիս է. Դումարումն յոգնադիմի իրողութեանց սահմանաց Դաւթի փիլիսոփայի և այլոց իմաստափրաց ի Մովսէսէ ուժնեմնէ ըստ տառից գաւորե «շարկրպեալ», ընդամէնը 120 երես, վերջում տարբեր զրով խնդրուում է յիշել Մարկոս արեգացին և նրա ճնողներին:

Գրից բոլոր գլուխները սկսուած են զեղեցիկ ծաղկագրերով:

Վ. Ագուլիսի Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցում կայ մի Աւետարան, մագաղաթեայ, երկսին, քառածալ, բոլորագիր, աւետարանիչների պատկերներով ԶՇԵ: Թուին Դանիէլի պատուերով գրել է Սարգիս կրօնաւորը «ի մայրաքաղաքս եղիցիս, ընդ հովանեաւ երից տաղաւարացս, որ. Կաթողիկէիս, և որ. Ածածնիս. և որ. Նախագիտայիս: Ի յաշխարհակալութեան Դանիսարտանտին զոր ազլն Խամայէլի սուլտան անուանին, ի թագաւորութեան Հայոց Հեթան: Եւ իշխանութեան այսմ նահանգի իշխանաց իշխանի բարեպաշտ և տմենաւորհնեան Բուրթէլին և Բուղդախն որդոց Քա.-ասէր և փառազարդ իշխանաց իշխանի ելիկումին որդո մեծին Տարսութիւն զոր տէր Յո. յերկար ժամանակեաւ արացէ մեզ ընդ երկայն աւուրս: Ի հայրապետութեան ածապատիւ տո. Գրիգորի Անաւարդից հայ կաթողիկոսի: Ի վիրապիսովութեան տանս Սր. Սահակայ սուրբ և ընարեալ քաջ հոփեսորի և անցազթ սովիսափ տր. Յովհաննէսի աւրութէ արքեպիսկոպոսի որդոյ իշխանաց իշխանի լեպարզի, յաջորդող և աթուակալ զինի տան Ստեփանոսի զոր տացէ զատ մեզ տէր ընդ երկայն աւուրս տղիդ վերակացութեան»:

Նոյն եկեղեցում կայ մի Երանելոյն Յովհաննու Ուկեբերանի արարեալ մեկնութիւն Սրբոյ Աւետարանի. թղթեայ է. մեծագիր, երկսին, բոլորագիր, գրել է Ներսէս արեգան, ՌՃՇԱ: Թուին:

Ալահի զիւղի եկեղեցում: Մի Աւետարան, թղթեայ, երկսին, ութեածալ, բոլորագիր, գրուած Մելքիսէթ երէցի ձեռքով «ի քաղաքս Տեղ ի հայրապետութեան Փիլիպպոսի և պարտի թագաւորութեան Շահ-Ապասին ի թվ. Ո՞Չ.»:

Նաև մի սորիշ աւետարան, ո. 16. և մի ճաշոց ո. 2. տուանց յիշխատակարանի, շատ անխնամ պահուած:

Մորվանիսում Ս. Մերսովի վանքում կայ մի խորհրդատետը, թղթեայ, քառածալ, երկսին, ծաղկանկարներով, գրուած ձեռամբ Ռւսկուտարցի Սահակ երիցու ի քաղաքն Քիլի թվին ՌՃՇ:

Ներքին-Ագուլիսի եկեղեցում.

1. Յայսմաւորը. մագաղաթեայ, երկածալ, բոլորա-

գիր: Գրուած է «ի յամի Զ և Լէ երորդի ի մայրաքաղաքի Արդուկեաց ընդ հովանեաւ որ. Աստուածածնիս և Գէորգայ զաւրափարիս և Թովմայի որ. առաքելոյ աշոյս... առ այս վերագիտողի վիճակիս Գողթան Տէր Սրմէն արքեպիսկոպոսի: Ի դասն և անրարի ժամանակիս ի վիշտու և հալածանս քրիստոնէից, փ գէպ ժամանակիս եղէ Հասան բէկին որդոց նորին, ձեռամբ Գրիգոր քահանայի:

2. Շաշոց, թղթէ, երկծալ, երկսիւն, բոլորագիր, կազմած: Գրուած է ձեռամբ Սրապիսն սարկաւագի ի թվին ՌՃԵՔ. ի հայրապետութեան Տռն. Յակոբայ ամենայն Հայոց կաթողիկոսի յերկիրն Կապաղովկեա Կեսարիս քաղաքի ընդ հովանեաւ սուրբ Կուրապետի:

1681 թ. Գաշակի Այվազի որդի Կարապետ Թումայեանցը Լիքունում գնում է այս ձեռագիրը և բերում Դաշտի որ. Ստեփանոս եկեղեցուն նուէր տալիս:

3. Յայսմաւուրը. մագաղաթեայ, երկծալ, երկսիւն, բոլորագիր: Գրուած է «ձեռամբ եփրեմ անիմաստ քահանայի ի հայրապետութեան Տ. Եղիազարու կաթուղիկոսի և թագաւորութեան Պարսից Շահ-Սուլէմանին և առաջնորդութեան նահանգիս Գողթնեաց որբոյ Աթոռոյն թումայի Յոհաննու արհի և պանծալի սըրբանուէր եպիսկոպոսի և մետրապոլատի ի թուոյ կենարարին մերոյ Յի. Քր. Ռ. վեց հարիւր Դ. և թուականիս Հայոց ՌՃ. երեմն և ինն: Ի գեօդն որ կոչի Ազուլեաց գաշտ. ընդ հովանեաւ որ. Ստեփանոսի եկեղեցւոյս, որ վերածայնի երեք խորան:

4. Աւետարան.—թղթեայ, ութածալ, երկսիւն, բոլորագիր, չորս պատկերով, կազմած: Գրուած է մատամբ մեղամած Սարգիս Ծնչին քարտուղարի ի թվին ՌՃԵՔ. Տեղը յայտնի չէ:

Տանակերտ գիւղի եկեղեցում կայ մի մագաղաթեայ Աւետարան քառածալ, երկսիւն, բոլորագիր, զրուած է «յանապատին որ. Մամաս. ձեռամբ Մաթէս արքայի, ի թվին Հայոց ԶԶ.

Բացի որանից կան նաև հետեհեալ ձեռագիրները, որոնց սկզբից և վերջից թերթեր են պակաս:

Երեք օրինակ Յայսմաւուրը, թղթէ, երկծալ, երկսիւն, բոլորագիր: Սրանցից միայն մինը ունի յիշատակարան, զրուած է Կարսում, ՌՃԵՔ. թուին:


Մաշտոց, թղթէ, ութածալ, բոլորագիր վերջի թերթերը թափուած:


Խորհուրդատետր, թղթէ, քառածալ, բոլորագիր. զրուած ՌՃԵՔ. թուին:


Արժ. Տէր Յակոբի տետրում արտագրուած է Դիսարի ձեռագիր Յայսմաւուրը և Ժամանակը (այժմ անյայտացած) վերջում զրուած հետեւալ յիշատակարանները.

Ա. Յայսմաւուրը յիշեցէր զվերջին ստացող որ զրոցս Ազուլեցի Փիրի պէկի որդի Ստեփաննոս... ես մինչև էի ի Թարվիզ մայրաքաղաքի ի զործ վաճառականութեան ի ՌՃԵՔ. թուին ի ժամանակս թագաւորութեան պարսից շահ Թամազին և թագաւորութեան օսմանցոց սուլթան Ահմատին և կաթողիկոսութեան սրբ և մեծի աթոռոյն Էջմիածնի տու. Արքահամին և մերոյ նահանգիս տանն Գողթնեաց սրբոյ և մեծի աթոռոյն սրբոյն Թովմայի առաքելոյ տառջնորդ հզանողի և սրբակրօն վարուք Տէր Բարսեղ աստուածարան վարդապետին ի սոցա ժամանակիս եղե մեծ վրդովմանս և խոռվ և ազմուկ և կուտ և կադ այսինքն ի մէջ երկուց ինքնակալ թագաւորաց օսմանցոց և պարսից և եղե մեծ հալածումն մերազնեաց քրիստոնէից և եղե ի փախչելն օսմանցոց ի Թավրիզու և եկին ազգ պարսիցն ի գիւղաքաղաքն Օրտովար յուղիցան և բանակեցին և անտի ելեալ մտին ի Դաշտ կոչեցեալ գեղն երկու տասան հաղար հեծելօք և կոտորեցին ի նոցանէ հոգիս ԳՃ արանց, մանկանց և կանանց և գերեցին ի նոցանէ անձինս ՀՃ և այլ աւելի և ես ականատես եղայ աչօք իմօք և տեսի զատուածային սուրբ տառս ի ձեռս նետող ազգին պարսից գերի:

Ժամանագրի. ՌՄԽԶ թ. այսպէս եղաւ. և եկն մահ աշխարհս Նախիջևան կաւառն, ազաջիրան (Ազատ Գիլան), Ղափան, Ղարայպաղ, Ղարաղպաղ, Թիֆլիս և Կուրջիստան և բազում զաւառ կոսորեց այսպէս ցաւն. Գ. օր քաշեր հիւտնդն, աւել ոչ, ապա մեսնիր. փախչողն շատ մեսնէր քան նստողն. աստուած բարկացաւ մեզ վրայ և մեր մեղացն, այսպէս մնաց. Գ. տարի սովոր ըլըն և մահն ՌՄԽԶ թուին մահն եկն աշխարհս: ՌՄԽԴ աճամ շահ Մամադ ախտա խան, որ է արարատան և Թէհրանու, որ եկն աւերեց աշխարհն մինչի Թիֆլիզ և ինքն եկն ծուշու սատայկեցաւ և զօրին փախեան և եղեն ոչինչ և ապրեցաւ քաղաքն ամենայն աշխարհ այսպէս հ հրամանաւու այ, լսեց թագաւորն ուսոււսաց և եղ բազում զօրօք և եկն առ Հայաստան որ է արևել նախ և առաջ տառաւ Տամուր զափու տայրապատն (Քարբանդ) Կալսան, Կորասան, Լազգըստան Պաշիաշուղն, Զառն, Կուրջիստան և քաղաքն Թիֆլիզ և եկն Գանջայ տուաւ բազում արևնելութիւն եղայ տաճկաց, Հայոց ոչ, և առաւ Շուշու քաղաքն և նստաւ անդ, ՌՄԾԳ թվին. յիշեցէր Սարգիս վարդապետ:







6796

0002782

2013



